



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.


About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

A

985,084

ՆԵՐԱՆՈՒԹԻՒՆ



ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՈՒՍՄԱՆԸ

ՅՕՐԻՆԵԱԼ ԱՆԳՂԻԵՐԷՆ

Ի ՏՈՔԹՈՐ ԱՆԿԸՍԷ

ԵՒ ԹԱՐԳՄԱՆԵԱԼ ՀԱՅԵՐԷՆ

ՍՐԱԳՐՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՅԱԻԵԼՈՒԱԾՈՎՔ



ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ



Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. Յ. ՊՕՑԱՃԵԱՆ

1880

ԳՐԱՆՈՒԹՅԱՆ
 ԿՈՄԻՏԵ
 310/Բ
 Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

معارف عمومیہ نظارت جلیہ سنک رخصنیہ
Հրահանատ Կատարելոց Իրեն-Նեխան
պատրաստման խումբ

ՅԱՆԿ ԳԼԽՈՑ



Մ Ա Ս Ն Բ .

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁԸ ԲԱՂԿԱՅՆՈՂ ԱՅԼԵՒԱՅԼ ԳՐՈՑ
ՎՐԱՅ ՄԱՍՆԱԻՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

- ԳԼ. Ա. Հնգամատեանը 1.
ԳԼ. Բ. Մննդոց գիրքին բաժանուհիները 10. — Արարչա-
գործութեան պատմութիւնը 12.
ԳԼ. Գ. Եգեմական դրախտը 26. Նախածնողաց անկումը
և անոնց սերունդին ապականութիւնը 29.
ԳԼ. Դ. Զբհեղեղը 31.
ԳԼ. Ե. Նշյի զաւկները և անոնց ցրուումը երկրի վրայ 37.
ԳԼ. Զ. Աբրահամ և անոր սերունդը 43.
ԳԼ. Է. Ելից գիրքը 47.
ԳԼ. Ը. Օրէնք, կանոնք և հրահանգք որ Աստուծմէ տըր-
ուեցան Իսրայելացւոց 55.
ԳԼ. Թ. Ղևտացւոց գիրքը 62. Թուոց գիրքը 64.
ԳԼ. Ժ. Երկրորդ օրէնք 66.
ԳԼ. ԺԱ. Հին կտակարանին պատմական գիրքերը 68. Յե-
սու 70. Դատաւորք և Հռութ 71.
ԳԼ. ԺԲ. Թագաւորաց գիրքերը 72. Մովարու արձանը 75.
ԳԼ. ԺԳ. Ա. և Բ. Մնացորդք 78. Եզրաս, Նէեմիա 80.
Եսթեր 84.
ԳԼ. ԺԴ. Հին կտակարանին բանաստեղծական գիրքերը 85.
ԳԼ. ԺԵ. Յօր 90. Սաղմոսք 92.
ԳԼ. ԺԶ. Առակաց գիրքը 96. Ժողովող 97. Երգ Երգոց 98.
ԳԼ. ԺԷ. Մարգարէական գիրքերը 100. Եսայի 101. Երե-
միա 104. Ողբք Երեմիայի 106. Եզեկիէլ 106.
Դանիէլ 109. Ովսէէ 112. Յովէլ 113. Ամոգ
114. Արդիու 115. Յովսան 115. Միքիա 117.
Նաում 117. Ամբակում 118. Սոփոնիա 118. Ան-
գէ 119. Զաքարիա 120. Մաղաքիա 121.

- ԳԼ. ԺԸ. Հրէից ազգին պատմութիւնը Հին կաակարանին գոցուելէն մինչեւ Նորոյն սկիզբը 122 .
- ԳԼ. ԺԹ. Նոր կաակարանին գիրքերը 130. Մատթէի Աւետարանը 131 . Մարկոսի Աւետարանը 133 . Ղուկասու Աւետարանը 135 . Յովհաննու Աւետարանը 139 .
- ԳԼ. Ի. Գործք Առաքելոց 143 .
- ԳԼ. ԻԱ. Առաքելոց թուղթերը 147. Թուղթ առ Հռոմայեցիս 149 . Երկրորդին թուղթք առ Կորնթացիս 151 . Թուղթ առ Գաղատացիս 152. Թուղթ առ Եփեսացիս 154 . Թուղթ առ Փիլիպպեցիս 156 . Թուղթ առ Կոլոսացիս 158 . Թուղթք առ Թեոսաղոնիկեցիս 160 .
- ԳԼ. ԻԲ. Հովուական նամակք և թուղթ առ Փիլիմոն 163. Ա թուղթ առ Տիմոթէոս 165 . Բ թուղթ առ Տիմոթէոս 166 . Թուղթ առ Տիտոս 166 . Թուղթ առ Փիլիմոն 168 .
- ԳԼ. ԻԳ. Թուղթ առ Եբբայեցիս 169 .
- ԳԼ. ԻԴ. Կաթողիկէ թուղթք 171 . Յակոբայ թուղթը 171 . Թուղթք Պետրոսի 175 . Թուղթք Յովհաննու 177 .
- ԳԼ. ԻԵ. Յուդայի թուղթը 178 . Յայտնութիւն Յովհաննու 180 .
 Ժամանակագրական տախտակ . 188 .
 Նիւթոց ցանկը . 193 :



ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՈՒՍՄԱՆԸ

ՄԱՍՆ Բ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԸ ԲԱՂԿԱՑՆՈՂ ԱՅԼԵՒԱՅԼ
ԳՐՈՑ ՎՐԱՅ ՄԱՍՆԱԻՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԼ. Ա.

Հնգամասեանը

ԱՅՍ Ներածութեան առաջին մասին մէջ Սուրբ գրոց նկատմամբ ընդհանուր տեղեկութիւններ տրուեցան, այսինքն թէ անոնց այլևայլ մասերն ինչ լեզուով գրուեցան, ինչպէս պահուեցան, թէ ինչպէս կ'ապացուցուի անոնց հարազատութիւնը, վաւերականութիւնը, աստուածային հեղինակութիւնն ու աստուածաշունչ ըլլալը կամ ներշնչութիւնը, և թէ անոնք ինչ կանոններով կը մեկնուին: Յիշուեցան նաև նոյն գիրքերը մեկնելու համար քանի մը օժանդակութիւններ, որ արտաքին աղբիւրներէ կ'առնուին:

Հիմա այս երկրորդ մասին մէջ պիտի սկսինք քննել ի մասնաւորի այլևայլ մասերը որոնցմէ բոլոր Աստուածաշունչը կը բաղկանայ: Այս մասերուն վրայ խօսելով մեր նպատակն անոնց մէջ պարունակուած ամէն նիւթոյ վրայ ճառել չէ, այլ անոնց որչափ հնար է ընդհանուր տեղեկութիւն մը իւրաքանչիւր գիրքին հեղինակին և գրութեան ժամանակին վրայ, և քանի մը մասնաւոր համարներու վրայ որոնց մեկնութիւնը

գժուարին է. կամ, ուրիշ բառերով ըսենք, համառօտ կերպով մատուցանել, ինչպէս կը յուսանք, շահաւէտ օգնութիւն մը ընթերցողաց որ կը փափաքին հասկնալ և օգտիլ Աստուածաշունչ մատեանը կազմող այլևայլ գիրքերէն: Աստուածաշունչին առաջին մասն է Հնգամատեանը որ կը պարունակէ Ծննդոց, Ելեց, Ղևտացոց, Թուոց և Երկրորդ Օրինաց գիրքերը: Հրեայք այս մասն «Օրենք» կ'անուանէին, կամ, անոր հինգ գիրքերէ բաղկացեալ ըլլալուն նայելով, կը կոչէին զայն «Օրինաց հինգ հինգերորդներ», և կամ պարզապէս՝ «Հինգերորդներ». ուստի և յիշեալ հինգ գրոց իւրաքանչիւրը կը կոչուէր «Մէկ հինգերորդ»: Այս հինգ գրոց ամէն մէկուն երբայական անունը՝ նոյն գիրքին երբայեցերէն ընագրին մէջ առաջին մէկ կամ քանի մը բառէն առնուած է: Չորօրինակ՝ առաջին գիրքը կը կոչուի Եբրայեցերէն Պերեխի, քանզի այն գիրքը կը սկսի Եբրայեցերէն Պերեշիթ (ի սկզբանէ) բառով: Երկրորդը կը կոչուի Վէ Եւթ Կիթ, քանզի կը սկսի այս բառերով որ կը նշանակեն «Արդ ասոնք են անունները»: Հայերէն անունները Եթանասնից օրինակին մէջ նոյն գիրքերուն տրուած յունարէն անուններուն թարգմանութիւնն են, և իւրաքանչիւր գիրքին պարունակութիւնն ըստ մասին կը յայտենն:

Այսպէս առաջին գիրքը որ Ծննդոց կոչուած է՝ կը պատմէ երկնից և երկրի այժմու գրութեան սկզբնական կազմութիւնը կամ նաանգը, մարդուն ստեղծումը, շարքին հաստատութիւնը, մարդկային ընկերութեան քանի մը արուեստներուն և սովորութեանց սկզբնաւորութիւնը, երկրիս ամենէն հին տէրութիւններէն ոմանց հաստատուիլը, Աբրահամու սերունդին Աստուծոյ սիրելի ժողովուրդն ըլլալու համար աստուածուստ ընտրուիլը, և նոյն նահապեան սերնդեան նախկին պատմութիւնը՝ մինչև անոնց առժամանակեայ ընկալութիւնը յԵգիպտոս:

Երկրորդը, այսինքն Ելեց գիրքը կը պատմէ այն ընտրեալ ժողովուրդին Եգիպտոսէ Ելեց և այս գէպքին հետ կապակցութիւն ունեցող նշանաւոր պարագաները:

Երրորդ գիրքը որ Ղևտացոց գիրքն է՝ կը խօսի այլևայլ

ծէսերու և տօներու վրայ որ աստուածային հրամանաւ սահմանադրուեցան, և ըստ մեծի մասին Ղեպոցոց ձեռք կը կաասարուէին :

Չորրորդ գիրքը որ Թուոց գիրքն է՝ կը պատմէ նոյն ժողովրդերեան աշխարհագիրը կամ է՝ Բեառուիքը, և անոնց դէպի Քանանացոց երկիրը մինչև Յորդանան չուելուն պատմութիւնը :

Հինգերորդ գիրքն, այն է Երկրորդ Օրէնք կոչուած գիրքը, անապատին մէջ ճամբորդութեան ատեն պատահած դէպքերուն և նոյն ճամբորդութեան սկիզբը տրուած օրէնքին համառօտ բովանդակութիւնը կամ երկրորդին է . յորդորներ կու տայ ժողովուրդին այն օրէնքին հնազանդելու, կը խոստանայ թէ մեծամեծ օրհնութիւններ պիտի հետեին այնպիսի հնազանդութեան, և չարաչար աղէտներ կը սպառնայ անոնց, եթէ անհնազանդ գտնուին : Այս գիրքը Մովսէսի մահուան պատմութեամբ կը վերջանայ :

Այս հինգ գիրքերը որ պայտեռ նախնի գարուց մէջ Աստուծոյ մարդոց հետ վարուելուն եղանակը, և մանաւանդ անոր ընտրեալ ազգին ծագումն ու ամենէն հին պատմութիւնը կ'ընեն՝ Հրեաներէն միշտ առհասարակ իբրև Մովսէսի գրութիւն համարուած են :

Մովսէս գիտուն (Գործ. Է. 22) և բանաստեղծ էր (Ելից ԺԵ : Բ Օր. 1Բ) : Ականատես վկայ և գլխաւոր գործող էր Հնգամատենին վերջին չորս գրոց մէջ պատմուած դէպքերուն : Այս պատմութեան մէջ քանի մը անգամ յայտնի յիշուած է թէ Մովսէս այլևայլ դէպքերու պատմութիւնը ժամանակին գրի առաւ աստուածային հրամանաւ (ԵԼ. ԺԷ. 14 : ԻԴ. 4 : Թու. 1Գ. 2 : Բ Օր. 1Ա. 9, 22, 24—26) :

Հին կտակարանին յաջորդ մասերուն մէջ շարունակ կը յիշուին Մովսէսի օրինաց կամ լոկ Մովսէսի գիրքը կոչուած գրութիւններ, որոնցմով յայտնապէս Հնգամատենը կ'ազնարկուի (Յես. Ը. 31, 34 : Գ Թագ. Բ. 3 : Դ Թագ. ԺԴ. 6 : Բ Մնաց. ԻԵ. 4. ԼԵ. 12 : Եջր. Զ. 18 : Նէեմ. ԺԳ. 1) : Նոր կտակարանին մէջ ալ նոյն Հնգամատենին իբրև Մովսէսի գրութիւն յիշուած և անկէ վկայութիւններ բերուած կը գրու-

նենք (Մարկ. ժԲ. 19 : Ղուկ. ժԶ. 29 : Ի. 37 : ԻԴ. 27 : Յովհ. Ո. 45 : Ե. 46, 47 : Գործ. ժԵ. 21 : ԻԸ. 23 : Հռովմ. ժ. 5 : Բ կոր. Գ. 15) : Քրիստոս և Առաքեալք Հնգամատենին իւրաքանչիւր գիրքը յանուանէ չեն յիշեր , այլ զանոնք ընդհանուր անուամբ կը յիշեն իբրև Մովսէսի գրուածներ կամ Մովսէսի օրէնքը . եւ յայսմ կը հետեին Հրէից սովորութեանը : Հրեայք , ինչպէս այս գիրքին առաջին մասին երկրորդ էջին մէջ ըսուեցաւ , Հին կտակարանին գիրքերը երեքի բաժնելով՝ զանոնք կը կոչէին Օրէնք , Մարգարէք և Սաղմոսք (Ղուկ. ԻԴ. 44) , և ընդհանրապէս զՄովսէս կը համարէին հեղինակ առաջին , այն է՝ Օրէնք կոչուած , մասին : Բայց և այնպէս յայտնի է թէ յիշեալ հինգ գրոց մէջ որ առհասարակ Մովսէսի կ'ընծայուին՝ կը գտնուին հիմա քանի մը համարներ որ Մովսէսէ ետքը ուրիշի մը ձեռք աւելցուած են : Զորօրինակ՝ Բ Օրինաց մէջ (ԳԼ ԼԴ.) կը պատմուին Մովսէսի մահն ու թաղումը , զոր թերևս Յեսու գրեց : Նաև քանի մը տեղեր այլևայլ քաղաքներ Մովսէսէ ետքը գրուած անուններով կը կոչուին , կամ անոնց սկզբնական անուան հետ նորն ալ յիշուած է . զորօրինակ՝ Մինդ. ժԴ. 14 համարին մէջ , քաղքի մը փոխանակ հին անուանը որ էր Լայիս կամ Լէսեմ , գրուած է անոր նոր անունը Դան : (Տես Յես. ժԹ. 47, և Դատ. ժԸ. 27—29 . բաղդատէ նաև Մինդ. ժԴ. 18 համարը Յես. ժԴ. 15 համարին հետ :)

Հրէից հին մատենագիրներէն կը սորվինք որ Բաբելոնի գերութենէ դարձէն ետքը Եզրաս գպիրը , Երուսաղեմի բարեպաշտ կառավարիչը Նէեմիա , մարգարէք Անգէ , Զաքարիա և Մաղաքիա , և ուրիշ ոչ սակաւ բարեպաշտ և գիտուն անձինք որ անծնցմէ անմիջապէս ետքը ծաղկեցան , մասնաւոր փոյթ ատրին Հրէից սրբազան գիրքերն հաւաքելու , կարգադրելու և քննելու (տես Նէեմ. Ը . 13) : Հրեայք այս մարդիկը կ'անուանեն Մեծ ժողովրդանոց , և կ'ըսուի թէ ասոնք հարիւր քսան անձինք էին :

Շատ հաւանական է թէ Հնգամատենին մէջ քանի մը խօսքեր որ Մովսէսէ ետքը յաւելեալ կը թուին , նոյնպէս Հին կտակարանին ուրիշ մասերուն վրայ եղած յաւելուածք որ

հարբ պիտի յիշուին, գործ են Եզրասայ և կամ այն մարդոց որ սրբազան՝ գրուածներն աչքէ անցուցին և իրենց ատենին ընթերցողաց քանի մը դէպքերու կամ քաղաքներու վրայ կատարեալ տեղեկութիւն տալու համար տեղ տեղ պատմութիւնն ամբողջացուցին կամ այն գրուածներուն վրայ յաւելուածներ բրին : Զարդիս սովորութիւն է այսպիսի յաւելուած տեղեկութիւններն իրեւծանօթութիւն գնել գիրքին լուսանցից վրայ, այսինքն Էջերուն քովերը կամ տակը, բայց Հրէից գրուածաց մէջ կ'երևի թէ սովորութիւն էր ծանօթութիւնները գիրքին ընագրին մէջ մուծանել : Սակայն չի կրնար ըսուիլ թէ այս բանը վաս բերած է Աստուածաշունչին այլևայլ գիրքերուն վաւերականութեան կամ արժանահաստատութեանը, քանզի Եզրաս, Նէեմիա, Անգէ և ասոնց նման անձինք որ այն յաւելուածներն բրին՝ Սուրբ գրոց բուն հեղինակներուն պէս ներշնչեալ մարդիկ ըլլալով անտարակոյս աստուծային ազգեցութեամբ կը գործէին, թող որ այն յաւելուածները Սուրբ գրոց վարդապետութիւնները կամ պատուէրներն այլայլոյ բաներ չեն :

Ընդհանրապէս կը կարծուի թէ Հնգամատեանը մեզի հասած վաղեմի գիրքերուն ամենէն հինն է : Սակայն եթէ այնպէս ըլլայ, չի հետեւիր թէ Մովսէսի ժամանակէն առաջ գիր և գրուածներ չկային : Երբ Իսրայէլացիք Մովսէսի մահուրէն անմիջապէս ետքը Քանանացւոց երկիրը մտան, անոնցմէ նուաճեալ քաղաքներուն մէկն եղաւ Դաբիր : Այս քաղաքին համար Յես. ԺԵ. 15 համարին մէջ կ'ըսուի թէ «Դաբիրին անունը առաջուց կարիաթ—սեփեր էր», որ կը նշանակէ Գիրքի քաղաք. ինչպէս որ նոյն Յեսուայ մէջ ուրիշ տեղ մը (ԳԼ. ԺԴ. 15) ըսուած է թէ «Քերրոնին անունը առաջուց կարիաթ—արբա էր. (այսինքն Արբայի քաղաքը) «— ան Արբան Ենակիմներուն (կամ հին ատենը Քանանացւոց երկրին մէջ գտնուող հսկաներուն) մէջ մեծ մարդ մըն էր :» Ուստի և ինչպէս Քերրոն ի սկզբան Արբայի քաղաք կը կոչուէր, ժասն զի այս նշանաւոր մարդը հոն կը բնակէր, կամ թերեւս անիկա շինած էր այն քաղաքը, նոյնպէս կրնայ հաւանական համարուիլ թէ Յեսուայ ժամանակ Դաբիր ըսուած

քաղաքն աւելի հին ժամանակներու մէջ «Գիրքի քաղաք», կը կոչուէր, վասն զի քանի մը գլխաւոր գիրքեր հսն գրութեան, կամ հոն կը պահուէին, և կամ վասն զի այն քաղաքին մէջ գիւան կամ գրատուն կար :

Այս քաղաքին տրուած յիշեալ հին անունը կրնայ իբրև ապացոյց համարուիլ թէ Մովսէս առաջ մատեան կամ գրութիւն կար : Նոյն իսկ Մովսէս թուոց ԻԱ. 14, 15 համարներուն մէջ «Տէրոջը պատերազմներուն», գիրքն անուամբ հին գրուած մը կը յիշէ՝ իբրև իրեն ծանօթ, և սրպէս թէ արդէն կար երբ ինք իր պատմութիւնը կը գրէր :

Մինչոց գիրքը գրուութեամբ քննողներէն ոմանք կը կարծեն թէ երբ Մովսէս այն գիրքը կը գրէր, սւրբշ հին մատեաններ կամ գրութիւններ ունէր իր քով, և անոնցմէ ինչ ինչ առաւ կամ օրինակեց :

Յիշեալ քննիչներէն մէջ բերուած ապացոյցներուն մէկը սա իրողութիւնն է, թէ Մինչոց Ա. գլխոյն և Բ. ին առաջին 3 համարներուն մէջ յիշուած արարչագործութեան պատմութեանն ետքը, Բ. գլխոյն մէջ նոյն իրողութիւններն, այսինքն աշխարհիս և մարդուն ստեղծումը, առջինէն տարբեր և իբր թէ նոր կերպով մը գործեալ կը պատմուին : Այս երկրորդ պատմութեան սկիզբը գրուած խօսքը, «Ասոնք են երկնից ու երկրի ծնունդները», նախընթաց պատմութեանն բոլորովին զատ պատմութեան մը սկիզբ կամ տիտղոս կը համարուի : Երկրորդ պատմութիւնն ալ արդարև առաջին գլխոյն մէջ պատմուածներուն համաձայն է, միայն քանի մը պարագաներ իբրև յաւելուած կը յիշէ. և գիտողութեան արժանի կէտ մը սա է, որ առաջին գլխոյն կամ առաջին պատմութեան մէջ իբր Աստուծոյ անուն Էլօհիմ (Աստուած) բառը կը գործածուի, իսկ երկրորդին մէջ անկէ տարբեր անուն մը կը գործածուի, այսինքն Եհօւ Էլօհիմ, որ Հայերէն Տէր Աստուծոյ թարգմանուած է : Այսպէս Աստուծոյ տարբեր անուններ տրուած ըլլալը և սոց վերաբերեալ սւրբշ տարբերութիւններ վերոյիշեալ քննիչներուն կարծեւ տուին թէ երբ Մովսէս իր պատմութեան այն մասերը կը գրէր, իր ձեռքն ունեցած հին գրութիւնները գործածեց, կամ թերեւս օրինաւ :

կեց : Ենթինքնները կ'ըսեն նաեւ թէ Հին գրութիւններ գործածուած ըլլալուն հետքը կը նշմարուի նաև Ծննդոց գիրքին ուրիշ տեղերը : Այսպէս Հին գրութենէ մը առնուած կը համարին ԺԳ. գլուխը , ըսելով թէ ասիկա նախընթաց և յաջորդ գլուխներուն մէջ պատմութեան հետ ամենեւին կապակցութիւն չունեցող պատմութիւն մը կ'ընծայէ , և հոն դարձեալ տարբեր անուն մը տրուած է Աստուծոյ , այսինքն Բարձրեալ Աստուած անունը (տես 19 և 20 համարները) :

Զիարդ և իցէ՛ Հնգամատեանը գրած ատենը Մովսէսի այսպիսի Հին գրութիւններ գործածելն՝ անոր ոչ Աստուծամէ շնչուած ըլլալը , ոչ ալ գրուածներուն աստուածային հեղինակութիւնը կը ջրէ : Եթէ արդարև Մովսէս հնազոյն մատեաններ ունէր և զանոնք գործածեց , այսպէս ընելով անոնցմէ առնուած մասերուն ճշմարտութեանը կը վկայէ . քանզի աստուածային ազդեցութիւնը որմէ շարժեալ կը գրէր՝ ուրիշ գրութիւններ կամ պատմութիւններ գործածելու ատենն ալ անտարակոյս անոր կ'առաջնորդէր :

Հնգամատենին պատմութիւնները Հին ազգաց աւանդութիւններովը կը հաստատուին : Յովսէպոս Հրեայ պատմիչն այլեւայլ արձանագրութեանց , և իւր ժամանակը (70 յետ Քրիստոսի) գտնուած Հին պատմութեանց գիմելով կը ցուցնէ թէ ջրհեղեղին և Հրէից Եգիպտոսէ ելլելով Քանանացիները վանելուն նկատմամբ Մովսէսի պատմութիւնն այս Հին տեղեկութեանց համաձայն է : Վեցօրեայ կամ վեց օրոշ շրջաններու մէջ կատարուած արարչագործութեան , ժամանակին եօթնեակներու բաժնուելուն եւ եօթներորդ օրուան սուրբ ըլլալուն , անմեղութեան կամ ոսկեդարու վիճակին , հօր Ազատչի մը գալստեանը համար եղած խոստման , ջրհեղեղին , տապալին , ասոնց ամենուն նկատմամբ , գրեթէ բոլոր ազգաց մէջ պահուած աւանդութիւններ կան , որ Մովսէսէ պատմուած դէպքերուն վրայ յայտնապէս հիմնուած են , թէպէտ շատ աղաւաղեալ են :

Հնգամատենին վաւերականութիւնը նոր ատեններս ուրիշ տապալիցներ ալ ունեցաւ : Աստուածաշունչը պախարակողներէն ոմանք Հնգամատենին դէմ սա առարկութիւնն ըրած էին՝

Թէ անոր մէջ կան յիշուած քանի մը սովորութիւններ կամ ակնարկութիւններ որք Եգիպտական չեն, կամ Հրէից յԵգիպտոսէ ելլելէն, ուստի և Մովսէսի ժամանակէն շատ ետքը Եգիպտացւոց մէջ մտած էին: Այսպէս են, կ'ըսէին, Էշ պահել, բոս որում այս անասունը հին Եգիպտացւոց գարշելի էր, ներքինի ունենալ (Մննդ. 15. 36), ծառայից իրենց տէրերուն ընտանեացը մէջ համարձակութիւնը (Մննդ. 18), գինւոյ գործածութիւնը (որուն համար Հերոդոտոս կ'ըսէ թէ Եգիպտոսի մէջ չկար), նոյնպէս մատանի և ուրիշ զարդեր գործածելու (Մննդ. 10Ա. 42), վերակացուներ ունենալու (Մննդ. 10Գ. 16, 19: 10Դ. 1), սեղան նստելու (10Գ. 33) սովորութիւնները, շէնքերու համար աղիւս գործածելը (ՅԼ. Ա. 14): Բայց նոր գտնուած Եգիպտական հնութիւններ կամ յիշատակարաններ ասոնց ամենուն ալ հինուց ի վեր Եգիպտական ըլլայր կը հաստատեն: Եգիպտոսի մէջ դեռ կը գրանուին աղիւսներ որոց վրայ ամենէն հին Եգիպտական թագաւորներուն անունները դրոշմուած են, և շատ յիշատակարաններու վրայ կը տեսնուին ներքինիներ, վերակացուներ, զարդեր, ինջղք և ուրիշ նկարագիրներ որոց մէջ յայտնի կը տեսնուի թէ Եգիպտացւոց հին ընկերական սովորութիւնները ճիշդ այնպէս էին, ինչպէս Հնգամատենար կը պատմէ: Նոյն յիշատակարանները կը ցուցնեն թէ Եգիպտացիք կ'ածելուէին (Մննդ. 10Ա. 14), և ոչ կռնակով՝ այլ գլխով բեռ կը տանէին (10. 16), թէ հովիւներն արհամարհելի էին և նշաւակ Եգիպտացւոց ծաղրաբանութեանը, թէ ժողովուրդն այլեւայլ ջոկերու բաժնուած էր, թէ օտարականաց Եգիպտոսի հռչակաւոր "բէհեղէ հանդերձներ" հազնիլն անոնց քաղաքացութեան իրաւունք ստացած ըլլալուն նշան էր (Մննդ. 10Ա. 42). բոլոր այս իրողութիւնները հաստատուած են քանդակներու վրայ տեսնուած պատկերներով, և կամ Հերոդոտոսէ յայտնապէս յիշուած են իբրև Եգիպտոսի յատուկ սովորութիւնները:

Պատմական և տոհմագրական իրողութիւններ հետզհետէ որչափ կը ստուգուին՝ այնչափ Հնգամատենին պատմութիւնները հաստատութիւն կը գտնեն: Հին ազգաց ստորջ աւանդ.

գութիւնները կամ պատմութիւնները ջրհեղեղի ժամանակէն անդին չեն անցնիր . Եգիպտացւոց թագաւորներուն տոհմերը, անոնց որչափ ընդարձակ միջոց ալ ընծայուի, Քրիստոսէ առաջ 2,200 տարիէ աւելի հին չեն : Կոմիուկիոսէն (500 ն. թ. զՔր.) յիշուած Երվայի, Չինաց առաջին ինքնակային թագաւորութիւնը չի կրնար աւելի հին ըլլալ քան 2,500 տարի Քրիստոսէ առաջ . և արդարև Չինաց պատմութեանը մէջ մինչև 782 նախ քան զՔրիստոս՝ արժանահաւատ գէպը չկայ : Հնդկաց հռչակեալ ժամանակագրութիւնը նախ քան զՔրիստոս 2,256 տարին անդին չանցնիր : Հնդամատենէն դուրս գրուած հին պատմութիւնները քննողներն այս վկայութիւնը կու տան :

Տոհմագրական, այսինքն ազգերու ծագմանը, լեզուին և ուրիշ յատկութիւններուն վերաբերեալ քննութիւններն ալ Մովսիսական պատմութեան ստուգութիւնը կը հաստատեն : Հնդկաց, Չինաց, Յունաց և Սկանտինաւեանց (Եւրոպայի հիւսիսային կողմերը բնակող ազգաց) դիցարանական գրութիւններուն էապէս միեւնոյն ըլլալէն կը տեսնուի թէ այս ազգերը միեւնոյն ծագումն ունէին . բոլոր Սեմական ազգերն ալ իրենց ընդհանուր միաստուածեան գրութեամբը յայտնի կ'ընեն թէ նոյնպէս միեւնոյն սկիզբը կամ ծագումն ունին : Անոնք որ լեզուաբանական հետազոտութիւնները բրած են՝ կը վկայեն թէ լեզուաց մէջ տեսնուած ինամութիւններէն յայտնի է որ բոլոր ծանօթ լեզուները կրնան քանի մը դիւաւոր դաս կամ ընտանիք բաժնուիլ, և թէ այս բաժանումները Մենդոց Ժ. դիւոյն մէջ յիշուած ազգերու (Սեմական, Յարեթական և Քասեան) բաժանման համաձայն են :

Հնդամատենին վաւերականութեանը գլխաւոր մէկ ապացոյցն ալ Հրէից մէջ հաստատուած և բոլոր աշխարհի ծանօթ եղող կրօնական գրութիւնն է : Այս գրութիւնը Հնդամատենին պատմութեանց վրայ հիմնուած է, այնպէս որ եթէ հոն պատմուած գէպերը ստուգիւ եղած չըլլային, Հրէութիւն կամ հրէական կրօնը չէր ըլլար : Հնդամատենին մէջ կը յիշուի այն կրօնքին օրինաց և արարողութեանց հաստատուելուն պատմութիւնը, և անոնց պահպանութեանը

Համար եղած պատճառներն յառաջ կը բերուին : Եթէ այս պատմութեան մէջ կեղծիք կամ ստույգութիւն կայ , այս կրօնական գրութիւնը ե՛րբ կրցաւ մնաւ գտնել : Զի կրնար մնաւ գտած ըլլալ ոչ Եօթանասնից Թարգմանողութեան ժամանակները (275 Նի. ք. զԳր.), ոչ Հրէից Բաբելոնէ դառնալուն ատենները (536 Նի. ք. զԳր.), ոչ Հրէից Թագաւորութեան երկու բաժնուելուն ատենը (975), ոչ Սամուէլի օրովը (1095), ոչ ալ նախնիքաց չորս հարիւր տարուան միջոցին : Քանզի այս Թուականներուն ժամանակը հազարաւոր մարդիկ անտարակոյս պատմութեան կեղծ ըլլալը երեւան հանելով պիտի մերժէին անոր վրայ հիմնուած Մովսիսական օրէնքը՝ որ այն մարդոց համար ծանր էին : Ենթադրենք թէ Հնգամատենին մէջ պատմուած դէպքերը , որոց պատճառաւ Թլփատութիւնը , Զատիկը , Պէնտէկոստէն կամ Տաղաւարահարաց տօները հաստատուեցան՝ իրօք եղած չեն , և թէ այս ինչ ժամանակ երբ այն արարողութիւններն ու տօները չկային՝ մէկը զանոնք հնարելով ժողովուրդը համոզեց զանոնք ընդունիլ և պահել , ըսելով թէ մեր նախնիքն ասոնց ամէնը կը պահէին : Այս կերպով ժողովուրդ մը համոզելը Սուրբ գրոց մէջ պատմուած որևիցէ հրաշքէ աւելի մեծ հրաշք կրնայ համարուիլ : Պէտք է յիշել նաև թէ , որովհետև Հնգամատենին մէջ պատուիրուած արարողութիւններն ու տօները ոչ միայն հասարակ գէպքերու , այլև հրաշից վրայ հիմնուած են , այն արարողութիւններն ու տօներն իբրև իրօք եղած ընդունողները Հնգամատենին ոչ միայն հասարակ պատմական գէպքերը , այլ նաև հոն յիշուած հրաշքներուն պատմութիւնն իբրև ճշմարիտ ընդունելու են :

ԳԼ. Բ.

Մենդոց գիրքին Բաժանումները : — Արարչագործութեան պատմութիւնը :

Մենդոց գիրքը կրնայ տառնուամէկ որոշ մաս բաժնուիլ : Առաջինն է Արարչագործութեան պատմութիւնը , և կը պատ-

բուճակէ Եննդոց Ա. գլուխն ու Բ. գլխոյն առաջին 3 համարները : Երկրորդ մասը կը սկսի Բ. գլխոյն 4 համարէն և մինչև Դ. գլխոյն վերջը հասնելով Ագամայ և անոր ընտանեաց պատմութիւնը կ'ընէ : Երրորդ մասը կը պարունակէ Ե. գլուխն ու Զ. գլխոյն առաջին 8 համարները , և ջրհեղեղէն առաջ նահապետաց ազգաբանութիւնը , և անոնց ու այն ժամանակի մարդոց վարուցն ու բարուց նկարագիրը կ'ընէ : Չորրորդ մասը Զ. գլխոյն 9 համարէն սկսելով մինչև Թ. գլխոյն վերջը կը հասնի , և Նոյի պատմութիւնը կ'ընէ : Հինգերորդ մասը որ Ժ. գլուխն ու ԺԱ. ին առաջին 9 համարները կը պարունակէ՝ Նոյի որդւոցն ու սերունդին վրայ կը խօսի : Վեցերորդ մասը որ ԺԱ. գլխոյն 10 էն մինչև 26 համարներէն կը բաղկանայ՝ Աբրահամու նախնեաց ազգաբանութիւնը համառօտիւ յառաջ բերելով՝ կու գայ մինչև յիշեալ նահապետին ծնունդը : Եօթներորդ մասը ԺԱ. գլխոյն 27 համարէն սկսելով կը հասնի մինչև ԻԵ. գլխոյն 11 համարը : Այս մասին մէջ է Աբրահամու կենաց պատմութիւնը : Ութերորդ մասը , այսինքն՝ ԻԵ. գլխոյն 12 էն մինչև 18 համարները , Իոմայելի համառօտ պատմութիւնը կը պարունակէ : Իններորդ մասը , այսինքն՝ ԻԵ. գլխոյն 19 համարէն մինչև ԼԵ. գլխոյն վերջը՝ Իսահակայ պատմութիւնն է : Տասներորդ մասն է ԼԶ. գլուխը , և Եոաւայ ու անոր սերունդին պատմութիւնը կ'ընէ : Մեաստաներորդ և վերջին մասը որ ԼԿ. գլխոյն 2 համարէն սկսելով մինչև Եննդոց գիրքին վախճանը կը հասնի՝ Յակոբայ և անոր ընտանեաց պատմութիւնը կը պարունակէ :

Այս մասերն , ինչպէս կը տեսնուի , երկայնութեան կողմանէ անհաւասար են , բայց կ'երեւի թէ ուրոյն ուրոյն շարագրուած կտորներ են : Բաց առաջին և երրորդ մասէն՝ մնացած մասերը «Ասոնք են ծնունդները» կամ ասոր նման խօսքերով կը սկսին , և հաւանական է թէ այս խօսքերըն իւրաքանչիւր մասին տիտղոսը կամ վերնագիրն էր , և բոլոր մասերուն ի մի հաւաքուած ատենն այս վերնագիրները պահուած և բնագրին մէջ առնուած են : Առաջին մասն այսպիսի վերնագիր մը չունի . երրորդինը միւսներէն կը տարբերի «գիրք» բառն աւելցնելով , այսինքն՝ փոխանակ ըսելու «Ա-

անք են ծնունդները", կ'ըսէ, "Աս է Ագամին ազգաբանութեան գիրքը:"

Ծննդոց գիրքը կը սկսի սա խօսքերով. "Սկիզբէն Աստուած երկինքը ու երկիրը ստեղծեց:" Ըսուած չէ թէ այս սկիզբը երբ էր. տա՛մը հազար թէ տասը միլիոն տարի առաջ: Գիրքը սա կը յայտնէ թէ երկինք և երկիր սկիզբ ունեցան, յաւիտենական չեն. կար ժամանակ՝ երբ ոչ անոնք ոչ անոնց նիւթը գոյութիւն ունէին, և Աստուծոյ արարչական կարողութեամբն ի գոյութիւն եկան: Ստեղծել թարգմանուած բառը բնագրին մէջ չի նշանակեր նոր կերպ մը տալ կամ յարդարել, կարգի դնել ինչ որ արդէն կայ, այլ նոր բանի մը գոյութիւն տալ: Աստուած թարգմանուած բառն ալ (Էլեհիմ) կը նշանակէ Պաշտելի կամ Հօր և Գերագոյն: Էլուհիմ, Աստուած, բառը յոգնակի բլլալուն համար ոմանք կը կարծեն թէ անով Աստուածութեան միութեանը մէջ Երրորդութեան վարդապետութիւնը կ'ակնարկուի. վարդապետութիւն մը՝ որ յետոյ աւելի յստակ կերպով յայտնուեցաւ: Երկիր և երկինք բառերով կ'իմացուին բոլոր նիւթեղէն մարմինները. Երկիրը որուն վրայ կը բնակինք, Արեգակը, Լուսինն ու անհամար Աստղերը: Ծննդոց գիրքն իմացնելէն ետքը թէ բոլոր այս մարմիններն իրենց գոյութիւնն Աստուծմէ ունեցան՝ կը սկսի երկրորդ համարին մէջ նկարագրել երկրիս վիճակն առոր ստեղծուելէն ետքը, այսինքն թէ "Երկիրը անձև և պարապ էր. և անդունդին՝ վրայ խաւար կար:" Ըսել կ'ուզէ թէ խառնակութիւն և ամայութիւն էր. երկիրն ու ջուրը, օգն ու շոգին խառն էին. ընդարձակ մենչող Ովկիանոս էր՝ խիտ և ծանր շոգևով ծածկուած: Թէ այս վիճակը որչափ ատեն տևեց՝ յիշուած չէ. թերեւս աւելի քան տասը հազար տարի: Երկրաբանից քննութիւնները կը ցուցնեն թէ երկրիս մակերևոյթը կազմող քարերը կամ ժայռերը ժամանակի երկայն շրջաններու մէջ հետզհետէ կազմուած են, և թէ անոնց շատերն Ադամայ ստեղծմանը սովորաբար ընծայուած ժամանակէն, այսինքն նախ քան զՔրիստոս իբր 4000 տարուան միջոցէ մը շատ հին ասեաններու մէջ կազմուած են: Երկրիս այս կազմութեանը նկատմամբ երկրաբանական ուսման

ազգացյցները Սրբազան մատենագրաց խօզրերուն հետ բազմաատելով՝ կրնանք հետևցնել թէ երկրիս՝ այս գիրքին առաջին համարին մէջ յիշուած առաջին ստեղծմանն ու երկրորդ համարէն ետքը եկող համարներուն մէջ նկարագրուած դէպքերուն մէջտեղ շատ երկար ժամանակի միջոց մը անցած է, և թէ՛ երկրորդ համարին մէջ նկարագրուած երկրիս «անձև ու պարագ»՝ վիճակը թերեւս միլիոնաւոր տարիներ տևեց: Արդարեւ երկրիս այն ժամանակի վիճակը բազմատուելով այն վիճակին հետ զոր հիմա կը տեսնենք՝ խառնակութեան և ամայութեան վիճակ էր. բայց այն վիճակին տևողութեանը միջոցին Աստուած միշտ կը գործէր, և երկիրս կազմող տարերաց մէջ փոփոխութիւններ յառաջ կը բերէր: Այս գործելը ցուցուած է Սուրբ գիրքին սա խօզորով թէ՛ «Աստուծոյ Հոգին ջուրերուն՝ վրայ կը շարժէր»:

Երկրաբանք այս երկար ժամանակին մէջ գործուած փոփոխութեանց արդիւնքը կը տեսնենք քարերու կամ ժայռերու այլեւայլ շարքերուն մէջ:

Հիմա 3 համարին տուած տեղեկութեանը գալով, յայտնի է թէ՛ այս համարին խօսքը, «Աստուած ըսաւ, Լոյս ըլլայ. ու լոյս եղաւ», երկրիս նկատմամբ պէտք է հասկնալ: Ի հարկէ այնպէս չի հասկցուիր թէ՛ անկէ առաջ տիեզերաց ուրիշ մասերուն մէջ լոյս չկար, այլ թէ՛ մինչև անատեն երկրիս վրայ լոյս ծագած չէր, և Աստուած այնպէս ըրաւ որ երկրիս վրայ ալ լոյս ծագեց, այսինքն լուսոյն թափանցել տուաւ այն խաւարը որ մինչև անատեն երկրիս երեսը ծածկած էր: Որովհետև արեգական, լուսնին և աստղերուն երկրիս վրայ երեւնալը յաջորդ համարներուն պատմութենէն ետքը կը յիշուի, ասկէ կը հետևցնենք թէ լոյսին խաւարը թափանցելն ալ այնչափ միայն եղաւ՝ որչափ հարկաւոր էր որ տիւ և գիշեր ըլլար: Երկիրս ծածկող թանձր և ծանր շոգին ըստ մասին միայն փարատեցաւ, և լոյսը տակաւին նուազ էր. բայց և այնպէս եղած փոփոխութիւնն այնչափ օգտակար էր երկրիս համար որ Աստուած այն նուազ լոյսն ալ բարի տեսաւ: Դարձեալ այս նոր վիճակն այնչափ տարբեր էր առջի խաւարին վիճակէն որ Սուրբ գիրք յարմար կը տեսնէ առջի խա-

ւարին վիճակը գեղեր կոչել, այս նոր աղօս լուսաւոր ժամա-
նակն ալ՝ ցորեկ : Լուսոյ ծագելէն ետքը՝ 6, 7 և 8 համարնե-
րուն մէջ նկարագրուած փոփոխութիւնը եղաւ արգէն յիշուած
Ջրային շոգւոյն նկատմամբ, որ մինչև անասնն օդը ը-
ջուցած և երկրիս երեսը ծածկած էր, թէպէտ լոյսը չափով մը
թափանցած էր անոր մէջ :

Այս շագին բազկացնող ջուրը որ մինչև անասնն երկիրս
կը պատեր՝ բաժնուեցաւ. մէկ մասը երկրիս երեսին վրայ ժող-
վուեցաւ, մէկ ուրիշ մասն ալ երկրիս մակերեւութէն վեր լու-
սացող ամպերուն մէջ ամփոփուեցաւ : Զուրերուն այս երկու
բաժնին մէջտեղն էր օդը, որուն մէջ ամպերը մեր գլխէն
վեր իբրև հաստատուն կամարի մը վրայ կեցած կ'երեւան,
և այս երեւութին նայելով՝ Հաստատութիւն անունը տրուած
է օդին այն մասին, որ ուրիշ տեղեր երկինք ալ կաշուած է :
Այսպէս երկրիս երեսին վրայ ժողվուած ջուրն անոր բարձր
մտկերեւոյթը ծածկեցին, և այս պատճառաւ 9 և 10 համար-
ներուն մէջ նկարագրուած փոփոխութիւնը հարկ եղաւ, այ-
սինքն այն ջուրերը ժողվել այնպէս՝ որ անոնք երկրիս մակե-
րեւութին այլևայլ մասերը միայն գրաւէին : Ասիկա հաւանա-
կանապէս կատարուեցաւ մակերեւութին այլևայլ մասանց
բարձրանալովը և ուրիշ մասերուն խոռոչանալովը, այնպէս
որ ջուրերը խոռոչացեալ կողմը վազելով ովկիանոսն ու ծովերը
կազմեցին. բարձրացած մասերէն ալ եղան կղզիներ, ցամաք-
ներ և լեռներ : Երկրարանք ժայռերուն այլևայլ խաւերուն
այժմու վիճակէն կ'ազատուցանեն թէ երկրիս մակերեւութին
վրայ այն բարձրանալն ու խոռոչանալն իրօք եղան : Զորօրի-
նակ աներկբայ ազատուցներ կը գանեն թէ երկրիս այժմու մա-
կերեւութին վրայ ամենէն բարձր լեռանց ոմանք ատենօք ջու-
րին տակն էին, և իրենց այժմու դիրքն առին երկրիս մէջ
պատահած մեծամեծ և սաստիկ ցնցումներու միջոցաւ :

Երբ ջրոյ և ցամաքի վերոյիշեալ բաժանումը տեղի ունեցաւ,
ցամաքն անմիջապէս սկսաւ աստուածային հրամանաւ ամէն
տեսակ ըլլա յառաջ բերել (11—13 համարներ) : Այս բոյսերը
երեք դաս կամ կարգ բաժնուած կը յիշուին, այսինքն գալա-
րի, խոտ և ծառ : Առաջին տեսակին կը վերաբերին այն ըլլա-

սերը որ սերմ՝ չունին . երկրորդ՝ անոնք որոց սերմը յայտնի կը տեսնուի , և երրորդ՝ անոնք որոց սերմն իրենց պտղոյն մէջ ծածկուած է :

Այս 13 համարներուն մէջ նկարագրուած փոփոխութիւնները վեցօրեայ արարչագործութեան առաջին երեք օրուան գործքերն էին : Մնացեալ երեք օրուան պատմութենէն պիտի տեսնուի որ այս վերջին երեք օրուան ամէն մէկուն գործքերն՝ առաջին երեք օրուան մէկուն կամ միւսին հետ առընչութիւն ունին : Զորօրինակ՝ հրորդ օրուան գործքերը կը պատասխանեն առաջին օրուան գործքերուն : Առաջին օրը «լոյս եղաւ» երկրիս վրայ . բայց հաւանականապէս, ինչպէս արդէն տեսանք , այս լոյսը շատ աղօտ էր . և միայն ցորեկը դիշերէն զանազանելու բաւական էր , ուստի և առաջին օրուան գործը հրորդ օրուան մէջ ամբողջացաւ արեգական , լուսնին և աստղերուն երեւնալովը : Նշանակէս Երրորդ օրուան գործը կը պատասխանէ Զորդ օրուանին , և զայն կ'ամբողջացնէ : Երկրորդ օրը մինչև անաստե՛ն երկրիս բոլորակը շողւոյ նման տարածուած ջուրերը ժողվեւեցան , մէկ մասը երկրիս երեսին վրայ , մէկ մասն ալ վերն ամպերու մէջ . երկուքին մէջտեղն էր մթնալորտը : Հինգերորդ օրուան մէջ երկրիս երեսին ջուրերը լցան ձուկերով , մթնալորտը կամ օդն ալ լցաւ թռչուններով : Նմանապէս Երրորդ օրուան գործքերը լրումն են Զորդ օրուան գործքերուն : Երրորդ օրը ցամաքը երեցաւ . Երրորդին մէջ այն ցամաքին վրայ կենդանի շնչաւորներ , այսինքն՝ «անասուններ , սողուններ ու երկրի գազաններ» բազմացան , և ամենէն ետքը ստեղծուեցաւ մարդը , որուն իշխանութիւն տրուեցաւ ձկանց , թռչնոց և երկրիս գազաններուն վրայ :

Դառնանք հիմա մտնուաւոր կերպով խօսելու այս գլխոյն 14—19 համարներուն մէջ յիշուած հրորդ օրուան արարչագործութեան վրայ : Հոն՝ «Երկնից հաստատութեանը մէջ լուսաւորներ ըլլան» խօսքէն պէտք չէ այնպէս հասկնալ թէ արեգակը , լուսնին ու աստղերն այն օրը ստեղծուեցան . ընդհակառակն՝ շատ պատճառ կայ կարծելու թէ անոնք ի վաղուց կային , և թէ անոնց արարչութիւնը , ինչպէս նաեւ երկրագունիսինը , յիշուած է առաջին համարին մէջ , ուր կ'ըսուի .

Թէ « Սկիզբէն Աստուած երկինքը ու երկիրը ստեղծեց : » Երկինք և երկիր բառերով, ինչպէս վերը բտուեցաւ, կը հասկըցուի ամէն նիւթեղէն մարմին, թէ մեր բնական երկիրը և թէ արեգակը, լուսինը և անհամար աստղերը :

Ի՞նչ կատարուեցաւ ուրեմն հրորդ օրը : Ասոր կը պատասխանենք, թէ արեգակը որ արդէն ի վաղուց կար, բայց մինչև անատեն դեռ անոր լոյսը միայն կըցած էր երկրիս երեսը ծածկող տեսակ մը մառախուղէն այնչափ թափանցել որ, ինչպէս ըսինք, ցորեկը գիշերէն զանազանուէր, չորրորդ օրը սկըսաւ հաստատութեան մէջ որոշ և պայծառ ծագիլ. գիշերն ալ լուսինն ու աստղերը նոյնպէս սկսան պարզ և յստակ տեսնուիլ : Աս երկնային մարմինները սկսան կատարել այն պաշտանները զոր տակաւին երկրիս բնակիչներուն համար կը կատարեն. արեգակը, այն « մեծ լուսաւորը », սկսաւ ցորեկուան իշխել, այսինքն կանոնաւոր կերպով ելլելովն ու մտնելովը օրուան սկիզբն ու վերջն աւելի որոշ կերպով ցուցնել, և իր լուսոյն ու ջերմութեան ազդեցութիւնը երկրիս վրայ տարածել. անոր ջերմութեան աւելնալը և պակսին ալ նշան եղաւ տարւոյն եղանակները որոշելու : Իսկ « պղտիկ լուսաւորը », այն է լուսինը, սկսաւ գիշերուան իշխել՝ ոչ միայն խաւարը մեղմացնելով, այլև իր պէսպէս լուսնական երեւոյթներովը տարւոյն աւելի մանր բաժանումները, այսինքն ամիսները, որոշելու ծառայելով : Այսպէս արեգակը, լուսինը և աստեղք իրենց պէսպէս երեւումներովը և շարժումներովը նշան եղան ժամանակին այլևայլ բաժանումները, ինչպէս՝ օր, ամիս, եղանակ, տարի, սրոշելու :

Չորրորդ օրուան արարչագործութիւնը որ, ինչպէս ըսինք, առաջին օրուան հետ կապակցութիւն ունի, և անոր լրումն է՝ պատշաճ կերպով անմիջապէս Յրորդ օրուան գործքերէն ետքը եկաւ, վասն զի արեգական ճառագայթներուն պայծառ լոյսն ու ջերմութիւնը շատ կարեւոր էին Յրորդ օրուան մէջ երկրիս երեսը ծածկող բուսոց և կանաչեղինաց աճմանն ու զարգացմանը :

Այս չորս օրերուն մէջ երկիրս հետզհետէ պատրաստուեցաւ զգայուն էակաց, այսինքն անասնոց և մարդուս, բնա-

կարան ըլլալու . բայց դեռ կենդանի մը գոյացած չէր : Երկիրս արդարեւ կանաչութեամբ զարդարուած էր , սակայն առանց բնակչի ըլլալով ընդարձակ անապատի մը պէս էր : Յիշեալ գլխոյն 2 համարին մէջ ըսուած է թէ «երկիրը անձեւ ու պարապ էր» : Այս թերութեանց առաջինը , այն է անձեւութիւնը , վերջաւ ցամաք երկրին ջուրէն բաժնուելովն ու բուսական կենդ զարդարուելովը : Հիմա երկրորդ թերութիւնը , այսինքն պարապութիւնը , պիտի վերնար կենդանեաց կամ շնչաւորաց ստեղծմամբ :

Հինգերորդ օրուան գործը , ինչպէս արդէն տեսանք , մասնաւոր կապակցութիւն ունի երկրորդ օրուան արարչութեան հետ , և զայն կը կատարելագործէ : Հաստատութիւնը , կամ երկրորդ օրուան մէջ երկնից կամարին ու երկրիս երեսին մէջ տեղ գրուած այն ընդարձակ միջոցը , հիմա (հինգերորդ օրուան մէջ) թռչուններով լեցուեցաւ . երկրիս երեսին վրայ ջուրերն ալ ձուկերով : «Ստեղծեց» բառը , որ առաջին համարին մէջ երկնից ու երկրի արարչութեան յիշուած ատեն գործածուած է , այս հինգերորդ օրուան արարչութեան պատճառով մեծ մասնով մէջ նորէն կը գործածուի : 3 համարէն մինչեւ 19 համարը նկարագրուած գործողութիւններուն մէջ ալ արդարեւ աստուածային կարողութիւնը յայտնի կը տեսնուի . բայց այն գործողութիւններն ոչ այնչափ նոր ստեղծումներ էին , որչափ արդէն ստեղծուած բաներուն մէջ և վրան փոփոխութիւններ : Զարօրինակ՝ առաջին օրուան գործն հաւանականապէս լոյս ստեղծել չէր , այլ տիեզերաց ուրիշ մասերուն մէջ արդէն եղած լոյսը բերել կամ թափանցել տալ երկրիս երեսին վրայ : Այսպէս նաև երկրորդ օրուան մէջ , օդն ու ջուրը որ արդէն կային՝ իրարմէ զատուեցան : Երրորդ օրուան մէջ ալ ցամաքը կամ հողն ու ջուրը որ նոյնպէս կային՝ բաժնուեցան , և չորրորդ օրուան մէջ արեգակը , լուսինն ու աստղերը որ արդէն կային՝ իրրեւ լուսաւորներ հաստատութեան մէջ իրենց յատուկ պաշտօններն առին : Բայց շնչաւորաց սկզբնաւորութիւնը յայտնապէս կ'ընծայուի ստեղծագործող կարողութեան մասնաւոր մէկ ներգործութեանը : Արդարեւ հոս ալ կը պատմուի թէ Աստուած ըսաւ , «Զուրերը կենդանութեան շունչ :

ունեցող սողուններ հանեն , ” բայց կ'երեւի թէ այս խօսքը վերաբերութիւն ունի մանաւանդ տեղւոյն կամ աարբին որուն մէջ անոնք պիտի շարժէին՝ քան անանց ստեղծագործութեան կերպին . ճիշդ ինչպէս որ ըսուած է նաեւ թէ՛ «Թըւ-չունները երկրի վրայ՝ երկնից հաստատութեանը երեսը թըւ-չին : ” Բայց ապաքէն 21 համարին մէջ բացայայտ կը զրուցուի թէ անոնք (շնչաւորները) ստեղծագործութեան մասնաւոր ներգործութեամբ եկան ի գոյութիւն :

Յիշեալ հինգերորդ օրուան արարչութեան առանձին մէկ յատկութիւնն ալ սա է որ Աստուած իր այս նոր արարածները, շնչաւորները, օրհնեց : Այս օրհնութեամբ ձուկերը բազմանալով ծովերը պիտի լեցնէին , թռչունք ևս օդին մէջ պիտի բազմանային : Կ'երեւի թէ ասով սա հասկցնել կ'ուզուի թէ , ի սկզբան , արարչութեան ատեն , ձկանց և թռչնաց թիւը շատ չէր , այլ անոնց այլևայլ տեսակներէն միայն քիչեր ստեղծուեցան , և այն քիչերը բազմանալով օդն ու ջուրը լեցուցին : Այս նկատմամբ կ'երեւի թէ շնչականաց և բուսականաց յառաջ գալուն կամ ստեղծուելուն մէջտեղ տարբերութիւն կայ : Երբ բոյսերը գոյացան , բոլոր երկրիս երեսը , աստուածային հրամանին համեմատ , խոտ և բանջար և ծառ յառաջ եկաւ . ոչ թէ ասաջ առդին անդին քիչ բուսան և յետոյ շատնալով բոլոր երկրիս երեսը ծածկեցին , այլ համայն բուսեղէնք միանգամայն գուրս ելան ամէն տեղ , այնպէս որ երկրիս բոլոր ցամաքին երեսը յանկարծ ամէն տեսակ կանաչութեամբ զարգարուեցաւ : Շնչաւորաց բազմանալն անոնց ստեղծուելէն ետքը եղած է հետզհետէ , իրրեւ կատարումն ապտուածային օրհնութեան :

Թերեւս բոլոր անասունք մէկէն այս ինչ տեղ չստեղծուեցան՝ անկէ երկրիս երեսին վրայ սփռուելու համար , այլ անոնց այլևայլ տեսակները գոյացան քանի մը կեդրոնական տեղեր , և յետոյ այն այլևայլ կեդրոնական տեղերէն տարածուեցան ուրիշ երկիրներու և կլիմաներու մէջ ուր հիմա գլխաւորապէս կը գտնուին : Երկրիս այլևայլ մասերուն մէջ աարբեր տարբեր անասնոց մնացորդներ գտնուելէն կ'երեւի թէ այսպէս եղած է , վեցերորդ օրուան արարչագործութիւնը , ինչպէս արդէն

բառեցաւ, կը պատասխանէ երրորդ օրուան արարչագործու-
թեան, և զայն կ'ամբողջացնէ: Երրորդ օրուան մէջ ցամա-
քը երեցաւ, և ըյտերով, այսինքն խոտերով և պտղատու
ծառերով, զարդարուեցաւ: Ա՛յ եցերորդին մէջ ստեղծուեցան
(“ շնչաւոր ” կենդանիք արդէն պատրաստուած ցամաքին վրայ
բնակելու, և երկրին խոտերէն ու ծառերուն պտուղներէն կե-
րակրուելու . ի վախճանի ստեղծուեցաւ մարդն իբրեւ տէր ա-
մենուն վրայ իշխելու: Կենդանիք կը յիշուին իբրեւ երեք դաս
կամ տեսակ . նախ՝ ընտանի անասունք որ մարդուս այլևայլ
պիտոյիցը կը ծառայեն, ինչպէս ուղտը, ձին, եզը, կովը,
օչխարը, և այլ սոցին նմանք: Երկրորդ՝ սողուններ կամ զե-
ռաւաններ, այսինքն ասորին աստիճանի անասունք կամ սող-
նոց այլևայլ տեսակները . և երրորդ՝ երկրիս գազանները, այ-
սինքն վայրի անասունք որ մարդոց բնակութենէն հեռու ա-
բանձին կ'ապրին:

Այս այլևայլ դասու կենդանեաց ստեղծուելէն ետքը, Ա-
րարիչն արարչագործութեան վերջին գործը կամ պսակը գո-
յացուց, այն է Մարդ կոչուած արարածը: Այս վերջին գոր-
ծին կարեւորութիւնն անկէ յայտնի է, որ Սուրբ գիրք ասոր
արարչութիւնն իբրեւ խորհրդով և որոշմամբ եղած կը պատմէ:
Ուրիշ արարածոց ստեղծումը պատմուած ատեն պարզապէս
կ'ըսուի “ Ու ըսաւ Աստուած, Երկիրը կանայն խոտ բուսցընէ, ”
կամ “ Աստուած ստեղծեց մեծամեծ կէտերը, ” և “ Աստուած՝
երկրի գազանները . . . ըրաւ: ” Իսկ մարդուն արարչագործու-
թեանը գալով կ'ըսուի. “ Ըսաւ Աստուած, Մեր պատկերին
ու մեր նմանութեանը պէս մարդ բնեք, և այլն: ” Հոս ինդիք
է թէ ի՛նչ կը հասկցուի սա խօզքէն, “ Մեր պատկերին ու
մեր նմանութեանը պէս մարդ բնեք: ” “ Մեր ” յղբնակի դեր-
անուամբ նշանակուած անձինք ո՞վ են: Ոմանք կ'ըսեն թէ
յղբնակի ձեւը գործածուած է Աստուծոյ արժանապատուու-
թիւնը ցուցնելու համար: Այսինքն թէ Աստուած կ'ըսէ “ Ը-
նեք, ” ինչպէս որ թազաւորները սովորաբար Մենք կ'ըսեն
մանաւանդ քան Ես: Այս մեկնութեան սա պատասխանը
կը տրուի թէ Հին կտակարանին հեղինակներուն ժամանակը
թազաւորաց մէջ դեռ եզակիի տեղ յղբնակի ձեւ գործածե-

լու սովորութիւնը չկար : Եզրիպտոսի փարաւոն թագաւորը կ'ըսէ , “Երազ տեսայ ” (Ծննդ. ԽԱ . 15) . դարձեալ կ'ըսէ Յովսէփին , “Ահա քեզ Եզրիպտոսի բոլոր երկրին վրայ կեցուցի ” (Ծննդ. ԽԱ . 41) : Դարեհ թագաւորն ալ կ'ըսէ , “Ինծմէ հրաման ելլաւ , ևն .” (Դան. Զ . 26 : Եզր. Զ . 8) : Նարուզոդոնոսար կ'ըսէ , “Աս չէ՞ ան մեծ Բաբելոնը՝ որ ես իմ զօրութեամբս շինեցի , ևն .” (Դան. Գ . 30) : Ուստի կ'ըսուի թէ հաւանական չէ որ մարդուն ստեղծման ատենն Աստուծոյ յղբնակի ձեւով խօսած ցուցուելուն բուն պատճառը թագաւորաց մէջ գործածուած այն ոճն ըլլայ , մինչդեռ այն հին ժամանակներուն մէջ այս ոճը նաեւ թագաւորաց մէջ մուտ գաած չէր : Հին մեկնիչք , նորերէն ալ շատերը , կը կարծեն թէ խօսքին այն ձեւը կը ցուցնէ Աստուծոյ միութեան մէջ բազմաւորութիւն , որ աւելի յայտնի կը տեսնուի Նոր կտակարանին Հօր , Որդւոյ և Հոգւոյն սրբոյ վերաբերեալ վարդապետութեան մէջ : (Տես ինչ որ ըսուեցաւ վերը (12 երես) Աստուծոյ (Էլշհիմ) անուան յղբնակի ձեւին վրայ :)

Երբ մարդուն արարչագործութիւնը կը պատմուի , կ'ըսուի թէ “Աստուած իր պատկերովը ստեղծեց մարդը : ” Եւ որովհետեւ Աստուած հոգի է աւանց մարմնոյ , մարդուս վրայ Աստուծոյ պատկերն ըսելով անտարակոյս անոր հոգին հասկընալու ենք և ոչ մարմինը : Ուրեմն այս խօսքին նշանակութիւնը սա պիտի ըլլայ թէ մարդս ալ , Աստուծոյ պէս , բանակաւորութիւն (միտք) , կամեցողութիւն , և իր միտքն ու խորհուրդներն ուրիշին հասկցնելու և իր կամքին որոշումները գործադրելու կարողութիւն ունի : Ուրիշ բառերով ըսեմք , մարդս իմացական և բարոյական գործող է : Պէտք է հասկընալ նաև թէ նորաստեղծ մարդն իր բարոյական և հոգեւոր յատկութիւններուն կողմանէ նման էր իւր Արարչին , այսինքն թէ դէպ ի բարոյական չարք միտելէ ազատ էր , նա մանաւանդ անոր բնական միտումն էր դէպ ի բարոյական կամ հոգեւոր բարին : Այսպէս ի պատկեր Աստուծոյ ստեղծուած մարդուն տրուած է տիրել երկրի և անոր մէջ պարտաւորուած բաներուն : Պատուիրուած է որ երկիրը լեցունէ և անոր տիրէ , ու ծովու ձուկերուն , և երկնից թռչուննե-

բուն և երկրի վրայ սողացող ամէն կենդանիներուն իշխէ : Եթէ Աստուած երկրիս և անոր մէջ պարունակուած բոլոր բաներուն տիրելու կամ իշխելու արտօնութիւնը մարդուն պայպէս յայտնի կերպով առուած չըլլար , մարդս չէր կրնար իրաւունք ունենալ իրեն սեպհականելու Աստուծոյ ստեղծուածներէն և ոչ մին : Մարդս իր սյոժմու իշխանութիւնը ոչ թէ բնական իրաւամբ ունի , այլ իբրեւ շնորհք Աստուծոյ , վասն որոյ պարտական է Աստուծոյ հրամանացը համեմատ իշխել , ուստի և իրաւունք չունի որևիցէ բան անկարգօրէն գործածել , ոչ ալ անասուններն անխնայ և անգութ կերպով վտարել : Մարդս ամէն երկրաւոր բանի վրայ այս իշխանութիւնը գործածած է իր ստեղծման օրէն մինչեւ ցայսօր , և մանաւանդ այս վերջին ժամանակներս , այնպէս որ մարդն հիմա մանաւանդ երկիրս և անոր մէջ պարունակուած ամէն բան իր իշխանութեանը տակ կը նուաճէ : Ծովերու վրայ կը նաւէ , ազնիւ մետաղներ կը հանէ երկրիս բովերէն , գետերուն հոսանքը կը գործածէ իր աղօրիները դարձնելու , ջուրը շոգի բնելով մեծամեծ նաւեր կը քալեցնէ ծովերու երեսը և Ովկիանոսի վրայ , և կամ նոյն շոգևով երկաթուղիներու վրայ կառուց երկայն շարքերը մղել կու տայ . փայլատականց ատենը տեսնուած ելէքտրականութիւնն անգամ կը հնազանդեցնէ իր կարողութեանը , և կը գործածէ զայն քաղքէ քաղաք լուրեր դրկելու անըմբռնելի արագութեամբ : Բոլոր այս բաները մարդուս իշխանութեան և վերակացութեանը տակ են , բայց անոնց ուղիղ գործածութեանը համար մարդ պատասխանատու է Աստուծոյ որ ամենայնի գերագոյն տէրն է :

Մարդուս երկրի և բոլոր անասնոց վրայ տիրելու իշխանութեան հետ կը յիշուի նաեւ թէ արտօնութիւն տրուեցաւ անոր և անասնոց բանջարներ և պտուղներ ուտելու . բայց յիշուած չէ թէ անասնոց միտն ալ ուտելու արտօնութիւն տրուեցաւ : Այսին որոյ ոմանք կը կարծեն թէ մնակերութեան հրաման տրուած չէր ի սկզբան , մինչեւ որ ջրհեղեղէն ետքը յատուկ թոյլտուութիւն եղաւ անասնոց միտ ալ ուտելու (տես Ծննդ . թ . 3) : Ըստ ոմանց , Ծննդոց Գ . 21 համարին պատմութիւնը թէ “Աստուած Ադամին ու-

անոր կնկանը կաշիէ հանդերձներ շինեց, " կը ցուցնէ թէ մեր նախածնողք սկսած էին անասուններ մորթել և անոնց միոն ուտել: "Գիտենք նաեւ որ, " կ'ըսեն, "ի բնէ մեակեր կամ գիշակեր անասունք ի սկզբանէ կային: "

Երբ "երկինքը ու երկիրը՝ և ունոնց ամէն զարգերը" կատարուեցան, "Աստուած . . . եօթներորդ օրը հանդրատացաւ իր ըրած բոլոր գործքերէն: " Ասկէ չի հասկցուի թէ Աստուած իբր թէ աշխատելով յօգնած էր և հանգստացաւ, ինչպէս որ մարդիկ մեծ և երկար ու շարունակ աշխատութենէ ետքը կը հանդչին. այլ բսել կ'ուզուի թէ Աստուած կատարած ըլլալով ինչ որ ընել սահմանած էր՝ արարչագործելէ դադրեցաւ. և իր բոլոր արարածներուն վրայ նայեցաւ հաճութեամբ և ուրախութեամբ: Աստուածաշունչը կը յաւելու թէ "Օրհնեց Աստուած եօթներորդ օրը, ու սրբեց զանիկա: " Օրհնեց բառով անտարակոյս կը հասկցուի թէ Աստուած այն օրն օրհնութեան օր ըրաւ, այսինքն որոշեց որ այն օրն ըլլայ օր ուրախութեան. օր մը՝ յորում մարդիկ ուրիշ օրերէ աւելի զգան Աստուծոյ ներկայութեան ու շնորհաց նշանները: Եւ ինչպէս որ հանգստեան և օրհնութեան պոս եօթներորդ օրն արարչագործութեան արդէն պատմուած 6 շրջաններէն կամ օրերէն ետքը եկաւ, Աստուած ուզեց որ մարդիկ ալ իրենց գործերուն և զբաղմանց տրուած 6 օրէն ետքը՝ ամբողջ օր մը իրենց բոլոր գործերէն դադրելով հանդչին. այնպէս որ այն եօթներորդ օրն ըլլայ անոնց համար օր ուրախութեան, օր խնդրելու և ստանալու Աստուծոյ շնորհացն ու սիրոյն յատուկ նշանները՝ մասնաւոր կերպով աստուածաշտութեան պարապելով:

Երբ Աստուած օրհնեց զմարդ՝ ըսաւ, "Աճեցէք ու շատեցէք, ու երկիրը լեցուցէք," այլովքն հանդերձ: Այս օրհնութիւնը լոկ առաջին մարդուն համար չէր, այլ ամէն ատենուան և ամէն սեռի համօրէն մարդոց համար: Այսպէս նաեւ եօթներորդ օրուան օրհնութիւնը մէկ օրուան համար չէր, այլ ամէն հանդրատեան օրերու համար էր, զորս մարդիկ Աստուծոյ պատուէրին համեմատ պիտի պահէին առյայտ: Բայց և այնպէս այս օրհնութիւնը կրնայ յուսացուիլ բուն հանգստեան կամ տէրունական

առբը օրուան մէջ զոր Աստուած մտանաւոր կերպով պահել պատուիրած է, ոչ թէ այն աստեղաւ կամ հանդէսներու օրերուն մէջ զորս մարդիկ հաստատած և պատուիրած են բանել:

Արարչագործութեան վերոյիշեալ պատմութեան մէջ Աստուծոյ եօթներորդ օրը որքելուն յիշուիլը, նոյնպէս Նահապետաց պատմութեան մէջ ժամանակին եօթնեակներու բաժնուած ըլլալուն յիշուիլը (Մննդ. Է. 10. Ը. 10: 8 որ Բ. 13) ընդհանրապէս փաստ կը համարուի թէ շարժութեան մէջ օր մը հանգիստ ընել հաստատուած է արարչագործութեան ժամանակ, ոչ թէ տասնաբանեայ օրինաց Աինա լեռը հրատարակուած ատենը: Այս պատուէրը պահելու նկատմամբ աստեղաբանէին խօսքն ալ կը հաստատուէ այս կարծիքը: «Հանգըստութեան օրը փոքր Բե՛ր՝ անիկա սուրբ պահելու համար.» փոքր Բե՛ր խօսքը կը ցուցնէ թէ եօթներորդ օրուան հանգըստեան օր ըլլալն անատեն արդէն ծանօթ էր:

Արարչագործութեան պատմութեան մէջ յիշուած օրերուն երկայնութեանը կամ տեւողութեանը վրայ մեկնիչներուն մէջ այլևայլ կարծիք կան: Ոմանք կը կարծեն թէ յիշեալ պատմութեան մէջ օր բոկով կ'իմացուին 24 ժամ երկայնութիւն ունեցող մեր այժմու սոփորական օրերը: Այս կարծիքն ունեցողները կ'ըսեն թէ երկրիս և երկնային մարմնոց կանխաւ ստեղծուած կամ գոյացած ըլլալուն և վեցօրեայ արարչութեան գործերուն ոկուած ժամանակին մէջտեղ շատ երկար միջոց մը անցած էր, և այս երկար միջոցին ատենն էր որ տեղի ունեցան այլևայլ երկրաբանական փոփոխութիւններ որ երկրիս երեսին վրայ և անոր ժայռերուն մէջ յայտնի կը տեսնուին, և որոց կատարմանը համար շատ երկար ժամանակ կը պահանջուէր: «Երբ Աստուած», կ'ըսեն այս մեկնիչները, «այն երկար միջոցը լրանալուն պէս որոշեց երկրիս մարդուն բնակութեանը համար պատրաստել, լրջ ծագեցուց երկրիս երեսին վրայ, ջուրը ցամաքէն բաժնեց, ցամաքին տեսակ տեսակ բանջարներ (կանաչեղէն) բուսցնել, ջուրերուն սողուններ և երկրին շնչաւորներ հանել տուաւ, ,, այլովքն հանգերձ, ինչպէս որ վեցօրեայ արարչութեան պատմութեան մէջ նկարագրուած է. «բայց,» կ'ըսեն, «որովհետեւ այս գոր-

Ժողովութիւններուն կատարմանը համար երկար ժամանակի միջոց չէր պահանջուեր, անոնք մեր սովորական օրերուն պէս, ամէն մէկը 24 ժամէ բաղկացեալ, վեց օրերու մէջ ալ կրնա- յին կատարուած ըլլալ:

Ուրիշները կ'ըսեն թէ, օր բառով կը հասկցուի պարզապէս ժամանակի միջոց մը անորոշ երկայնութեամբ: Ասոնք ի հաս- տատութիւն իրենց կարծեացը՝ արարչագործութեան պատմու- թեան մէջ օր բառին ստեպ կրկնուած ըլլալը մէջ բերելով՝ կ'ըսեն թէ անով յայտնապէս ժամանակի միջոց մը կը հաս- կըցուի, ոչ թէ 24 ժամէ բաղկացեալ օր մը. մանաւանդ որ նոյն Եննոց գիրքին Բ. գլխոյն 4 համարին մէջ, «Ան օրը որ Տէր Աստուած երկիրն ու երկինքը բրաւ, և» ըսուելով՝ արար- չութեան վեց օրերը մէկէն օր կոչուած են: Դարձեալ, կ'ը- սեն, եթէներորդ օրը, յարում Աստուծոյ համար ըս- ուած է թէ «հանգստացաւ», չի կրնար 24 ժամէ բաղ- կացեալ սովորական օր մը ըլլալ, քանզի Աստուծոյ հան- գըստեան օրը, այսինքն արարչագործութենէ դադարումը, ցարգ կը տեւէ: Սուրբ գրոց շատ տեղեր օր թարգմանուած բառը յայտնապէս կը նշանակէ լոկ իմանալ. զորօրինակ՝ Ե- բրեմ. ԽԶ. 21 համարին մէջ ըսուած է, «Կորստեան օրը ... պցելութեան ժամանակը», և յայտնի է թէ հոս օր և իմանալ բառերը միեւնոյն բան կը նշանակեն, այսինքն իմանալի՜ Գլոց 4, առանց որոշելու անոր տեւողութեան չափը: Օր բառին այս նշանակութիւնն ունենալուն շատ օրինակներ կան Սուրբ գրոց մէջ: (Տես Ես. ԺԳ. 6: Աբգ. 13: Բ կորն. Զ. 2, պլ- լովքն հանդերձ:)

Ուտի այս մեկնիչներուն նայելով, 6 օրերն իրարու յաջոր- դող 6 շրջաններ կամ ժամանակի միջոցներ են. իսկ «եւ ի- բրկուն և առտու ըլլալով՝ առաջին օրը եղաւ... երկրորդ օ- րը եղաւ, և այլն», խօսքերն՝ իրարու յաջորդող շրջաններուն սկիզբն և վերջնալը ցուցնելու համար են: Այս իրարու յա- ջորդող երկար ժամանակներուն մէջ, կ'ըսեն յիշեալ մեկ- նիչք, արարչութեան բոլոր գործերը կատարուեցան, և ան- գործարան մարմիններէն սկսեալ, աստիճան աստիճան յառաջ ելլելով՝ տունկերը, ձուկերը և չորքոտանիները, մինչեւ վեր-

ջնայէս ամենուն զախճանն ու գլխաւորը, այն է մարդը, ստեղծուեցաւ: Այս մեկնիչներուն կարծեացը նայելով, երկրաբանական հետազոտութիւնները Սուրբ գրոց պատմութեան մէջ այս նկատմամբ ըսուածները կը հաստատեն: Երկրիս խորերուն և ժայռերուն մէջ գտնուած քարացեալ տունկերէն և անասուններէն յայտնի է թէ նախ տունկերը ստեղծուեցան և ապա անասունները, ստորին տեսակի անասունք ալ, ինչպէս ձուկերն ու սողունները, չղջոտանիներէն և ուրիշ բարձրագոյն կարգի անասուններէն առաջ ստեղծուեցան: Այս երկրորդ տեսակ մեկնութիւնը հիմա գրեթէ առհասարակ ընդունուած է:

Բայց կայ նաեւ ուրիշ մեկնութիւն մը զոր ոմանք լուազոյն կը համարին: Այս մեկնութեան նայելով կը կարծուի թէ Մինգոց Ա. գլխոյն մէջ պատմուած բաները յայտնուեցան Մովսէսի մէկ կամ քանի մը տեսլեամբ, այսինքն թէ Մովսէս ի սկզբան տեսլեան մէջ տեսաւ երկիրս անձեւ և թափուր և թանձր խաւար անոր երեսին վրայ, ինչպէս նկարագրուած է յիշեալ գլխոյն 2 համարին մէջ: Յաջորդ տեսլեան կամ նոյն տեսլեան յաջորդ մասին մէջ տեսաւ լուսոյ թափանցիլն այն խաւարին մէջ (հմբ. 3, 4, 5), յետոյ տեսաւ ջուրերուն բաժնուիլը (հմբ. 6, 7, 8), ցամաքին և բուսոց երեւելը (հմբ. 9—13), ապա արեգական և լուսնոյ ծագելը (հմբ. 14—19), յետոյ ուրիշ տեսլեան կամ միեւնոյն տեսլեան ուրիշ մէկ մասին մէջ տեսաւ ջուրերուն ձուկերով և ողոյն թռչուններով լեցուելը (հմբ. 20—23), հուսկ ուրեմն անասնոց և մարդուն երեւնալը ցամաքին վրայ: Տեսլեան մը այս այլևայլ մասերը, կամ թերեւս այլևայլ տեսիլներ որ այսպէս հեազհետէ նկարուեցան Մովսէսի մտքին առջեւ՝ թուեցան անոր իրրեւ իրարու յաջորդող օրեր որ իրենց առաւօտները և երեկոներն ունէին, և ըստ այսմ Մովսէս օր կոչեց այն տեսիլները կամ տեսլեան մը այլևայլ երեւոյթները: Եթէ մարդ մը, կ'ըսեն երկրաբանք, մարդուս ստեղծուելէն առաջ, երկիրս կազմութեանը երկար երկար միջոցներուն մէջ ժամանակ ժամանակ նայէր երկրագունտին վրայ, պիտի տեսնէր ճիշդ այն բաները զորս կը նկարագրէ Մովսէս իւր վեցօրեայ արարչութեան

պատմութեանը մէջ : Մինչոց առաջին գլուխը մեկնելու ինչ կերպ սր ընդունուի , յայտնի համաձայնութիւն կայ հան նկարագրուած բաներուն և արգի գիտութեան գիւտերուն մէջտեղ , և , ինչպէս երկրաբանութիւնը , նոյնպէս Մովսէս կը ցուցնէ թէ երկիրս առկառ կամաստիճան տատրճան և հետըզհետէ հասաւ այժմու զիճակին : Այս համաձայնութիւնն աւելի ևս զարմանալի կը թուի , երբ կը նկատենք մէկ կողմանէ Սրբազան պատմութեան համառօտութիւնը , և միւս կողմանէ պատմուած դէպքերուն բազմութիւնը և մեծութիւնը :

ԳԼ. Գ

Երբէնական քրախօսք , նախաժնողաց անկուսը և անոնց սերունդին ապականոթիւնը

Գիտնոց մէջ միշտ խնդիր եղած է թէ , մեր նախաժնողաց , Ադամայ և Եւայի , ստեղծուած ժամանակն ո՞ւր էր Եդեմական պարտէզն ուր անմիջ դրուեցան :

Մինչեւ ցարգ այս խնդրոյն վրայ շատ քննութիւններ եղած են , բայց դեռ որոշ բան մը գիտցուած չէ : Սրբազան պատմութիւնը կ'ըսէ , " Տէր Աստուած արեւելքին կողմը Եդեմի մէջ պարտէզ անկեց " (Մինգ. Բ. 8) : Եդեմ բառը Երբայեցերէն կը նշանակէ բերկրութիւն , հաճոյատեօիլ : Ասկէ կը հասկըցուի թէ երկիրը սրուն այս անունը տրուեցաւ՝ շատ գեղեցիկ և արգասաւոր , հաւանականապէս նաեւ շատ ընդարձակ էր : Աստուած այն երկրին կամ գաւառին մէկ մասին մէջ մասնաւոր տեղ մը որոշեց , և զայն միւս շրջակայ մասերէն աւելի շքեղ և փառաւոր կերպիւ զարգարեց , յատկապէս տնոր մէջ ամէն տեսակ պտղատու ծառ բուսցնելով : Այս պարտէզը առաքելու համար , ինչպէս Սրբազան պատմութեան մէջ յիշուած է , Եդեմէն դետ մը ելլելով կը բաժնուէր չորս գլուխ կամ ճիւղ սր կը կաշուէին փիտան , Գեհան , Տեգրիս և

Եփրատ : Առհասարակ ընդունուած կարծիք է թէ, վերջինն այժմու Եփրատ կոչուած գետն էր : Եփրատ Իորայելացոց երկրին մօտ ըլլալով հարկաւ միւսներէն աւելի ծանօթ էր առնոց, վասնորոյ . Աստուածաշունչին մէջ անոր լոկ անսւնը յիշուելով, գիրքին և ընթացքին նկատմամբ բան մը ըսուած չէ : Նշնպէս առհասարակ ընդունուած է թէ, Տիգրիս այժմու Տիգրիսն էր : Բայց որովհետեւ այս գետն Իորայելացոց երկրէն բաւական հեռու էր, անոր նկատմամբ աւելցուած է թէ՛ « Ասիկա Ասորեստանի արեւելեան կողմը կ'երթայ, » և ասիկա Տիգրիսի այժմու ընթացքին յարմար է : Այս երկու գետերուն, Եփրատայ և Տիգրիսի, ափունքը Հայաստանի վերին կողմերն են, և այն ահանց իրարմէ հեռաւորութիւնը շատ քիչ է . կ'ըսուի թէ այն հեռաւորութիւնը տասն և հինգ մղոն կամ երեք ժամու ճամբայ է :

Այս իրողութիւնները զօրաւոր փաստ կը համարուին ըսելու թէ, Եդեմայ պարտէզն այն երկու գետոց ափերուն մօտ տեղ մը եղած ըլլալու էր, բայց երբ ինչոր կ'ըլլայ միւս երկու գետերուն Փիսոնի և Փեհնի վրայ թէ ո՛ւր էին և ինչ ընթացք ունէին, կարծեաց մեծ զանազանութիւն կը տեսնենք : Փիսոնի համար ըսուած է թէ, « Եւիլոյի բոլոր երկիրը կը պտըտի, ուր որ սոկի կայ . » և Փեհնի համար թէ, « Քուշի բոլոր երկիրը կը պտըտի : » Ոմանք կը կարծեն թէ այս երկու գետերն էին Երասի և Կուր, որոց ափունքը նշնպէս Հայաստանի մէջ են Եփրատ և Տիգրիս գետերուն ափանց մօտ, և կը հոսին դէպ արեւելք մինչեւ որ միանալով կը թափին Կասպից ծովը : Ոմանք ալ կը պնդեն թէ Փիսոն Ռիոն է, որ հին աստենն ալ Ֆասիս կը կոչուէր, և Հայաստանի հիւսիսային կողմը բոլորով կու գայ Բօթի, սւր Սեւ ծովը կը թափի :

Այս կարծիքներն ընդունելու դժուարութիւնը յայտ է որ, ապացոյց չկայ թէ այն գաւառները որոց մէջէն այս գետերը կ'անցնին, երբէք Եւիլա և Քուշ կոչուեցան : Ստոյգ է թէ ոմանք յիշելով որ այս գետերը Յունարէն Քողկիս կոչուած գաւառէն կ'անցնէին, այս անուան և Եւիլա բառին մէջտեղ նմանութիւն կը գտնեն : Սա ալ ճշմարիտ է թէ այն երկրին մէջ հին ժամանակները սոկի կը գտնուէր :

Եւելա անունը Սրբազան գիրքերուն մէջ երկու սւրիշ տեղեր ալ յիշուած է : Տես Ծնն. ԻԵ. 18, և Ա. Թագ. ԺԵ. 7 : Այս համարներէն կ'երեւի թէ Եւելա Արարիցյ մէջ Պաղեստինսու հարաւային կողմը կ'իյնար : Քուշ անունը Հին կտակարանին մէջ աւելի յաճախ յիշուած է , և գրեթէ միշտ սեւ մարգոց բնակած տեղերը կը նշանակէ , որ են Ասիցյ մէջ Հնդկաց ովկիանոսի եզերքը , Ափրիկէի մէջ ալ Եգիպտոսի հարաւային կողմերը : Այս սեւ մարգոց երկիրը կը կոչուի նաեւ Եթէոզպիա : Եթէ այս հարաւային հեռաւոր սահմաններուն մէջ գիտցուած Եւելա և Քուշ Ծննդոց գիրքին սկիզբները յիշուածներուն հետ միեւնոյն են , փխտն և Գեհան գետերուն ընթացքը հարկաւ նոյն ուղղութեամբ գէտ այն կողմերը եղած պիտի ըլլար , ուստի սմանք կը կարծեն թէ այն երկու գետերը ինչոս ու Գանգէս և կամ Նեղոս են . կամ թէ հին ատենն Արարիցյ մէջ կային այս անուններով ուրիշ գետեր , որոց ընթացքը ետքը փոխուած կամ քիչուած և անյայտ եղած են երկրիս երեսին վրայ պատահած յեղափոխութեանց պատճառաւ : Թերեւս ջրհեղեղի ժամանակ : Գիտենք որ երկրիս արգանդէն պատճառած ցնցումները , ինչպէս երկրաշարժք և հրարուղիներու պայթմանք , մեծամեծ փոփոխութիւններ յառաջ բերած են երկրիս երեսին վրայ : Նոյնպէս ալ գրեթէ առհասարակ ընդունուած կարծիք է թէ ջրհեղեղին ժամանակ սյապիսի նշանաւոր փոփոխութիւններ շատ եղան :

Արդէն յիշուեցաւ թէ սմանք կը կարծեն թէ երբ Մովսէս Ծննդոց գիրքը գրեց , իր ձեռքն հին գրութիւններ ունէր , և թերեւ զանոնք օրինակեց : Այս մեկնիչները Եգիպտոս վրայ Մովսէսի սակաւ պատմութեան մթութիւնը կ'ընծայեն սաբանին . Մովսէս , կ'ըսեն , այն հին գրութեանց մէջ պատմուածը եղածին պէս օրինակելով , հարկ համարեցաւ անոր վրայ բան աւելցնել : Մովսէսի առաջնորդող Հոգին ալ այդ մասին բան մը չթելադրեց անոր , քանզի ինչպէս կը տեսնուի , Սրբազան պատմութեան նպատակը պարտեզին տեղւոյն և գիրքին վրայ ընդհանուր գաղափար միայն տալ էր , ոչ թէ մանրամասն և ճիշդ տեղեկութիւններ :

Բոլոր այս գիտազութիւններէն կը հետեւի որ , անհար է

արշել թէ մեր նախածնողաց, Ադամայ և Եւայի, նախահան բնակութեան տեղն ուր էր, և թէ այսչափ միայն յայտնի է թէ, այն բնակութիւնը Եփրատ և Տիգրիս գետերէն առողուած երկիրներուն մէջ Եդեմ անուանեալ ընդարձակ գաւառի մը մէկ կողմն էր, բայց թէ ճիշդ ուր էր՝ ծանօթ չէ։

Ոմանք կը կարծեն թէ մեր նախածնողաց գրախտին մէջ փորձուելուն և իյնալուն պատմութիւնն այլաբանական ներկայացում է մեզաց աշխարհք մտնելու եզանակին, այսինքն՝ այլաբանական նկարագիր է մանուսնոց քան իրական գէղջի մը պատմութիւն . բայց այսպիսիներուն բաւական է սա պատահանը աւլ թէ, այս պատմութիւնը Սուրբ գրոց սերիշ մասերուն մէջ իբրեւ իրական գէղջի պատմութիւն ցուցուած է : Տես Յոր ԼԱ. 33 : Բ Կորն. ԺԱ. 3 : Ա Տիմ. Բ. 14 :

Մննդոց գիրքին առաջին գլխոյն 24 համարին մէջ այլևայլ տեղակ շնչաւորներ երկը դաս բաժնուած են, անասուններ, սողուններ և երկրի գազաններ : Եւ որովհետեւ Մննդոց երրորդ գլխոյն առաջին համարին նայելով օձը շնչաւորաց վերջին գասուն, այսինքն գազանաց կը վերաբերէր, ոչ թէ սողնաց, ասկէ ոմանք կը հետեւցնեն թէ, օձն ի սկզբան աւելի բարձր գասու կը վերաբերէր քան հիմա : Նշուել կը կարծեն թէ, մարդուն անկումէն ետքը, օձին, իբրեւ խաբող նենգաւորի, տրուած վճիռը, թէ «փորձի վրայ քայլես, ու կենացդ բոլոր օրերը հող սւաես», կը ցուցնէ թէ օձն առաջ կրնար կանգուն երթալ : Այս կարծեաց ալ սա պատահանը կը տրուի թէ, կանգուն երթալու համար հարկ էր օձին այժմու կազմուածքէն տարբեր կազմուածք ունենալ : Բայց շատ հին ժայռերու մէջ, որ բաւ երկրաբանից հին են քան Ադամայ անկումը, գտնուած են այժմու օձերուն նման քարացեալ օձեր : Սրբազան պատմութիւնը կ'ուզէ ցուցնել օձին բարոյական յատկութիւնը, այսինքն անոր խորամտնակութիւնը, կամ թէ գաւազ և նենգութեամբ իր նպատակը գլուխ հանելու կարողութիւնը : Ստատանան իրեն յարմար գործիք բնութեց այս նենգաւոր գազանը, որով գլուխ հանեց մեր նախածնողաց գէմ իր նենգամիտ գիտաւորութիւնը, ուստի և իբրեւ առաջին փորձիչ «առջի օձը» կոչուած է :

Տես Յայտ. ԺԲ. 9 : Ի. 2 : Այս վկայութիւններէն շատ յայտնի է թէ այն փորձութիւնը նիւթողը բուն Սատանան էր, ինչպէս որ Յովհաննու Ը. գլխոյն 44 համարին մէջ Քրիստոսի խօսքերն ալ նոյնը կը հաստատեն :

Որովհետեւ միայն կայէն և Աբէլ և ապա Սէթ յիշուած են իբրեւ որդիք Ադամայ և Եւայի, ասկէ կարծելու չէ թէ Ադամ և Եւայ ուրիշ զաւակ չունեցան : Եննդոց պատմութիւնը համառօտ բլլալով շատ բաներ լուծեամբ կ'անցնի : Ադամ ու Եւայ հարկաւ ուրիշ զաւակներ ունէին բաց այն երեքէն, մանաւանդ աղջիկներ : Կայէն որ՞՞՞ հետ ամուսնացաւ, եթէ ոչ իր քրոջը հետ : Այսպիսի ամուսնութիւն մը ի սկզբան հարկաւոր էր, ուստի և ներելի, բայց երբ մարդիկ բազմացան, այնուհետեւ ապօրինաւոր համարուեցաւ :

Վեցերորդ գլխոյն առաջին երկու համարներուն ամենէն հաւանական մեկնութիւնը սա է : Հոն յիշուած "Աստուծոյ որդիքը" խօսքը, Սեթայ սերունդը կը նշանակէ. իսկ "մարդոց" աղջիկները՝ կայենէ սերեալ օրիորդները :

Չորրորդ գլխոյն 16 համարին մէջ կայենի համար ըսուած է թէ, "Տէրոջը առջեւէն ելաւ, ու Եդեմի արեւելեան կողմը՝ Նայիդ երկիրը բնակեցաւ : " Շատ հաւանական է թէ, կայէն ու անոր զաւկներն ուղեցին ժամանակ մը հեռանալ Ադամայ միւս զաւկներէն, և այսպէս մնացան զԱստուած և անոր պաշտօնը, մինչդեռ Սեթայ զաւկներն հաւատարիմ մնացին Աստուծոյ ծառայութեանը, ուստի և "Աստուծոյ որդիքը" կոչուեցան : Սեթայ որդւոյն Ենոփայ ժամանակին համար ըսուած է թէ "Ան ասեմը սկսուեցաւ Տէրոջը անունը կանչել : " Ենոփը որ Սեթայ սերունդէն էր, ցուցուած է իբրեւ գերազանց բարեպաշտութեան տէր անձ մը : Չէր յուսացուիր թէ բարոյականութեան մասին պայտէս հակառակ ընաւորութեան տէր երկու սերունդ իրար խառնուէին, սակայն խառնուեցան : Ադամայ որդւոց այս երկու անջատ ճիւղերուն մէջ խնամութիւն սկսաւ : Աստուծոյ որդիքը, այն է բարեպաշտ ընտանիքները, և կայենի որդիքը խնամութեամբ իրարու խառնուեցան : Սակայն այս բանը շատ շուտով և յայտնի կերպով ազականեց բոլորին բարքը, քանզի այս խնամութիւնները

յերուելէն անմիջապէս ետքը կը պատմուի թէ, երկրիս զրայ չարութիւնը կը բազմանար ամէն կարգի մարդոց մէջ. գարծին այս հետեւանքը համաձայն է յաջորդ դարերու մարդոց փորձառութեանը: Երբ բարեպաշտ մարդիկ կ'ամուսնանան այնպիսիներու հետ որ բարեպաշտ չեն և ըլլալ չեն ուզեր, սովորաբար կը հետեւին այս վերջիններուն մանաւանդ քան այս վերջիններն անոնց:

ԳԼ. Դ

Ջրհեղելը

Ջրհեղեղէն առաջ ասորոյ նահապետաց երկայնակեցու թեանը զրայ Եննդոց Ե. գլխոյն տեղեկութեանց նայելով, Ջրհեղելը պատահեցաւ Ագամայ ստեղծման 1656երորդ տարին, այսինքն 2348 տարի յառաջ քան զԾնունդն Քրիստոսի: (Տես մասն Ա. էջ 242 և 243:) Մարդկային ազգին Ջրհեղելով Գնջուելուն համար ցուցուած պատճառն է անհնարին չարութիւնը որուն մէջ ինկած էին մարդիկ: Ոմանք կը կարծեն թէ Ջրհեղեղէն առաջ մարդոց երկայնակեցութիւնը նպաստեց կամ գէթ պատեհութիւն տուաւ մարդոց անզգամութեան մէջ այն աստիճան յառաջ երթալու, և թէ Ջ. գլխոյն 3 համարին վերջին մասին իմաստը սա է թէ մարդոց կեանքը Ջրհեղեղէն ետքը փոխանակ առաջուան պէս երկարելու հարիւրուոր տարիներ՝ սահմանուեցաւ ըլլալ 120 տարի: Ըստ կարծեաց այլոց բոլոր այն համարին իմաստն այս է թէ, Աստուած որ իր Հոգին ասուած էր մարդոց զանոնք լուսաւորելու և ուզիչ առաջնորդելու՝ անսկելով որ այն Հոգւոյն հակառակեցան և մատնեցին զիրենք մարմնոց հեշտութեանց, որոշեց առնել անոնցմէ այն Հոգին: Հոգին պիտի չմնար կամ տիրէր այլևս անոնց զրայ: Բայց և այնպէս իոկոյն և իսպառ պիտի չառնուէր այն Հոգին անոնցմէ, այլ տակաւին 120 տարի պատեհութիւն պիտի տրուէր մարդոց ապաշխարելու: Սա խօզքերը, « զման զի անիկա մարմին

է, " այս վերջին մեկնութեան նայելով, կը ցուցնէ այս որոշման պատճառը, այսինքն թէ մարդիկ յայտնի բրած էին թէ մարմին են, կամ թէ մարմնոյ հեշտութեանց անձնատուր եղան : Յիշեալ 120 տարուան միջոցին Նոյ, որ այն ընդհանուր անդգամութեան մէջ "արգար « կատարեալ մարդ » էր, հրաման ընդունեց Աստուծոյ տապան մը շինել զինք և իր ընտանիքն ազատելու համար գալու ստատկումէն : Դիւթերը որոնցմով պիտի շինուէր տապանը՝ էին նոճոյ փայտ, որ իր թեթեւութեան և տեւահանութեանը պատճառաւ շատ յարմար էր նաւագործութեան :

Տապանը պիտի բաժնուէր խորշերու, այսինքն մանր սենեակներու, տապանին մէջ առնուելու բազմաթիւ անասնոց և գազանաց բնակութեանը համար :

Այն պատուարանը զոր շինել Նոյի պատուիրուեցաւ՝ տապան կը կոչուի ոչ նաւ, և ծոփու վրայ քալող նաւերուն պէտ կայ՝ և թիակ չունեցաւ : Անոր շինութեան նպատակն էր, ինչպէս յայտնի է, ապահովպէս լողալ ջուրերուն մկանանց վրայ . և գիտողութեան արժանի է որ նաւագործութեան արդի փորձերը կը ցուցնեն թէ տապանին ձեւը, որ քան զլոյս նութիւնը 6, և քան զբարձրութիւնը 10 անգամ երկայն էր, յարմարագոյն էր ընդունիլ այնպիսի բեռ մը ինչպիսի էր տապանին բեռը : Տապանին ձեւն ունեցող նաւեր 1/3 աւելի բեռ կրնան առնել քան ուրիշ ձեւ նաւերը, թեպէտ ջուրէրու վրայ քայելու այնչափ յարմար չեն :

Ջրհեղեղին վրայ ուշագրութեան արժանի գլխաւոր խնդիրն անոր ընդարձակութեանը կը վերաբերի, այսինքն թէ հեղեղը բոլոր երկիրս թէ երկրիս երեսին մէկ մասը միայն ծածկեց : Սուրբ գրոց պատմութիւնը կ'ըսէ թէ " բոլոր երկնից տակը եզոզ բարձր լեռները ծածկուեցան, " թէ՛ " երկրի վրայ շարժող ամէն մարմին . . . մեռաւ, " և թէ՛ " երկրի երեսին վրայ եզոզ ամէն եակը ջնջուեցաւ : " Ոմանք այս խօսքերէն կը հետեւցընեն թէ ջրհեղեղն իրօք ընդհանուր էր, բայց ըստ կարծեաց այլոց պէտք է յիշել որ այնպիսի ընդհանուր խօսքեր կը գտնուին Սուրբ գրոց ուրիշ մասերուն մէջ ալ, ուր բառերն, ինչպէս յայտնի է, իրենց բուն գրական նշանակութեամբն առնուելու

չին : Զորքինակ Եննդոց ԽՅ. 56, 57 համարներուն մէջ բա-
 ւաւած է թէ " երկրին բոլոր երեսին վրայ սով եղաւ . " և թէ
 " բոլոր աշխարհ Յգիպտոս կու գային' . . . պաշար ծախա-
 ւանելու : " Այս խօսքերուն հաւանական իմաստն այս է
 թէ , Իսրայէլացւոց և Եգիպտոսացւոց ծանօթ բոլոր դրացի եր-
 կիրներէն կու գային Եգիպտոս ցորեն գնել , ոչ թէ Հնդկաս-
 տանէ , Չինաստանէ և ուրիշ առանց պէս հեռաւոր տեղերէ :
 Նմանապէս Բ Օր . Բ. 25 համարին մէջ կ'ըսուի թէ Ասա-
 ոււած Իսրայէլացւոց " վախը ու սոսկումը բոլոր երկնից տա-
 կը եզոզ ազգերուն վրայ " պիտի գնէր , բայց խօսքը յայտ-
 նապէս դրացի ազգաց համար էր , ոչ թէ երկրիս հեռաւոր
 մասերուն մէջ բնակող ազգաց համար : Դարձեալ Ղ ուկ . Բ. 4
 համարին մէջ կ'ըսուի թէ " Օգոստոս կայսրէն հրաման ե-
 լաւ' որ բոլոր աշխարհ գրուի : " Հոս ալ յայտնի է թէ աւե-
 ասարանիցն ըսել չաւզեր բառին բուն նշանակուածեամբը " բոլոր
 աշխարհ , " այլ Հռոմէական կայսրութեան բոլոր երկիրները :
 Աշխարհի շատ տեղերը Հռոմայեցւոց հպատակ չէին . , և Օ-
 գոստոս հարկաւ չէր կրնար հրամայել աշխարհագիր ընել իր
 իշխանութեանը չվերաբերող երկիրներ : Այս մեկնութեան
 համեմատ ջրհեղեղին վրայ հիմա շատերը կը կարծեն թէ
 իրօք ընդհանուր չէր , այսինքն երկրիս բոլոր երեսը չողողեց ,
 այլ սա մտքը միայն ընդհանուր էր որ Նոյի ժամանակ երկրիս
 մարդարնակ մասը ողողեց : Կը հաշուուի թէ Ագամէն մինչև
 Նոյ , տասը սերնդեան ատենը , երկրիս բնակիչները չորս կամ
 հինգ միլիոնի հասան : Եփրատայ և Տիգրիսի հովիտներուն պէս
 բարեբեր երկրի մը մէջ այսչափ մարդիկ հաւանականապէս այն
 գետերէն շատ հեռու ցրուած չէին : Ուստի ջրհեղեղը , թէեւ
 երկրիս բոլոր երեսին փոքր մէկ մասը միայն ծածկէր , բաւա-
 կան էր գլուխ հանել Աստուծոյ նպատակը որ էր ջնջել բոլոր
 մարդկային ազգը : Թեպէս այսպէս եղաւ : Զրոյ հեղեղ մը
 դալով երկրին այն փոքր մասին վրայ ծածկեց երկիրն այնչափ խա-
 բուրեամբ , որ Նոյի և անոր ընկերներուն տապանին մէջ կը թը-
 ւէր թէ բոլոր բարձր լեռները երկնից տակ ծածկուած էին ջրով :
 Ըստ Սրբազան պատմութեան , բաց ի քառասնօրոցայ ան-
 ձրեւէն , մեծ անդունդին աղբիւրներն ալ բացուեցան : Ասկէ

կրնայ հասկցուիլ թէ երկրաբանական յեղափոխութեամբ մը, զորօրինակ՝ ծովուն յատակը բարձրանալով կամ ծովեզերաց մէկ մասը սուզելով, մեծ ծովուն, թերեւս Արարից ծովուն, ջուրերը եկան զեղան ցամաքին վրայ : Այս ջուրն իրեւ հեզեզ հարաւէն գալով մեծ ուժգնութեամբ կրնար դէպ ի հիւսիս քշել տանիլ տապանը որ, ջուրերը քաշուելէն ետքը, նստէր այն կողմի բարձր լեռներէն մէկուն վրայ, ինչպէս որ կը պատմուի թէ տապանն իրօք նստաւ Արարաւայ լեռանց վրայ : Արարաւ հոս ոչ թէ մասնաւոր լեռան մը անունն է, այլ երկրի մը որ հիմա Հայաստան կը կոչուի : Ուստի պատմութիւնք չի ցուցներ բուն լեռը ուր նստաւ տապանը, այլ միայն երկիրը, որոյ մէկ բարձր մասին վրայ հանգեաւ տապանը : Ընդհանուր կարծիք է թէ այն տեղը ուր տապանը հանգեաւ՝ այն լեռն էր զոր Հայք Մասիս կ'անուանեն, Թուրքերն՝ Աղբը տաղ (Առապար լեռ) և Պարսիկները՝ Գուհի Նուհ (Նոյի լեռ), Լեռան այս գագաթը 14,000 սոք բարձր է շրջակայ գեանէն : Երկու կամ երեք ճանապարհորդք յաջողեցան լեռան մինչեւ գագաթը ելլել, և կը պատմեն թէ վերջին մասն, իր 3,000 սոք, հրեթէ ուզղահայեաց է, և թէ լեռան գլուխը ծածկուած է մշտնջենաւոր ձեամբ : Խորհելով լեռան այնչափ բարձրութիւնը, և գժուարութիւնը զոր պիտի ունենային Նոյ և իրենները լեռնէն վար իջնելու, կրնայ ըսուիլ թէ, եթէ տապանն այս լեռան վրայ նստաւ, այն ուզղահայեաց գագաթէն վար տեղ մը նստած ըլլալու էր :

Ամէն տեսակ անասուն հաւաքելու և զանոնք տապանին մէջ զետեղելու գժուարութիւնն առարկութիւնն է այն գաղափարին դէմ որով կ'ենթադրուի թէ երկրիս բոլոր երեսը ծածկուեցաւ ջրհեղեղէն : Երկարժուի թէ անասուն երկրիս վրայ աւելի քան 8,000 տեսակ անասուն կար, հանգերձ թռչնովք և զեռնովք, և ասարակոյս չկայ թէ անկարելի էր բոլոր այս տեսակներէն եօթնական կամ երկերկու զոյգ անգամ զետեղել տապանին մէջ : Բայ աստի, ինչպէս ստեղծագործութեան պատմութեան վրայ խօսուելով ակնարկուած է (տես Գլ. Բ. էջ 18), պատճառ կայ կարծելու թէ անասունք ոչ թէ ամէնքը միեւնոյն տեղը ստեղծուեցան, այլ ա-

նոնց այլևայլ տեսակներէն ոմանք երկրիս մէկ մասին մէջ , այլք ուրիշ մէկ մասին մէջ ստեղծուեցան , և յետոյ իրենց ընդի տեղերէն տարածուեցան , այնպէս որ , ինչպէս հիմա , անասունն ալ Եւրոպայ , Արեւելեան Ասիա և Ամերիկա կայսին անասուններ որ չկային այն երկրին մէջ ուր Նոյ կը բնակէր : Հիմա երկրիս այլևայլ կողմերը խոռոչներու մէջ կամ գետնին տակ գտնուած տարբեր տարբեր անասնոց սոկրոտին կը ցուցընեն թէ անասնոց այլևայլ տեսակները միշտ այսպէս մասնաւոր տեղերու յատուկ էին : Եթէ ջրհեղեղն ընդհանուր ըլլար , այնպէս որ ջին կամ Ամերիկա գտնուած անասնոց տեսակներն ալ չջնջուէին , անոնցմէ ալ քանի մը զոյգ այն հեռուոր երկիրներէն բերել հարկ պիտի ըլլար : Բայց եթէ , վերի ենթադրութեան համեմատ , ջրհեղեղը երկրիս մարդաբնակ մասը միայն պիտի ծածկէր , աւելորդ էր հեռուոր երկիրներէ որ ազատ պիտի մնային այն հարուածէն՝ անասուններ բերել . և ապաւնը կրնար առնել երկերկու կամ եօթնական զոյգ այն երկրին անասուններէն միայն ուր պիտի ըլլար ջրհեղեղը : Յուրը գիրքին խօսքէն բացարձակապէս չի հասկցուիր թէ ջրհեղեղն ընդհանուր էր , և բոլոր ապացոյցներուն նայելով հաւանական է մանաւանդ թէ տեղական էր սղոզումը , թէպէտ , բաց ի տապանին մէջ ապաւինողներէն , ուրիշ բոլոր մարդիկ միանգամայն երկրիս երեսէն ջնջելու բաւական էր :

Հին ազգաց շատերուն աւանդութիւնը կը յիշէ մեծ և սատակիչ ջրհեղեղ մը որմէ քիչ մարդիկ միայն ազատեցան : Բերոսոս որ Քրիստոսէ իբր 300 տարի առաջ էր և Քաղդէական պատմութիւն մը գրեց՝ ջրհեղեղի մը վրայ Քաղդէացոց մէկ հին աւանդութիւնը կը յիշէ որ շատ մօտ նմանութիւն ունի Եփեսոսց պատմութեանը : Այս աւանդութեան նայելով , դիք Քսիսութրոս անուն անձի մը իմացուցին թէ ջրհեղեղ պիտի ըլլար , և պատուիրեցին նաւ մը շինել ուր պիտի ապաւինէին Քսիսութրոս և ընտանիքը : Անոր պատուէր տրուեցաւ նաեւ անասուններ առնել նաւը , և ստեղծիք թէ անոնց և թէ իրեն և իր ընկերներուն համար : Քսիսութրոս կատարեց այս պատուէրները : Ըստ գուշակութեան եկաւ ջրհեղեղը և բոլոր մարդկային ազգը ջնջուեցաւ : Երբ ջուրերը բաշուեցան , նաւը նըս-

տաւ Հայաստանի մէջ, և Քսիսութրոս արձակեց թռչուններ և Աւարին անգամ անոնք կեր և հանգիստ ոտից չգանելով ետ դարձան : Երկրորդ անգամ եկան՝ կաւով թաթախ ունենալով փքեց մագիչները : Երրորդ անգամ արձակուելով պղեւ ետ չգարձան : Յետ այնորիկ Քսիսութրոս և կիւր և գտաւքքը և նաւապետը նաւէն ելան, և սեղան կանգնելով զոհեր մատուցին աստուածոց : Քաղաքէացւոց հին աւանդութիւններուն վրայ Բերոսոսի այս պատմութիւնը կը հաստատեն արձանագրութիւնք որ մօտերս գանուեցան Նինուէի աւերակներէն հանուած աղիւտներու վրայ :

Չինաց աւանդութիւնները կը յիշեն մարդ մը Ֆաս-հի աւան որ հանգերձ կանամբ և երեք սրբուովք և երեք գոտերքք ազատեցաւ հեղեղէ մը 6,000 տարի առաջ, շէնցուց երկիրը և քաղաքակրթութիւն հաստատեց Չինու մէջ : Կուգուլաֆ, Չիւնու մէջ միտիոնար մը, Պուտասայական մեհենի մը մէջ տեսաւ գեղեցիկ պատկեր մը ողորմութեան աստուածուհւոյն որ վար կը նայէր համատարած ծովու մը վրայ տատանող արկի մը մէջ նստած մարդու մը, մինչ ազաւնի մը, բերանը ձիթենւոյ փեղով, թռչելով կու գար գէպ այն մարդը : Հնդկաստանցիք ալ աւանդութիւն ունին թէ բարեպաշտ մարդ մը Մանու տնուն պատգամ ընդունելով թէ ջրհեղեղ պիտի ըլլար, տապան մը շինեց ուր դրաւ ամէն տեսակ սերմ և եօթը ուրբ էակներ : Այս տապանը երկար տանն հեղեղներէն տարուբերուելէն ետքը, հուով յետոյ նստաւ Հիմալայա լեռանց վրայ : Հոն Մանու նաւէն ելլելով աստուածոց օգնութեամբը նոր մարգկային ցեղ մը ստեղծեց : Նախնի Յոյնք նոյնպէս աւանդութիւն ունէին թէ Դելկադիոն իր կնոջը և աղոցը հետ նաւու մը օգնութեամբ ազատեցաւ հեղեղէ մը որ ջնջեց գրեթէ բոլոր մարգկային ազգը, և թէ այն նաւէն ազաւնի մը արձակեց իմանալու համար թէ ցամբած էր արգեքը հեղեղը : Խաղաղական սփիւթանսի կղզեաց բնակիչներն ալ ունին այսպիսի աւանդութիւններ հեղեղի մը վրայ որով բոլոր մարգիկ հեղձան բաց ի սակաւուց որ նաւակներու կամ լաստերու վրայ ապաւինած էին : Այս աւանդութեանց մին կ'ըսէ թէ ազատելոցս թիւն էր ութ, որ ելան Մըպէնկա, Ֆիճի կղզիներէն մին

Այս պատճառաւ այն կղզւոյն գլխաւորները մասնաւոր պա-
տիւ կ'ընդունին իբրեւ սերունդ այն ութ մարդոց : Ըստ ա-
ւանդութեան Տին Մեքսիկացւոց , ջրհեղեղէն ազատուած
մարդը նախ անգղ մը զրկեց ստուգելու համար թէ ինչպէս էր
երկիրը : Անգղը ետ չդարձաւ , քանզի ջուրին երեսը ծածա-
նող դիակներէն առատ կերակուր գտաւ : Յետոյ զրկեց ուրիշ
թռչուններ , որոց մին որ երգեցիկ թռչուն էր՝ ետ դարձաւ
բերանը տերեւալից ճիւղով :

Այս աւանդութիւնները կատարելապէս համաձայն չեն
Մինգոց պատմութեանը , բայց ամէնքն ալ կը նպաստեն հաս-
տատելու այն պատմութեան գլխաւոր պարագաները , զորո-
րինակ՝ մարդոց ընդհանուր չարութիւնը , ջրհեղեղի գալը , Աս-
տուծմէ պատգամ՝ և պատուէր արուիլը , տապանին շինու-
թիւնը , ազատուած անձանց թիւը , թռչնոց արձակուիլը ,
այլովքն հանգերձ :

ԳԼ Ե

Նոյի զաւակները և անոնց ցրուումը երկրիս վրայ

Հիմա կու գանք Մինգոց գիրքին հինգերորդ մասին որ Ժ-
գլուխը և ԺԱ. ին առաջին 9 համարները պարունակելով Նոյի
երեք որդիներէն սերեալ եթանասուն ազգաց անունները և
այն ազգաց երկրիս վրայ ցրուելուն պատմութիւնը կու տայ :

Դիտելու արժանի է որ այս պատմութեան մէջ Յարեթէ
չորեքտասան սերունդ միայն յիշուած է , իսկ Քամէ՝ երեսուն ,
և Սեմէ՝ քսանեկէց : Ասոր պատճառը թերեւս սա է որ , Յա-
րեթի սերունդը գնաց բնակել երկրիս՝ այն կողմերը որ Աստուա-
ծաշունչին մէջ պատմուած գէպքերուն տեղէն շատ հեռու էին ,
ուստի և սրբազան մատենագիրը հարկ չհամարեցաւ խօսիլ այն
սերնդեան վրայ այնչափ ընդարձակ , որչափ խօսեցաւ Քամոյ
և Սեմոյ սերնդոց վրայ որոցմէ կ'իջնէին Սուրբ գրոց պատ-
մութեան մէջ ստեպ յիշուած ազգերը :

Արդ Յաքեթի սերունդին գալով կ'ենթադրուի թէ անոր սրգւոյն Գոմերէ սերեցան Կիմմերացիք, նախնի բնակիչք Խրիմու, ինչպէս նաեւ Կիմմերացիք և Կեղաք սր գրաւեցին Գերմանիա և Մեծն Բրիտանիա : Մագոգէ սերեցան, ինչպէս կը կարծուի, Սկիւթացիք որ Կասպից ծովուն հիւսիսային և արեւելեան հիւսիսային կողմը բնակեցան, և յետ ժամանակաց թերեւս անցան Ամերիկա :

Մագայէ սերեցան Մեդացիք, այսինքն Մարք, սր բնակեցան Կասպից ծովուն հարաւային, և անկէ դէպ ի հարաւ մինչեւ Հնդկաստան գացին : Յաւանայ սերունդն էին Յոնիացիք կամ Յոյիք որ բնակեցան բուն Յունաստան և փոքուն Ասիոյ արեւմտեան եզերքը : Կը կարծուի թէ Թորէլի և Մասքայ սերունդը բնակեցաւ Սեւ և Կասպից ծովերուն մէջտեղ : Ամանք կը կարծեն թէ Մաժաք, Կետարիոյ հին անունը, Մասք բառէն ելած է : Թիրասէ սերեցան թերեւս Թրակացիք որ Դանուբ գետին մօտ բնակեցան : Գոմերի որդիէն, Արքանասէ, թերեւս սերեցան Գերմանիոյ և Անգղիոյ Սաքսոնները : Բիփաթի սերունդը կը կարծուին այն ազգերը որ բնակեցան Կարպատեան լեռանց մօտ, Սեւ ծովուն արեւմտեան կողմը : Թոգարմա կամ Թորգոմ՝ ընդհանրապէս կը համարուի Հայոց նախահայրը : Եթէ այսպէս է, Թորգոմ բաժնուած ըլլալու է Գոմերի միւս որդիներէն որ, ինչպէս վերը յիշուեցաւ, կը կարծուի թէ գացին դէպ արեւմուտք, մինչեւ Եւրոպա :

Յաքեթի թոռներէն ուրիշ չորս ալ կը յիշուին, այսինքն Եղիսա, Թարսիս, Կիտացիք և Դոգացիք, իբրեւ որդիք Յաւանայ : Թարսիսի սերունդն, ըստ Յովսեփոսի, բնակեցաւ Կիլիկիա, որոյ մայրաքաղաքն էր Տարսոն : Ըստ այլոց, Թարսիս կոչուած երկիրն ի սկզբան Սպանիա էր : Ըստ Յովսեփոսի, Կիտացիք էին Կիպրոս կղզւոյն բնակիչները : Եղիսա և Դոգացիք Յունաց ուրիշ ցեղերուն նախահայրերն էին :

Յաքեթի սերունդին համար կ'ըսուի (Մննդ. Ժ. 5). «Ազգաց կղզիները իբրնց երկիրներովը . . . ասոնցմէ բաժնուեցան : » Սուրբ գրոց մէջ կղզի կը կոչուին երբեմն այն երկիրները ուր Քանանացոց երկրէն ծովով կ'երթուի : Ուստի և Յաքեթի սերունդը կը գտնենք Կասպիական, Սեւ ու Միջերկրական ծո-

վերուն եզերքը : Այս ծովերուն եզերքէն ցրուեցան Յարեթ-
եան ազգերը Եւրոպա , Տիւրքիային և Հարաւային արեւելեան
Ասիա , և յետ ժամանակաց , ինչպէս ոմանք կը կարծեն ,
Ամերիկա :

Քամայ սերունդը բնակեցաւ Ասիոյ Հարաւային կողմը ,
Տիգրիսի և Եփրատոյ ոտորին հովտին մէջ , Արաբիա , Մի-
ջերկրական ծովուն արեւելեան եզերքը , և Ափրիկէ : Ներքովթ ,
որ Քամայ անգրանիկ սրգւոյն Քուշայ սերունդէն էր , հիմնեց
Քարեյնի հաշակաւոր տէրութիւնը : Այս տէրութիւնը տա-
րածեցաւ դէպ ի հիւսիս Տիգրիսի հովտին երկայնութեամբը
մինչև Նինուէ , Ասորեստանի տէրութեան մայրաքաղաքը
(Մննդ. Ժ. 8-12) : Քուշեանք տարածեցան նաեւ դէպ արեւ-
մուտք մինչև Արաբիա և Ափրիկէ : Եգիպտացիք Քուշանունը
կու տային Եգիպտոսի Հարաւային կողմի երկրին որ հիմա Հա-
պէշ կը կոչուի : Ըստ կարծեաց ոմանց յարդեաց , Հապէշ ա-
նունը Քուշ բառէն կը ծագի : Քամայ սերունդը հիմնեց նաեւ
Եգիպտոս : Սուրբ գրոց Եբրայեցերէն բնագրին մէջ Եգիպտո-
սի տրուած սովորական անունն է Մեսարեմ , որ Քամայ երկ-
րորդ սրգւոյն անունն էր : Այս երկրին պիտմաւ անունն է Մը-
սրը : Կը կարծուի թէ Մննդոց Ժ. 13 և 14 համարներուն մէջ
Մեսարեմի սերնդոց տրուած անունները կը վերաբերին քանի
մը փոքր ազգերու որ Ափրիկէի մէջ կը բնակէին Եգիպտոսի
մօտ : Այս ազգերէն մին , փղշտացիք , գաղթելով Ասիա ,
բնակեցան Միջերկրական ծովուն Հարաւային արեւելեան ե-
զերքը : Երեմիայի ԽԶ. գլխոյն Գերորդ համարին մէջ Եգիպ-
տոսի գաշնակից ազգաց հետ կը յիշուին Փուգացիք : Ուստի
կը կարծուի թէ Փուգի սերունդն Ափրիկէի ազգերէն էր : Քա-
մայ չորրորդ սրգին , Քանան , բնակեցաւ Քանան կոչուած եր-
կիրը զոր յետոյ իսրայէլացիք գրաւեցին : Քանանու սերնդոց
մէջ ամենէն նշանաւորներն էին Փիւնիկեցիք որ բռնեցին Մի-
ջերկրական ծովուն եզերքը , փղշտացոց հիւսիսային կողմը , և
հոն շինեցին անուանի քաղաքները Տիւրոս և Սիդոն :

Նշի մնացեալ սրգւոյն Սեմայ սերնդոց պատմութեան սկիզ-
բը , Սեմայ համար կ'ըսուի թէ Եբրայ ըսլոր սրգւոցը հայրն
էր : Ինչո՞ւ համար այս պարագան մասնաւորապէս կը յիշուի :

40 ՍԵՄԱՑ ՍԵՐՆՊԵԱՆ ԲՆԱԿՈՒԹԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐԸ

Անտարակոյս վասն զի Եբերէն կը սերէին Աբրահամ և անոր սերունդը Եբրայեցիք , որոց պատմութիւնը Սուրբ գրոց մէջ այնպէս մեծ տեղ կը բռնէ :

Սեմայ որդւոց մէջ առաջ կը յիշուի Եղամ , որոյ սերունդը ընակեցաւ Պարոկաստան , և որոյ անուամբ կոչուեցաւ այն երկրին մէկ մասը (Մննդ . ԺԴ . 1 , Դան . Ը . 2 , Գործ . Բ . 9) : Սեմայ երկրորդ որդին է Ասուր , որ ի սկզբան Տիմնեց Ասորեստանի թագաւորութիւնը Տիգրիսի հովտին մէջ : Կը թուի սակայն թէ այս երկիրն անցաւ ժամանակ մը Քամայ սերունդին որ թերեւս արտաքսեց Ասուրի սերունդը քիչ մը ժամանակ , և յետոյ ինք արտաքսուեցաւ նորէն նախնի ընակիչներէն : Արփաքսագոս սերունդը կը կարծուի ընակած ըլլալ Ասուրի հիւսիսային կողմի երկիրը : Ղուրթի սերունդէն էին Լիւդացիք որ Փորուն Ասիոյ արեւմտեան մասը ընակեցան : Արամայ սերունդը բռնեց Միջագետաց հիւսիսային մասը և Ասորիք : Կը կարծուի թէ Արամայ որդւոց միոյն , Հուսայ , երկիրն Արարիոյ հիւսիսային կողմն էր , Պաղեստինու և Եփրատայ մէջտեղ : Հոս կը ընակէր Յոր : Մննդոց յիշեալ Ժ . գլխոյն 25-30 համարներուն մէջ մասնաւորապէս կը յիշուին Աբրահամու նախնւոյն Եբերայ որդիքը : Ասոնք բազում էին թուով , բայց անոնց մեծագոյն մասը կը թուի ընակած ըլլալ Արարիա : Յեկտան , Ոփիր , Եւիլա , ինչպէս կը կարծուի , Արարիոյ մէջ ցեղերու կամ տեղերու անուանք էին , թէպէտ ոմանք կը կարծեն թէ Ոփիր Հնդկաստանի կամ արեւելեան Ափրիկէի մէջ էր :

Նոյի որդւոց սերունդներուն ընակութեան վրայ վերը յիշուած պատմութենէն կ'իմացուի թէ Սեմայ սերունդներն այժմեւ Ասիական թուրքիա կոչուած երկրին մեծ մասը բռնեցին , Քամայ սերունդները՝ նոյն երկրին հարաւային մասը և Ափրիկէ , իսկ Յարեթի սերունդները բռնեցին մնացեալ ընդարձակ երկիրներն Ասիոյ մինչեւ հիւսիսային և արեւելեան ու արեւմուտեան ծայրը , և Եւրոպա :

Աբրահան մատենագիրը Ժ . գլխոյն մէջ յետ յիշելոյ Նոյի երեք որդիներէն սերեալ գլխաւոր նահապետաց ոմանց անունները , գլխոյն վերջը կ'ըսէ . «Ձբհեղեղէն ետքը ազգերը ա-

տոնյմէ տարածուեցան երկրի վրայ : " ԺԱ. գլխոյն առաջին 9. համարներուն մէջ, մատենագիրը կը թուի ետ երթալ պատմելու համար դէպք մը որ պատահած ըլլալու է նախ քան զընդհանուր ցրուումն մարդկան, նա մանաւանդ մեծապէս նպատած ըլլալու էր այս ցրուման, եթէ անոր գլխաւոր պատճառը չէր : Երբ մարդկային ազգն ամեցաւ թուով, բնական էր որ ուզէր ցրուիլ երկրիս երեսին վրայ : ԺԱ. գլխոյն հորդ համարին մէջ բտւածէն կը տեսնուի թէ այսպիսի ցրուման միտումն արդէն տեսնուած էր : Այս միտման առաջն առնելու համար առաջարկութիւն եղաւ Սենաարայ դաշտին մէջ շինել շատ բարձր աշտարակ մը և քաղաք մը զոր կարող ըլլային ամէնքը ճանչնալ իրեւ հասարակաց կեդրոն, և այնպէս երկրիս երեսին վրայ շատ հեռու ցրուելէն ազատ մնալ : Բայց այս նպատակին կատարումը խափանեցաւ յաստուածուստ : Մինչեւ անատեն բոլոր մարդկային ազգին լեզուն մի էր . բայց աշտարակաշինութեան ատենը վերին ազգեցութեամբ իւրաքանչիւր ազգատոհմ կամ գերդաստան սկսաւ խօսիլ այնպիսի կերպով զոր միւսները չէին կրնար հասկընալ : Հարկ չէ ենթադրել թէ իւրաքանչիւր գերդաստան բոլորովին նոր լեզու մը խօսեցաւ : Հաւանականագոյն է թէ իւրաքանչիւր գերդաստանի լեզուին տարբերութիւնը կը կայանար ի սկզբան միեւնոյն հասարակաց լեզուն այնպիսի կերպով արտաբերելու մէջ որ միւսները չէին հասկնար, ուստի և կը կարծուէր թէ իւրաքանչիւր ազգատոհմ տարբեր լեզու կը խօսէր : Լեզուաց այս խառնակութեան հետեւանքը սա պիտի ըլլար որ իրարու լեզու հասկցողները միանալով պիտի զատուէին միւսներէն : Եւ կարծուի թէ այս դէպքին տեղը Բաբելոնացոց երկրին մէջ էր, Բաբելոն կոչուած հռչակաւոր քաղքին մօտ : ԺԱ. գլխոյն մէջ յիշուած աշտարակը շինելու ձեռնարկողք ետ կեցան գործէն, և շինուածն հաւանականապէս քայքայեցաւ : Շատ դարեր ետքը Բաբելոնացոց թագաւորը Նարուգոգոնոսոր ուրիշ աշտարակ մը շինեց, ինչպէս հաւանական կ'երեւի, հոս յիշուած նախնի աշտարակին մօտ : Այս երկրորդ աշտարակին աւերակները դեռ կան այժմու Հիլլահ քաղքին մօտ, և կը կոչուին Պորսերա կամ "Լեզուաց

աշտարակը :” Մօտերս հոն սեպածեւ արձանագրութիւն մը գտնուեցաւ որուն մէջ Նարուգոդոնոսոր կ’ըսէ թէ ինք շինեց այն աշտարակը նախորդ թագաւորէ մը շինուած ուրիշ զազեմի աշտարակի մը հիմանց վրայ : Յիշեալ արձանագրութեան մէջ հետեւեալ խօսքը կայ . “Վաղ ժամանակեւ ժողովուրդը թողած էր զայն (հին աշտարակը), չկրնալով իրենց խօսքն ըստ օրինի յայանել :” Այս խօսքը յայտնի ակնարկութիւն է լեզուաց խառնակութեան :

Հիմա երկրի վրայ խօսուած լեզուներուն թիւը կը կարծուի երկու կամ երեք հազար : Ասոնց շատերն ունին նաեւ այլեւայլ ճիւղեր , այնպէս որ լեզուաց և անոնց ճիւղերուն ամբողջ թիւը երբեմն մինչեւ 7,000 ի կը հասնուի : Բայց լեզուաց ուսման ամենէն աւելի ուշագրութիւն ընող գիտունք այս այլեւայլ լեզուաց մէջ բառերու և խօսքի ձևերու կողմանէ կը գտնեն շատ նմանութիւններ որ , ինչպէս այն գիտունք կը կարծեն , լեզուաց միեւնոյն սկիզբէ ծագած ըլլալը կը ցուցնեն : Այս նմանութեանց վրայ յիշեալ գիտունք կը հիմնեն լեզուաց բաժանում մը որ երեքի կը վերածուի հետեւեալ անուններով : 1. Սեմական լեզուք որոց մէջ կը պարունակուին Եբրայեցեւորէնք , Արաբերէնն ու Ասորերէնը : 2. Յարեթական լեզուք : Ասոնց մէջ կը պարունակուին Յունարէնը , Լատիներէնը , Հնդկաց Սանսքրիթ լեզուն և հիւսիսային Ասիոյ և Եւրոպայի մէջ , ինչպէս նաեւ Ամերիկայի Եւրոպացի գաղթականաց մէջ խօսուած գրեթէ բոլոր լեզուները : Այս ցեղ լեզուները երբեմն կը կոչուին նաեւ Արիական , Հնդեւրոպական և կամ Ինդոարեմանական , ցուցնելու համար թէ այս լեզուներն ուստի մինչեւ ուր տարուած են : 3. Քամեան լեզուք : Ասոնց մէջ կը պարունակուին հին Բարեւլացուց լեզուն , Եգիպտացեւորէնք և Ափրիկէի լեզուները : Կան լեզուներ , ինչպէս Չինարէնը , որ այնպէս կը տարբերին վերոյիշեալ երեք ցեղ լեզուներէն որ անոնց կարգը դասուած չեն մինչեւ ցարդ , և երբեմն կը կոչուին Անգաս կամ Դուրանեան լեզուք : Ինչպէս կը տեսնուի , լեզուագիտաց վերոյիշեալ բաժանումը կը պատասխանէ Նոյի երեք որդիներէն սերեալ ազգաց վրայ Եննդոց մէջ յիշուած ազգահամարին : Այս երեք դաս լեզուաց մէջ տեսնուած

նմանութիւնը , որ բոլոր լեզուաց միեւնոյն ոկիզբէ ծագումը կը ցուցնէ , կը նպաստէ հաստատելու Սուրբ գրոց պատմութիւնը թէ աշխարհիս կանխագոյն դարերուն մէջ մարդիկ համախօս և միալեզու էին :

ԳԼ . Զ

Աբրահամ և անոր սերունդը

Ծննդոց գիրքին վեցերորդ մասը կը սկսի ԺԱ. գլխոյն 10ներորդ համարէն : Նախընթաց մասերուն մէջ որբազան մատենագիրը յիշած է մարդկային ազգին նախկին պատմութեան վերաբերեալ քանի մը գլխաւոր դէպք , այսինքն մեր նախածնողաց փորձութիւնն ու անկումը , անոնց մեղքին հետեւանքը որ տեսնուեցաւ անոնց յաջորդ սերունդին յետին չարութեան մէջ , այս չարութեան պատուհասը ջրհեղեղաւ , և երկրիս նորէն բազմամարդանալը Նոյի զաւկներէն : Մարդկային ազգին այս ընդհանուր պատմութիւնը բերած ըլլալով զոր մինչեւ ազգերու ցրուումը երկրիս այլեայլ մասանց վրայ , որբազան մատենագիրն իր պատմութեան այս վեցերորդ մասին մէջ կու գայ այն միմիայն ազգին մասնաւոր պատմութեանը , այսինքն Եբրայեցւոց , որ պահած են ճշմարիտ աստուածածանութիւնն ու աստուածապաշտութիւնը : Մտեւնագիրն այս մասնաւոր պատմութիւնը կը սկսի Եբրայական ազգին նախահօրն Աբրահամն ազգաբանութիւնը տալով : Գիրքին եօթներորդ մասը կը պարունակէ Աբրահամն անձին պատմութիւնը . իսկ մնացեալ չորս մասերը կը պարունակեն Աբրահամն սերունդին պատմութիւնը մինչեւ Իսրայէլացւոց Եգիպտոս երթալը : Աբրահամ Սեմէ կը սերի Աբգաբաագաւ , Սաղայիւ , Եբերաւ , այլովքն հանդերձ : Ծնաւ Քաղդէացւոց Ուր քաղաքը : Այլեայլ կարծիք կան այս քաղքին տեղւոյն

վրայ : Ոմանք կը կարծեն թէ Ուր այժմնու Ուռհա կոչուած քաղքին տեղն էր , ուր կայ մզկիթ մը որ Արրահամու մզկիթ կը կոչուի , և լիճ մը որ կը կոչուի լիճ սիրելւոյն Արրահամու , և որուն մէջ նուիրական ձկունք պահուած են : Բայց ամենէն ընդհանուր կարծիքն այս է թէ Ուր քաղաքը Բաբելոնէն վար էր Եփրատայ եզերքն իբր 425 մղոն հեռու այն տեղէն ուր յիշեալ գետը կը թափի Պարսից ծոցը : Հին Քաղդէայի սահմանին մէջ գտնուած վաղեմի քաղաքներուն ամենէն հին աւերակները հոն կը գտնուին : Այս աւերակաց մէջ աղիւսներու վրայ գտնուած արձանագրութիւնները կը ցուցնեն թէ այն տեղւոյն նախնի անունն էր Հուր : Հրէական հին աւանդութիւնը զոր ունինք Արրահամու ծննդեան տեղւոյն վրայ՝ կը վկայէ թէ այն էր Արրահամու ծննդեան քաղաքը : Յիշեալ աւերակաց մէջ կան նաեւ մեհենի մը աւերակները : Այս մեհենանը նուիրուած էր լուսնոյ աստուծոյն որ կը կոչուէր Հուրբի , որմէ քաղաքը հաւանականապէս առած էր իր անունը : Հոն գտնուած գերեզմաններու բազմութիւնը կը ցուցնէ թէ սրբազան քաղաք համարուած էր այն , և թէ մեռեալներ հեռաւոր տեղերէ հոն կը տարուէին թաղուելու համար , ինչպէս հիմա կը տարուին Քէրպէլա և Մէշիա Ալի որ նոյն երկրին մէջ են : Տեղւոյն այժմու անունն է Մուղէիբ կամ Ում Մուղէիբ : Արդէն տեսանք որ այն տեղը բնակած էին կանխաւ Սեմայ և Քամայ սերունդք միանգամայն : (Տես էջ 40 :) Նաեւ կռապաշտութիւնը վաղուց հաստատուեցաւ հոն : Արրահամու նախնիքը , և թերեւս Արրահամ գլխովին իր պատանեկութեան ատենը , կռապաշտ էին (Յես. ԻԴ. 2) : Բայց երբ ճմարիտ Աստուծմէ յայտնութիւն եղաւ Արրահամու , Արրահամ բաժնուելով իր ազգականներէն , ըստ աստուածային հրամանին եկաւ բնակեցաւ Քանանու հեռաւոր երկիրը , որ այն ատեն Քամեանց ուրիշ մէկ ճիւղին ձեռքն էր : Արրահամու հետ մինչեւ Խառան եկան անոր հայրը Թարա որ անատեն երկերիւրամեայ էր , ինչպէս նաեւ Ղովտ , Արրահամու եղբորորդին , հաւանականապէս նաեւ Նաքոփր , Արրահամու եղբայրը (Մննդ. ԻԴ. 10 և ԻԷ. 43) : Խառան քաղաք էր այժմու Ուռհա քաղքին հարաւային կողմը , Եփրա-

տայ մէկ ճիւղին վրայ որ հիմա Պետրոսի կը կոչուի : Զարդիս փոքր գիւղ է ուր կը բնակին քանի մը Արարացի բնասնիք , բայց տակաւին կը պահէ իւր նախնի անունը : Կ'ըսուի թէ այս տեղւոյն բնակիչները երկար տտեն պահեցին Քաղդէացւոց լեզուն և անոնց գիցապաշտութիւնը :

Ըստ 13 համարի ԺԵ. գլխոյն Եննդոց , ըսուեցաւ Աբրահամին թէ անոր սերունդը պանդուխտ պիտի ըլլար օտար երկիր մը , և հոն գերի պիտի ըլլար 400 տարի : Կը կարծուի թէ այս 400 տարին կը սկսի Իսահակայ (Աբրահամն իսստացեալ որդւոյն) ծնունդէն , և կը տեւէ մինչև Եգիպտոսէ ելքը : Բայց Գաղատացւոց թղթոյն Գ. գլխոյն 17 համարին մէջ ըսուած է թէ Մովսիսական օրէնքը տրուեցաւ Աբրահամին հետ Աստուծոյ կտակը հաստատուելէն 430 տարի ետքը : Ասկէ կրնայ հասկցուիլ թէ Քաղդէացւոց Ուր քաղաքն Աբրահամին հետ առաջին անգամ հաստատուած կտակին ժամանակը 30 տարի առաջ էր քան Իսահակայ ծնունդը : Եւ որովհետեւ ըսուած է Եննդոց ԻԱ. 5 համարին մէջ թէ Աբրահամ հարիւրամեայ էր երբ Իսահակ ծնաւ , կը հետեւի թէ եօթանասնամեայ էր Աբրահամ երբ Աստուած առաջին անգամ երեւցաւ անոր Ուր . և որովհետեւ Եննդոց ԺԲ. 4 համարին մէջ ըսուած է թէ Աբրահամ եօթանասուն և հնգամեայ էր երբ ելաւ Իսահակէն , կը հետեւի թէ Աբրահամ հինգ տարի մնաց այն քաղաքը : Աբրահամ Իսահակէն գնաց Քանանացւոց երկիրը , և բնակեցաւ նախ Սիւքէմ : Բայց մնայուն բնակարան չունէր այն երկրին մէջ , այլ մինչև իր մահը թափառական կեանք կը վարէր , և երկրին բնիկներէն իբրև օտարական կը համարուէր : Նոյնպիսի էր որդին Իսահակ և թոռը Յակոբ , նաեւ Յակոբայ որդիքը որոց պատմութիւնը կը պարունակուի Եննդոց գիրքին մնացեալ մասին մէջ :

Օտար շատ փոյթ տարուեցաւ քննել Եգիպտացւոց մեհակն արձանագրութիւնները որ կը գտնուին հոն գերեզմաններու , հին մեհակներու և ուրիշ հին շինուածոց վրայ , ինչպէս նաեւ պապիւրոսէ տոմսերու վրայ որ Եգիպտացւոց գերեզմաններուն մէջ կը գտնուին : Այս արձանագրութիւններէն առնուած շատ տեղեկութիւններ կը հաստատեն և կը լուսա-

ւորեն Մենդոց գիրքին պատմութիւնը : Գիտունք ընդհանրապէս կը կարծեն թէ Եգիպտոսի բրգունք շինուած են յառաջ քան Աբրահամն ժամանակը , այնպէս որ Աբրահամ տեսած ըլլալու էր զանոնք , եթէ այցելութիւն ըրաւ Եգիպտոսի այն մասին ուր այն շինուածները կան : Պէնիհաստան կոչուած տեղը հին շիրմի մը պատին վրայ կայ նկար մը որ կը ներկայացնէ վրանաբնակ ցեղապետի մը իր ընտանեօքը և իրեն վերաբերեալ մարգկամը Եգիպտոս գալը : Ատոնք նկարուած են որպէս թէ հպատակութիւն և ընծաներ կը մատուցանեն թագաւորին և անոր բարեկամութիւնը կը խնդրեն : Այս օտարականաց կերպարանքէն և հազուատէն կը տեսնուի թէ անոնք Ասիոյ Ամսական ցեղէն էին : Թերեւս չի կրնար կարծուիլ թէ այս նկարը կը ցուցնէ Աբրահամն այցելութիւնը Եգիպտոս , կը ցուցնէ սակայն թէ այնպիսի այցելութիւններ սովորական էին այն հին ատենները : Պապիւրոսէ տամբերուն հնագոյններէն մէկուն վրայ գտնուեցաւ ուրիշ Ասիացի օտարականի մը պատմութիւնը : Այս օտարականն ալ մեծ պատուով ընդունուելով թագաւորէն , եղաւ անոր գլխաւոր խորհրդակցաններէն մին : Շատ մօտ նմանութիւն կը տեսնուի այս պապիւրոսյ տամբերուն վրայ գտնուած թագաւորաց անուններուն և Մենդոց գիրքին մէջ յիշուած անուններուն , զորօրինակ՝ Փարաւոնէ Յովսեփայ արուած անուան , մէջտեղ : Հին յիշատակարանաց վկայութիւններէն յայտնի է թէ Եգիպտոս այն ատենները զարմանալի յաջողութեան մէջ էր , թէ մեծ հոգ կը տարուէր առատ ջուր հայթայթելու երկրին ոռոգման , և սովու աղետից առաջն առնելու , և թէ դրացի երկիրներուն ժողովուրդները սովոր էին սովի ատեններ Եգիպտոս երթալ իրենց պարէն հայթայթելու : Յիշեալ հնագոյն և գեղեցկագոյն յիշատակարանաց մին կոթող մի է որ կայ գեւ Հեղիպոլիս , Գասէրէ քաղքին մօտ : Այս կոթողէն կրնայ մտկարբուիլ շքեղութիւն մեհենին որուն կը վերաբերէր այն կոթողը , և մեծութիւն պատուոյն զոր Փարաւոն տուաւ Յովսեփայ՝ կին տալով անոր այն մեհենին քրմապետին դուստրը : Ի հաստատութիւն Յովսեփայ պատմութեան՝ յիշուելու արժանի է նաև որ , Հերոդոտոս և Դիոդորոս որ Եգիպտոսի պատ-

մութիւնը գրած են՝ կը յիշեն թէ Եգիպտոսի մէջ պատահած սաստիկ սովի մը առթիւ հին թագաւոր մը բարբերկերէն նորէն բաժնեց, և թէ այն բաժանման դրութիւնը կը տեւէր մինչև Հերոդոտոսի ժամանակ, այն է մինչև չորրորդ դար նախ քան զՔրիստոս :

ԳԼ. Է

Եւեց գիրքը

Հրեայք այս գիրքին «Ալէ ելլէ Շէմնիթ» անունը տուած են, (տես երես 2) որ կը նշանակէ «Արդ ասոնք են անունները,» վառն զի այս բառերով կը սկսի Եւեց գիրքին Եբրայեցերէն բնագիրը : Եւեց գիրք անունը տրուեցաւ Եօթանասնից թարգմանութեան հեղինակներէն, վասն զի այս գիրքը կը պատմէ Իսրայէլացւոց Եգիպտոսի երկրէն ելլելը կամ մեկնիլը : Գիրքը կը բաժնուի երկու մաս : Առաջին մասը, Ա. գլխէն մինչև ժԹ. գլուխ, կը պատմէ Եգիպտոսէ ելքը : Երկրորդ մասը, այսինքն Ի. էն մինչև Խ. գլուխները, կը յիշէ այլևայլ օրէնք և պատուէրներ զորո Մովսէս հրամանաւ Աստուծոյ տուաւ Իսրայէլացւոց : Նախնիթաց, այսինքն Ծննդոց, գիրքին մէջ ունինք Աստուծոյ ծառաներուն պատմութիւնն իբրև անհատից և ընտանեաց : Այս գիրքին մէջ կը սկսի Աստուծմէ ընտրուած ժողովրդեան մը պատմութիւնն իբրև ազգի : քահանաներու թագաւորութեան և ուրբ ազգի (Գլ. ժԹ. 6) :

Այս Ներածութեան գիրքին առաջին հատորին մէջ, էջ 244, տրուած հաշուին նայելով, Իսրայէլացւոց ելքն Եգիպտոսէ եղաւ յամին 1491 նախ քան զՔրիստոս ըստ Եբրայական ժամանակագրութեան, կամ յամին 1614 նախ քան զՔրիստոս ըստ ժամանակագրութեան Եօթանասնից : Թէ որչափ ժամանակ անցաւ ի մէջ Յակոբայ Եգիպտոս երթալուն զոր Ծննդոց վերջին գլուխները կը պատմեն, և Իսրայէլացւոց Եգիպտոսէ ելլելուն որ Եւեց գիրքին մէջ կը պատմուի, ասոր

վրայ այլևայլ կարծիք կան : Ոմանք կը կարծեն թէ Ելէց ԺԲ. 40 համարին խօսքը թէ Եգիպտոսի մէջ Իսրայէլի որդւոց բնակութեան ժամանակը 430 տարի էր, կը վերաբերի անոնց արդեամբ յԵգիպտոս բնակելուն՝ Յակոբայ և անոր բոլոր ընտանեաց յիշեալ երկիրը երթալէն ետքը : Նոյն գլխոյն 37 համարին մէջ Եգիպտոսէ ելլող Իսրայէլացւոց թուոյն համար ըսուած է թէ էին 600,000 այր հետեւակ (այսինքն արք որ կրնային հետի երթալ) բաց ի տղայոց : Որովհետեւ կանանց թիւն ալ գրեթէ հաւասար էր արանց թուոյն, երկուքին թիւը կ'ընէր 1,200,000, իսկ տղայոց թիւը թերեւս հաւասար էր արանց և կանանց թուոյն միանգամայն, ուստի և Իսրայէլի որդւոց թիւն էր անատեն իբր 2,400,000 : Անոնք որ կը կարծեն թէ Իսրայէլացւոց բնակութիւնը յԵգիպտոս 430 տարի էր՝ կը պնդեն թէ այսչափ ժամանակ հարկաւոր էր որպէս զի այնչափ բազմանալ կարելի ըլլար այն եօթանասուն հոգւոց, որոցմէ կը բաղկանար Յակոբայ ընտանիքը երբ կ'երթային յԵգիպտոս (Ել. Ա. 5) : Ելէց վեցերորդ գլխոյն մէջ (Տմբ. 16-20) տեղեկութիւն մը կայ Մովսէսի նախնեաց վրայ : Այս տեղեկութեան ցուցակին նայելով Յակոբայ որդին Ղեւի Մովսէսի հաւուն հայրն էր : Այս անհաւատալի կը թուի եթէ ենթադրուի թէ 430 տարի անցաւ Իսրայէլացւոց Եգիպտոս մտնելուն և անկէ ելլելուն մէջտեղ : Այս առարկութեան դէմ պատասխան կը տրուի թէ միջին սերունդներէն ոմանք վերոյիշեալ ցուցակին մէջ հաւանականապէս զանց առնուած են : Գիտենք թէ այսպիսի զանցառութիւնք անսովոր չեն ազգաբանութեան ցուցակաց մէջ : Այլք կ'ըսեն թէ Եգիպտոսի մէջ բնակութեան ժամանակն էր 215 տարի միայն, և կը կարծեն թէ Իսրայէլացւոց թուոյն արագ աճումը պարտի ընծայուել Աստուծոյ մասնաւոր օրհնութեանը : Այսպէս խորհողները կը համարին թէ Մննդոց ԺԵ. 13 համարին մէջ առ Աբրահամ եղած մարգարէութիւնը կը վերաբերէր թէ Աբրահամու բնակութեան ժամանակին Քանանացւոց երկիրը, և թէ անոր սերունդին բնակութեան ժամանակին յԵգիպտոս, վասն զի այս բովանդակ ժամանակին մէջ օտար էին երկրի մը մէջ որ իրենցը չէր, և շատ նեղութիւն և հարստահարութիւն կրեցին : Գաղատացւոց թըզ-

Թոյն Գլ. Գ. 17 համարին մէջ օրինաց տրուելուն համար ըստուած է թէ եղաւ Աբրահամու հետ Աստուծոյ կտակէն 430 տարի ետքը: Վերոյիշեալ մատենագրաց կը թուի թէ առաքելոյն այս խօսքը կը հաստատէ անոնց կարծիքը Եգիպտոսի մէջ արդեամբ բնակութեան ժամանակին վրայ: Քանզի այն 430 տարիէն եթէ հանենք 25 տարին որ անցաւ Աբրահամու հետ կտակին հաստատութենէն ի իսառան մինչեւ Իսահակայ ծնունդը, և 60 տարին Իսահակայ ծննդենէն մինչեւ Յակոբայ ծնունդը (Ծննդ. ԻԵ. 26), և 430 տարին Յակոբայ ծննդենէն մինչեւ անոր երթը յԵգիպտոս (Ծննդ. ԽԷ. 9), ընդ ամէնը 215 տարի, կը մնայ միւս ևս 215 տարի իբրեւ ժամանակ բնակութեան Իսրայելացւոց Եգիպտոսի մէջ:

Եգիպտոսի մէջ բնակութեան տեւողութեանը վերաբերեալ կարծեաց ոչոյն տարբերութիւնը կար նաեւ անուանի Հրեայ պատմագրին, Յովնեպոսի, ժամանակ: Յովնեպոս տեղ մը կ'ըսէ թէ Եգիպտոսի մէջ ծառայութիւնը տեւեց 400 տարի (Հնախօս. Գիրք Բ. Գլ. Թ. Յօդ. Ա.), ուրիշ տեղ մ'ալ յիշեալ ծառայութեան տեւողութեանը 215 տարի կու տայ (Հնախօս Գիրք Բ. Գլ. ԺԵ. Յօդ. Բ.):

Բայց այս ժամանակը թէ աւելի երկայն եղած ըլլայ և թէ աւելի կարճ, Իսրայելացւոց համար յաջող ժամանակ եղած կը թուի: Սակայն հուսկ ուրեմն պարագաները փոխուեցան, և Իսրայելացիք սկսան չարաչար հարստահարուիլ: Այս փոփոխութիւնը կ'ընծայուի զՅովնեփ չճանչցող Թագաւորին գահակալութեանը: Այս Թագաւորը չէր ուզեր Յովնեփայ համազգիներուն ցուցնել այն շնորհքը զոր անոնք վայելած էին նախորդ Թագաւորներէն այն երախտեաց ազազաւ զոր բրած էր Յովնեփ Եգիպտացւոց երկրին:

Մեր առաջին հատորին մէջ (էջ 235 և 236) Հովնե կոչուած Թագաւորաց Եգիպտոս արշաւելուն վրայ խօսուեցաւ, և ըսուեցաւ թէ, ըստ կարծեաց սմանց, հովնեներու դէմ Եգիպտացւոց ատելութիւնը որ կը յիշուի Ծննդ. ԽԶ. 34՝ յառաջ եկած էր այն հարստահարութենէն և անգլթութենէն զոր կրած էին Եգիպտացիք այս հովնե Թագաւորներէն: Եգիպտոսի հուսկեանց տեղեակ ուրիշ անձինք կը

կարծեն թէ հովիւ թագաւորաց արշաւանքն յետոյ էր քան Յովսեփայ ժամանակը, և անոր մահուանն ու Ելեց Ա. գլխոյն մէջ յիշուած գէղքերուն մէջտեղ: Թերեւս այս հովիւները Եգիպտոսի պատմութեան այլեւայլ ժամանակներուն մէջ արշաւանք ըրին այն երկիրը: Ասոնք կը կոչուէին Հիւկոսո (հիւ, թագաւոր, և սո, հովիւ, բառերէն), և կը կարծուի թէ վրանաբնակ ցեղերու գլուխներ էին Ասիայէն, այժմու Արաբացի վաչկատուն ցեղերու (Պետուիններու) պէս: Բնական էր Եգիպտացւոց գարշանօք նայել այս ավազակաբարոյ մարդոց, մինչ կրնար բնաւ թշնամութիւն չըլլալ այս վրանաբնակ ցեղերուն և Իորայելացւոց մէջտեղ որ նոյնպէս հովիւներ էին և բնիկ Ասիացի: Այնպէս որ, եթէ Յովսեփայ ժամանակէն ետքն ալ եղաւ Հիւկոսոներու արշաւանք յԵգիպտոս, Իորայելացիք կրնային արտօնութիւններ վայելել նաեւ անոնց իշխանութեան ատենը: Եգիպտոսի յիշատակարանաց վկայութենէն կը տեսնուի որ այս Հիւկոսոները վերջապէս արտաքսուեցան երկրէն վերին Եգիպտոսի մէջ Թերացի թագաւորի մը ձեռքով որոյ անունն էր Աահմէս կամ Ամփսիս: Կը կարծուի թէ այս էր այն թագաւորը որուն համար կ'ըսուի թէ «Յովսեփը չէր ճանչնար», և թէ չարչարեց Իորայելացիները: Եգիպտոսի այն մասն ուր արշաւած էին հովիւ թագաւորը՝ էր Սասրին կոչուած Եգիպտոս, կամ Նեղոսի բերնին մօտ գաւառը: Այս գաւառին մէկ մասն, այսինքն Գետեմի երկիրը, բռնած էին Իորայելացիք, և եթէ, ինչպէս հաւանական է, Իորայելացիք մարդասիրութիւն տեսան Հիւկոսոներէն անոնց իշխանութեան ատենը, Հիւկոսոները վառող Եգիպտացի թագաւորի մը համար շատ բնական էր կտակածանօք նայել Իորայելացւոց, և տեսնելով թէ շատ էին անոնք, վախնալ թէ գուցէ թշնամւոյն կողմը բռնէին, եթէ Հիւկոսոները փորձէին նորէն գալ տիրել Եգիպտոսի: Ուստի և կրնայ կարծուիլ թէ յիշեալ թագաւորն այսպէս կը խորհէր Իորայելացւոց վրայ, ինչպէս կը պատմուի Ելեց Ա. գլխոյն 9 և 10 համարներուն մէջ: Սա ալ կրնայ հաւանական համարուիլ թէ, Հիւկոսոներուն Եգիպտոս արշաւելէն և վերոյիշեալ գաւառին մէջ շատ տարիներ տիրելէն ետքն անկէ արտաքս-

ման շփոթութիւններուն մէջ, Յովսեփայ և անոր երախտեաց յիշատակը մոռցած էին Եգիպտացիք, և թէ այս պատճառաւ նոր թագաւորը չարչարել անգամ սկսաւ զԽարայեղացիս, որոց այնչափ խնամք տարած էին նախնի թագաւորը ի շնորհս Յովսեփայ: Եգիպտոսի յիշատակարանաց զլայ գրութիւններէն կ'երեւի թէ այս Ասհմէո թագաւորը մեծամեծ շինութիւններ ըրաւ Ստորին Եգիպտոսի մէջ, գորօրինակ՝ բերդեր և շտեմարաններ շինեց, և այս բաներն ըրաւ բազմութիւ մարդիկ բռնի աշխատցնելով: Այս գրութիւնները համաձայն կու գան Ելեց մէջ ըսուածներուն, թէ ինչպէս վարուեցաւ Փարաւոն Խարայելի որդւոց հետ և իր շտեմարանի քաղաքները փոթոմնու Ռամսէսը (Ստորին Եգիպտոսի մէջ) շինել տուաւ անոնց: Փարաւոն հասարակ տիտղոս էր. Եգիպտոսի թագաւորաց, ոչ թէ առանձին թագաւորի մը յատուկ անուն: Այս բառին նշանակութիւնը Խփտերէն թագաւոր է, այնպէս որ Փարաւոն Վափառ (Երեմ. ԽԳ. 30) կը նշանակէ Վափառ թագաւոր, և Փարաւոն Նեքաւոզ (Երեմ. ԽԶ. 2) կը նշանակէ Նեքաւոզ թագաւոր:

Ութսուն տարի անցաւ Մովսէսի ծննդենէն մինչեւ այն ժամանակը երբ յանձնուեցաւ անոր իր հայրենակիցները հանել գերութեան երկրէն: Ուստի Փարաւոն առ որ զբնակեցաւ Մովսէս՝ յաջորդներէն մին եզած ըլլալու է այն թագաւորին որոյ դուստրը որդեգրած էր զՄովսէս: Եթէ Ելեց պատմութիւնը բաղդատուի գրութեան մը հետ որ Եգիպտոսի յիշատակարանաց մէկուն զլայ կը գտնուի, կրնայ հաւանական թուիլ թէ այս թագաւորին անունն էր Թոթմէս Բ. վերոյիշեալ Ասհմէսի յաջորդաց մէջ երրորդը: Այս յիշատակարանաց ուսման հմուտ եղողներէն ոմանք կը կարծեն թէ ժամանակաւ Գահերէի մօտ Հեղիոպօլիս կանգնուած բայց հիմա կոստանդնուպօլիս Ան Էյրոն: կոչուած տեղը գտնուող մեծ կոթողն այս թագաւորին յաջորդին, Թոթմէս Գ. ի գործն էր: Թեոդոս կայսր հինգերորդ գարուն մէջ բերել տուաւ այս կոթողը յԵգիպտոսէ կոստանդնուպօլիս: Ըստ յիշատակարանաց, Թոթմէս Բ. թագաւորին իշխանութեան առաջին տարիները շատ յաջող էին, ինչպէս կը տեսնուի գրացի երկիրներուն մէջ տեղեր

նուաճելուն զբայ տրուած տեղեկութիւններէն : Անոր թագաւորութեան զերջին տարիներուն և մահուանը զբայ յիշատակութիւն չկայ, միայն ըսուած է թէ, յաջորդ թագաւորին գահակալութենէն առաջ իբր քսան տարի երկրին կառավարութիւնն անոր կնոջը, Հագսովի, ձեռքն էր, և թէ այն տարիները մեծ ձախորդութեան տարիներ էին : Արնայ հաւանական թուիլ թէ այսպիսի նկարագրութիւն մը եղած ըլլայ Փարաւոնի և անոր զօրաց ջնջուելէն ետքը, ինչպէս կը պատմուի Ելից գիրքին մէջ :

Փարաւոնի ամբարտաւանութիւնը զերջապէս խորտակող, և իարայեւրացիներն արձակելու զանի ստիպող տասն հարուածներուն նման դէպքեր բարբոսի անսովոր չէին Եգիպտոսի մէջ. բայց այս հարուածներն անատեն այնպիսի սաստկութեամբ և արագութեամբ եկան, որ յայտնի էր թէ սքանչելիք էին : Զորօրինակ, մարտիք շատ անգամ կ'երեւի յԵգիպտոս մեծ բազմութեամբ և մեծամեծ աւերումներ կ'ընէ. բայց Մովսէսի ժամանակին մարտիին համար կ'ըսուի թէ «անոնցմէ առաջ անանկ մարտի չեղաւ, անոնցմէ ետքն ալ անանկ պիտի չըլլայ» (ԵԼ Ժ. 14) : Գիտողութեան արժանի է նաեւ որ այս հարուածները երթալով կը սաստկանային : Առաջին հարուածն ապականեց Նեղոսի ջուրը : Երկրորդն ապականեց ցամաքը՝ ծածկելով զայն գորտերով : Երրորդէն մինչեւ վեցերորդը Քասեցին մարդոց և անասնոց, և մին քան զմիւսն սաստկագոյն էր : Եօթներորդով և ութերորդով մեծ կորուստ եղաւ ստացուածոց : Իններորդը մեծ սարսափ տուաւ բարբոս ժողովրդեան : Տասներորդը ողբով լեցուց երկիրը : Առաջին հարուածներէն ոմանք տրուեցան Ահարոնի ձեռքով : Յետոյ Մովսէսի միջոցաւ սկսան գալ հարուածները, և հուսկ յետոյ Աստուած ինքնին ուղղակի ցուցուց իր զօրութիւնը : Բոլոր հարուածները մասնաւոր նշանակութիւն ունէին : Կը ցուցնէին Աստուծոյ զօրութիւնը, և կը յանդիմանէին Եգիպտացուց կռապաշտութիւնը : Հարուածները եկան այն բաներուն զբայ զորս Եգիպտացիք կը պաշտէին. զորօրինակ, 1. Նեղոս, անոնց նուիրական գետը, պղծեցաւ. 2. Գորտը, անոնց նուիրական անասուններէն մին, հարուած եղաւ. 3. Մուսը կամ ոջիլը,

(քանզի ոմանք մուն թարգմանուած Եբրայեցերէն բառն ոչիլ կը թարգմանեն) ծածկեց երկիրը . 4 . Շանաճանճը զոր կը յարգէին Եգիպտացիք՝ տանջեց զանոնք . 5 . Անուունք որոց պաշտօն կը տանէին՝ ինկան մեռեալ իրենց պաշտօնաւորաց առջեւ . 6 . Մոխիբը զոր քուրմք կը ցանէին ի նշան օրհնութեան՝ խաղաւարտ եռացոյց . 7 . Ընդհանրապէս փոթորկէ և անձրեւէ բոլորովին ազատ եղանակի մը մէջ տեղացող հրախառն կարկուտէն չկրցան պահել զԵգիպտոս ջրոյ և հրոյ աստուածներն Իսիս և Ոսիրիս . 8 . Եգիպտացիք գիտէին թէ արեւմտեան հողը կրնար բերել մարախը, բայց չէին յուսար թէ արեւելեան հողը կրնար բերել այն միջատները, քանզի կարմիր ծովը խորոց էր : Բայց և այնպէս արեւելեան հողը զոր կը պատուէին՝ եղաւ անոնց աւերիչ, և Իսիս ու Սերապիս զորս կը համարէին պաշտպան մարախէ՝ չկրցան օգնել . 9 . Լուսաւորք անգամ զորս կը պաշտէին՝ հպատակ երեւցան Աստուծոյ հրամանին . 10 . Բոլոր անգրանիկները ոչ միայն հասարակ ժողովրդեան, այլև թագաւորին և իշխանաց, մեռան, և այսպէս իրենց և իրենց աստուածներուն ապաւինողաց հպարտութիւնն ի սպառ խոնարհեցաւ : (Եւ ժ. 12 : ժ. 11 : Թու. 19 . 4 :) Մոգերը որ իրենց զարմանալի արուեստագիտութեանը համար մեծ պատուի մէջ էին՝ կրցան ի սկզբան այն արուեստով այնպիսի գործեր ընել, որ Մովսէսի և Ահարոնի հրաշքներուն պէս հրաշք թուեցան . բայց քիչ ետքը նոյն մոգերը բոլորովին անկարողացան, և ստիպուեցան խոստովանիլ թէ ինչ որ Մովսէս և Ահարոն կ'ընէին՝ Աստուծոյ մատամբն էր, ոչ թէ մարդկեղէն ճարտարութեամբ ինչպէս էր իրենցը :

Եւնց ժ. 2 . գլխոյն 31 երորդ համարին մէջ կ'ըսուի թէ Իսրայելի որդիքը Ման անունը տուին այն կերակրոյն որ անպատին մէջ Աստուծմէ տրուեցաւ անոնց : Նոյն գլխոյն 15 երորդ համարին մէջ կ'ըսուի թէ երբ անոնք առաջին անգամ տեսան այն կերակուրն իրենց վրաններուն բոլորտիքը, « իրարու ըսին, Ի՞նչ է աս, քանզի ինչ ըլլալը չէին գիտեր : » Եբրայեցերէն բառը որ « Ի՞նչ է աս » թարգմանուած է « ման հու » է, և շատերը կը կարծեն թէ ման կամ մաննա անունն

այս Երբայեցերէն բառէն ելած է : Այլք այն բառը կը հանեն Երբայեցերէն մահ ըստէն որ կը նշանակէ կերակրոյ բաժին կամ ռոճիկ պատրաստել, ուստի և կը կարծեն թէ Ման բառը կը նշանակէ պատրաստեալ բաժին կամ ռոճիկ, այսինքն ռոճիկ պատրաստուած և տրուած Աստուծմէ իր ժողովըրդեան Իսրայելի համար : Մօտերս գտնուեցաւ որ Եգիպտացւոց հին լեզուին մէջ ասոր նման անուն մը “ման” կը նշանակէր տեսակ մը տնկային խէժ որ կը գտնուի Արարիա, և տեսեամբ նման է, ըստ նկարագրին, Իսրայելացւոց տրուած կերակրոյն : Ուստի ոմանք կը կարծեն թէ Ման հու բառը 15 երորդ համարին մէջ Թարգմանուելու է Ման է այս, և թէ որբազան մատենագիրը ոս ըսել կ’ուզէր թէ, երբ Իսրայելացիք տեսան այն նիւթն իրենց վրաններուն բարտիքը գետնին վրայ, չգիտնալով թէ ինչ էր այն, ըսին Ման է այս, տալով անոր Եգիպտական անունը զոր սովոր էին տալ այն տնկական խիժին որուն կը նմանէր մանանան : Այս խէժը մինչեւ ցարդ կը գտնուի Արարիոյ մէջ տեղ տեղ : Մոշայի և ուրիշ Թուփերու տերեւներէն կը ծորէ : Արարացիք կը ժողովն այս խէժն առաւօտուն կանուխ, կը մաքրեն զայն և կը պահեն պարկերու մէջ : Կը կոչեն զայն Մաննա Էստեմա, այսինքն երկնային մանանայ : Բայց ամառնային ամիսներուն մէջ միայն և քիչ կը գտնուի : Մանանան զոր գեղադործք կը դործածեն ընդհանրապէս՝ կու գայ մեծաւ մասամբ Սիկիլիա կղզիէն և Իտալիայէն : Իսրայելացւոց տրուած մանանան տարբեր էր այս բնական բերքէն : Յայտնի է թէ Իսրայելացւոց մանանան կը տեղար բաց դաշտի վրայ, մեծ քանակութեամբ, քանզի ժողովուած չսփն էր մէկ Օմեր իւրաքանչիւր անձի համար, կամ իբր երկու միլիոն քաշ բոլոր Իսրայելացւոց համար : Միւսը, բնական մանանան, կը գտնուի միայն ծառերու տակ և, ինչպէս ըսուեցաւ, քիչ քանակութեամբ : Մին կրնար ազօրւոյ մէջ ազացուիլ, և իբրեւ ալիւր շինուիլ կարկանդակ և քաքար թոնրի մէջ : Երաւերէ առնուած մանանան այսպէս չի դործածուիր, և թէպէտ Արարացիք երբեմն կ’ուտեն զայն հացի հետ, ինչպէս կ’ուտեն մեղրն ու կարագը, բայց անկէ քաքար երբէք չեն շիներ, ոչ ալ լոկ կ’ու-

անն, և մաքրողական ու գրգռիչ ներգործութեան համար ընդհանրապէս կը գործածուի իբրև գեղ մանաւանդ քան իբրև սննդարար կերակուր: Իտալեյեւացոց շնորհուած մանանային բոլոր պատմութիւնը, անոր առատութեամբ տեղալն ամէն առտու ուր որ Իտալեյեացիք կը բանակէին, եթէներորդ, այն է շարաթ օրը չտեղալը, և յանկարծ դադարելը երբ Իտալեյի որդիքը հասան Քանան, կը ցուցնեն թէ սւղղակի Աստուծոյ զբանչելեօք շնորհուած պարգեւ էր այն, ոչ թէ բուսական աշխարհի արդիւնք:

ԳԼ. Ը

Օրէնք, կանոնք և հրահանգք որ Աստուծոյ
պրոֆետան Իտալեյեացոց

Աստուք կը գանուին Ելից գիրքին Բ. մասին մէջ, Ի. գլխէն մինչև Խ. գլուխը: Այս գլուխներուն չորրորդ, այն է Ի. ԻԱ. ԻԲ. և ԻԳ. գլուխները, կը պարունակեն նախ՝ տասնաբանեայ պատուէրները որ հասարակօրէն կը կոչուին բարոյական օրէնք, և երկրորդ՝ շատ մանր մանր օրէնք և հրամաններ թէ ինչպէս պիտի վարուէին Իտալեյեացիք իրարու հետ կենաց պլեկայլ յարաբերութիւններուն մէջ, թէ ինչ պատիժներ պիտի տրուէին պլեկայլ յանցաւորաց, և թէ ինչ գլխաւոր ատներ պիտի կատարուէին: Եր թուի թէ այս չորս գլխոց մէջ պարունակուած պատուէրները նախ ծանուցուեցան ժողովրդեան, և ժողովուրդը խոտաացաւ պահել զանոնք: Յետ այնորիկ գրուեցան յատուկ գիրքի մը մէջ որ Ուխտի գիրք կը կոչուէր (Ել. ԻԳ. 4, 7): Օրէնքներն այսպէս գրի առնուելէն ետքը դարձեալ կարգացուեցան ժողովրդեան, և այս անգամ ալ ժողովուրդը խոտաացաւ պահել զանոնք. հուսկ յետոյ, ի վկայութիւն թէ այս գաղնագրութիւնը և ուխտն այսպէս

Հանդիսիւ և հրապարակաւ հաստատուեցաւ Աստուծոյ և անոր ժողովրդեան մէջտեղ, զոչեալ անասնոց արիւնը որսկուեցաւ ժողովրդեան վրայ և Աստուծոյ սեղանին վրայ :

Ելից մնացեալ գլուխները կը պարունակեն գլխաւորապէս հրահանգներ վկայութեան խորանին շինութեանը, անոր կահուց և կարասեաց և անոր մէջ կատարուելու պաշտամանց արարողութիւններուն վրայ : Բոլոր այս օրինաց, կանոնադրութեանց և հրահանգաց մէջ թէ այն քիչերուն մէջ որ կը յիշուին Ելից Ի. ներորդ գլխէն մինչեւ ԻԳ. բորդը, և թէ այն ընդարձակ օրինաց մէջ որ կը յիշուին Հնգամասեանին յաջորդ գիրքերուն մէջ, Եհովան կը խօսի Իսրայելի ժողովրդեան ոչ միայն իբրեւ անոնց Աստուածը որուն պիտի մատուցանէին հոգեւոր պաշտօն և հնազանդութիւն, այլեւ իբրեւ անոնց թագաւորը, քաղաքային օրէնսգիրք : Իսրայելի ազգին կառավարութիւնն աստուածպետական էր (Ա թագ. ԺԲ. 12) : Ազգին բոլոր օրէնքներն աստուածադիր էին : Այն օրէնքներէն մին եղծանելը մեղանչել էր ազգին կառավարութեան դէմ : Կառավարութիւնը, այսինքն բաց Եհովայէ ուրիշ Աստուած պաշտել, նոյն կառավարութեան դէմ մատնութիւն էր : Պատերազմի և խաղաղութեան խնդիրները զորս որոշել ուրիշ ազգաց մէջ թագաւորին և անոր խորհրդականացը կը վերաբերին՝ Իսրայելացւոց մէջ կը վերաբերէին՝ Եհովայի (Գատ. Ա. 1, 2, Ի. 23) :

Իսրայելացւոց իրենց արտերուն երախայրին ամէն տարի Աստուծոյ մատուցանելը՝ ճանչնալ էր թէ բոլոր այն երկիրը զոր պիտի գրաւէին Իսրայելի որդիքն Աստուծոյ ստացուածն էր, և թէ Աստուած տուած էր զայն իր ժողովրդեան : (Տես խօսքը զոր պիտի ըսէին իրենց երախայրիները Տէրոջը տանող Հրեայք . Բ Ու. ԻՁ . 1-11) Անդրանիկները նուիրելն ու փրկելը (ԵԼ. ԺԳ. 2, 13, ևն), ժողովրդեան համրուելու տեսնն իւրաքանչիւրին կէս սիկզ արծաթ իբրեւ փրկանք իր հոգւոյն համար Տէրոջը տալը (ԵԼ. Լ. 11-16), փոխանակ բացարձակ իշխանութեան որով թող տուեալ էր Հրէից վարուիլ հեթանոս և այլազգի ծառայից հետ, այն չափաւոր իշխանութիւնը որով պիտի վարուէր ամէն Հրեայ գէպ իւր Երրայե-

ցի ծառան (Ղեւ. ԻԵ. 39-46), բոլոր այս բաները, կ'ըսենք, կը ցուցնէին թէ ինչպէս երկիրը նոյնպէս ժողովուրդը Տէրոջը ստացուածը կը համարուէր (Ղեւ. ԻԵ. 23): Վկայութեան խորանը, և յետ ժամանակաց, տաճարը, կը համարուէին իբրեւ Աստուծոյ տունը, անոր սուրբ բնակարանը (Եւ. ԻԵ. 8, 22): Հոն զգալի կերպով կը յայտնէր Աստուած իր փառքը (Եւ. ԻԹ. 42, 43), հոն կ'իմացնէր իբ կամքը, հոն թոյլ կու տար իր պաշտօնեաներուն իրեն հետ խօսիլ, և իբրեւ թագաւոր կը կատարէր իր պաշտօնները: Հոն էր նաեւ որ անոր հպատակ ժողովուրդը կը խնդրէր խօսիլ անոր հետ և իր խնդրուածները ծանուցանէլ անոր: Այս պատճառաւ էր թերեւս որ վկայութեան խորանը կը կոչուէր նաեւ ժողովքի վրան (Եւ. Ի. 2, 24):

Յայտնի է թէ օրէնքներն ու կարգերը զորո տուաւ Աստուած իր ժողովրդեան, երբ անոնք Եգիպտոսէ կ'ելլէին, մասնաւոր նպատակներ ունէին: Այս նպատակներուն մէկն էր Խորայելացիները կռապաշտութենէ պահել: Անատեն բաց Խորայելէ ուրիշ ամէն ազգ կռապաշտ էր, և Խորայելացիք միշտ վտանգի մէջ պիտի ըլլային նմանելու այն ազգաց կրօնական սովորութիւններուն: Ուստի և խիստ պատուէրներ տրուեցան կռապաշտութեան դէմ (Եւ. Ի. 3, 4: ԻԲ. 20: ԻԳ. 24): Խորայելացիներէն կը պահանջուէր քաղցրութեամբ վարուիլ իրենց մէջ եկող օտարականաց հետ (Եւ. ԻԱ. 20: ԻԳ. 9). բայց արգելեալ էր անոնց որեւիցէ կերպով բարեկամութեան կամ խնամութեան դաշինք ընել կռապաշտ ազգաց հետ (Եւ. ԻԳ. 32, 33: ԼԳ. 11-17):

Այն օրինաց ուրիշ մէկ յայտնի նպատակն էր Խորայելացիներն իրարու հետ կապել իբրեւ մի ժողովուրդ, հայրենատէր ընել զանոնք և սորվեցնել ամենուն սիրել իրենց հայրենակիցներն իբրեւ եղբայր: Այս նպատակաւ կը պահանջուէր ամէն արուէ տարին երեք անգամ ժողովուրդ կեդրոնական տեղ մը որոշեալ տօները կատարելու համար (Եւ. ԻԳ. 17: ԼԳ. 23: Բ Օր. ԺԶ. 16): Տարակոյս չկայ թէ եղբայրական սէրը մուսուցանելու նպատակն ունէին նաեւ այն օրէնքները որ չափ և սահման կը դնէին Երբայեցւոյ մը իր տիրոջը մատուցանելու ծառայութեան (Եւ. ԻԱ. 2-6: Բ Օր. ԺԵ. 12-18), ինչպէս

նաեւ այն օրէնքը որ կը պատուիրէր Յարեւան տարին իրենց նախնի աւերանցը դարձունել այն երկիրները զորս անոնք ի հարկէ ստիպեալ ծախած էին : Այսպիսի օրինաց սւղբակի ազգեցութիւնը պիտի բլլար բոլոր մարդիկ հաւատար ընել զի՛նձակաւ և ստացուածով, և երկրին համար հասարակաց սէր տածել ամենուն սրտին մէջ :

Այն օրինաց ուրիշ մէկ նպատակն էր կարճել այլևայլ անազորոյն և անիրաւ սովորութիւններ որ աշխարհին այն դարուն ազգաց մէջ հատարակ էին : Զորօրինակ, վրէժխնդրութեան սովորութիւնը պիտի կարճուէր հաստատուելսօն ապաստանի քաղաքաց, ուր պիտի կրնային փախչիլ և պաշտպանուել անոնք որ մարդ կը սպաննէին, մինչև որ սպանողին յանցաւորութիւնը կամ անմեղութիւնը քննուէր և ճանչցուէր (Եւ. ԻԱ. 13 : Թաւ. ԼԵ. 11-15) : Խիստ պատիժներ տալ պատուիրուած էր, զորօրինակ՝ «աչքի տեղ՝ աչք, ակոսյի տեղ՝ ակոսյ, » և որ ի կարգին (Եւ. ԻԱ. 24), բայց ոչ Քնասեալ անձինք, այլ երկրին գատաւորները և ծերերը կրնային տալ այս խիստ պատիժները (Եւ. ԻԱ. 22 : Բ Օր. ԺԹ. 16-21) : Օրէնքն արդարեւ խիստ էին խնչպէս որ հարկ էր ժանտաբարոյ ժողովրդեան մը համար, բայց օրինաց նպատակը սնունդ տալ չէր անձնական վրէժխնդրութեան, այլ միայն կանոն տալ գատաւորաց թէ ինչ վճիւ պիտի ապին իւրաքանչիւր դէպքի մէջ : Ուստի օրէնքը պիտի հասկցուէր մանաւանդ իբրեւ կարճիչ և արգելիչ քան նպատակ անձնական վրէժուց : Ելին արձակելը որ շատ հասարակ էր այն ժամանակները՝ նոյնպէս դրուած էր ընդ սեղմմամբ : Ատուած ամուսնութիւնը հաստատելով ուզած էր որ մշտապէս յարաբերութիւն մը բլլար այն : Մննդոց Բ. 24 համարին խօսքը, թէ այրը «իբ կնկանը պիտի յարի. ու մէկ մարմին պիտի բլլան, » նոյնը կը ցուցնէ, ինչպէս յայտնի է Մատթ. ԺԹ. 5, 6 համարներէն : Բայց և այնպէս կին արձակելու սովորութիւնը շատ կանուխ սկսու մարդկային ազգին մէջ, և թեթեւ պատճառներու համար կ'արձակէին մարդիկ իրենց կանայքը : Երբ Ատուած օրէնք կու տար իբ ժողովրդեան Մովսէսի ժամանակ, յարմար չտեսաւ բոլորովին արգելել կին արձակելը, կամ շնութեան դէպ-

քերու մէջ միայն թոյլ տալ արձակել, ինչպէս ըրաւ Նոր կաթկարանին մէջ, այլ սեղմում մը դրաւ, պատուիրելով որ արձակումը քանի մը մասնաւոր գէպքերու մէջ ըլլար (Բ Օր. ԻԳ. 1-4), մինչ յիշուած են ուրիշ գէպքեր ալ ուր արձակումը թոյլ տուեալ չէր (Բ Օր. ԻԲ. 13-19)։ Ապահարզանի թուղթ տալով կին արձակելու հրամանը, ինչպէս կ'ըսէ մեր Տէրը, Եբրայեցոց խոստարութեանը համար տրուեցաւ անոնց օրէնսդրութեան ժամանակը։ Քրիստոսի այս խօսքէն կը հասկցուի թէ ժողովուրդն այնպէս բիրտ և անվարժ էր հրամանի, որ պատճառ կար կասկածելու թէ, եթէ բոլորովին արգելուէր անոնց իրենց կանայքն արձակել, պիտի յանդգնէին մեծամեծ խոտութիւններ ընել այն կանանց զորս պիտի ուզէին արձակել, բայց օրէնքէն արգելուած ըլլալով պիտի չկարենային։ Այս չարեաց առաջն առնելու համար կին արձակելու ազատութիւն տրուեցաւ անոնց, մինչ այն թոյլտուութեան վրայ դրուած սեղմումն ըստ բաւականին պիտի սանձէր այն չարաչար սովորութիւնը։

Մեր էջերը չեն ներեր երկարօրէն յիշել վկայութեան խորանին և անոր կահուց ու կարասեաց, կամ անոր մէջ մատուցուելու զոհերուն և կատարուելու կրօնական պաշտամանց վերաբերեալ պատուէրները։ Միայն պիտի ջանանք ընդհանուր կերպով նկարագրել խորանին յօրինուածները, և այն կրօնական ազդեցութիւնը զոր կը թուի թէ ընելու սահմանեալ էին Մովսիսական այլևայլ ծէսերն ու արարողութիւնները։

Վկայութեան խորանը կը կենար սրահի մը մէջտեղ որոյ երկայնութիւնն էր 100 կանգուն (150 սոք), և լայնութիւնը 50 կանգուն (75 սոք)։ (Տե՛ս ԵԼ ԻԷ. 18)։ Այս սրահը պատած էր վարագոյրներէ որ 5 կանգուն (7½ սոք) երկայն սիւներէ կախուած էին (ԵԼ ԻԷ. 18)։ Խորանին մուտքն էր յարեւելից (ԵԼ ԻԷ. 13-16)։ Այս սրահն ամէն Իսրայելացի կրնար մտնել, եթէ ծիսապէս անմտքուր չէր, իսկ օտարականաց ամենեւին ներքէ չէր մտնել հոն։ Արտահան մէջն էր սղջակէզի սեղանը սրուն վրայ այլևայլ զոհեր կը մատուցուէին (ԵԼ ԻԷ. 1-8, և ԼԸ. 1)։ Հոն էր նաեւ պղնձէ աւազանն ուր պաշտօն մատուցանողք կը մաքրուէին յառաջ քան զոհ մատուցանե-

լը, ուր և քահանայք կը լուացուէին երբ պիտի մտնէին վկայութեան խորանը (եւ. Լ. 17-21 : Խ. 5-7) : Այս լուացումը վկայութեան խորանը մանողներուն կը յիշեցնէր թէ սուրբ էր այն տեղը, և թէ ով որ կը մտնէնար պաշտօն մատուցանել Եհովայի՝ պարտէր մաքուր ըլլալ : Կռակապաշտք մերձեցնելու չէին Եհովայի բնակութեան տեղւոյն, և անոր ժողովուրդը, անոր սեղանին սպասաւորող քահանայք անգամ, պարտէին մաքրուիլ յառաջ քան ձեռնարկելը պաշտօն մատուցանել անոր . պարտէին նաեւ իրենց մեղաց համար զոհեր մատուցանել որպէս զի բնդուներ ըլլար անոնց պաշտօնը :

Վկայութեան խորանին սրահին վրան բաց էր, բայց բուն խորանը որ սրահին ներսն էր՝ չորս պլեւայլ տեսակ վարագոյրներով ծածկեալ էր : Առաջին կամ ներքին վարագոյրն էր շատ գեղեցիկ բանուած նուրբ կտաւէ, երկրորդն էր նուրբ պծեայ, երրորդը՝ խոյի մորթէ կարմիր ներկուած, և չորրորդը՝ թէհաշի մորթէ (եւ. ԻԶ. 1, 7, 14) : Այս վարագոյրները պարզուած էին Սատիմի փայտէ շինուած տախտակամասներու վրայ (եւ. ԻԶ. 15-30) : Վկայութեան խորանն էր երեսուն կանգուն երկայն, տասը կանգուն լայն և տասը կանգուն բարձր (եւ. ԻԶ. 15-30 : ԼԶ. 20-30) : Խորանը կրկին էր, ներքին և արտաքին, զորս իրարմէ կը բաժնէր շքեղ բանուած վարագոյր մը որ կը կախուէր ոսկիապատ Սատիմի փայտէ չորս սիւներէ : Ներքին խորանը կը կոչուէր Սրբութիւն սրբութեանց, և արտաքինը՝ Սրբութիւն : Արտաքին խորանն էր քսան կանգուն երկայն, տասը կանգուն լայն և տասը կանգուն բարձր. իսկ ներքինը տասը կանգուն երկայն, տասը կանգուն լայն և տասը կանգուն բարձր : Արտաքին խորանը մտնել քահանայից միայն թոյլ տուեալ էր (Եբր. Թ. 6), իսկ ներքին խորանը կամ Արբութեանց սրբութիւնը քահանայապետը կը մտնէր աարին անգամ մը միայն (Եբր. Թ. 7) : Արտաքին կամ սրբութիւն կաշուած խորանը լուսամուտ չունէր, բայց անոր մէջ կար ոսկիէ աշտանակ մը, որուն վրայ եօթն ճրագարանները միշտ վառ կը պահուէին (եւ. ԻԵ. 31-40 : ԻԷ. 20 : Զաք. Գ. 1-14) : Հոն էր նաեւ առաջաւորութեան հացին սեղանը, որոյ նպատակն էր թերեւս ցուցնել թէ, թէպէտ խորանին մէջ Ա-

տուժոյ պատկեր կամ նմանութիւն չկար, բայց և այնպէս Աստուած միշտ հոն էր ընդունելու իր ժողովուրդին ընծաները, մանտւանդ հացինը որ իր արարածներուն կենացը խորհրդաւոր նշան էր : Սրբութիւն կոչուած տեղն էր նաեւ խնկոց սեղանը, ուստի ամէն առաւօտ և երեկոյ կ'իյլէր անուշահոտ ծխոյ ամպը (ՅԼ. Լ. 7-9) որ խորանին մէջ պաշտօն մատուցանող բազմութեան երկրպագութեանը նշանակ էր : Այս սեղանին վրայ օտար կրակ չէր կրնար վառուիլ, և երբ նոր կրակ բերել հարկ էր՝ պէտք էր զայն խորանին ողջակիզաց սեղանէն բերել : Մինչ պաշտօն մատուցանող ժողովուրդը կը նայէր խորանին և անոր շքեղ ծածկոցներուն, և միաք կը բերէր այն մեծաշուք զարդարուած և սպիկէ աշտանակին ճրագներովը և խնկոց սեղանոյն կրակովը լուսաւորուած սուրբ տեղը, մինչ կը տեսնէր նաեւ քահանաները որ բոկոտն և սպիտակ կտաւեղէն զգեստներով լուսութեամբ կը կատարէին իրենց պաշտօնը, մեծապէս կը զգածուէր տեղւոյն սրբութեան ասիւր : Բայց եւս ակելի կը զգածուէր, երբ կը մտածէր միւս ներքին խորանին Սրբոց սուրբն իր եւս ակելի մեծավայելուչ շքեղութեամբը : Հոն ուրիշ բան չկար բայց միայն ուխտին տապանակը որ կը պարունակէր աստուածատուր օրինաց տախտակները : Հոն ոչ թէ ճրագով կը լուսաւորուէր, այլ Աստուծոյ փառքովը որ կը կենար քերովբէից մէջտեղ տապանակին ծածկոցին կամ կափարչին վրայ : Հոն լուսութիւն կը տիրէր անընդհատ, բաց ի մէկ անգամէն տարւոյն մէջ, երբ քահանայապետը կը մտնէր զոհերուն արեամբը քաւութիւն ընել իւր և իւր ժողովուրդեան մեղացը համար :

Գալով արդ պէսպէս կրօնական արարողութեանց զորս պատուիրած էր Աստուած կատարել վկայութեան խորանին մէջ, զիւրին է տեսնել թէ որչափ խորին պիտի ըլլար անոնց միջոցաւ գործուած բարոյական տպաւորութիւնը : Այս արարողութիւններն էին նախ՝ քաւչական զոհերը, սյսիւքն մեղքի կամ յանցանքի պատարագը յորում մեղաց խոստովանութիւն կ'ըլլար, և կը ճանչցուէր քաւչարար զոհի մը հարկը, որպէս զի մեղաւորը հաշտուէր Աստուծոյ հետ (ՅԼ. Լ. 10 : Ղեւտ. Է. 1-7 : ԺՁ. 11-19) : Երկրորդ՝ նուիրման

զոհերը որ ողջակէզ կը կուտէին (ԵՂ. ԻԹ. 38-42) և պարտէին մատուցուիլ բոլոր տարին ամէն օր առաւօտուն և երեկոյին : Ասոնց նպատակն էր անտարակոյս պաշտօն մատուցանողներուն յիշեցնել զերենք բոլորովին Աստուծոյ նուիրելու պարտականութիւնը . պարտականութիւն մը՝ զոր կատարել Պօղոս առաքեալ կը պատուիրէ Քրիստոսնէից (Հռովմ. ԹԲ. 4) : Երրորդ՝ շնորհակալութեան այլևայլ զոհերը, զորօրինակ՝ նաշնուց, իւղոյ և գինուց նուէրները որ հանապազօրդ ողջակէզին հետ պիտի մատուցուէին (ԵՂ. ԻԹ. 40, 41) , և խաղաղութեան զոհերը (Ղեւտ. Է. 41-24) որոց բոլորն ալ սոհմանեալ էին պաշտօն մատուցանողներուն յիշեցնել իրենց շնորհակալութեան և երախտագիտութեան պարտիքն առ Աստուած անոր պարգեւներուն և շնորհացը համար : Վերջապէս առաւօտեան և երեկոյեան ինկարկութեան հանապազօրդ նուէրները (ԵՂ. Լ. 7, 8) , և քաւութեան մեծ օրուան ինկարկութիւնը (Ղեւտ. ԺԶ. 42) : Այլևայլ պատարագներու այս համաւօտ պատմութիւնը բաւական է ցուցնել թէ միշտ ժողովրդեան միտքը պիտի բերուէր նախ՝ անոնց մեղաւորութիւնը , և ատա հաշտարար զոհի մը պէտքն՝ առ Աստուած մնալք և մեղաց թողութիւն ընդունելու համար . երկրորդ՝ անոնց պարտականութիւնն ամէն օր մարմնով և հոգևով նուիրելու զերենք Աստուծոյ և անոր ծառայութեանը , և երրորդ՝ այն պարտականութիւնը զոր ունէին երախտագէտ մտքը ճանշնալու թէ ամէն բարիք Աստուծմէ կու գար անոնց , և մատուցանելու անոր շնորհակալութիւն , փառք և հանապազօրդ երկրպագութիւն բոլոր սրտով և իրենց բոլոր կենացը մէջ :



ԳԼ. Թ

Ղեւպացոց և Թուոց գիրքերը



Ղեւտացոց գիրքին Երրայական անունն առնուած է , ըստ սովորութեան , գիրքին ոկզբնական բառէն : Այս բառն է

“վայրագրա” որ կը նշանակէ “Եւ Նա (Ատուած) կոչեց :” Իսկ Ղեւտացւոց գիրք կը կոչուի սա պատճառաւ որ, գիրքը մեծաւ մասամբ կը խօսի քահանայից և Ղեւտացւոց պարտուցը վրայ : Նախնիթաց գիրքին (Ելեց) մէջ վկայութեան խորանին և անոր վերաբերեալ այլեւայլ զարգաց զրայ տեղեկութիւն տրուած է : Ղեւտացւոց գիրքը կը պարունակէ (1) վկայութեան խորանին մէջ մատուցուելու զոհերուն վերաբերեալ կանոնները (Գլ. Ա.-Է.) : Կը պատմէ (2) Ահարոնի և անոր օրդւոց օծումն ի քահանայութիւն, և Նադաբայ ու Աբիուգայ սատակումը, վասն զի օտար հուր մատուցած էին Տէրոջը առջեւ (Գլ. Ը.-Ժ.) : Կը խօսի (3) մաքրութեան և անմաքրութեան վրայ, անմաքրութիւնը վերցնելու վրայ, և Իսրայելացւոց և անոնց դրացի ազգաց մեջտեղ բաժանման վրայ (Գլ. ԺԱ.-Ի.) : Կը խօսի (4) քահանայից և սուրբ օրերու, ինչպէս նաեւ եօթներորդ և Բարեշեան տարիներու վերաբերեալ օրինաց վրայ (Գլ. ԻԱ.-ԻԵ.) : Գիրքը կը վերջանայ մարգարէական գլխով մը (Գլ. ԻԶ.) ուր օրհնութիւններ կը խոստացուին հնազանդութեան համար, և անէծք կը սպառնացուին անհնազանդութեան համար : Ի վերջոյ, իբրեւ յաւելուած, կու գայ ուրիշ գլուխ մը (Գլ. ԻԷ.) ուխտերու և տասանորդաց վրայ : Ըստ կարծեաց ոմանց, այս գիրքին, ինչպէս նաեւ Ելեց մէջ, կը գտնուին տասնական պատուէրներէ բաղկացեալ օրէնքներ այն բարոյական օրինաց պէս որ Ելեց Ի գլխոյն մէջ տրուած են իբրեւ տասնաբանեայ պատուէր : Տասնեակը թէպէտ ոչ միշտ, սակայն շատ անգամ յայտնի կը տեսնուի . զորօրինակ՝ այս գիրքին ԺԶ. գլխոյն մէջ կը գտնենք տասը որոշ կանոն քաւութեան օրուան համար :

Նախ թէ Ահարոն պիտի չմտնէր ամէն ատեն սուրբ տեղը (Համար 2) :

Երկրորդ թէ ինչ զօհերով և ինչ հանգերձիւ պիտի մտնէր հոն (Համար 3-5) :

Երրորդ թէ պիտի մատուցանէր զուարակ մը, և երկու նոխազ պիտի կեցնէր Տէրոջը առջեւ (Համար 6, 7) :

Չորրորդ թէ այն նոխազներուն վրայ վիճակ պիտի ձգէր (Համար 8) :

Հինգերորդ թէ այն նոխազը որ Տէրոջը պիտի ելլէ՝ պիտի մատուցանէր Աստուծոյ, իսկ միւսը պիտի արձակէր անապատը (Համար 9, 10) :

Վեցերորդ թէ Ահարոն զուարակին և նոխազին արիւնք պիտի սրկէր ի քաւութիւն իւր, իւր տան և իսրայելի ժողովրդեան. պիտի մաքրէր այն արեամբ նաեւ խնկոց սեղանը (Համար 11-19) :

Եօթներորդ թէ պիտի դներ ձեռքը կենդանի նոխազին վրայ, և պիտի խոստովանէր անոր վրայ իսրայելի որդւոց բոլոր մեղքերը (Համար 20-22) :

Ութերորդ թէ այնուհետեւ Ահարոն պիտի հանէր իր կտաւէ հանդերձը, պիտի լուացուէր և հագնէր քահանայական զգեստները, և ապա պիտի մատուցանէր իր և ժողովրդեան ողջակէզը (Համար 23-25) :

Իններորդ թէ նոխազն անապատ տանողն ալ պիտի լուացուէր և մաքրուէր (Համար 26) :

Տասներորդ թէ նաեւ մեղաց համար ողջակէզը բանակէն դուրս այրողը նոյնպէս պիտի ընէր (Համար 27, 28) :

Նոյն գլխոյն մնացեալ համարները (29-34) յորդոր են քաւութեան օրը զգուշութեամբ պահելու :

Թուոց Գիրքը

Երբայեցիք այս գիրքը կ'անուանեն "Վայէտապպէր", գիրքին առաջին բառէն, որ կը նշանակէ "Եւ (Աստուած) խօսեցաւ : " Երբեմն կը կոչուի նաեւ "Պէմիտպար", այսինքն "Անապատին մէջ", բնագրին հինգերորդ բառէն : "Գիրք Թուոց" անունը տրուած է ժողովրդեան երկիցս համրուելուն պատմութիւններէն որ այս գիրքին Ա . և ԻԶ . գլուխներուն մէջ յիշուած են : Թուոց գիրքը մեծաւ մասամբ իսրայելացւոց Սինայէ մինչեւ Աւետեաց երկրին սահմանագլուխը չուելուն պատմութիւնն է : Բայց այս պատմութեան հետ խառնուած են այլեւայլ հրամաններ, զորս ատեն ատեն պէտք եղաւ աւել-

ցնել Աինա լեռը տրուած պատուէրներուն վրայ : Գիրքը կրնայ բաժնուիլ չորս մաս ,

1. Աինայէ մեկնելու համար պատրաստութիւն : ԳԼ. Ա. - Ժ. 10 :

2. Աինայէ մինչեւ Քանանու սահմանը չուն : ԳԼ. Ժ. 11-ԺԳ. 45 :

3. Այլեւայլ դէպքեր որ պատահեցան , և օրէնքներ որ տրուեցան այն 37 տարուան միջոցին որ Իսրայելացիք անապատին մէջ մնալու դատապարտուեցան , երբ Քանանացուց երկիրը դիտելու համար Մովսէսէ զրկուած երկոտասան լրտեսաց տեղեկութիւնն առնելէն ետքը ապստամբեցան : ԳԼ. ԺԵ-ԺԹ :

4. Քառասներորդ տարուան , պսիւքն Եգիպտոսէ ելից վերջին տարուան պատմութիւնն անապատին մէջ : ԳԼ. Ի-ԼԶ :

Իսրայելացիք գրեթէ տարի մը մնացին Աինա : Երկրորդ տարին չուեցին Քանանու սահմանը , բայց , իրենց ապստամբութեանը համար Տէրոջը դէմ , ետ դառնալով՝ 37 տարի Թափառեցան անապատին մէջ : Եւ կարծուի թէ այս երկար ժամանակին մէջ Իսրայելացիք թերեւս համագումար չէին , այլ ցրուեցան անապատին մէջ արօտ գտնելու համար իրենց անասուններուն , թէպէտ հաւանական է թէ ժողովրդեան մէկ մասը մնաց միշտ տապանակին մօտ : Այս 37 տարիներուն պատմութիւնը շատ համառօտ է . հինգ գլուխ միայն տրուած է բոլոր այն ժամանակին :

Թուոց գիրքին մէջ կը գտնուին հին բանաստեղծութեան հատակոտորներ որ յատկապէս արժանի են ուշադրութեան , ոչ միայն վասն զի հին են , այլեւ վասն զի լոյս կու տան այն դարուն վրայ յորում՝ յօրինուեցան : Տես ԳԼ. Զ. 24-26 , Ժ. 35, 36 (բաղդատէ այս համարները կ՛ը. 4 Սաղմոսին հետ) , ԻԱ. 14-18, ԻԳ. 7-10 , ԻԴ. 3-9 , 15-24 : ԻԱ . գլխոյն մէջ կը յիշուի գիրք մը որ "Տէրոջը պատերազմներուն գիրքը" կը կոչուի : Այս գիրքին համար կը կարծուի թէ ի յիշատակ Իսրայելացուց յաղթութիւններուն իրենց թշնամեաց դէմ անապատին մէջ յօրինուած այլեւայլ երգերու հաւաքածոյ էր : Հրեայք այս յաղթութիւնները կ'ընծայէին ոչ իրենց զօրութեանը , այլ օգնութեան Եհովայի , ուստի և այն

պատերազմները կոչուած են “Տէրոջ (Եհովայի) պատերազմները” մանաւանդ քան Խորայելացւոց պատերազմները : ԻՖ.— ԻԳ. գլուխներուն մէջ նշանաւոր անձի մը, Բաղասամայ, պատմութիւնը կայ : Կ'ըսուի թէ այս Բաղասամ որդի էր Բէնզիայ : Ծննդոց ԼՁ. 32 համարին մէջ “Բէնզի որդին Բաղաս” անուն թագաւոր մը կը յիշուի Եհովայ : Ասկէ ոմանք կը մակաբերեն թէ Բաղասամ թագաւորացն էր, մանաւանդ որ թուոց ԼԱ. 8 համարին մէջ անոր անունը կը յիշուի Մադիամնու հինգ թագաւորաց հետ : Բաղասամ կը բնակէր Միջագետաց փոթուր քաղաքը Եփրատայ եզերքը (Թու. ԻՖ. 5, և Բ Օր. ԻԳ. 4) : Այս մարդուն վրայ ըսուածներէն յայտնի է թէ կը ճանչնար ճշմարիտ Աստուածը և զանի պաշտել կը դաւանէր : Բայց նաեւ ըղձու-թիւն, այսինքն սուտ գուշակութիւններ, կ'ընէր, և, ինչպէս յայտնի է, առաքելոց ժամանակ Աիմոն մոգին պէս կը բազմաբերկուց տերանց ծառայել, և ի վախճանի անոնց և ոչ մէկէն վարձատրուեցաւ :

ԳԼ. Ժ

ԵՐԿՐՈՐԴ ՕՐԷՆՔ

Հրեայք երբեմն, ըստ իւրեանց սովորութեան, կ'անուանեն այս գիրքն անոր առաջին բառերովը “Էլէ Հատտեպարիմ”, որ կը նշանակեն “Այս են բանք,” երբեմն ալ կը կոչեն “Սէփէր Դոգախոթ,” այսինքն “Գիրք յանդիմանութեանց,” գիրքին մէջ պարունակուած խօսքերուն նայելով որ յանդիմանական են : Երբեմն կը կոչեն նաեւ “Միշնէ հադգորա,” այսինքն “Երկրորդումն օրինաց,” ուստի ելած է Երկրորդ Օրէնք անունը : Գիրքը կը բաղկանայ երկու մասէ : Ա. մասը (ԳԼ. Ա.—Լ.) կը պարունակէ երեք ատենախօսութիւն զորս Մովսէս Մովարու դաշտին մէջ բրաւ Խորայելացւոց իր մահուանէն քիչ առաջ : Բ. մասը (ԳԼ. ԼԱ.—ԼԳ.) կը պատմէ Յեսուայ

յաջորդելը Մովսէսի, և Մովսէսի վերջին խօսքերն ու մահը : Հաւանականապէս Յեսու աւելցուց այս մասը, և կամ Աստուծոյ հրամանաւ ուրիշ մը Մովսէսի մահտուանէն ետքը : Առաջին մասին մէջ պարունակուած երեք ատենաբանութիւնք, և Մովսէսի մահուան հետ կապակցեալ դէպքերը կատարուած ըլլալու են քառասուն օրուան միջոցին : Քանզի Գլ. Ա. 3 կ'ըսուի թէ Մովսէս սկսաւ իր ատենախօսութիւնը մեռածներորդ ամսոյն առաջին օրը, ուր Յեսուայ մէջ, Գլ. Դ. 19, կ'ըսուի թէ Իսրայելացիք Յորդանան գետն անցան յաջորդ տարւոյն առաջին ամսոյն տասներորդ օրը, և Բ Օր. Գլ. 17. 8 կը կարդանք թէ Մովսէսի մահտուանէն ետքը երեսուն օր անցաւ սգով : Ուստի քառասուն օր միայն կը մնայ ատենաբանութեանց և ուրիշ դիպաց որ Բ Օրինաց մէջ կը յիշուին : Երեք ատենաբանութեանց առաջնոյն մէջ (Գլ. Ա.—Դ) Մովսէս կը պատմէ համառօտիւ Եգիպտոսէ մինչեւ Քանանու երկիրը ճամբորդութեան դէպքերը, և կը զգուշացնէ իւր համազգիներն այն չարիքներէն որ անոնց վրայ պիտի գային, եթէ խոստացեալ երկիրը մտնելէն ետքը դժգոհին իրենց ուխտին ընդ Աստուծոյ, և անոր օրէնքը չպահէին : Երկրորդ ատենաբանութեան մէջ (Գլ. Ե.—ԻԶ.) Մովսէս կը կրկնէ Աինա լեռը տրուած տասն պատուիրանքը, և կարեւոր խրատներ տալով քաղցրութեամբ կը յորդորէ զանոնք հնազանդիլ Աստուծոյ բոլոր օրինաց : Երրորդ ատենաբանութեան մէջ (Գլ. ԻԷ.—Լ.) կը պատմէ Իսրայելացւոց Աստուծոյ հետ ուխտին հանդիսիւ նորագուիլը, և եռանդուն խօսքերով կը ցուցնէ թէ ինչ օրհնութիւններ պիտի շնորհուէին, եթէ Իսրայէլ հնազանդէր Աստուծոյ օրինաց, և ինչ անէծներ պիտի տրուէին, եթէ չհնազանդէր : Երկրորդ Օրինաց գերբը լոկ կրկնում չէ յառաջագոյն տրուած օրինաց, այլ այն օրինաց վրայ Աստուծմէ հրամայեալ և ներշնչեալ մեկնութիւն մը : Այս գիրքին մէջ Մովսէս կը խօսի իբրեւ հայր իր ժողովրդեան : Կը խօսի նաեւ իբրեւ մարգարէ : Գլ. ԺԸ. 18 այն մարգարէութիւնը թէ իրեն նման մարգարէ մը պիտի յառնէր՝ ըստ մասին կատարուեցաւ Յեսուայ վրայ, բայց անոր բուն կատարումը ատենուեցաւ Յիսուս Քրիստոսի վրայ : Ի՛նչ գլխոյն մէջ ան.

Հնազանդութեան համար տրուելու պատժոց վրայ ըսուած խօսքերն այնպէս զգալի կերպով կատարուեցան Հրէից կործանման ատենը Հռոմայեցւոց ձեռքով, որ այն կործանման վերաբերեալ դիպաց յատուկ մարգարէութիւնը կրնան համարուիլ : Ի վախճանի երգոյն զոր յօրինեց իր ժողովրդեան համար (Գլ. ԼԲ. 43)՝ Մովսէս կը գնէ անոնց աչքին առջեւ աւելի հեռաւոր յաջողութիւն և խաղաղութիւն զորս նաեւ ուրիշ ազգեր պիտի վայելէին, և պիտի ուրախանային Հրէից հետ :

ԳԼ. ԺԱ.

Հին Կապարանին պապական Գիրքերը

Հին Կտակարանին պատմական գրոց մէջ որ Հնգամատենէն ետքը կու գան՝ ունինք Խորայեղացւոց իբր հազարամեայ պատմութիւնը, սկսեալ անոնց մտնելէն Աւետեաց երկիրն ընդ առաջնորդութեամբ Յեսուայ մինչեւ անոնց դարձն իրենց երկիրը յետ եօթանասնամեայ գերութեան ի Բաբելոն : Այս գիրքերը գրողներուն նպատակն, ինչպէս անոնց գրուածներէն կը տեսնուի, այն երկայն ժամանակին բոլոր դէպքերը յիշել չէր, այլ այն դէպքերը միայն որոց մէջ յայտնի կը տեսնուէր Աստուծոյ ներկայութիւնը և խնամքն առ ժողովուրդ իւր, և կամ անոնց վրայ զրկուած պատուհասները : Այս գիրքերէն ոմանք յայտնի կը ցուցնեն թէ քաղուած են ուրիշ գիրքերէ որ աւելի առատ տեղեկութիւններ կու տային Հրէից ազգային պատմութեան վրայ, և դեռ կային այն ատեն, բայց հիմա կորսուած են : Այսպէս Ա Մնացորդաց Իթ. 29) համարին մէջ ընթերցողը կը զրկուի Սամուէլի տեսանողին, Նաթանայ մարգարէին և Գադայ տեսանողին գիրքերուն՝ աւելի ընդարձակ տեղեկութեան համար Դաւիթ թագաւորին գործերուն վրայ : Նոյնպէս Գ Թագ. ԺԱ. 41 համարին մէջ կը յիշուի “Սողոմոնին պատմութեանը” գիրքը. տես նաեւ Բ Մնաց. Թ. 29, Գ

Թագաւորաց ԺԴ. 19 համարին մէջ յիշուած է « Իսրայելի Թագաւորներուն յիշատակաց » գիրքը, և նոյն գլխոյն 29-ներորդ համարին մէջ « Յուդայի Թագաւորներուն յիշատակաց » գիրքը, և ասկէ կը տեսնուի որ այն ատեն մին Իսրայելի կամ ասան ցեղերուն պատմութեանը, և միւսն Յուդայի կամ մնացեալ երկուց ցեղից պատմութեանը վերաբերեալ երկու զաւ գիրքեր կային, որ քան այժմու մեր ձեռքը գտնուած Թագաւորաց գիրքերն աւելի մանր տեղեկութիւններ կու տային : Բայց երբ կու գանք Մնացորդաց գիրքերոն, յիշուած կը գտնենք Յուդայի և Իսրայելի Թագաւորաց գիրք մը (Ա Մնաց. Թ. 1 : Բ Մնաց. ԺԶ. 11 : ԻԵ. 26 : ԻԿ. 7) : Ասկէ կը հասկցուի թէ այն ատեն զաւ գիրք մը կար որ երկու Թագաւորութեանց եւս, Յուդայի և Իսրայելի, բովանդակ պատմութիւնը կը պարունակէր : Այս գիրքը մեր այժմու Թագաւորաց կոչուած գիրքերէն տարբեր գիրք մը եղած ըլլալու է, քանզի նախ՝ կը յիշուի իբրեւ այնպիսի գիրք մը որ այժմու Թագաւորաց գիրքերուն մէջ չգտնուած տեղեկութիւններ կու տար, զորօրինակ՝ « Յովթամին . . . պատմութիւնը ու անոր բոլոր պատերազմները ու ճամբաները » (Բ Մնաց. ԻԿ. 7), և երկրորդ՝ կը յիշուի իբրեւ լիուի տեղեկութիւն, « առաջին ու վերջին պատմութիւնը » (Բ Մնաց. ԺԶ. 11, ԻԵ. 26), տուող գիրք մը այլեւսյլ Թագաւորաց վրայ, ուստի և մեր այժմու Թագաւորաց և Մնացորդաց գիրքերն Յուդայի և Իսրայելի Թագաւորներուն պատմութեանը վրայ ընդարձակագոյն տեղեկութեան համար յիշեալ գիրքին կը զրկեն (բաղդատէ Դ Թագ. ԺԴ. 18 համարը Բ Մնաց. ԻԵ. 26 համարին հետ) :

Յայտնի է թէ մեր Թագաւորաց և Մնացորդաց գիրքերուն հեղինակներն ունէին ի ձեռին և գործածեցին ընդարձակագոյն աղբիւրներ : Ուստի այլեւսյլ Թագաւորաց պատմութեան մէջ շատ բաներու համաձայնութիւնը հաւանականապէս յառաջ կու գայ ասկէ որ, այժմու գրոց հեղինակները միեւնոյն աղբիւրէ առին այն բաները, իսկ տարբերութիւններն ասկէ յառաջ կու գան որ յիշեալ հեղինակք երբեք տարբեր աղբիւր գործածեցին : Յիշեալ պատմական աղբիւրներէն ոմանք

Հաւանականապէս պաշտօնական ասարգիքներ էին երկու թագաւորութեանց, ոմանք ալ այլեւայլ մարգարէից գրաւածներ էին : Թէպէտ մեր այժմու գրոց հեղինակներն յիշեալ աղբիւրները գործածեցին, յայտնի է սակայն թէ այն գործածութեան մէջ կ'առաջնորդէր անոնց Հոգին սուրբ, այնպէս որ այն գիրքերը մեզի կու գան իբրեւ ներշնչեալ մատեաններ :

Յեսու

Յեսուայ գիրքը կրնայ բաժնուիլ երեք մաս : Առաջին մասը (Գլուխ Ա.—ԺԲ.) կը պարունակէ Քանանու երկրին Յեսուայ ձեռք նուաճուելուն պատմութիւնը : Երկրորդ մասը (Գլուխ ԺԳ.—ԻԲ.) կը պատմէ երկրին բաժնուիլն Իսրայելի այլեւայլ ցեղերուն, ապաստանի վեց քաղաքաց որոշուիլն, այսինքն երեք՝ Յորգանանու մէկ կողմը, և երեք՝ միւս կողմը, և երկրին այլեւայլ կողմերը քառասուն և ութ քաղաքաց տրուիլը Ղեւտական ցեղին : Երրորդ մասը (Գլ. ԻԳ. և ԻԴ.) կը յիշատակէ Յեսուայ իր ազգին ուղղեալ երկու վերջին յորդորական ճաւերը և անոր մահը :

Ըստ աւանդութեան Հրէից, Յեսու ինք գրեց այս գիրքը բաց ի վերջին 5 համարներէն ուր անոր մահը կը պատմուի : Բայց որովհետեւ այս գիրքին մէջ կան անղեր որ հաւանականապէս Յեսուայ ժամանակէն ետքը պատահած դէպքերու կը վերաբերին, ոմանք կը կարծեն թէ այս գիրքն, իր այժմու ձեւին մէջ, գրուած է յետնագոյն անձանօթ հեղինակէ մը, որ Յեսուէն գրուած յիշատակարաններ գործածեց, և այս պատճառաւ գիրքը կոչուեցաւ յանուն Յեսուայ, ոչ վասն զի Յեսու էր անոր հեղինակը, այլ վասն զի գիրքը կը խօսի Յեսուայ ժամանակին դիպաց վրայ, և բուն անկէ ծագող աղբիւրներէ առնուած է : ԺԹ. գլխոյն 47ներորդ համարին մէջ յիշուած դէպքը յետ Յեսուայ պատահեալ կարծուած դիպաց մէկն է : Գատաւորաց գիրքին ԺԸ. գլխոյն մէջ աւելի ընդարձակ անղեկութիւն տրուած է միեւնոյն դէպքին վրայ :

Բայց Գատաւորաց գիրքին մէջ յիշեալ գլխոյն արուած գիրքէն, և առաջին համարին սա տկնարկութենէն թէ այն օրերը թագաւոր չկար Խորայեղի մէջ, կը տեսնուի թէ պատմուած դէպքը Յետուայ մահուանէն ետքը կրնայ պատահած ըլլալ: Երբայց երէն ոճոյ նմանութիւնը զոր ունի այս գիրքը Մովսէսի հինգ գրոց ոճին հետ, իոկ Հին կտակարանին յեանագոյն գիրքերուն հետ աննմանութիւնը կը ցուցնեն թէ, եթէ արդարեւ այս գիրքը Յետուայ ժամանակէն ետքը գրուեցաւ, գէթ չի կրնար երկայն ժամանակ ետքը գրուած ըլլալ:

Գապաւորի և Հոռուի

Գատաւորաց գիրքն այսպէս կոչուած է, վասն զի կը պարունակէ Խորայեղացայ այն ժամանակին պատմութիւնը, երբ այս ազգը կառավարող անձինք Գատաւոր կը կոչուէին: Բայց այս գատաւորը այն հասարակ դատաւորներուն պէս չէին որոց հաստատութիւլ պատմուած է Ելեց ԺԸ. գլխոյն մէջ, և որոց պաշտօնն էր լսել և լուծել ժողովրդեան մէջ ծագած վէճերը, և որեւիցէ անձի դէմ եղած ամբաստանութեան ճշմարտութիւնը քննել: Գատաւորաց գիրքին մէջ յիշուած դատաւորը յատուածուստ կոչուած մարդիկ էին և կարեւոր ժամանակներ Աստուծմէ մանաւոր ազգեցութիւն ընդունելով կը վարէին անոր ժողովրդեան գործքերը: Անոնցմէ ոմանք զօրավար ըլլալով կ'ընտրուէին Աստուծմէ ազատելու համար զԽորայեղ գրացի ազգաց բռնութիւններէն: Երբ խաղաղութիւնն ու հանդարտութիւնը կու գար, անոնք շատ անգամ կը շարունակէին վարել հասարակաց գործքերը: Ընդհանրապէս չի կարծուիր թէ ամէն դատաւոր իշխանութիւն ունէր բոլոր երկրին վրայ, այլ թէ երբեմն թերեւս միեւնոյն ժամանակ այլեւայլ դատաւորք երկրին այլեւայլ մասերուն մէջ կատարեցին յատուկ պաշտօն մը առ որ կանչուած էին: Այսպէս Յեթմայէ և երեք դատաւորք որ անոր յաջորդեցին՝ կը թուին վարած ըլլալ իրենց պաշտօնն Խորայեղ երկրին հիւսիսային արեւելեան կողմը, մինչդեռ Սամսոն իր քաջագործու-

Թիւնները կը կատարէր իորայելի հարաւային արեւմտեան սահմանին վրայ, Փղշտացւոց երկրին մէջ: Դատաւորաց գիրքին մէջ յիշուած բաներուն մեծ մասը պատահած են երկրին հիւսիսային կողմը. քիչ բան պատմուած է հարաւային մասին վրայ ուր կը բնակէր Յուդայի ցեղը: Երկրին ընդհանուր վիճակը ցուցուած է սա խօսքերով, «Ան օրերը իւրայելի մէջ Թագաւոր չկար»: Կ'երեւի թէ իւրաքանչիւր ցեղ անձամբ կը տնօրինէր իր գործերը, ինչպէս կը տեսնուի Դանեանց արշաւանքէն սր կը պատմուի ԺԼ. գլխոյն մէջ: Մասնաւոր առիթներու մէջ միայն, զորօրինակ՝ Բենիամինեանց գործին մէջ որ ԺԹ. — ԻԱ. գլխոց մէջ կը յիշուի, ցեղերը միարան կը գործէին: Յայտնապէս Աստուծոյ նպատակն էր ժողովուրդին միտքը բերել միշտ թէ Աստուած էր անոնց Թագաւորը և պաշտպանը: Եթէ չէին պահէր Աստուծոյ օրէնքը և կը մեղանչէին Տէրոջը դէմ, Աստուած ի պատիժ կը մատնէր զանոնք անոնց թշնամիներուն ձեռքը: Երբ կը զղջային և կը խոնարհէին անոր առջեւ, Աստուած կ'ազատէր զանոնք դատաւորի մը ձեռք զոր պս մասնաւոր նպատակաւ կը յարուցանէր:

Հուլիսայ գիրքը կը պարունակէ ընտանեկան կենաց գեղեցիկ գէպք մը որ պատահած է դատաւորաց ժամանակ: Այս գիրքը կրնայ իբր յաւելուած համարուիլ Դատաւորաց գիրքին: Կը կարծուի թէ Հուլիսայ գիրքը գրուեցաւ Դաւթի Թագաւոր ըլլալէն ետքը, և գրուելուն մէկ պատճառն էր թերեւս լոյս սփռել Դաւթի նախնեաց պատմութեան վրայ, սակայն Հուլիսայ վսեմ հաւատոյն և սիրոյն օրինակը բարձր մարդոց համար գեղեցիկ խրատ է:

ԳԼ. ԺԲ

Թագաւորաց Գիրքերը

Հրեայք ի սկզբան թագաւորաց չորս գիրքերը կը հաշուէին երկու, որոց առաջինը (որ կը պարունակէր այժմու Ա և Բ

Թագաւորաց կոչուած գիրքերը կը կոչուէր Գիրք Սամուէլի, հաւանականապէս, զիսն զի կը սրբի Սամուէլի ծննդեան պատմութեամբ, և մեծաւ մասամբ անոր կենաց գործերը կը պատմէ: Երկրորդ գիրքը (որ Գ և Գ Թագաւորաց անուամբ հիմա նոյնպէս երկու գիրք կը բաժնուի) ի սկզբան կը կոչուէր Գիրք Թագաւորաց, զիսն զի կը պատմէ Յուդայի և Իսրայէլի Թագաւորաց գործերը, Վաւթի Թագաւորութեան զերջին մասէն սկսեալ մինչև Բաբելոնի գերութիւնը: Յիշեալ երկու գրքս այժմու բաժանումն ի չորս, բրին նախ Եթանաւուն Թարգմանիչը, և կոչեցին զանոնք Ա., Բ., Գ. և Դ Գիրք Թագաւորութեանց: Ուստի ցարդ առաջին երկու գիրքը կ'անուանեն Ա և Բ Գիրք Սամուէլի, և զերջին երկուքն՝ Ա և Բ Գիրք Թագաւորաց:

Մնացորդաց առաջին գիրքին ԻՔ. գլխոյն 20 համարին մէջ Սամուէլի տեսանօղի մը գիրքը կը յիշուի: Բայց ոմանք կը կարծեն թէ յիշեալ համարէն չի հասկցուիր թէ այն գիրքը Սամուէլի ձեռք, այլ Սամուէլի զրայ գրուած էր: Իսկ Թագաւորաց Ա և Բ գրքս հեղինակին զրայ ընդհանուր կարծիքն այս է թէ այն երկու գիրքերը ոչ թէ Սամուէլի ձեռք գրուեցան, թէպէտ, ինչպէս արդէն յիշուեցաւ, անոնք ի սկզբան կը կոչուէին յանուն Սամուէլի, այլ ուրիշի մը ձեռք, որ Իսրայէլի ժողովրդեան երկու, Յուդայի և Իսրայէլի, Թագաւորութեան բաժնուելէն ետքը կ'ապրէր: Թէ այս երկու գիրքերը չեն կրնար Սամուէլէ գրուած ըլլալ, ասկէ յայտնի է, որ կը իօսին անոր մահուանէն երկար ժամանակ ետքը պատահած բաներու զրայ: Իսկ թէ յետ բաժանման երկու Թագաւորութեան գրուեցան, այս ալ կը մտկաբերուի հեղինակին ստեղծ Յուդա և Իսրայէլ բառերը գործածելէն մանաւանդ քան լոկ Իսրայէլ կամ որդիքն Իսրայէլի բառերը, որ կը գործածուէին նախորդ գիրքերուն մէջ: Տես Ա Թագ. ԺԱ. 8, ԺԷ. 52, ԺԸ. 16, ԻԷ. 6: Բ Թագ. Գ. 10, ԻԳ. 1: Հեղինակը, ինչպէս անոր խօսքերէն կը տեսնուի, ազգը միշտ իբրև երկու բաժնէ բազկացեալ կը կարծէ, և բնական էր այսպէս խորհիլ, եթէ արդարև այն բաժանումէն ետքը գրեց: Այլ թէ ով էր այս հեղինակը՝ որոշել անհնար

է, բայց ո ոք և էր՝ անտարակոյտ հանեց իր պատմութիւնը պատմուած գէպքերուն ժամանակակից կամ իբր ժամանակակից աղբիւրներէ, այնպէս որ, թէպէտ հեղինակը չէր կրնար անձամբ գիտակ ըլլալ պատմուած բոլոր բաներուն, քանզի պատմութիւնը 150 տարուան միջոց մը կը պարունակէ, յիշեալ աղբիւրներէն առատ և արժանահաստ նիւթ քաղած ըլլալու է իր պատմութեան համար:

Թագաւորաց Գ. և Գ. գիրքերուն հեղինակն ալ լաւ ծանօթ չէ: Հրեայք այն գիրքերը Երեմիա մարգարէին կ'ընծայեն, և այս կարծեաց կը նպաստեն շատ նմանութիւններ որ կը տեսնուին այս գրոց և Երեմիայի գիրքին խօսքերուն մէջտեղ: (Գ թագ. ԻԳ. 17-20, ԻԵ. 1-30 համարները բաղգատէ Երեմ. ԾԲ. 1-34 համարներուն հետ. նաեւ Երեմ. ԼԹ. 1-7 համարները բաղգատէ Գ թագ. ԻԵ. 1-7 համարներուն հետ) Եթէ Բ Մնացորդաց վերջին գլուխը Գ թագաւորաց վերջին գլխոյն հետ բաղգատենք, պիտի տեսնենք որ Թագաւորաց գիրքին պատմութիւնը շատ ընդարձակ կը նկարագրէ ինչ որ պատահեցաւ Յուդայի երկրին մէջ յետ որոյ Հրէից մեծ մասը գերի տարուած էր Բաբելոն, ուր Մնացորդաց գիրքն այս գէպքերուն վրայ բան մը չըսեր: Արդ Երեմիայէ (Երեմ. ԼԹ. 11-14 և Խ. 1-6) գիտե՞ք թէ Երեմիա գերի չտարուեցաւ Բաբելոն ուրիշ գերելոց հետ, այլ Յնաց Հրէաստան մինչեւ որ ակամայ տարուեցաւ յԵգիպտոս (Երեմ. ԽԳ. 1-7): Ուստի պէտք էր որ Երեմիա լիովին տեղեկութիւն ունեցած ըլլար գերութեանէն ետքը Հրէաստանի մէջ պատահած գէպքերուն, և հարկաւ կրնար լիովին խօսել անոնց վրայ, իսկ Բաբելոն պատահած գէպքերուն վրայ բան մը չէր կրնար ըսել իբրեւ ակահատես: Այս պարագաները, և Գ թագաւորաց մէջ Յուդայի Թագաւորներէն վերջիններուն մանր պատմութիւնը հաւանական կ'ընեն թէ այն գիրքին հեղինակն էր Երեմիա որ և վկայ ականատես էր այն վերջին տարիներուն:

Թէ Երեմիա ականատես վկայ էր այս գէպքերուն, նաեւ գլխաւոր գործող անոնց շատերուն մէջ, յայտնի է Բ Մնացորդաց պատմութենէն: Այս պարագաներուն մէջ Երեմիայի յանուանէ յիշուած չըլլալը թերեւս փաստ է մանաւանդ ի նպատակ

այն կարծեաց թէ Երեմիա էր այն գրոց հեղինակը, քան թէ ասոր հակառակ կարծեաց: Անոր խոնարհութիւնը թերեւս արգելած էր զանի ցուցնել զինք իբրև գլխաւոր գործունենայ ազգային դէպքերուն համառօտ պատմութեանը մէջ:

Բայց այն գիրքերուն հեղինակը կամ խմբագիրը թէ Երեմիա ըլլայ և թէ ուրիշ մատենագիր մը, սա յայտնի կը տեսնուի որ այն գիրքերը Երեմիայի ժամանակին շատ մօտ գրուեցան, քանզի գերութենէ դարձին զրայ բնաւ ակնարկութիւն չկայ այն գրոց մէջ: Եթէ յետ գերութեան գրուած ըլլային, այն կարեւոր դէպքը հարկաւ յիշուած կ'ըլլար, ինչպէս որ յիշուած է Մնացորդաց Բ. գրոց մէջ:

Ասկէ ինը տարի առաջ (1869) երեւելի արձան կամ քարկոթող մը գտնուեցաւ հին Մովաբացոց երկրին մէջ Դեբօն կոչուած տեղը: Այս տեղը հիմա աւերակ է, բայց ժամանակաւ մայրաքաղաք էր Մովաբու: Արձանին զրայ կայ գրուած մը ուր կը պատմուի Մովաբու Մեսա (Եբր. Մէշա) թագաւորին յազթութիւնն իւրայելի թագաւորի մը դէմ: Այս Մէշա անտարակոյս Մովաբու այն թագաւորն էր որ Դ թագ. Գ. 4-27 համարներուն մէջ յիշուած է և ժամանակակից էր Յուդայի թագաւորին Յովուսիատու և իւրայելի թագաւորաց Աքաբու, Ոքոզիայի և Յովրամայ: Անտարակուսելի է նաեւ թէ արձանագրութիւնը գրուած է յիշեալ գլխոյն մէջ յիշուած դէպքերուն շատ մօտ ժամանակ մը: Գրուածը կը խօսի համառօտիւ Մովաբացոց և իւրայելացոց մէջտեղ արիւնահեղ կռուոց վրայ, և կ'ըսէ թէ Մովաբացիք ստացան յաղթութիւնը, որոյ համար Մէշա շորհակալութիւն կը մատուցանէ Մովաբացոց աստուծոյն Քամօվասյ: Կը պարծի թէ յաւարի առաւ իւրայելացոց Աստուծոյն Եհովայի պաշտաման մէջ գործածուած սրբազան անօթները: Ասոնք հաւանականապէս աաճարին անօթներն էին զորս իւրայելացիք պատերազմի տարած էին: Գիտենք որ իւրայելացիք երբեմն պատերազմի ժամանակ իրենց հետ կը առնէին ուխտին տապանակը: Արձանագրութեան լեզուն մաքուր Եբրայեցերէն է, բաց ի քանի մը բառերու վերջաւորութենէն, և գործածուած գիրն ալ շատ նման է հին Եբրայական նշանագրաց: Ասկէ կրնայ մակարեր-

ուիլ թէ Միջերկրական ծովուն արեւելեան կողմը բնակող ազգաց ինչպէս Քանանացւոց, Փիւնիկեցւոց, նաև Եգիպտոս, Մովաբու, Ամոնի և Համաթու ժողովուրդաց, եւ Խորայեցւոց լեզուն, ինչպէս նահապետաց և Խորայեի որդւոց պտտմութենէն ալ կրնայ գուշակուիլ, ըստ Էութեան միեւնոյն էր, այսինքն Հին կասկարանին Եբրայեցիքէնը, այնպէս որ ըստ այս ազգերն առանց գծուարութեան կրնային զերար հասկնալ: Այս արձանագրութեան մէջ Եհովայի իբրև Հրէից Աստուծոյն, ինչպէս նաև Մովաբացիներէն պաշտուած աստուծոյն, Քամովայ, անուան յեշատակութիւնը կարեւոր և ուշադրութեան արժանի հաստատութիւն է որբազան պտտմութեան: Տես թու. ԻԱ. 29: Գ թագ. ԺԱ. 7: Եբեմ. ԽԸ. 7, 13, 46:

Յիշեալ արձանը գտնուած աստեղը հին պատի մը փլատակին մէջէն հանուեցաւ, բայց հաւանականապէս թ սկզբան հոն կանգնուած չէր, այլ այն երկրին մէջ ստեղ պտտահասած պատերազմներէն մէկուն աստեղը կործանուած, և ապա իբրև հասարակ քար գործածուած էր այն պատին մէջ: Արձանին գտնուելէն ետքը և տեղէն վերցուելէն առաջ, հոն մօտ բնակող Արարացիք տեսնելով որ Եբրայացիք շքանալ բան մը կը համարէին զայն, սկսան կազել իրարու հետ, իւրաքանչիւր ջանալով տէր ըլլալ արձանին, և այս գծուարութեան պատճառաւ արձանը խորտակելով քանի մը կտոր ըրին: Բայց յետոյ այն կտորներէն շատերը ժողովուելով զգուշութեամբ իրարու քով դրուեցան, և արձանագրութեան անկատար մէկ օրինակին միջոցաւ որ արձանին խորտակուելէն առաջ առնուած էր՝ արձանը գրեթէ ամբողջ նորագուեցաւ: Արձանագրութեան մէջ կան քանի մը գիրեր և բառեր որ չեն կարդացուիր, բայց արձանագրութեան միտքը կրնայ թիչ գծուարութեամբ հասկըցուիլ: Արձանը տարուեցաւ Քաղիոյ մայրաքաղաքը Բաբելոնը հիմա կրնայ տեսնուիլ և քննուիլ:

Արձանը պարզ կոչուած տեսակ մը սև քար է, 3 սոք և 8½ մատ երկայն, 2 սոք և 3½ մատ լայն և իբր 1 սոք թանձր: Երկու ծայրերը բարրակ են, և արձանագրութիւնը 36 տող է: Բառերն ընդհանրապէս կը բաժնուին կէտերով, իսկ իմաստներն՝ ուղղահայեաց գիծերով: Եր կարծուի թէ այս

արձանագրութիւնը մինչեւ ցարգ զանուած այբուբենական գրութեանց մէջ հնազալին է . նինուէի աւերակներէն հանուած արձանագրութեանց մէջ անգամ քան զայս հնազալնը չկայ : Եզրայտական արձանագրութիւններէն ոմանք հնազալն են , բայց մեհնեական նշանագրք գրուածներ են և ոչ այբուբենական : Մովաբացոց արձանին կանգնման թուականը հին է քան անուանի Յսյի բանաստեղծին Հոմերի ծնունդը , 850 նախ քան զՔրիստոս : Ահա արձանագրութեան Հայերէն թարգմանութիւնը , ուր բնագրին մէջ պակաս զանուած գիրերը կամ բառերը մակարերութեամբ լեցուած և փակագծի մէջ աւնուած են :

“ Եւ Մէշա , որգի եմ ֆամովս [Գագ]ի թագաւորին Մովաբու , [Գ] երոնացոյ : Հայրս երեսուն տարի թագաւորեց Մովաբացոց , և ես հօրմէս ետքը թագաւորեցի : Եւ կանգնեցի այս արձանը ֆամովսայ ի Գորխա , ի յիշատակ ազատութեան , քանզի ֆամովս ազատեց զիս բոլոր կողուտիւներէն , և տեսնել տուաւ ինծի [զաւերն] ատելեաց իմոց : ”

“ Ամրի [էր] թագաւոր Իւրայելի , և բաւական տարիներ հարստահարեց զՄովաբ , քանզի ֆամովս բարկացած էր անոր (Մովաբու) և անոր երկրին : Ամրիի սրդին յաջորդեց անոր , և անկկա ալ ըուաւ ‘Պետի հարստահարեմ զՄովաբ’ : ”

“ Իմ թագաւորութեանս ժամանակ ֆ[ամովս] ըուաւ , ‘Բայց ես պիտի նայիմ անոր և անոր տանը , և Իւրայել պիտի կործանի կործանումն յաւիտենից’ : ”

“ Եւ Ամրի տիրեց [քաղաքին] Մեդաբայ և բնակեցաւ հոն [և անանք հարստահարեցին զՄովաբ , ինք և] սրդին քառասուն տարի : Իմ օրերս ֆամովս [նայեցաւ անոր :] ”

“ Եւ ես շինեցի զԲէէլմոն և բրի հոն [խրամ] : Եւ պաշարեցի զկարիսթէմ . և Գադայ մարդիկը բնակեցան [այն] երկրին մէջ հնուց ի վեր . և Խորայելի թագաւորը շինեց [քաղաքը] իրեն համար . բայց ես կռուեցայ քաղքին դէմ և աբի զայն , և սպաննեցի քաղքին [ժողովուրդը] , հաճոյ տեսարան մը ֆամովսայ և Մովաբացոց : Եւ առի [աւարք և մատուցի զայն] ֆամովսայ ի կարիսթ , և բնակեցուցի հոն Աբրանի մարդիկը և Շախարաթայ (կամ Մախարաթայ) մարդիկը : ”

“Եւ Քամովն ըսաւ ինծի, ‘Գնա և առ զՆարաւ Խորայելի գէմ’ : [Եւ ես] գացի գիշերայն և կռուեցայ անոր դէմ՝ առաւօտէն մինչեւ կէս օր, և առի [քաղաքը] և սպաննեցի [քաղաքին] մարդիկը, ընդ ամէնը եօթն հազար . [իսկ կանայք նուիրեցի] Աշոր—Քամովսայ, և առի Եհօփայի անօթները և նետեցի Քամովսայ առջեւ :”

“Եւ Խորայելի Թագաւորը շինեց զՅասոսա և բնակեցաւ հոն մինչ կը կռուէր ինծի դէմ : Եւ Քամովն վանեց զանի [իմ] առջեւ : Առի Մովարէն երկու հարիւր մարդ, անոր բոլոր գլխաւորները, և պաշարեցի Յասոսա և առի զայն՝ Դերոնի վրայ [աւելցնելու] :”

“Շինեցի զԳորխա, անտառին պատը և [քաղաքին] պատը, և անոր գուռները շինեցի . և անոր աշտարակները շինեցի . և քաղաքին մէջտեղը շինեցի աւազաններ լերանց հեղեղներուն համար [կամ բանտեր] : Եւ հոն գուռ չկար քաղաքին մէջ, ի Գորխա, և ըսի բոլոր ժողովրդեան, ըրէք ձեզի գուռեր իւրաքանչիւր իր տանը մէջ, և փորեցի Գորխայի խրամը Խորայելի [մարդաց] ձեռքով :”

“Շինեցի զԱրուէր, և ըրի ճամբայ քարոյտառակ Առնոնի մէջ : [Շինեցի բարձր տեղւոյն տունը] Բէթ Բամովթ, քանզի կոր [ծանած] էր : Շինեցի զԲեզեր, քանզի Դերոնի մարդիկը, յիտուն հոգի, առին զայն, [քանզի բոլոր Դերոն հաւատարիմ էր] : Եւ զԲիկրան լեցուցի [բնակչոք] և յարեցի երկրին : Եւ շինեցի Բէթ Դերլաթէմ և Բէթ Բէէլմօն, և Մ[սովաբացիներ] դրի հոն երկիրը : Եւ Որոնան բնակեցաւ հոն : Քամովն ըսաւ ինծի, Գնա, կռուէ Որոնանի դէմ, և ես Քամովն իմ օրերս :”

ԳԼ. ԺԳ

Ա. և Բ. Մնացորդք, Ելբաս, Նեեֆա և Եսլէր

Ա. և Բ. Մնացորդաց գիրքերն ի սկզբան էին մի գիրք որ կը կոչուէր Եբրայեցերէն “Տիվրէ հայրամիմ,” այսինքն “Օրբտաօրական գէպքեր,” կամ “Տարեգիր :” Եօթանասուրեն Թարգմա-

նիչք երկու բաժնեցին այն գիրքը, և կոչեցին Բարսիբոմիտ, որ կընշանակէ «Մնացորդ»։ Հաւանականապէս այն թարգմանիչք յիշեալ գիրքերը նկատեցին իբրեւ Թագաւորաց գիրքերուն մէջ չյիշուած գէպքերուն պատմութիւնները, և այս պատճառաւ վերոյիշեալ անունը տուին անոնց։ Ա'երեւի թէ Թագաւորաց գիրքերուն հեղինակին կամ խմբագրին նպատակն էր գրել Թագաւորներուն ժամանակին Եբրայական պատմութիւնը մինչև գերութիւնը, և այն պատմութեան մէջ ցուցնել թէ Աստուած ճշգիւ կատարեց թէ՛ իր խոստմունքը և թէ իր սպաւնալիքը։ Իսկ Մնացորդաց հեղինակը կամ խմբագիրն, ինչպէս կ'երեւի, աւելի մասնաւոր նպատակ մը ունէր, զոր քիչ մը ետքը պիտի յիշէնք։ Յայտնի է թէ այս հեղինակը կ'ապրէր գերութենէն ետքը, քանզի ոչ միայն այն գէպքերուն վրայ իբրեւ անցեալ բանի վրայ կը խօսի (Ա Մնաց. թ. 1), այլև կը յիշէ ինչ որ ըրաւ Աիւրոս Հրեաններն իրենց երկիրը դարձնելու և տաճարը վերտաին շինել տալու համար (Բ Մնաց. 19. 20-23)։ Ուստի կը թուի թէ յիշեալ հեղինակին նպատակն էր մանաւանդ տալ գերութենէ դարձադնւրուն սրչափ հնար էր կատարեալ տեղեկութիւն իրենց նախնեաց ազգաբանութեանը վրայ, և մանր պատմել տաճարին պաշտամանց վերաբերեալ ինչ կարգադրութիւններ որ եղած էին Դաւթի ժամանակ։ Ա Մնացորդաց տառջին ինը գլուխները կը պարունակեն ազգաբանութիւններ, մինչ իբւէն մինչև իթ. գլուխները տաճարին պաշտամանց վրայ տեղեկութիւններ կու տան։ Այս երկու բաներուն, այն է ազգաբանութեանց և պաշտամանց վրայ տեղեկութիւններ շատ օգտակար պիտի ըլլային անոնց որ գերութենէ կը դառնային, և կը փափաքէին ստուգել իրենց հին կալուածներն իրենց հայրենի երկրին մէջ, և իրենց հին կրօնական պաշտամունքը դարձեալ հաստատել հոն։ Յիշուելու արժանի է նաև որ, այս գիրքերուն մէջ շատ քիչ բան ըսուած է իսրայելի Թագաւորութեան, այսինքն տասն ցեղից վրայ։ Որովհետեւ այս տասն ցեղք այնպէս ցրուած էին որ յոյս չկար անոնց դարձին իրենց հայրենի երկիրը, անոնց պատմութիւնը համեմատութեամբ քիչ կարեւորութիւն ունէր վերջին դարուց Հրէից, ոչ ալ

անանց վրայ տեղեկութիւն տալէն օգուտ մը յառաջ կու գար Բարեկէսէ գարնաններուն իրենց թազաւորութիւնը և Երուսաղէմի մէջ Եհովայի պաշտօնը վերստին հաստատելու գործին մէջ: Ա Մնացորդաց Թներորդ գլխոյն բազդատութիւնը Նէեմեայ ԺԱ. գլխոյն հետ, պիտի ցուցնէ թէ Երուսաղէմ ընակող անձանց ցանկը որ այն Թներորդ գլխոյն մէջ յիշուած է՝ պարտի վերաբերիլ գերութենէ գարձէն ետքը հոն ընակող անձանց, ուստի և այն գլուխը գրուած ըլլալու է յետ գերութեան: Բազդատէ մանաւանդ Ա Մնացորդաց Թ. գլխոյն 7 և 10 համարները Նէեմեայ ԺԱ. գլխոյն 7 և 10 համարներուն հետ: Այս երկու գիրքերուն մէջ յիշուած ազգաբանութիւնք իրարմէ քիչ շատ կը տարբերին, բայց երկուքն ալ յայտնուպէս կու գան միեւնոյն հին յիշատակագրէ, և տարբերութիւնը ծագած է ասկէ որ, հեղինակներն ալ միեւնոյն անունները չընտրեցին յիշատակագրին մէջ նշանակուած բազմութիւն անուններէն: Ընդհանրապէս կը կարծուի թէ Մնացորդաց գիրքերը գրեց Եզրաս Ղեւտացին: Անտարակոյս Թագաւորաց չորս գիրքերը, որ կը խօսին գրեթէ միեւնոյն կարգի գեղաց վրայ որոց վրայ կը խօսին Մնացորդք, Եզրասայ ձեռքն էին, բայց ինչպէս որ ալ գործածած ըլլայ Եզրաս Թագաւորաց գիրքերը, սա յայտնի է որ անոնք չէին Եզրասայ տեղեկութիւններուն միմիայն ազգիւրները, քանզի Եզրաս այնպիսի գէղքեր կը յիշէ որ Թագաւորաց գիրքերուն մէջ յիշուած չեն: Եզրաս և Թագաւորաց գիրքերուն հեղինակն ունէին միեւնոյն հասարակաց յիշատակագիրները և այլեւայլ մտադարեից և տեսանողաց գրուածները, բայց հարկաւ տարբեր քաղուածներ կ'ընէին այն գիրքերէն, և տարբեր կերպով կը համառօտէին յիշատակագիրները, ուստի թէեւ ընդհանուր համաձայնութիւն կայ երկու պատմագրաց մէջտեղ, կան նաեւ մանր տարբերութիւններ, բայց այս տարբերութիւնները չեն փաստեր երկու պատմութեանց և ոչ միայն ճմարտութեանը:

Եզրաս և Նէեմիա

Այս երկու գիրքը կրնան իրրեւ շարունակութիւն համար-

ուիլ թագաւորաց և Մնացորդաց գիրքերուն պատմութեանը, և կը պատմեն կարեւոր գեղքեր որ կը վերաբերին Հրէից դարձին իրենց երկիրը յետ գերութեան, և ՆՏաղայի պաշտաման վերադարձն հաստատուելուն հան: Առաջին գիրքին հեղինակն էր, ինչպէս առ հասարակ կը կարծուի, Եզրաս, գիտուն և բարեպաշտ քահանայ մը որ կը բնակէր Բաբելոն Պարսից Արտաշէս թագաւորին ժամանակ (484-425 ն. թ. գ. գ. գ.), և անոր հրամանաւը գրկուեցաւ Երուսաղէմ մասնաւոր պաշտօնով (Եզր. Գլ. Է.): Առաջին 6 գլուխներուն մէջ կը պատմուի Հրէից գերութենէ գարձը և այն գեղքերը որ պատահեցան Երուսաղէմ՝ Եզրասայ ժամանակէն առաջ, և, հաւանակահասակէս, այս պատմութեանը հաւաքուեցաւ Եզրասայ ձեռքով այլոց գրուածներէն: Ոմանք կը կարծեն թէ Դանիէլ գրեց Ա. գլուխը, և թէ այս գլուխն ի սկզբան Դանիէլի գիրքին մէջ էր՝ այն գիրքին թ. և Չ. գլուխներուն մէջտեղ, և թէ Եզրաս որ, ըստ կարծեաց բազմաց, Հրէից պատմութեան այս միջոցին վերաբերեալ գիրքերը կարգի դրաւ՝ յիշեալ գլուխը Դանիէլի գիրքէն հանելով դրաւ իր պատմութեան սկիզբն իբրև այս պատմութեան վերաբերեալ մաս մը: Այս ենթադրութեամբ, եթէ շիտակ է, կը մեկնուի այն պահապար կը նշմարուի Դանիէլի գիրքին մէջ, այսինքն Կիւրոսի հրովարտակին կամ Հրէից գերութենէ գարձին յիշուած չլլալը, գեղք մը՝ որ չէր կրնար Դանիէլի ուշագրութենէն վրիպիլ: Եթէ Եզրասայ գիրքին Ա. գլխոյն սկիզբը բազաւորուի Դանիէլի Չ. գլխոյն սկզբան հետ, պիտի տեսնուի թէ խօսքերը նման են իրարու. «Պարսից Կիւրոս թագաւորին առջի տարին», և, «Պարսից Կիւրոս թագաւորին երրորդ տարին» Իս եւս դիտողութեան արժանի է որ Եզրասայ գիրքին մէջ կան տեղեր (Գլ. Գ. 8—9. 18, և Է. 12—26) որ պաշտօնական գրուածներէ առնուած կը թուին և Քաղզէարէն են: «Պարսից Կիւրոս թագաւորին առջի տարին» խօսքով կ'իմացուի Կիւրոսի Բաբելոն թագաւորելուն առաջին տարին: 538ին նախ քան գ. գ. Կիւրոս արդէն քսան տարուան թագաւոր էր Մարաց և Պարսից: Գլ. Գ. 5, 24 և 9. 15 յիշուած Պարսից թագաւորը Դարեհ, արտաքին պատմութեան մէջ կը

կոչուի Գարեհի վշտասպետայ, և Պարսից այն թագաւորն է որ պատերազմ բրաւ Յունաց դէմ և յաղթուեցաւ Մարաթոնի կռուոյն մէջ: Այս Գարեհի սկսաւ թագաւորել 521ին Ն. Ք. զԲր.: Եզրասայ Գլ. Գ. յիշուած Ասուերոսը որդի և յաջորդ էր Ահւերոսի: Սկսաւ թագաւորել 529ին Ն. Ք. զԲր., և արտաքին պատմութեան մէջ կը կոչուի Ամբիւս: Պարսից թագաւորաց սովորութեանը համաձայն էր միեւնոյն թագաւորի երկու անուն տալ: Եզր. Գ. 7—23 յիշուած Արտաշէս բռնակալ էր և յափշտակեց ամբողջ 522ին Ն. Ք. զԲր., բայց եօթն ամիս միայն թագաւորեց: Ահրոյիշեալ Գարեհի վշտասպետայ զանի գահէն վար առնելով ոպաննեց: Յիշեալ բռնակալը կը պնդէր թէ եղբայր էր Ահւերոսի որդւոյն Ամբիւսեայ և Շմերդ կոչուեցաւ: Զանաց վերստին հաստատել մոգութիւնը Պարսկաստանի մէջ, և թշնամի էր Հրէից: Եզրասայ է. 4 յիշուած Արտաշէս այն թագաւորն էր որ արտաքին պատմութեան մէջ կը կոչուի Արտաշէս երկայնաբազուկ, և այսպէս կոչուեցաւ, ինչպէս կը կարծուի, զան զի մէկ բազուկը երկայնագոյն էր քան զմււրը: Այս թագաւորը սկսաւ թագաւորել 464ին Ն. Ք. զԲր., ուստի և 57 տարուան միջոց մը կար ի մէջ Եզրասայ Զ. գլխոյն մէջ յիշուած դէպքին որ պատահեցաւ Գարեհի վեցերորդ տարին (Եզր. Զ. 15) և ի մէջ է. գլխոյն մէջ յիշուած դէպքին որ պատահեցաւ Արտաշէսի եօթներորդ տարին (Եզր. է. 7): Եզրասայ սա խօսքին մէջ, “Եւ սա բաներէն ետքը” “ետքը” բառը վերոյիշեալ 57 տարուան միջոցին կը վերաբերի: Գարձեալ 43 տարի ետքը, կամ Արտաշէսի թագաւորութեան երկրորդ տարին, ուրիշ բարեպաշտ անձ մը Նէեմիա անուն, որ թագաւորին սպասաւորութեանը մէջ էր իրրու անոր մատուակը, հրաման ստացաւ երթալ Երուսաղէմ քաղքին պարիսպները շինել, իբրեւ կառավարիչ ժամանակ մը հոն մնալու արտօնութեամբ: Թէ ինչպէս կատարեց Նէեմիա այս պաշտօնը, ինք անձամբ կը պատմէ իւր համանուն գիրքին մէջ: Այս գիրքը Հին կտակարանին պատմական գրոց վերջինն է, և Հրէից պատմութիւնը կը հասցնէ մինչեւ 430ներորդ տարին Ն. Ք. զԲր.: Նէեմիայ գիրքը մեծ լըյս կը ծագէ Հրէից վեճակին զբոյ յետ գերութեան, Պարսից

կառավարութեան վրայ որոյ հպատակ էին Հրեայք, և այս վերջիններուն յարաբերութեանը վրայ դրացի ազգաց, մանաւանդ Սամարացւոց հետ որ Հրէից սխերիմ՝ թշնամիներն էին: Կը թուի թէ Նէեմիա կառավարիչ եղաւ Երուսաղեմի իր 12 տարի, թէպէտ, ինչպէս կ'երեւի, չկրցաւ մշտ հան մնալ: Արդարեւ անոր բացակայութիւնը Երուսաղեմէ և նորէն հոն դարձը յիշուած են ԺԳ. գլխոյն 6 և 7 համարներուն մէջ: Նէեմիա կը թուի մեծամեծ ընդդիմութեանց հանդիպած ըլլալ իր ձեռնարկութիւններուն համար թէ՛ իր հայրենակիցներէն որ բարոյապէս շատ ապականեալ էին օտար ազգաց հետ հաղորդակցութեամբ, և թէ՛ Սամարացւոց նախանձէն և թշնամութենէն, այնպէս որ նորաշէն պարիսպներուն նաւակատիքը չկրցան կատարուիլ մինչև ի վերջ Նէեմեայ պաշտօնին: Գիրքին աւարջին 6 և վերջին 2 գլուխներուն մեծ մասն, ինչպէս կ'երեւի, գրուած է նոյն իսկ Նէեմեայ ձեռագր: Է. գլխոյն 6 համարէն մինչև ԺԲ. 26 համարները կը պարունակեն ազգաբանութիւններ, և քանի մը կրօնական հանդիսաւոր պաշտամանց և Եհովայի հետ ազգային ուխտին նորոգման պատմութիւնը: Այս պատմութեան ոճը գիրքին միւս մասերուն ոճէն քիչ մը տարբեր գտնելով, սմանք կը կարծեն թէ այս մասը գրուած է Եզրաս գպրէն որ պատմուած դէպքերուն մէջ կարեւոր պաշտօն ունէր: Արգարեւ այս երկու գիրքերը, Եզրաս և Նէեմիա, ի սկզբան մի կը համարուէին և կը կոչուէին Գիրք Եզրայ:

Հաւանական է թէ, ինչպէս ասկէ առաջ յիշուած պատմական գիրքերէն սմանք, նոյնպէս այս երկու գիրքը, խմբագրուած են ազգային յիշատակագիրներէ և այլեւայլ հեղինակաց գրուածներէն, անտարակոյտ աստուածային ներշնչութեամբ: Նէեմեայ ԺԲ. գլխոյն 10 և 11 համարներուն մէջ յիշուած են մինչև հինգերորդ ազգ Եստուայ քահանայապետին (տես Անգ. Ա. 1) տերնոց անունները, որոց վերջինն է Յազգուա որ, ըստ Յովնպոսի, քահանայապետ էր երբ Աղեքսանդր մեծ արշաւեց Հրէաստան 333ին Ն. Բ. զԳր.: Հարիւր ամօք յետոյ էր այս արշաւանքը քան զՆէեմիա, ուստի և Նէեմեայ յիշեալ համարները մուծուած ըլլալու են անոր

գիրքին մէջ ուրիշ անձէ, ոչ թէ նոյն իսկ Նէեմիայէ գրուած Ասկէ ոմանք կը հետեւցնեն թէ այն ժամանակը, կամ քիչ մը առաջ քան 300երորդ տարին նախ քան զՔրիստոս, հաւաքուեցան և կարգի գրուեցան Հին Աստուածանիս գիրքերը և կանոնը կազմուեցաւ: Կան տարբերութիւններ Եզրասոյ և Նէեմիայ գրոց թիւերուն և անուններուն մէջ (տես երես 5): Քուոց տարբերութիւնները հաւանականապէս ծագած են օրինակողներուն սխալներէն: Անուանց տարբերութիւնները ծագած են թերեւս միեւնոյն անձի երկու անուն տալու սովորութենէն որ անատեն հասարակ էր: Զորօրինակ՝ գերութենէ դարձին ատենը Հրէից առաջնորդող իշխանը կը կոչուի մերթ Վաստատար, և մերթ Զօրաբարէլ: (Բաղդատէ Եզր. Ե. 16 համարը Զաք. Դ. 9 համարին հետ:) Յայտնի է նաեւ թէ մակամունը երբեմն որդիէ որդի կը շարունակուէր: Այսպէս պարտինք ենթադրել թէ Յեսու և Աղաթիէլ որ կը յիշուին Նէեմիայ թ. 4 համարին մէջ՝ որդիք կամ թոռուք էին այն մարդոց որ միեւնոյն անուամբ կը յիշուէին Եզրասոյ Դ. 9 համարին մէջ, Նէեմիայ և Եզրասոյ մէջ յիշուած այս համանուն անձինք չին կրնար միեւնոյն անձինք բլաւ, քանզի իւր 100 տարի անցած էր այն երկու գրոց մէջ յիշուած գիպոց մէջտեղ: Նաեւ Զօրաբարէլի ժամանակին երեւելի անձանց անուններուն ցուցակը որ կոչ Նէեմիայ գրոց մէջ (Գլ. ԺԲ. 1—7) բաղդատէ անկէ գրեթէ 100 տարի ետքը Նէեմիայ ժամանակակից մարդոց անուններուն հետ որ յիշուած են Նէեմիայ Ժ. 1—8 համարներուն մէջ:

Ե՞՛ր

Այս գիրքին հեղինակն անծանօթ է: Մանր աեղեկութիւնը որ արուած է այս գիրքին մէջ Առուերոս թագաւորին արքունեաց գործքերուն վրայ, ինչպէս նաեւ գիրքին լեզուին ոճը, կը ցուցնեն թէ պատմուած գէպքերուն շատ մօտ ատեն գրուած է գիրքը: Ոմանք կը կարծեն թէ նոյն իսկ Մուրթքէ գրեց զայն: Հրեայք այս գիրքը կ'անուանեն "Մէկիլաթ Էսթեր", այսինքն մատեան Եսթերայ: Ի հնումն այս գիրքը կը գրուէր ուրոյն մագաղաթեայ առմի վրայ, և կը կարգացուէր

ծայրէ ի ծայր փուրիմի տօնին, որոյ հաստատութիւնը յիշուած է այս գիրքին թ. գլխոյն մէջ, և զոր Հրեայք կը կատարեն մինչև ցայսօր: Գիրքին առաջին համարին մէջ յիշուած Ասուերոսի համար ընդհանրապէս կը կարծուի թէ անուանի Քսերքսէս թագաւորն էր, որ յամին 480 նախ քան զՔրիստոս ձեռնարկեց Յունաստան նուաճել և շարաշար յաղթուեցաւ: Քսերքսէս անունը կ'ելլէ Սանսքրիդ լեզուին «քը-շագրա», կամ ինչպէս երբեմն կը գրուի, «+չրչ» բառէն որ կը նշանակէ թագաւոր: Յոյնք Քշէրշէ անունը փոխեցին ի Քսերքսէս: Այս գիրքիս մէջ յիշուած Ասուերոսի տէրութեան ընդարձակութիւնը կը պատասխանէ Քսերքսէսի տէրութեան ընդարձակութեանը, ինչպէս նաև Ասուերոսի բարբը՝ Քսերքսէսի բարուցը: Թագաւոր մը որ, ինչպէս Քսերքսէսի համար կը պատմուի, ուզեց ծոզը շղթայիւ կապել և ալիքներուն մտրակի 300 հարուած տալ վասն զի քայքայեցին իր կամուրջը, կրնայ վարուած ըլլալ Եսթերոյ գիրքին մէջ նկարագրուած ամբարտաւան և բարկացոտ կերպով: Դիտողութեան արժանի է որ Աստուծոյ անունն ամենեւին չկայ այս գիրքին մէջ, ոչ ալ Երուսաղեմի անունը կամ Հրէից կրօնական ծեսերէն կամ սովորութիւններէն մին երբեք յիշուած է հոն: Կ'երևի թէ հեղինակը կը խորհէր թէ նոյն իսկ գէպքերուն պատմութիւնը բաւական էր ցուցնել Աստուծոյ խնամքն իր ժողովրդեան վրայ, ուստի և զԱստուած յատկապէս յիշելու հարկ չկար: Աւետարանին լուսովը նկատուելով, վրէժը զոր Հրեայք առին իրենց թշնամիներէն 75,000 մարդկոտորելով՝ անգութ էր: Չենք գիտեր սակայն թէ այնչափ մարդոց սպանուամն արդարացնելու ի՞նչ իրաւացի պատճառներ կային անատեն:



ԳԼ. ԺԳ.

Հին Կտակարանին Բանաստեղծական գիրքերը

Հրեայք Հին Կտակարանին երեք գիրքը միայն բանաստեղծական կը համարին, այն է՝ Յորը, Սաղմոսներն ու Առակ-

ները : Բայց որովհետև ժողովուրդն ու Երգոց Երգն ալ այն եւրեք գրոց պէտ բանաստեղծական յատկութիւններ ունին , առանց ալ ընդհանրապէս առջի երեքին կարգը կը դասուին : Մարգարէից գիրքերուն մէջ ալ շատ տեղերուն սճր բանաստեղծական է , ուստի և այն մասերն ալ կրնան այն գրոց կարգը դասուիլ որոնց ձեռ բոլորովին բանաստեղծական է :

Երբայերէնի մէջ բանաստեղծութեան ձեռ բոլորովին տարբեր է ուրիշ գրեթէ բոլոր նախնի և արդի ազգաց բանաստեղծութեան ձեւէն : Երբայեցերէն քերթուածոց մէջ կը տեսնենք ոչ թէ ստանաւոր չափ կամ յանգ , սյլ տուն տուն խօսքեր կամ տողերու շարք որոնց մէջ իրարու համապատասխանող խորհուրդներ կամ իրարու նման և կամ հակադրեալ իմաստներ կը գտնուին :

Երբայական քերթուածոց այս մասնաւոր սճին օրինակ մը ունինք ԻԳ. Սաղմոսին մէջ .

“Տէրոջն է երկիրը ու անոր լիութիւնը ,

Աշխարհքը ու անոր բնակիչները :

Ինչու որ ինքը անոր հիմերը ծովերուն վրայ ձգեց ,

Ու զանիկա գետերուն վրայ հաստատեց :

Ո՞վ պիտի ելլէ Տէրոջը լեռք ,

Կամ ո՞վ պիտի կենայ անոր սուրբ տեղը” ևն :

Երկրորդ տողին մէջ սա բառերը , “Աշխարհքը ու անոր բնակիչները” , կը պատասխանեն առաջին տողին սա բառերուն , “Երկիրը ու անոր լիութիւնը” Երրորդ տողին “Ծովեր” բառին կը պատասխանէ չորրորդ տողին “Գետեր” բառը : Հինգերորդ տողին հարցումէն ետքը կու գայ նոյնպիսի հարցում մը վեցերորդ տողին մէջ , և այսպէս բոլոր Սաղմոսին մէջ :

Շատ անգամ երկու իրարու յաջորդող տողերուն խորհուրդները նման են իրարու , կամ միևնոյն խորհուրդը թեթեւ տարբերութեամբ մը կը կրկնուի . զորօրինակ հետեւեալ խօսքերուն մէջ .

“Երկինքը բնակողը անոնց վրայ պիտի ծիծաղի ,

Տէրը ծաղը պիտի ընէ զանոնք :

Անատենչ իր բարկութիւնովը պիտի խօսի անոնց ,

Եւ իր սրամտութիւնովը պիտի խափեցնէ զանոնք”
(Սաղմ. Բ. 4, 5):

“Վասն զի դուն պիտի օրհնես արդարը, ով Տէր,
Բարի կամեցողութիւնով անոր չորս կողմը պիտի պա-
տես՝ որպէս թէ զահաճումը” (Սաղմ. Ե. 42):

“Ով Տէր, քու զօրութիւնովդ թագաւորը ուրախ պիտի
ըլլայ,

Ու քու փրկութիւնովդ սրչափ շատ պիտի ցնծայ:
Անոր սրտին փափաքը իրեն տուիր.

Ու անոր շրթունքներուն խնդիրը իրմէ չարգելեցիր”
(Սաղմ. ԻԱ. 4, 2):

“Կորսուի ան օրը որ ես ծնայ,
Ու ան գիշերը՝ որ ըսին թէ՛ Արու զաւակ մը ծնաւ”
(Յոր. Գ. 3):

“Լոկեցէք Տէրոջը խօսքը, ով Սողոմի իշխաններ,
Ականջ գրէք մեր Աստուծոյն օրէնքին, ով Գամարի ժո-
ղովուրդ” (Ես. Ա. 40):

“Ինձի մտիկ ըրէք, ով արդարութիւն ճանչցողներ,
Եւ իմ օրէնքս ձեր սրտին մէջը պահող ժողովուրդ.
Մարդոց նտխատիւքէն մի վախնաք,
Ու անոնց բամբասանքէն մի զարհուրիք” (Ես. ԵԱ. 7, 8):

Երբեմն ստղի մը խորհուրդը կամ իմաստը հակադրեալ կամ
Կերհուի է յաջորդ տողին խորհուրդին կամ իմաստին. զորօրի-
նակ, Առակաց Ժ. 4 համարին մէջ.

“Իմաստուն տղան իր հայրը կ’ուրախացնէ.
Բայց անմիտ տղան իր մօրը տրտմութիւն է”

Դարձեալ նոյն գլխոյն 7 համարին մէջ,

“Արդարներուն յիշատակը օրհնեալ կ’ըլլայ,
Բայց ամբարիշտներուն անունը կը փախի”

Երբեմն իրարու համապատասխանող տողերը երկք կամ ա-
ւելի են. զորօրինակ.

“Երբոր ձեր վախը հեղեղի պէս հասնի ,
 Զեր թշուառութիւնը մըրկի պէս պատահի ,
 Եւ ձեր վըայ նեղութիւն ու տառապանք գայ”

(Առակ. Ա. 27) :

“Որ կը քաւէ բոլոր անօրէնութիւններդ ,
 Ու կը բժշկէ քու բոլոր հիւանդութիւններդ .
 Որ կը փրկէ քու կեանքդ ապականութենէն ,
 Եւ կը պահէ քեզ ողորմութիւնով ու գթութիւնով .
 Որ կը լեցընէ քու ծերութիւնդ բարութիւնով ,
 Ու քու մանկութիւնդ արծիւին պէս կը նորոգուի”

(Սաղմ. ՃԳ. 3-5) :

Երբեմն իբարու համապատասխանող տողերէն առաջ կամ
 և՛տքը միակ խօսք մը կայ իբրև յառաջարան . զորօրինակ .

“Երանելի է ան մարդը՝
 Որ ամբարիշտներուն խորհուրդին մէջ չքաւեր ,
 Ու մեղաւորներուն ճամբուն մէջ չկենար ,
 Եւ ծաղր ընողներուն նստած աեղը չնստի”

(Սաղմ. Ա. 4) :

“Ղուէ , ով երկինք , և ականջ դիր , ով երկիր ,
 Վասն զի Տէրը կը խօսի .
 Զաւկներ մեծցուցի ու բարձրացուցի ,
 Եւ անոնք ինծի գէմ՝ ապոտամբեցան” (Ես. Ա. 2) :

Երբեմն իբարու յաջորդող տողերու կամ մասերու մէջ
 Թրկորդ տողին կամ մասին իմաստը փոխանակ ըլլալու ներ-
 հակ կամ հանդոյն առաջնոյն իմաստին՝ յաւելուած է ա-
 նար . զորօրինակ .

“Բան մը կը խնդրեմ՝ Տերօջմէն ,
 Ու աօրկա կ'աղաչեմ ,
 Որ կեանքիս բոլոր օրերը
 Տէրօջը տանը մէջ բնակիմ՝
 Տէրօջը վայելչութիւնը տեսնելու ,
 Ու անոր տաճարին մէջ զինքը խնդրելու համար”

(Սաղմ. ԻԷ. 4) :

«Տէր Եհովան իմ ականջո բացու ,
 Ու ես անհնազանդ չեղայ , ետ չգարձայ :
 Իմ կանախ զարնողներուն ,
 Եւ այտերս փետտողներուն տուի .
 Իմ երեսս նախատինքէն ու թուքէն չծածկեցի”

(Ես. Ծ. 5, 6) :

Երբեմն զոյգ տողեր իրարու կը յաջորդեն , և իւրաքանչիւր զոյգին իմաստը միւս զոյգին իմաստին ներհակ է . զորօրինակ .

«Եզը իր տէրը կը ճանչնայ ,
 Ու էշը իր տիրոջը մտուրը ,
 Բայց Իսրայէլ զիս չճանչնար ,
 Իմ ժողովուրդս չիմանար” (Ես. Ա. 3) :

«Տէրը կը ցրուէ հեթանոսաց խորհուրդները ,
 Փուճը կը հանէ ժողովրդոց դիտաւորութիւնները :
 Տէրոջը խորհուրդը յաւիտեան կը մնայ ,
 Ու անոր սրտին դիտաւորութիւնները՝ ազգէ մինչև ազգ”
 (Սաղմ. ԼԳ. 10, 11) :

Երբեմն երեք զոյգ տողեր իրարու կը յաջորդեն , և իւրաքանչիւր զոյգ միւսին իմաստը կու տայ , թէպէտ տարբեր բացատրութեամբ . զորօրինակ .

«Հապա որչափ որ երկինքը երկրէս բարձր է ,
 Այնչափ իր ողորմութիւնը իրմէն վախցողներուն վրայ
 զօրաւոր է :

Որչափ որ արևելքը արևմուտքէն հեռու է ,
 Այնչափ հեռացուց մեզմէ մեր յանցանքները :
 Ինչպէս որ հայր մը կը գթայ իր որդւոցը վրայ ,
 Այնպէս ալ Տէրը կը գթայ իրմէն վախցողներուն վրայ”
 (Սաղմ. ՃԳ. 11-13) :

Թէպէտ իմաստներու և խօզրերու այսպէս իրարու համապատասխանելը գլխաւոր յատկութիւնն է Երբայական բանաստեղծութեան , և չերևի թէ ուրիշ լեզուաց բանաստեղծութեան չափին նման վանկերու չափ մը կար Երբայականին մէջ , բայց և այնպէս անշուշտ կար բառերու ներդաշնակաւ .

ւոր շարք մը որ քերթուածը հաճոյական կ'ընէր ակամջի և նուագարանով երգուելու յարմար : Եւ դիտողութեան արժանի է որ, երբ Երբայեցերէնին այս բանաստեղծական գրքուածնէրը բառ առ բառ կը թարգմանուին ուրիշ լեզուի մը, ներդաշնակութիւնը մեծաւ մասամբ կը մնայ և կ'երեւի :

Երբայական քերթուածոց փոխարեւութիւնները, նմանութիւնները և ձեւաւոր խօսքերը շատ ազգու են, մանաւանդ այն քերթուածնէրը ուր իմաստները գլխաւարապէս Աստուծոյ կը վերաբերին : Եր թուի թէ այսպիսի գրուածոց հեղինակները կը զգան միշտ Աստուծոյ ներկայութիւնը . բնական երեւոյթները յայանապէս կը վերաբերին Աստուծոյ . մըրիկն ու երկրաշարժը նշան են անոր ներկայութեանը . Աստուած գերագոյն և միշտ ամենակալ զօրութեամբ կ'իշխէ անհասփց և ազգաց բոլոր գործերուն մէջ : Մանաւանդ Աստուծոյ բարոյական յատկութիւնները կը հաշակուին : Այսպիսի սուրբ, զոհմ և աստուածազոյեցիկ զգացումներ չեն գտնուիր ուրիշ հին ազգաց բանաստեղծութեան մէջ : Երբայեցի քերթողը թէ ուզզակի Աստուծոյ գործերուն վրայ գրէ և թէ մարդոց գործերուն վրայ, կը թուի միշտ Սերովբէից երգը երգել . «Սուրբ, Սուրբ, Սուրբ է զօրաց Տէրը : Բոլոր երկիրը անոր փառքովը լեցուն է :»



ԳԼ. ԺԵ.

Յոբ և Սաղմոսս

Չի գիտցուիր թէ ով գրած է Յոբայ գիրքը : Ոմանք կը կարծեն թէ Մովսէս է անոր հեղինակը, և անոր նիւթը ձեռք բերաւ մինչդեռ կը բնակէր Մագիսանացոց երկրին մէջ : Այլք կը կարծեն թէ այն գիրքը կրնայ գրուած ըլլալ նախ քան զՄովսէս անձի մը ձեռամբ որ կը բնակէր Հուս կոչուած երկրին մէջ որ հիմա կը կոչուի Հաւրան, Պաղեստինու հարաւային արեւելեան կողմը :

Այս գիրքին մէջ գործածուած ոչ սակաւ Արարերէն և Արամերէն բառք կը նպաստեն այս կարծեաց : Ոմանք կը կարծեն թէ Յորայ գիրքին պիտու Նբրայեցիները թարգմանուած կամ օրինակուած է Մովսէսէն կամ ուրիշ յետնագոյն Նբրայեցի անձէ մը՝ Հրէից գործածութեանը յարմար փոփոխութիւններով : Այս գիրքին մէջ պատմուած դէպքերը և նկարագրուած տեսարանները յայտնապէս կը վերարերին նահապետական ժամանակին : Յորայ 140 ամեայ երկար կեանքը յետ փորձանաց , այն գիրքին մէջ բաց երկնային մարմնոց պաշտամունքէն ուրիշ տեսակ կառապաշտութեան չյիշուիլը , Հրէից կամ անոնց պատմութեան կամ կրօնական ծէսերուն վրայ ամենեկին յիշատակութիւն չգտնուիլը , նկարագրեալ սովորութեանց յետին պարզութիւնը , այս ամէնը կը ցուցնեն թէ այս գիրքը գրուած ըլլալու է շատ հին ժամանակ : Ոմանք կը կարծեն թէ բոլոր գիրքը վէպ կամ տեսակ մը առակ է , և թէ Յոր անուն անձ մը իրօք երբէք եղած չէ : Բայց Եզեկիել (ԺԴ. 14 , 20) և Յակոբոսի (Ե. 11) գրոց մէջ անոր յիշատակութիւնը կը ցուցնէ թէ Յոր անուն անձ մը իրօք ապրեցաւ աշխարհի վրայ : Յորայ գիրքին առաջին երկու գլուխները կը պարունակեն խօսակցութիւններ որ իբր թէ երկնից մէջ եղած են : Կրնայ ըսուիլ թէ այս խօսակցութիւնները կ'ակնարկեն երկնից մէջ պատահած իրական դէպքեր , որ սլլարանական ձեւով մը յայտնուեցան գիրքին հեղինակին , ըստ օրինակի Միքեայի տեսլեան (Գ թագ. ԻԲ. 19-22) : Գիրքին նպատակն է ցուցնել մարդոց վրայ Աստուծոյ կառավարութեան սկզբունքը : Յորայ երեք բարեկամները կը համարէին թէ լոկ մեղաց պատիժ էին Յորայ աղէտքը և ուրիշ ամէն աղէտք , և թէ մարդու մը աղէտից չափն ապացոյց է անոր մեղացը բազմութեան և մեծութեանը : Յոր իրաւամբ կ'ուրանար զայս , բայց անոր կարծիքը թէ Աստուծոյ մարդոց հետ վարուելուն կերպն անհասանելի է՝ իրաւացի չէր : Աստուծոյ վարուելուն մէջ կան արդարեւ բաներ որ անհասանելի են . գիտենք թէ աղէտք միշտ պտուղ են մեղաց , սակայն կրնանք գիտնալ նաև թէ աղէտներ զրկելով Աստուած կ'ուզէ աղէտքը կրողներուն բարին , և եթէ անոնք իրենց վաքքն ըստ արժանւոյն կ'ուզեն ,

ազէտքը շահաւէտ կ'ըլլայ անոնց, և զանոնք երջանիկ կ'ընէ: Այս էր Եղիսուտի կարծիքը, և Աստուած իշխանաբար կը հաստատէ զայս, բայց կը գատապարտէ ինչ որ Յոբայ երեք բարեկամներն բռած էին, և զՅոբ կը յանդիմանէ, զասն զի ազէկ ոգի չցուցուց: Սակայն երբ Յոբ կը խոնարհի իր սխալմանը համար և կը զղջայ, Աստուած հրապարակաւ կ'արդարացնէ զՅոբ, և ի վախճանի կը շնորհէ անոր յաջողութիւն մեծ քան զոր ունէր առաջ:

Սաղմոսք

Եբբայերէնի մէջ Սաղմոսաց գիրքին տրուած անուան է Դեֆէլէ՛, որ կը նշանակէ «գովեաղք» կամ «փառաբանութիւնք»: Եթժանանից Թարգմանութեան մէջ այս գիրքը կը կոչուի Յունարէն բառով Փառք: Այս բառը կը պատասխանէ Եբբայեցերէն Միւփօ բառին որ կը նշանակէ երաժշտական գործւով մը նուագելի երգ: Յունարէն Փալմօ բառին կը պատասխանէ Հայերէն «Սաղմոս» բառը: Եբբայեցերէն Դեֆէլա անունը որ կը նշանակէ աղօթք՝ կը տրուի սաղմոսներէն սմանց, զորօրինակ ԺԷ, Դ, և ՃԲ. սաղմոսաց և այլոց: Այս բառը եբբեմն կը գործածուի նաև իբրև ընդհանուր անուն բոլոր սաղմոսաց համար: Տես Սաղմ. ՀԲ. 20:

Եբբայեցերէն Աստուածաշունչին մէջ Սաղմոսները կը բաժնուին հինգ մաս, բոտ Թուղյ հինգ գրոց Մովսէսի ինչպէս ոմանք կը կարծեն: Սաղմոսաց առաջին մասը կը պարունակէ Ա. էն մինչև ԽԱ. սաղմոսը: Երկրորդ մասը կը պարունակէ ԽԲ. էն մինչև ՀԲ. սաղմոսը: Երրորդը մասը՝ ՀԳ. էն մինչև ԶԹ. սաղմոսը: Զորրորդ մասը կը պարունակէ Դ. սաղմոսէն մինչև ՃԶ. սաղմոսը: Հինգերորդ մասը՝ ՃԷ. էն մինչև ՃԾ. սաղմոսը: Այս հինգ մասանց իւրաքանչիւրը կը վերջանայ փառաբանութեամբ մը: Տես Սաղմ. ԽԱ. 13: ՀԲ. 19: ԶԹ. 52: ՃԶ. 48: Հինգերորդ մասին մէջ վերջին սաղմոսն ամբողջ փառաարութիւն է այն մասին և բոլոր սաղմոսաց գիրքին համար: Կը կարծուի թէ իւրաքանչիւր մասին սաղմոսները հաւաքուեցան ոչ միևնոյն ժամանակ, այլ հետ զհետէ:

և թերևս ժամանակի երկայն միջոցներ անցնելով: «Յեսուէի որդւոյն Դաւթիթին ազօթքները լնացան» խօսքը որ կայ երկրորդ մասին վերջը (Սաղմ. ՀԲ. 20)՝ կրնայ գրուած ըլլալ մինչ հաւաքածոյն կը բաղկանար երկու առաջին մասերէն միայն, և միւս երեք մասերը թերևս աւելցուած են յետոյ: Սաղմոսներէն 73 ը միայն իրենց խորագրին մէջ կ'ընծայուին Դաւթի. 12 ը՝ Ասափայ, 11 ը՝ Կորիսայ որդւոցը, 2 ը՝ Սողոմոնի, 1 ը՝ Մոզէսի, 1 ը՝ Եթանայ, և Ֆնացեալ 50 ը տիտղոս չունին:

Ասափ Դաւթի ժամանակ վկայութեան խորանին պաշտամանց մէջ առաջնորդ էր երգչաց (Ա Մնաց. Զ. 31, 39): Կորիսայ որդիքը, կամ, ինչպէս երբեմն կը կոչուին, Կահաթեանց որդիքը (Ա Մնաց. Զ. 33, 37, 38), Ղեկայ ցեղէն էին: Կ'երեկի թէ այս ընտանիքը որդիէ որդի կարևոր պաշտօն ունեցան խորանին երգեսցողութեան և տաճարին պաշտամանց մէջ (Բ Մնաց. Ի. 19): Ոմանք կը կարծեն թէ անոնց անունը կրող սաղմոսք ոչ թէ անոնցմէ այլ ուրիշներէն գրուած և անոնց տրուած էին երգելու: Եթան Եզրահացին ուրիշ գրել խաւօր երգիչ և բարձր ատղանդի տէր անձ էր (Գ Թագ. Գ. 31. Ա Մնաց. ԺԵ. 19): Սաղմոսաց առաջին մասին 41 սաղմոսներէն 37 ը կը կրեն Դաւթի անունը, և շատերը կը կարծեն թէ այն առաջին մասը հաւաքուած և կարգադրուած է նոյն իսկ Դաւթէն: Այլք կը կարծեն թէ Ասափ երգիչն ըրաւ հաւաքածոյն: Երկրորդ մասին սաղմոսները կը կարծուին հաւաքեալ Սողոմոնի ժամանակ մասնաւորապէս տաճարին պաշտաման մէջ երգուելու նպատակաւ: Երրորդ մասը կը թուի հաւաքուած ըլլալ յետնագոյն թագաւորաց մէկուն, թերևս Յովսափատոյ ժամանակ: Զորրորդ մասը հաւաքուած է աւելի ուշ, թերևս Եզեկիայի ատեն, սրոյ համար կ'ըսուի (Բ Մնաց. ԻԹ. 30) թէ հրամայեց Ղեւտացւոց երգել Տէրօջը առջև Դաւթի և Ասափայ տեսանողին խօսքերով: Հինգերորդ մասին սաղմոսներն ևս աւելի յետին ժամանակի գործ են. անոնց մեծ մասը կը վերաբերի գերութեան և գերութենէ դարձին ժամանակներուն, և թերևս անոնց հաւաքիչն է Եզրաս, որ և, ըստ կարծեաց բազմաց, քննեց և կարգադրեց

սաղմոսաց բոլոր գիրքը : Դաւթի անուանը կրող սաղմոսներ կը գտնուին այս Ե. մասին, ինչպէս նաև Բ. Գ. և Դ. մասանց մէջ : Ասոր պատճառը թերևս սա է որ, Դաւթէն գրուած բայց որևէնցէ պատճառաւ կանխագոյն հաւաքմանց մէջ չգրուած սաղմոսը ժամանակ ժամանակ մոռածան յետնագոյն հաւաքմանց մէջ : Ոմանք կը կարծեն սակայն թէ այս յետին սաղմոսը գրուած չէին նոյն իսկ Դաւթէ, այլ ուրիշ անձէ մը, և կոչուած են սաղմոսը Դաւթի վասն զի կը նմանին բուն Դաւթէ գրուածներուն, կամ թերևս վասն զի գրուած էին Դաւթի սերունդէն ուրիշ թագաւորէ կամ իշխանէ մը, զորօրինակ Եզեկիայէ, Յովսիայէ կամ Զօրաբարելէ : Բայց եթէ Եզրաս քննեց և կարգի դրաւ բոլոր սաղմոսները, շատ հաւանական է թէ ի սկզբան առաջին մասին մէջ գտնուած սաղմոսներէն ոմանք փոխադրեց միւս մասանց մէջ, ոմանք ալ սը յետին էին՝ դրաւ նախընթաց մասանց մէջ : Շատերը կը կարծեն թէ առաջին սաղմոսը որ կրնայ իբրև յառաջարան համարուիլ բոլոր հաւաքածոյին գրուած է նոյն իսկ Եզրասէն, և գրուած է այժմու տեղը, երբ Եզրաս կը կարգադրէր բոլոր սաղմոսաց գիրքը : Շատերը զԵզրաս կը համարին հեղինակ ձժժ. սաղմոսին :

Բաց ի խորագրաց որ այլևայլ սաղմոսաց հեղինակները ցուցնելու համար են, կան ուրիշ խորագիրք որ կը ցուցնեն սաղմոսաց այլևայլ յատկութիւնները : Ա՛հշտասան սաղմոսը ունին Սաղմոս անուան հետ նաև երգ անուանը : Այս սաղմոսաց շատերը զուարթ գրուածներ, և փառարանութիւնք են : Հնգետասան սաղմոսը (ՃԻ-ՃԼԴ) ունին Աստիճաններու կամ Ելեց երգ անուանը : Կը կարծուի թէ այս տիտղոսը կը ցուցնէ թէ տարեկան տօներուն Երուսաղէմ եկող բարեպաշտ Հրեայք կ'երգէին այս սաղմոսները : Զորս սաղմոսը (ԺԵ, Դ, ՃԲ, ՃԽԲ) ունին ազօթք վերնագիրը : 53 սաղմոսաց վրայ գրուած է "Գլխաւոր երաժշտին" (Տես Սաղմ. ԵՄ. և զայլս) խօսքը, որ կը նշանակէ թէ այն սաղմոսն յանձնուած էր երաժշտին աստուածային պաշտաման ատեն երգելու : Եբրայեցիներէն բընագրին մէջ այլևայլ սաղմոսաց դուրս կամ մէջը գրուած են ուրիշ բառեր որոնց նպատակն աղէկ գիտցուած չէ. ուստի և այս բառերը թարգմանութեանց մէջ կամ զանց առ-

նուած և կամ դրուած են անփոփոխ ըստ Երբայեցերէնին : Սէլա բառը 71 անգամ կը գտնուի : Այս բառին նշանակութիւնն անծանօթ է, բայց ընդհանրապէս կը կարծուի թէ կը վերաբերի սաղմոսին երգուելուն, և նպատակն է ցուցնել հանգիստ կամ իսպառ դադարում : Ուրիշ անուններ, ինչպէս Նկինօթ (Սաղմ. ԿԱ.) որ է նուագարան աղւոզ, Նհիլթ (Սաղմ. Ե.) այն է սրինգ, Շօշանիմ (Սաղմ. ԽԵ. ԿԹ.) որ է շուշանք, Շուշան էաուլթ (Սաղմ. Կ.) այն է վկայութեան շուշան, հաւանականապէս նուագարաններ էին որ սաղմոսերգութեան ատեն կը գործածուէին, և այսպէս կոչուած էին թերևս նուագարանին ձևէն որ շուշանի նմանութիւն ունէր : Ալամօթ (Սաղմ. ԽԶ.), այն է կուսանք, թերևս կը ցուցնէր թէ սաղմոսը կանանց ձայնիւ պիտի երգուէր :

Եթէ խնամով միտ դրուի Դաւթի անունը կրող սաղմոսաց զգացմանց և գաղափարաց, ընթերցողը կրնայ հասկնալ թէ Դաւթի կենաց ո՛ր ժամանակները հաւանականապէս գրուեցան անոնք : Զօրօրինակ Է. և Ը., ԺԱ.—ԺԳ., ԺԶ., ԺԷ., ԻԲ և ԻԳ., ԼԴ., ԼԵ., ԾԲ. և ԾԴ., ԾԶ., ԾԷ. և ԾԹ. սաղմոսք թերևս գրուեցան Դաւթի թագաւորելէն առաջ, վասն զի ստեպ ակնարկութիւններ կան հովուական կենաց վերաբերեալ դիպաց և վտանգի առիթներու : Կը յայտնեն միամտութիւն և ջերմ զգացումներ ապաւինութեան առ Աստուած : Թ., Ժ., ԺԵ., ԺԹ., Ի., ԻԱ., ԻԳ., ԻԴ., ԻԶ., ԻԹ., ԼԶ., ԾԸ., Կ., ԿԸ., ՃԱ., ՃԸ. և ՃԺ. սաղմոսաց մէջ կը գտնենք նոյնպիսի զգացմունք զոր ունենալ պատշաճ էր թագաւորի մը : Ուստի այս սաղմոսները թերևս գրուեցան Իսրայելի վրայ Դաւթի թագաւոր ըլլալէն ետքը : Ե., Զ., ԼԲ., ԼԸ.—ԻԱ., ԾԱ., ԾԵ., ԿԲ. և ԿԴ. սաղմոսաց նման սաղմոսներ կը ցուցնեն մեծ խոնարհութիւն, տրամուլթիւն մեղաց համար և կը վերաբերին Դաւթի կենաց երրորդ ժամանակին, այսինքն անոր մեծ մեղացը և Աբիսողոմայ ապստամբութեան ժամանակ փախստեան մէջտեղ : Գ., Դ., ԻԷ., ԻԸ., ԼԱ., ԿԱ., ԿԳ., ԿԹ., Հ. և ՃԽԳ. սաղմոսները կրնան անոր առժամանակեայ արտորանաց միջոցին գրուած կարծուիլ : ԻԵ., ԼԷ., ՃԳ. և ՃԼԹ. սաղմոսաց նման սաղմոսք որոնց մէջ այնչափ

հասուն խորհուրդք և զգացմունք կան՝ կը վերաբերին թերևս Դաւթի ծերութեան ժամանակին :

Սաղմոսներէն շատերը մարգարէութիւն են ֆրիստոսի պաշտօնին և գործին, օւստի և կը կոչուին Մեսիական օաղմոսք, զորօրինակ Իֆ., ԽԵ. և ՃԺ. օաղմոսները և այլք : Մեսիական կոչուած օաղմոսաց գրուելուն առիթ եղած են Դաւթի կենաց պատահարները, կամ անոր և ուրիշ նախնի ծառայից Ասատուծոյ անձնական փորձառութիւնները, բայց և այնպէս կը պարունակեն այնպիսի բառեր և իմաստներ, որ աւելի բարձր և խորին նշանակութիւն կը ստանան, երբ Ֆրիստոսի կենացը պատահարներուն և անոր յատկութեանը վերաբերեալ կ'առնուին : Այս պատճառաւ է որ յիշեալ օաղմոսք կը համարուին մարգարէութիւն ի ֆրիստոս, և Նոր կտակաբանին մէջ Ֆրիստոսի վրայ անոնցմէ զկայութիւն կը բերուի :

Ոմանք ուզած են օաղմոսները շարել անոնց նիւթին համեմատ : Բայց օաղմոսներուն մէջ զգացմանց ճոխութիւնը և պէսպիսութիւնը կը դժուարացնեն այս գործը : Ամէն ժամանակ Ասատուծոյ ծառաները Սաղմոսաց մէջ գտած են միութարութիւն և հրահանգ իրենց այլևայլ փորձութիւններուն մէջ :



ԳԼ. ԺԶ.

Ասակաց գիրքին, Գերտ Ժողովոյի և Եբե Եբեոյ

Ասակաց գիրքին ԻԵ. գլխոյն առաջին համարէն յայտնի է թէ այս գիրքն այժմու ձեւին մէջ գրուած է Եզեկիայի թագաւորութենէն ետքը, կամ իբր 300 ամօք յետոյ քան զԱզոման : Բայց գիրքը կրնայ բաժնուիլ 4 մաս, որոց առաջինը (Գլ. Ա.-Բ.) կը պարունակէ յառաջաբան մը բոլոր գիրքին (Գլ. Ա. 1-6), և ոչ սակաւ հայրական խրատներ առ երեսասարգոս : Երկրորդ մասը (Գլ. Ժ.-ԻԴ.) կը պարունակէ իբր 400 առակ այլևայլ նիւթոց վրայ որ հաւանականապէս հաւաքուած են նոյն իսկ Սաղմոսնէ այն 3000 առակներէն որոց

Համար Գ Թագաւորաց Գ. 32 ըստւած է թէ խօսեցաւ Սո-
ղոմոն: Երրորդ մասին (Գլ. ԻԵ-ԻԹ.) գլուխը դրուած են սա
խօսքերը, "Աստիք ալ Սողոմոնին առականներն են, որ Յուդա-
յի Եզեկիա թագաւորին մարդիկը օրինակեցին:" Այս վեր-
նադէն կը տեսնուի թէ նախընթաց առականներն արդէն Հա-
ւաքուած էին, և թէ Եզեկիայի մարդիկը նոր Հաւաքածոյ մը
աւելցուցին: Այս մասին մէջ գտնուած առականներն ընդհան-
րապէս զատ զատ իմաստներ են ինչպէս երկրորդ մասին մէջ
գտնուածները. բայց երբեմն կը գտնուին նաև միեւնոյն նիւթոյ,
զորօրինակ թագաւորներու (ԻԵ. 4-8), յիմարներու (ԻԶ. 4-
12), ծոյլերու (ԻԶ. 13-16), նենգաւորներու և քսուներու (ԻԶ.
17-28) վերաբերեալ այլևայլ առականներ: Զորրորդ մասը (Գլ. Լ.
և ԼԱ.) կրնայ իբրև յաւելուած Համարուիլ գիրքին: Յայտնի
տարբերութիւն կայ այս երկու գլուխներուն և գիրքին մնաց
եալ մասին մէջտեղ, զորօրինակ՝ Պարթա՛ ըստւած է (Լ. 1 և
ԼԱ. 1) փոխանակ առակի: Նաև այնպիսի բառեր գործած-
ուած են որ Սուբբ Գրոց ուրիշ և ոչ մէկ մասին մէջ կը պա-
տահին: Ոմանք կը կարծեն թէ Ագուբ և Լէմուէլ նոյն իսկ
Սողոմոն է. այլք կ'ըսեն թէ թերևս մօտ երկիրներու մէջ
բնակող և մեզի անծանօթ իմաստնոց անուաններ են:

Գիտողութեան արժանի է որ Առական գիրքին մէջ ոչ
զատկի և ուրիշ տօներու վերաբերեալ Հրեական օրինաց, ոչ
ալ տասանորդներու և շարաթին պահպանութեան օրինաց
վրայ յիշատակութիւն կայ: Այս գիրքը կ'ուղղէ մարդոց ու-
շագործութիւնը մանաւանդ բարոյական քան ծիսական պար-
տականութեանց, և այսպէս դեպ յառաջ քայլ մը առնուած
է պատրաստելու զմարդիկ բարձրագոյն պատուէրներուն որ
պիտի արուէին Նոր կտակարանին մէջ, զորօրինակ թէ սիրել
զԱտուած ի բոլոր սրտէ և զընկերն իր անձին պէս "ամէն
ողջակեզներէ ու զՏերէ աւելի է" (Մարկ. ԺԲ. 33):

Ժողովուրդ

Այս գիրքին Երբայեցերէն անունն է Գահիւթի զոր Եօթա-
նասունք թարգմանած են Եկլիսիաստէս, այսինքն Հաւաքող

կամ ժողովի մը մէջ խօսող, սուտի և Հայերէն կոչուած է Գիրք Ժողովուրդի :

Ընդհանրապէս Սողոմոն կը կարծուի հեղինակ այս գրոց, և նպատակն էր, ինչպէս կ'երևի, երջանկութիւն ստանալու այլևայլ միջոցներուն վրայ Սողոմոնի փորձառութեան արդիւնքը ցուցնել : Գիրքին առաջին կէտը գլխաւորապէս կը ցուցնէ թէ երջանկութիւն ինչ միջոցներով չի կրնար ստացուիլ, իսկ երկրորդ կէտը կը ցուցնէ թէ ինչ միջոցներով կը ստացուի : Բայց ի վախճանի Սողոմոն, իբրև արդիւնք իր բուր խորհրդածութեանց և փորձառութեանց, կը սորվեցնէ թէ մարդիկ պարտին սուբսութեամբ ընդունել Աստուծոյ բոլոր պարգևները, համբերութեամբ տանել վշտաց, և միշտ կրել իրենց սիրտերուն մէջ զերկիւղն Աստուծոյ որ ամէն բան դատաւանի պիտի բերէ :

Երգ երգաց

Երգ երգաց անուանեալ գիրքն այսպէս կոչուած է ցուցնելու համար թէ երգերուն չքնադատողն է : Կը կարծուի թէ Սողոմոն գրեց այս գիրքն իւր ամուսնութեան առթիւ Սաղոմայի օրհորդի մը հետ որ Սողոմոնի աւերութեան հիւսիսային կողմէն էր (Գլ. Գ. 8 և Զ. 13), և թէ Սողոմոնի դիտաւորութիւնն էր այն ամուսնութեան և փեսայի ու հարսին առմիմեանս սիրոյն օրինակաւ ցուցնել միանգամայն այն երկուստեք սերը որ կայ ի մէջ Աստուծոյ և անոր ժողովրդեան : Աստուծոյ և անոր ժողովրդեան մէջտեղի յարաբերութիւնը Հին և Նոր կտակարանաց մէջ շատ անգամ կը նմանցուի առև և կնոջ յարաբերութեան : (Տես Ես. Եր. 5, Կթ. 5, Եբ. Բ. 2, Ովս. Բ. 16, 19, 20, Յայտ. ԺԹ. 7, ԻԱ. 2, ԻԲ. 17 : Տես նաև ԽԵ. Սաղմոսը :

Երգաց երգը կրնայ բաժնուիլ երկու մաս : Առաջին մասը (Գլ. Ա.-Ե. 1) կը պարունակէ գլխաւորապէս փեսային ու հարսին խօսակցութիւնները, մինչ փեսայն հարսը գտնելով կը բերէ զանի Լիբանանու լեռնէն (Գլ. Գ. 8) Երուսաղէմ : Երկրորդ մասը (Գլ. Ե. 2-Ը. 14) կը նկարագրէ փեսային և հարսին սերն անոնց

ամուսնանալէն ետքը Երուսաղեմի մէջ, և սյցեւութեան մը ատեն զոր բրաւ փեսայն հրաւիրուելով հարսէն գիւղը (Գլ. Է. 44) ուր էր հարսին բնակարանը: Ոմանք այս երկու գրէ- խաւօր մասանց իւրաքանչիւրը կը բաժնեն երեք փոքրագոյն մասերու, ընդ ամէնը վեց մաս, որոց երկրորդը և երրորդը, հինգերորդը և վեցերորդը կը սկսին սա խօսքերով. "Ով Ե- րուսաղեմի աղջիկներ, ձեզ կ'երգմնցընեմ:" Տես Գլ. Բ. 7, Գ. 5, Ե. 8 և Ը. 4: Կին երգեցողաց խումբ մը "Ե- րուսաղեմի աղջիկներ" անսւամբ ստեպ կը յիշուին: Կը կար- ծուի թէ այս երգիչները կ'երգեն առաջին գլխոյն 2, 3 և 4 համարները հարսին կողմէն ի գողեստ փեսային: 5 և 6 հա- մարներուն մէջ հարսը կը խօսի այն երգիչ աղջկանց, և 7 համարին մէջ կը խօսի փեսային իբրև բացակայի: 8 համար- րին մէջ Երուսաղեմի աղջկունք կը պատասխանեն, իսկ 9 և 10 համարներուն մէջ փեսան կ'երևի և կը խօսի հարսին, այսպէս խօսակցութեամբ յառաջ կ'երթայ երգը: Գ. գրէ- խոյն սկիզբը հարսն իր ընկերներուն, Երուսաղեմի աղջկանց, պատմութիւն մը կ'ընէ որ կը թուի թէ երազ է: Առաջին մասին վերջին համարը (Գլ. Ե. 4) կը թաւի վերաբերիլ հար- սանեաց հացկերութիւն: Երկրորդ մասը կը սկսի, ինչպէս կ'ե- րևի, ուրիշ երազի մը պատմութեամբ զոր կ'ընէ հարսն իր ընկերներուն, Երուսաղեմի աղջկանց: Հարսին ընկերները կը պատասխանեն երգելով, և այնպէս կը շարունակուի մինչև Գլ. Զ. 3: Զ. գլխոյն մէջ, 4-9, փեսան դարձեալ կը խօսի: Երգիչները նորէն իրենց խօքը կ'ողողեն հարսին, և այսպէս երգը հարսին, փեսային և երգիչներուն մէջտեղ փոխն ի փո- խը խօսակցութեամբ յառաջ կը տարուի մինչև վերջը: Եր- գոց երգոյն շատ տեղերը դժուարիմաց են, և անոր ընդհա- նուր իմաստը կրնանք ի յայտ բերիլ միայն՝ երբ հոգևորա- պէտ կը մեկնենք: Զորօրինակ, կրնանք ըսել թէ պարտեզին համեմտները և ագնիւ պտուղները նշանակ ևն Քրիստոսի եկե- ղեցւոյն բեղմնաւորութեանը, բայց պէտք չէ որ յիշուած պտուղներուն իւրաքանչիւր տեսակին մասնաւոր մեկնութիւն մը տալու քանակը: Նոյն բանը կրնանք ըսել հարսին և փե- սային տրուած այլևայլ նկարագրութեանց համար: Այն

նկարագրութիւնները կրնան համարուիլ իբրև օրինակ կամ նշան երկուստեք սիրոյն որ ի մէջ Աստուծոյ և անոր ժողովրդեան, կամ ի մէջ Քրիստոսի և անոր եկեղեցւոյն, բայց չենք կրնար յատուկ նշանակութիւն մը բնծայել իւրաքանչիւր համարի :



• ԳԼ. ԺԵ.

Մարգարեական գիրքերը

Եսայի, Երեմիա, Եզեկիէլ և այլք

Հրեայք մարգարեական գիրքեր կամ մարգարէք կը կոչէին ոչ այն գիրքերը միայն որոց նիւթը լոկ ապառնի գիպաց վերարերեալ գուշակութիւն է, ինչպէս է Եսայեայ գիրքը, այլ և պատմական գրոց, ինչպէս են Յեսու, Դատաւորք և այլք : (Տես Ա. մաս, Ա. Գլուխ, էջ 2.) Ասոր պատճառը հաւանականապէս այս է որ, Հրեայք բարբայր այս գիրքերուն հեղինակները մարգարէ կը ճանչնային : Յիշեալ պատմական գիրքերը կոչուած են նաև առաջին մարգարէք, իսկ Եսայեայ, Երեմիայի և այլոց մարգարէից գիրքերը՝ յետին մարգարէք : Այս վերջինները կը բաժնուին նաև մեծ և փոքր մարգարէք : Մեծ մարգարէք են Եսայի, Երեմիա և Եզեկիէլ : Փոքրերն են միւս երկուստասան մարգարէք, Ոգտէէէն մինչև Մաղաքիա : Չենք գիտեր թէ Հրեայք Դանիէլի գիրքն ինչ պատճառաւ կը դասէին ոչ թէ մարգարեական, այլ «բնական» (քրթուղիմ) կոչուած գրոց կարգը : (Տես Ա. մաս, Ա. Գլ. էջ 3.)

Հին տնտեսութեան ժամանակ մարգարէից պաշտօնը երեկին էր : Նախ մարդիկ, մանաւանդ թագաւորները և իշխանները, յանգիմանել անոնց մեղացը համար : Երկրորդ՝ մեկնել Աստուծոյ օրէնքը, զլիաւարտապէս ցուցնել օրէնքին հոգևորութիւնը, այսինքն մերձեցնել զայն մարդոց խորհուրդներուն և զգացումներուն : Երրորդ՝ կանխաձայնել ապագային մէջ

պատահելու դեպքերը, և մանաւանդ ուրախացնել Աստուծոյ ժողովրդեան սիրտը խոստմամբք մեծամեծ օրհնութեանց որ պիտի շնորհուէին մանաւանդ Մեծիայի թագաւորութեան ատենը: Գիտողութեան արժանի է որ մարգարէական գիրքերը գրուեցան ոչ թէ իորայելի որդւոց յաջող օրերը, Դաւթի և Սողոմոնի թագաւորութեան ժամանակ, այլ երբ Հրէից թագաւորութիւնը սկսած էր տկարանալ և խոնարհիլ, և որ, ինչպէս կ'երևի, մարգարէից նպատակն էր Աստուծոյ ժողովրդեան խորհուրդը դարձնել այն օրերուն մթութենէն "վերջին օրերուն" պայծառութեանը որ հեռաւոր ապագային մէջ պիտի ծագէր Ահնի:

Եսայի

Եսայեայ գիրքը միւս մարգարէական գիրքերէն առաջ գրուած է, հաւանականապէս անոր մէջ պարունակուած մարգարէութեանց շատ և կարևոր ըլլալուն պատճառաւ, ոչ թէ վասն զի Եսայեայ մարգարէութիւնները ժամանակաւ առաջ էին քան միւս մարգարէից կանխանայնութիւնները: Միքիա ժամանակակից էր Եսայեայ: (Բազգաատէ Ես. Ա. 1, Միքիայի Ա. 1 ին հետ) Ովտէ ալ նոյն ատեն մարգարէացաւ (տես Ովտ. Ա. 1.) և որովհետև կ'ըսուի թէ Ովտէ մարգարէացաւ իորայելի Յովաութագաւորին սրդւոյն Յերոբոամայ ժամանակ որ թագաւորեց 27 տարի յառաջ քան զՈվտի որ և Ազարիա կ'ըսուի, (տես Գ. Թագ. ԺԵ. 1, 7, 30,) հաւանական է թէ Ովտէ յառաջ քան զԵսայի սկսաւ մարգարէանալ: Նոյնը կրնայ ըսուիլ նաև Ամոսի (Տես Ամոս Ա. 1,) և Յովանու վրայ (տես Գ. Թագ. ԺԴ. 25): Յովելի և Ամոսայ մէջ այլևայլ համարներուն նմանութենէն (քաղդաատէ Յովել Գ. 16 ն Ամոս Ա. 2 ին, և Յովել Գ. 18' Ամոս թ. 13 ին հետ,) ոմանք կը կարծեն թէ Ամոս օրինակած է Յովելէն, և թէ պէտք է որ Յովել մարգարէացած ըլլայ յառաջ քան զԱմոս, ուստի և յառաջ քան զԵսայի:

Եսայեայ անձնական պատմութեան վրայ քիչ տեղեկութիւն ունինք: Այս մարգարէն դուռն ուրեք կը խօսի իւր վը-

բայ : Այս կողմանէ ամենեւին չի նմանիր Երեմիայի որ իր հոգրեանակիցներուն համար իրեն արուած մարգարէութեանց հետ կը խառնէ նաև իր անձնական պատմութեան վերաբերեալ բաները : Ինչպէս որ Յովհաննէս , երբ Քրիստոսի կենաց պատմութիւնը կը գրէ , շատ քիչ կը խօսի իրեն վրայ , և կը թուի բոլորովին զբաղեալ Քրիստոսի պատմութեամբ զոր գրել էր նպատակը , նոյնպէս Եսայեայ միտքը և սիրտը կը թուին այնչափ լցեալ մեծամեծ մարգարէութեանց յայտնութեամբ , որ իր վրայ խօսիլ ամենեւին չի խորհիր : Բ Մնաց. ԻԶ. 22 համարէն կը սորվինք որ Եսայի գրեց նաև Ողբայի թագաւորութեան պատմութիւնը , բայց այս գիրքը շատոնց կորսուած է : Կ'ըսուի թէ Եսայի մարգարէացաւ Յուդայի թագաւորաց Ողբայի , Յովթամայ , Աքազու և Եզեկիայի ժամանակ : Այս չորս թագաւորաց բոլոր տարիներն են 112 . բայց որովհետև Ողբայի մահը Եսայեայ առաջին գլուխներէն մէկուն մէջ յիշուած է , ընդհանրապէս կը կարծուի թէ Եսայի սկսաւ մարգարէանալ ոչ երկար ժամանակ յառաջ քան զմահն Ողբայի . և որովհետև Եզեկիայի մահուանէն 15 տարի առաջ վերջին անգամ կը յիշուի Եսայի (տես Դ Թագ. Ի. 1, 6) կարելի է թէ Եսայի իր մարգարէական պաշտօնը կատարեց ոչ աւելի քան 50 կամ 60 տարի : Այս արդարև երկայն ժամանակ է , բայց ոմանք կը կարծեն թէ Եսայեայ պաշտօնին միջոցը երկարագոյն ևս էր քան զայս :

Զ. և Է. գլուխներուն առաջին , ԺԴ. գլխոյն 28 և ԼԶ. գլխոյն առաջին համարներուն մէջ ակնարկուած ժամանակներուն նայելով ոմանք Եսայեայ մարգարէութեանց գիրքը կը բաժնեն հետեւեալ կերպով , Ա. էն մինչև Ե. գլուխները կը պատկանին Ողբայի , Զ. գլուխը՝ Յովթամայ , և Է. գլխէն մինչև ԺԴ. գլուխ 27 համար՝ Աքազու ժամանակներուն , իսկ ԺԴ. գլխոյն 28 համարէն մինչև գլուխ ԼԵ.՝ Եզեկիայի առաջին 14 տարիներուն : Գիրքին մնացեալ մասը , այսինքն ԼԶ. էն մինչև ԿԶ. գլուխները , կը պատկանին Եզեկիայի յաջորդ տարիներուն :

Նիւթոյն կողմանէ գիրքը կրնայ բաժնուիլ երկու մաս : Առաջին մասը , Ա. էն մինչև ԼԹ. գլուխ , կը պարունակէ այլևայլ մար-

գարեական պատգամներ որ մտանաւոր առիթներով արուեցան : Ա. էն մինչև ԺԲ. գլուխք կը պարունակեն մերթ ի յանդիմանուածութիւն և մերթ ի քաջալերութիւն Յուզայի և Խաղայի տրուած պատգամներ : ԺԳ. էն մինչև ԻԳ. գլուխները կը պարունակեն Հրէից թշնամի սլլազգեաց , ինչպէս Ասորեստանցւոց , Բաբելացւոց , Մովաբացւոց և այլոց , վերաբերեալ կանխասացութիւններ : ԻԴ. էն մինչև ԼԹ. գլուխներուն մէջ կը խօսուի ժողովրդեան մեղաց և թշուառութեան վրայ Աքազու և Եզեկիայի ժամանակ , Ասորեստանցւոց արշաւանաց և Եզեկիայի իօթանալուն և ապաքինելուն վրայ : Երկրորդ մասը , Խ. գլխէն մինչև գլուխ ԿԶ. , կը սկսի սա խօսքերով , “Միթարեցէք , միթարեցէք իմ ժողովուրդս ,” և կը խօսի միայն Աստուծոյ ժողովրդեան ապագայ փրկութեան և փառաց վրայ : Մարգարէութիւնք զոր կը պարունակէ այս մասը՝ կրնան նկատուիլ իբրև վերաբերեալ ոչ միայն Հրէից փրկութեանն իՊերութենէն Բաբելոնի , այլ և քան զայն յանհունս մեծ փրկութեան և փառքի մը բոլոր ազգաց վրայ , որ պիտի հպատակին Եհովայի , և անոր եկեղեցւոյն ծաղկելուն պիտի ծառայեն : Գիրքին այս երկրորդ մասը կրնայ իննական գլուխներէ բաղկացեալ երեք հաւատար հատուած բաժնուիլ : Առաջին երկու հատուածները կը վերջանան սա խօսքով , “Ամբարիշտները խողաղութիւն պիտի չունենան կ’ըսէ Տէրը :” Իսկ վերջին հատուածը կը վերջանայ ամբարշտաց գէմ աւելի երկայն սպասեալիօք : Այս երկրորդ մասին մէջ են մանաւանդ Մեսիայի վերաբերեալ մարգարէութիւնք : Կիւրսի ձեռքով Աստուծոյ ժողովրդեան ազատութիւնք մարգարէանալէն ետքը , Եսայի կը ցուցնէ ուրիշ անձ մը , որ իբրև Աստուծոյ ծառայ , փոխանակ մարդկային ազգին շարչարուելով և մեռնելով , քառութիւն պիտի ընէր անոնց մեղքերուն , և պիտի հասցնէր զանոնք ճշմարիտ փառաց , և “Դաւիթին մնայուն սղորմութիւնները” անոնց աալով (ՄԵ. 3) պիտի ընէր զանոնք բոլոր ուշխարհի համար կեդրոն փրկութեան : Եսայիայ մարգարէութեան այս մասին մէջ Աւետարանի ժամանակին վրայ ահնարկութիւններ այնպէս շատ և այնպէս սրոշ են , որ Եսայի կը կոչուի երբեմն Աւետարանիչ մարգարէ :

Երեմիա

Երեմիա մարգարե քահանայական ազգատոհմէ էր, Հրէաստանի Անաթոմիթ գիւղէն (Երեմ. Ա. 1), Երուսաղէմ քաղքէն 4 մղոն դէպ ի հիւսիս: Մարգարէական պաշտօնին կոչուեցաւ իր պատանեկութեան ատենը (Երեմ. Ա. 6), և այն պաշտօնը վարեց Յովսիա թագաւորին 13 երորդ տարիէն մինչև Բաբելոնի գերութիւնը (Երեմ. Ա. 2, 3), այսինքն 41 տարի, և այնուհետև ժամանակ մը Եգիպտոս, ուր բռնի տարին զանի Յովհաննան և անոր ընկերները (Երեմ. ԽԳ. 5-7): Ուստի Երեմիայի իրրև մարգարե երևնալուն թուականը Եսայեայ մարգարէութեան սկսելէն իբր 130, և վերջանալէն իբր 70 տարի ետքն էր: Այս միջոցին մէջ Հրէից կրօնական և բարոյական վիճակը երթալով վատթարացաւ, և թէպէտ բարեպաշտ թագաւորն Յովսիա ջանաց հեազհետէ զօրացող չարութեան առաջն առնուլ, բայց քիչ յաջողութիւն գրտաւ: Եւ որովհետև Երեմիայի պաշտօնն էր յանդիմանել ժողովուրդը և ցուցնել անոնց Աստուծոյ մօտալուտ գատատանը, անոր գրուածներուն մէջ շատ քիչ կը գտնենք այն ուրախարար և մխիթարական խօսքերն որ կը տեսնուին Եսայեայ վերջին դուրսներուն մէջ, այլ կը գտնենք մանաւանդ այնպիսի անձի մը տխրալի խօսքերը որ իր ազգին դէպ ի կորուստ երթալը կը տեսնէ, կը տեսնէ նաև թէ իր անզգամ հայրենակիցներուն ամենեւին օգուտ չընէր ինչ որ կ'ըսէ զանոնք զգուշացնելու համար մօտակայ կորուստէն:

Այս է պատճառը որ Երեմիա կը կոչուի երբեմն արտմութեան մարգարե: Ըսած ենք թէ Եսայի կը նմանի Յովհաննաւ առաքելոյն սա կողմանէ որ իրեն վրայ կամ իր զգացմանց վրայ քիչ կը խօսի: Երեմիա կը նմանի մանաւանդ Պօղոսի առաքելոյն որ իւր խօսքերուն և թուղթերուն մէջ յաճախ կը խօսի իր կենացը վերաբերեալ դէպքերու, և իր անձին և զգացումներուն վրայ: Այսպէս Երեմիա իր գրուածներուն մէջ իր սիրտը կը բանայ ինչպէս որ է: Զորօրինակ, կը պատմէ թէ ինչպէս իր կոչման ատենը ջանաց քաշուիլ մարգարէական պաշտօնէն (Երեմ. Ա. 6), և թէ ինչպէս մեծ վիշտ

տուաւ անոր ընդդիմութիւնը զոր տեսաւ իր համազգիներէն այն պատգամներուն համար զորո Տէրը պատուիրած էր անոր երթալ պատմել անոնց : "Ա՛յ՛ ինծի," կը գռչէ ողբալով (Գլ. ԺԵ. 10), "ով մայրս, որ զիս բոլոր երկրին համար կուիւի մարդ ու վէճի մարդ ծնար:" Բայց և այնպէս կ'երևի թէ, այն ընդդիմութեանց և հալածանաց մէջ զոր կրեց Երեմիա, շատերուն քով յարգի էր, և ունէր երևելի բարեկամներ: Երբ քահանայք և սուս մարգարէք ուզեցին ի մահ մատնել զանի, Յուդայի իշխանները պաշտպան կեցան անոր (Երեմ. ԻԶ. 16. տես նաև ԻԶ. 24 և ԼԸ. 7-13): Նաև Քաղղէացիք մեծ պատուով և քաղցրութեամբ վարուեցան անոր հետ Երուսաղէմ առնուելէն ետքը (Խ. 1-6): Ինչպէս վերը յիշուեցաւ, Երեմիայի ոճն ընդհանրապէս ողբական է, բայց կան նաև միջիթարական տեղեր ուր Երեմիա ապագայ բարիք կը մարգարէանայ Աստուծոյ ժողովրդեան համար: Երեմիա մարգարէացաւ ոչ միայն Բաբելոնի գերութիւնը, այլ և այն գերութեան վերջը և Բաբելոնի անկումը (Գլ. ԻԵ. 12-14, ԻԹ. 10-14), և Լ. էն մինչև ԼԳ. գլուխներուն մէջ կը գտնենք Աստուծոյ ժողովրդեան ապագայ փառացը վերաբերեալ ազդու նկարագիր մը: Երեմիայի գիրքին առաջին և ընդարձակագոյն մասը (Գլ. Ա.-ԽԵ.) լի է Յուդայի վերաբերեալ մարգարէութիւններով: Երկրորդ մասը (Գլ. ԽԶ.-ՄԱ.) կը պարունակէ օտար ազգաց վրայ մարգարէութիւններ, իսկ երրորդ մասը (Գլ. ՄԲ.) պատմական է և ճշգիւ կը պատասխանէ Դ Թագաւորաց ԻԳ. 18-20 համարներուն և ԻԵ. գլխոյն: Երեմիայի գիրքին գլխակարգութիւնը շատ տարբեր է Եբրայեցերէն բնագրին և Եօթանասնից թարգմանութեան մէջ: Ոմանք կը կարծեն թէ այս տարբերութեան պատճառը սա է որ Եօթանասնից կոչուած թարգմանութեան հեղինակներն Երեմիայի մարգարէութեանց Բարուքայ ձեռամբ օրինակուած, անոր Պաղեստին դառնալէն ետքը Եգիպտոս թողուած և մինչև իրենց ժամանակը պահուած օրինակ մը գործածեցին: Թերևս Բարուք այն գիրքն օրինակելով, չենք գիտեր ինչ պատճառաւ, գլուխները տարբեր կերպով շարեց, կամ թերևս ետքը բնագիր օրինակին գլխոց կարգը փոխուեցաւ: Զիարդ և Ի-

ցէ այս ասարբերութիւնները մարգարէութեանց իմաստին քնաս չեն ասար :

Ողբ + Երեմիայի

Այս գիրքին Երբայեցերէն անունն է գիրքին Երբայեցերէն առաջին բառն Էթօ , որ կը նշանակէ «Ինչպէս» Այս գիրքին մէջ Երեմիա սրաառուչ և խանդակաթ կերպով կը յայտնէ իւր ցաւը Երուսաղեմի և Տաճարին աւերման և այն թշուառութեան վըայ որ Իսրայելացւոց վըայ եկաւ անոնց մեղացը համար : Հեղինակին նպատակն է , ինչպէս կ'երևի , իր հայրենակիցներն ապաշխարութեան բերել իրենց մեղացը վըայ , որպէս զի գարձեալ վայելեն Աստուծոյ ողորմութիւնը : Իւրաքանչիւր գլուխ կը բաղկանայ 22 համարներէ , բաց Գ. գլխէն որ 66 համար ունի . և բաց ի վերջոյն՝ Յնացեալ գլխոց համարները Երբայեցերէն այբուբենին 22 գիրերուն կարգաւն են , այսինքն՝ առաջին համարը կը սկսի այբուբենին առաջին գրովը , երկրորդ համարը՝ երկրորդ գրով , Յնացեալ համարներն ալ նոյն կարգաւ : Սակայն Գ. գլուխը որ երկոց 22 համար ունի՝ առաջին երեք համարները կը սկսին առաջին գրով , երկրորդ երեք համարները՝ երկրորդ գրով , և որ ի կարգին :

Եղեկէլ

Եղեկիէլ Երեմիայի պէս քահանայ միանգամայն մարգարէ էր (Եղեկ. Ա. 3) : Երբ Նաբուգոդոնոսոր Բարելոն գերի տարաւ Յուդայի թագաւորը Յովաքին և շատ իշխաններ և երկրին գլխաւորները (Գ Թագ. ԻԳ. 10-16) , Եղեկիէլ անոնց գերեկից էր : Այս եղաւ 41 ամօք յառաջ քան զաւերն Երուսաղեմի : Եղեկիէլ սկսաւ մարգարէանալ իւր գերութեան հինգերորդ տարին (Եղեկ. Ա. 2) , և շարունակեց այն պաշտօնը զոնէ 22 տարի (Եղեկ. ԻԹ. 17) , կամ մինչև վեշառասներորդ տարին յետ աւերման Երուսաղեմի , այսինքն 595 էն մինչև 574 նախ քան զՔր. : Ուստի ժամանակակից էր Երեմիայի որ մարգարէ-

ացաւ Երուսաղէմ՝ և ապա Եզրպատտ . ժամանակակից էր նաև Դանիէլը որ մարգարեական պաշտօնին հետ ունէր նաև քաղաքական պաշտօն Բաբելոնացոց թագաւորին ծառայութեան մէջ : Բայց Եզրպատտը բնակութիւնը Բաբելոնի մէջ չէր , այլ Բաբելոնէն իբր 200 մղոն գեպ ի հիւսիս Դելպոսի (Յարենի նոր հասկաց դէզ) կոչուած տեղ մը քառար գետին քով որ Եփրատայ մէկ ճիւղն էր (Եզրկ. Ա. 3, Գ. 15) : Ոմանք կը կարծեն թէ Եզրպատտը Ա. գլխոյն 1 համարին մէջ յիշուած երեսներէն տարին կը նշանակէ մարգարեին կենաց երեսներորդ տարին , սրպէս թէ Եզրպատտը երեսնամաս էր երբ կոչուեցաւ մարգարեական պաշտօնին , այսինքն ի հասակին յարում քահանայք կը սկսէին իրենց պաշտօնը վկայութեան խորանին մէջ (Թու. Գ. 23, 30) : Այլք կը կարծեն թէ կը նշանակէ երեսներորդ տարին ի սկզբանէ թագաւորութեան Նաբուպոզասարայ , Նաբուգոզոսորայ հօրը , որ (625 ն. ք. զԳր.) Բաբելոնացոց ազատ ըրաւ Ասորեստանեայց տերութենէն և նոր թուական հաստատեց : Եզրպատտը որ քաղաքացի էր կը կարծեն և կը մարգարեանար՝ թերևս յարմար գատեց այն քաղաքական թուականը զնել իր մարգարեութեան սկիզբը : Գիրքին ուրիշ բոլոր թուականները կը հաշուուին Յովպրիսի գերութենէն : Եսայեայ պէս նաև Եզրպատտը շատ քիչ տեղեկութիւն կու տայ իր անձնական գործքերուն վրայ : Ը. գլխոյն 1, և ԻԳ. գլխոյն 18 համարներէն կը սորվինք որ Եզրպատտը իր գերութեան տեղը տուն մը ունէր և կին մը որ յանկարծ մեռած կը թուի : Երբեքուն և սւրիշ Հրեայ գերեզմանաց առ Եզրպատտը զայրուն ստեպ յիշատակութիւնը կը ցուցնէ թէ իր համազգիներուն քով մեծարոյ էր Եզրպատտը (Տես Գլ. Ը. 1, ԺԳ. 1, Ի. 1, ԼԳ. 30-32) :

Եզրպատտը գիրքը կրնայ երեւ մաս բաժնուիլ : Առաջին մասը (Գլ. Ա.-ԻԳ.) կը պարունակէ Երուսաղէմի աւերմանէն առաջ տրուած մարգարեութիւններ : Երկրորդ մասը (Գլ. ԻԳ.-ԼԲ.) կը պարունակէ մեծաւ մասամբ Երուսաղէմի պաշարման ատենը տրուած մարգարեութիւններ : Երրորդ մասը (ԼԳ.-ԽԸ.) կը պարունակէ Երուսաղէմի աւերմանէն ետքը տրուած մարգարեութիւններ : Ինչպէս Եսայեայ և Երեմիայի , նոյնպէս Ե-

զեկիելի մարդարեութեանց մեծ նպատակն էր յորդորել Հրեաներն իրենց մեղացը զըսյ ապաշխարելու, և առաջնորդել զանոնք ազատութիւն փնտռելու հարստահարութիւններէն, զորս կը կրէին՝ Աստուծոյ հոգևոր պաշտաման և ծառայութեան գառնալով մանաւանդ քան Եգիպտոսի կամ ուրիշ օտար ազգի մը օգնութեան դիմելով: Մարգարէն կը խօսի իորայելի որդւոց (տասն ցեղից) և Յուդայի զըսյ (ԳԼ. ԼԷ. 16), և անոր պատգամներն ուղղուած են թէ՛ այն տասն ցեղերուն և թէ՛ միւս երկու ցեղից, Յուդայի և Բենիամինի (տես ԳԼ. Գ. 3, ԺԱ. 1, 15, ԺԳ. 1): Գերութեան ժամանակն էր այնպիսի ժամանակ մը՝ որ Յուդայի և Բենիամինի ցեղերուն գերիները պիտի միանային տասն ցեղից գերիներուն հետ որ կանխաւ տարուած էին նոյն երկիրը: Ամէնքն ալ միևնոյն տառապանքը կրելով կարեկից պիտի ըլլային իրարու, ուստի Եզեկիելի խօսքերը մեծ ազդեցութիւն պիտի ընէին այն միութիւնը պահելու: Շատ պատճառ կայ հաւատալու թէ Բաբելոնի գերութենէն դառնալու ատեն տասն ցեղից գերիներէն շատերը գարձան երկու ցեղին հետ, և այնուհետև զերջացաւ նախնի բաժանումը: Եզեկիելի յաջորդ մարգարեութիւնները, Գանիելի զերջին մարգարեութեանց պէս, կը վերաբերին Աննի ապագայ փառացը և Աստուծոյ ահեղ պատուհասին որ պիտի գար Աննի մէջ և անկէ դուրս գրտնուող չարաց զըսյ:

Եզեկիելի զերջին ինը զլուխներուն մէջ կը պատմուի տեսիլ մը ուր մարգարէն կը տեսնէր տաճարով, քահանաներով և սեղաններով նոր Երուսաղէմ մը, որ առաջնոյն աւերակներէն կ'ելլէր ընդարձակագոյն և փառաւորագոյն քան զայն: Մարգարէն կը տեսնէր նաև որ Քանանու երկիրը նորէն կը բաժնուէր գարձող գերիներուն մէջ, ինչպէս եղաւ Յեսուայ ժամանակ, բայց բոլորովին տարբեր կերպով: Այս տեսիլքն ըստ բառից մեկնուելու չէ՛ իբրև վերաբերեալ նորաշէն տաճարին և Քանանու երկրին նորէն Հրէից տրուելուն միայն, այլ մեկնուելու է մանաւանդ իբրև վերաբերեալ մեծութեան, փառաց և յաջողութեան ճշմարիտ հոգևոր Աննի, այսինքն Աստուծոյ եկեղեցւոյն որ մի է ամէն գարու մէջ: Եզեկիելի

մնարգարէութեանց մէջ կան շատ տեսիլներ և այլաբանութիւններ, ինչպէս ամբաստաններ, անբան կենդանեաց կերպարանք, ջահեր, անիւներ, այլովքն հանդերձ: Այս կողմանէ Եզեկիէլի մնարգարէութիւնը շատ նմանութիւն ունի Նոր կտակարանին Յայտնութեան գիրքին և Դանիէլի գրոց: Բազդատէ Եզեկի Ա. 26 համարը Դանիէլի է. 9 և Յայտ. Գ. 2, 3 համարներուն, նաև Եզեկի Ա. 5 համարը Դանիէլի է. 3 և Յայտ. Գ. 6 համարներուն, և դարձեալ Եզեկի Ա. 13 համարը Յայտնութեան Գ. 5 համարին և այլոց հետ: Այս երեք գրոց իրարու համապատասխանող օրինակներուն բազդատութիւնը կը նշուաստէ զանոնք մեկնելու: Այսպիսի բազդատութենէ մը պիտի տեսնուի որ Յայտնութեան գիրքին այլաբանութիւններն աւելի հոգևոր պաշտօն մը կը սորվեցնեն քան Եզեկիէլիները: Զորօրինակ Յայտնութեան գիրքին Նոր Երուսաղէմի նկարագրութեան մէջ չենք գտներ ոչ տաճար և ոչ սեղան, ինչպէս կը գտնենք Եզեկիէլի տեսլեան մէջ: Բայց այս ստուերներն անցած են Յայտնութեան մէջ:

Դանիէլ

Դանիէլ մնարգարէ գեռ մանուկ էր երբ Յովակիմայ երրորդ տարին Բաբելոնացոց Նաբուգոդոնոսոր թագաւորէն գերի տարուեցաւ Յուդայի երկրին վրայ եղած յարձակման մը ատեն որ յիշուած չէ ոչ Թագաւորաց գիրքերուն և ոչ Մնացորդաց մէջ: Այսպէս Դանիէլի գերութիւնը եղաւ 8 տարի յառաջ քան Եզեկիէլինը, որ եղաւ Յովակիմայ յաջորդին առաջին տարին: Դանիէլի Ա. գլխոյն 3 համարէն կ'երևի թէ Դանիէլ թագաւորական ընտանիքէն էր, և կամ Յուդայի իշխանաց մէկուն ընտանիքէն: Անոր Երբայեցերէն անունը, Դանիէլ, կը նշանակէ «Աստուած իմ գառաւորս է:» Իսկ Բաղասաստար անունը զոր Նաբուգոդոնոսոր տուաւ անոր՝ կը նշանակէ «Պելդիս պաշտպանէ թագաւորը:» Պելդիս էր անուն կնոջ Բելայ որ Բաբելոնի մէջ պաշտուած գլխաւոր աստուածոց մին էր: Նաբուգոդոնոսոր Դանիէլի վրայ երևելի ապշանդներ տեսնելով, գրաւ զանի իր կտակարարութեան

բարձր և պատուաւոր պաշտօնատարաց կարգը : Դանիել էր պաշտօնը պահեց, թերևս կարճ ընդհատմամբ մը, մինչև Մասրաց և Պարսից զփարձելն առնելը, նաև Դարեհի Մարի և Կիւրոսի Պարսկի ժամանակ : Ուստի Դանիել ապրեցաւ և մտադարեացաւ Բաբելոնի գերութեան ըստ ժամանակը, և սեսաւ իր ժողովուրդին դառնալն իրենց հայրենի երկիրը, թէպէտ չէր իր թէ ինք ալ գնաց անոնց հետ, հաւանականապէս իր խոր ծերութեան պատճառաւ : Կը կարծուի թէ Դանիել Պարսից թագաւորներուն ծառայութեան մէջ մնաց մինչև իւր մահը : Կառավարութեան մէջ իր բարձր կացութեան սրտածառաւ կրցաւ հաւանակապէս մեծամեծ օգնութիւններ ընել իւր ազգին անոնց գերութեան ատենը : Աստուածպաշտութեան մէջ Դանիելի անյողոզող հաստատութիւնը ըստ պն փորձութեանց և հակառակութեանց մէջ որոնց հանգիւկեցաւ՝ մեծ ազգեցութիւն ըրած ըլլալու է ժողովրդեան վրայ : Եղեկիէլ մտադարե կը յիշէ զԴանիել (Եղեկ. ԺԴ. 14, 20, և ԻԼ. 3) իբրև երեւելի օրինակ բարեպաշտութեան և իմաստութեան :

Դանիելի գիրքը կրնայ երեք մաս բաժնուիլ : Առաջին մասը (ԳԼ. Ա.) ըստ գիրքին ներածութիւնն է, ուր կը պատմուի, թէ ինչպէս Դանիել Նաբուգոզոնոսորայ ժամանակ հասաւ բարձր պաշտօնի : Երկրորդ մասը (ԳԼ. Բ.-Է.) որ գրուած է Քաղդէսերէն՝ կը ջուրցնէ թէ ինչ յարաբերութիւն ունին Աստուծոյ թագաւորութիւնը հեթանոս թագաւորութեանց հետ : Նախ, այս մասին Բ. գլխոյն մէջ կայ երկրիս չորս ինքնակալութեանց տեսիլն ի ձև չորեքմասնեայ պատկերի : Այս տեսիլան կը պատահուին Է. գլխոյն մէջ պատմուած տեսիլն իւր ինքնակալութեանց վրայ՝ ծովէն ելլող չորս մեծ գազանն ներու նմանութեամբ : Վերջին ինքնակալութեան պիտի յաջորդէր երկնից Աստուծոյն թագաւորութիւնը որ երբեք պիտի չկործանի : Երկրորդ, Գ. գլխոյն Սեգրաբայ, Միսաբայ և Արեգնագոզի ազատութեան պատմութեան, և Զ. գլխոյն Դանիելի ազատութեան պատմութեան մէջ ունինք ուրիշ նկարագիր մը այն յարաբերութեան զոր Աստուած և անոր թագաւորութիւնն ունին հեթանոս թագաւորութեանց հետ :

Երրորդ, Գ. և Ե. գլուխներուն մէջ միեւնոյն յարարերութեանց և Աստուծոյ վարուելուն վրայ ունինք ուրիշ նկարագիր մը այն պատմութեան մէջ ուր կը յիշուին Նարուգոդոնոսուրայ խոնարհին իր սոճարտաւանութեան և կռապաշտութեան համար, և Բաղասասարայ Հրէից տաճարին անօթները արբապիղծ կերպով գործածելը: Եր անմուտի թէ գիրքին այս երկրորդ մասին մէջ նշանաւոր համաձայնութիւն կայ այլեայլ գլխոց մէջտեղ: Բ. գլուխը կը պատասխանէ Է. գլխոյն, Գ. գլուխը՝ Զ. ին, և Դ. գլուխը՝ Ե. ին:

Գիրքին երրորդ մասը (Ը. գլխէն մինչև ԺԲ.) գրուած է Երբայեցերէն: Այս մասը կը ցուցնէ Աստուծոյ թագաւորութեան և հէթանոս սոցիալիզմի մէջտեղ պատեքազմը՝ խոյի և քօշի մը տեսլեամբ որ վերոյիշեալ չորս ինքնակալութեանց երկրորդը և երրորդը կը ներկայացնէ: Աոկէ ետքը կու գան քանի մը մասնաւոր անգնկութիւնք ապագայ մտաւոր գիւպաց վրայ, և մարգարէութիւնք Մեսիայի գալտեան սուրբ քաղաքին աւերման Հռոմայեցիներէն, այն մեծ պատերազմներուն որ պիտի ըլլային Աստուծոյ թագաւորութեան և աւնոր թշնամիներուն մէջտեղ, և վերջին յարութեան վրայ: Ընդհանրապէս կը կարծուի թէ Բ. գլխոյն մէջ յիշուած մեծ արձանին այլեայլ մասերով և Է. գլխոյն մէջ յիշուած գազաններով ներկայացուած ինքնակալութեանց առաջինն եր Բաբելացւոց տէրութիւնք, երկրորդը՝ Մարաց և Պարսից, երրորդը՝ Յունաց կամ Մակեդոնացւոց՝ Ալեքսանդրի ժամանակ, և չորրորդը՝ Հռոմայեցւոց: Բայց սմանք Ալեքսանդրի յաջորդներուն տէրութիւնը կը համարին չորրորդը: Հրեայ պատմիչը Յովսէպոս Մեծին Ալեքսանդրի Երուսաղեմ գալը (332 Ն. ք. գրբ) յիշելով, անոր և Հրէից Յագուա քահանայապետին մէջտեղ խօսակցութիւն մը եղած կը պատմէ, որուն մէջ քահանայապետը ցուցուց Ալեքսանդրի Դանիէլի գրոց այն մարգարէութիւնք թէ Յոյն մը պիտի կործանէր Պարսից տէրութիւնը: Ալեքսանդր այն միջոցին պիտի սկսէր պատերազմիլ Պարսից հետ և այնպէս ուրախացաւ քահանայապետին այն խօսքին վրայ որ, թէպէտ առաջ շատ բարկացած էր Հրէից, հաշտուեցաւ անոնց հետ և մեծամեծ արտօնութիւններ շնորհեց անոնց:

Մեծ նմանութիւն կայ Դանիէլի գիրքին և Յայտնութեան մէջտեղ: Մէկուն ուսումը միւսին մեկնութեան շատ կը նըպաստէ: Երկուքը միանգամայն կը պարունակեն մարգարէութիւններ որ մինչև աշխարհիս վերջը պիտի կատարուին հետզհետէ: Երկուքին մէջալ կան մարգարէութիւններ որոնց նշանակութիւնը ճշգիւ ստուգել շատ դժուարին է: Բայց այս մարգարէութեանց քննութիւնը կը վերաբերի մանաւանդ մեկնութեան մասնաւոր գիրքի մը քան թէ այս գրութեան:

ՈՎԷԷ

ՈՎԷԷԻ մարգարէութիւնները մեծաւ մասամբ ուղղւած են Իսրայելի տասն ցեղերուն, և նոյն ինքն ՈՎԷԷ Հաւանականապէս Քանանու երկրին այն մասէն էր որ յիշեալ ցեղերուն կը վերաբերէր: ՈՎԷԷԻ մարգարէութեան ժամանակը շատ երկար ակեց, Հաւանականապէս 60 տարի կամ ևս աւելի: Այս միջոցը մեծ աղէտից և թշուառութեան ժամանակ էր: Այս ժամանակին մէջ չորս բռնաւորը ելան և սպաննեցին տիրող թագաւորները, և Ասորեստանցիք երկոս արշաւեցին Իսրայելի երկիրը: ՈՎԷԷԻ մարգարէութեանց նշանաւոր մէկ յատկութիւնն է յարատեւութիւնը որով կը ցուցնէ մարգարէն Իսրայելի որդւոց յարաբերութիւնն իրենց Աստուծոյն Եհովայի իբրև ամուսնական՝ գաշնակցութիւն մը և կը յանդիմանէ ժողովրդեան անհաւատարմութիւնն առ Աստուած, և մանաւանդ անոնց կռապաշտութիւնը և խնամութիւններն շրջակայ կռապաշտ ազգաց հետ իբրև հոգևոր շնութիւն և պոսակութիւն: Առաջին երեք գլուխներն ընդհանրապէս կը համարուին ոչ իբրև պատմութիւն իրօք պատահած բաներու, այլ իբրև այլաբանութիւն կամ տեսիլ տւր օրինակաւ կը ցուցուին Իսրայելի որդւոց չարութիւնը, և պատիժը որուն արժանի կը կացուցանէին նոքա զիրենք: Բմանք կը կարծեն սակայն թէ ՈՎԷԷԻ յիշեալ գլուխներուն մէջ պատմուած բաներն իրօք գործուեցան, և կը պատմուին իբրև ազգարարութիւն Իսրայելի ժողովրդեան իրենց մեղքերուն համար: Ըստ այս մեկնչաց շնորոգ կնոջմով պէտք է

Հասկնալ ոչ այնպիսի կին մը որ մարգարէին հետ ամուսնանալէն առաջ անառակ էր, այլ յետ ամուսնութեան սկսաւ անառակիլ: Գիրքին մնացեալ 11 գլուխները կը պարունակեն, ինչպէս կ'երևի, Ովսէէի մարգարէութեանց համառօտութիւնը զոր ինք ի գրի առաւ: Վերջին գլուխը շատ քաջալիրական նկարագիր է ճշմարտին խորայնիկ ապագայ խաղաղութեան և յաջողութեան:

ՅՈՒՆԵՍԿՈ

Յոսէօ մարգարէին անձին վրայ շատ քիչ բան գիտցուած է: Անոր գիրքին մէջ Ահսնի, Երուսաղէմի և Յուզայի անուններուն ստեղծ յիշատակութենէն կը մտկաբերուի թէ Յոսէօ կ'ապրէր Յուզայի երկրին մէջ, թերևս Երուսաղէմ քաղաքը: Կը կարծուի նաև թէ Յոսէօ մարգարէացաւ Ոգիւյի ատեն, քանզի երբ կը յիշէ Հրէից ազգին թշնամիները, կ'անուանէ Տիւրոս և Արգոն, Եգիպտոս և Եգիպտոս, և ոչ Ասորեստանցիներն ու Բարեբաղնիները որ Յուզայի վերջին թագաւորաց ժամանակ այնչափ ծանր հարուածներ բերին Յուզայի վրայ: Կերևի թէ Յոսէօ մարգարէանալուն առիթ եղան մարտիներուն (Գլ. Ա. 4) և երաշուութեան (Գլ. Ա. 18, 19) հարուածները որ միանգամայն եկան: Այս հարուածներէն պատճառուած աւերը շատ ազգու կերպով կը նկարագրէ Յոսէօ: Ոմանք կը կարծեն թէ մարգարէին նպատակն էր ժողովրդեան հասկցնել թէ այն հարուածներն արինակ էին ուրիշ ազգաներու որ Հրէից վրայ պիտի գոյնն անոնց մեղացը համար: Այս պատճառաւ Յոսէօ կը յորդորէ ժողովուրդն ապաշխարել պահօք և աղօթիւք, և կը խոստանայ թէ, եթէ այսպէս ընեն, այն ազգաները պիտի վերնան, Աստուծոյ հոգին պիտի թափի ամէն մարմնոյ վրայ, Տէրջը ժողովուրդք պիտի յաղթէ իր թշնամիներուն, և ընդհանուր սրբութեան և խաղաղութեան դար մը պիտի գայ: Ինչպէս արգէն ըսուեցաւ (տես էջ 104), Յոսէօ առաջին մարգարէներէն էր: Անոր գրուածներուն սօք վսեմ է և զարգարեալ

չքեղ պատկերներով: Պետրոս առաքեալ Պենտեկոստէի օրուան ճառին մէջ Յովէլի գիրքէն վկայութիւն կը բերէ իբրև մարգարէութիւն այն օրուան գէպքին վրայ:

Աճով

Ամոզո իրեն համար կ'ըսէ թէ Թեկուէի հովիւներէն էր (Գլ. Ա. 1 և Է. 14): Թեկուէ (Բ ՄՆ. Ի. 20) փոքր քաղաք էր Բեթղեմէի հարաւային արևելեան գին, Յուդայի անապատին սահմանազուխը: Ամոզո կ'ըսէ նաև (Գլ. Է. 14. 15) թէ ինք ոչ մարգարէ էր և ոչ որդի մարգարէի, այսինքն մարգարէ ըլլալու համար կրթուած չէր, այլ մասնաւոր կերպով կանչուեցաւ տանել Տէրոջը պատգամն Իսրայելի ժողովրդեան: Այս պատգամը տալու համար զնաց Բեթէլ որ ասան ցեղից ժառանգութեան մէջ էր, ուր էր և կը պաշտուէր մին ոսկեղէն սրթուց զորս կանգնեց Նաբոտայ սրգին Յերոբոամ (Գլ. Է. 10-17. տես նաև Գ. Թագ. ԺԲ. 29): Ամոզո մարգարէացաւ Իսրայելի Թազաւորին Յովատայ որդւոյն Յերոբոամու թագաւորութեան վերջին մասին մէջ, երբ Ողիա կը թագաւորէր Յուդայի վրայ: Գեանշարժէն (Չագ. ԺԳ. 5) երկու տարի տուաջ ըլլալը յիշելէն կը տեսնուի թէ Ամոզոյ մարգարէութեան ժամանակը կարճատեւ եղաւ: Ամոզո իր մարգարէութիւնը կը սկսի ծանուցանելով Աստուծոյ պատուհասին մօտենալն Ասորաց երկրին, Պաղեստինու, Տիւրոսի, Եդովմոյ, Ամոնի, Մոփբու, Յուդայի և վերջապէս Իսրայելի կամ տասն ցեղից վրայ: յիշելով մասնաւորապէս այն ազգերուն մեղքերը որ գրգռած էին Աստուծոյ բարկութիւնը: Ի վերջոյ կը նկարագրէ Իսրայելի մեղքը և Աստուծոյ պատուհասը որ պիտի գար անոնց վրայ: Բայց, ինչպէս որ ուրիշ մարգարէներէն ալ շափեան ըրած են, այս մարգարէն ալ կը վերջացնէ իր խօսքը վատահայեցելով թէ Աստուած իսպառ պիտի չթողու իր ժողովուրդը, այլ զանոնք խորաւայելէն և մաքրելէն կտքը մեծ յաջողութիւն պիտի պարգևէ անոնց: Ամոզո, իբրև արուեստիւ հոգաբարձ, Տը-

մեւտ բլլալով գեղջիտկան կենաց զբաղումներուն, երկրա-
գործութենէ առնուած պատկերներ յաճախ կը գործածէ եր
գրուածներուն մէջ:

Աբդիու-

Աբդիուայ կարծ մարգարեութիւնը Եդովմայեցւոց վրայ է,
և կը պարունակէ սաստիկ կշտամբանք, վասն զի անոնք ա-
նադորոյն կերպով վարուած էին Հրէից դէմ, և Երուսաղեմի
թշուառութեան վրայ կը խնդային (Համար 11-14. տես նաև
Սաղմ. 81, 5. 7): Ընդհանրապէս կը կարծուի թէ Աբդիուէն
յիշուած աղէպք այն թշուառութիւնք են որ Հրէից վրայ եկան,
երբ Բաբելացւոց Նաբուգոդոնոսոր թագաւորն առաւ անոնց
մայրաքաղաքը Երուսաղէմ, և թէ պս պատճառաւ Աբդիու-
ժամանակակից էր Երեմիայի և Եղեկիելի, որոց գրուածնե-
րուն և Աբդիուի գրուածներուն մէջ տեղ շատ նմանութիւն
կայ: Եդովի պատճուելուն վերաբերեալ մարգարեութիւնք
շատ շուտ կատարուած կ'երևին, քանզի Յովսէպոս կը պատ-
մէ թէ Երուսաղեմի աւերումէն հինգ տարի ետքը Նաբուգո-
դոնոսոր գալով նուաճեց բոլոր երկիրը ուր Եդովմայեցիք կը
բնակէին, և թէ յետոյ այն երկիրը Հրէից իշխաններուն հը-
պատակեցաւ, և ի վախճանի Եդովմայեցւոց երկիրն այնպէս
աւերակ և ամայի եղաւ, որ "Եսաւի տանը մնացորդ մը"
չմնաց, վասն զի, կ'ըսէ Յովսէպոս, "Եհովան այսպէս խօսած
էր" (Աբդ. հմբ. 16, 18): Բայց մինչ Եդովմայ իսպառ կոր-
ժանումը կը մարգարեանար Աբդիու, իմացուց կանխաւ թէ
Հրէպք պիտի ազատուէին իրենց թշուառութիւններէն, և
նորէն պիտի ժառանգէին ոչ միայն իրենց երկիրը, այլև
Փղշտացւոց և Եդովմայեցւոց երկիրները, և ուրախ պիտի
բլլային խոստացեալ Մեսիսյին թագաւորութեամբ:

Յովնան

Յովնան մարգարէ յիշուած է Դ թագաւորաց ժ. Գ. գլխոյն
25 համարին մէջ, ուր կը յիշուի Յովնանու մարգարեանալը

Թէ Աստուած պիտի ցուցնէր իր սղորմութիւնն իտայելի ժո-
ղովրդեան Յովասու սրգւոյն Յերոբոզամոյ ժամանակ: Ասկէ
հաւանական կը թուի թէ Յովան մարգարէացաւ յիշեալ
թագաւորին ատենը կամ անկէ քիչ մը առաջ, ուստի և
Յովան կ'ըլլայ ժամանակակից Ամոզայ և Ովեսայ: Զարու-
ղանի քաղաքը Քիթքոփեր ուր ծնաւ Յովան՝ Գալիլեայի մէջ
էր, ուստի և Հրէից խօսքը Քրիստոսի ժամանակ թէ "Գա-
լիլեայէն մարգարէ չիլլեր" (Յովհ. Է. 52)՝ ճշմարիտ չէր:

Յովանու գիրքը մեծաւ մասամբ պատմութիւն է: Ոմանք
հաւատարմութեան արժանի չեն համարիր այն պատմութիւնը
թէ Յովան երեք օր մնաց մեծ ձկան մը փորին մէջ: Անոր
հոն ողջ մնալն արդարև Աստուծոյ հրաշագործ զօրութեամբն
էր, բայց շատերուն ծանօթ է թէ Միջերկրական ծովուն մէջ
կը գտնուին այնչափ մեծ ձկունք որ մարգ կրնան կլանել:
Յովանու տրտմելը, երբ տեսաւ թէ Նիսուէացիք իր քաղա-
քութեան ազգեցութեամբն ապաշխարելով ազատեցան ըս-
պառնացեալ պատժէն՝ արդարև զարմանալի է: Թերևս փախ-
ցաւ թէ իր սպառնալիքը չկատարուելով սուտ մարգարէ պի-
տի համարուէր, կամ թերևս անարժան կը համարէր զՆի-
սուէացիս Աստուծոյ սղորմութեանը, և տրտմեցաւ որ Աս-
տուած ներուժ չնորհէր անոնց: Իր պաշտօնին յաջողելէն
Յովան հասկցած ըլլալու էր թէ Աստուծոյ նպատակն էր
այն ներմամբ ցուցնել Յովանու և Հրէից թէ Աստուած ինչ-
պէս իր ընտրեալ ժողովրդեան, նոյնպէս հեթանոսաց պատ-
րաստ էր ներելու: Յովանու Բ. գլխոյն մէջ յիշուած աղօթ-
քին շատ բառերը Սաղմոսներէն ոմանց բառերուն հետ այն-
պիսի մեծ նմանութիւն ունին, որ կրնայ կարծուիլ թէ Յով-
նան այն սաղմոսները միտք բերաւ երբ իւր աղօթքը կամ եր-
գը կը շարագրէր: Բազդատէ Յովանու Բ. Գլ. 3 և 5 հա-
մարները Սաղմոսաց ԺԸ. 4 և 5, և ԽԲ. 7 համարներուն,
Նոյնպէս Յով. Բ. 2, 4 և 7 համարները Սաղմ. ԺԸ. 6, ՃԻԱ. 4
և ՃԻԲ. 2 համարներուն, և դարձեալ Յովանու յիշեալ
գլխոյն 4 և 8 համարները ԼԱ. Սաղմոսին 6, 7 և 22 համար-
ներուն հետ:

Միտեա

Միքիա մարգարէ Մորտացի էր (Միք. Ա. 1) : Մորտա Յուդայի քաղաք էր Փզշտացւոց սահմանին վրայ : (Տես Ա. գլխոյն 10, 14 և 15 համարները : Այս համարներուն մէջ յիշուած Գեթ, Մորեոեթ և Ռգողոմ՝ Փզշտացւոց սահմանին մօտ տեղեր էին :) Միքիայի մարգարէութիւնները գլխաւորապէս կը վերաբերին իսրայելի տասն ցեղից մայրաքաղաքին Սամարիոյ, և Յուդայի մայրաքաղաքին Երուսաղեմի : Այս մարգարէութիւնները կրնան երեւ մաս բաժնուիլ (Գլ. Ա. և Բ., Գլ. Գ.—Ե. և Գլ. Զ. և Է.), որոց իւրաքանչիւրին սկիզբը կայ հրաւեր մը Աստուծոյ պատգամը մտիկ ընելու . ապա կուգան յանդիմանութիւն և սպառնալիք, հուսկ ապա փառաւոր խոստումներ : Միքիա ժամանակակից էր Եսայեսոյ, և այս երկու մարգարէից խօսքերուն մէջ շատ նմանութիւն կայ : (Բազդատէ Միք. Գ. 1-3 համարները Եսայեսոյ Բ. 2-4 համարներուն հետ :) Կրնայ կարծուիլ թէ Եսայի Միքիայէն կ'առնէ այն համարներն իբրև բնարան պատգամներուն զորս պիտի տար իր ժողովրդեան : Միքիայի Ե. գլխոյն 2 համարին մէջ կայ Մեսիայի վրայ նշանաւոր մարգարէութիւն մը զոր Հրէից քահանայապետք և գպիրք յիշեցին երբ Քրիստոսի ծննանելու տեղւոյն վրայ Հերովդէսի հարցման պատասխան տուին : Միքիայի Գ. գլխոյն 12 համարին մէջ յիշուած ուրիշ մարգարէութիւն մը մեծ տպաւորութիւն ըրած կ'երևի իսրայելացւոց վրայ, քանզի աւելի քան 100 տարի ետքը Երեմիայի ժամանակ Հրէից ծերերը մասնաւորապէս կը յիշեն այն մարգարէութիւնը (Եր. ԻԶ. 18) : Միքիայի մարգարէութեան սօք շատ ոաստիկ է, և Ամովսայ պէս նաև Միքիա հովուական և գիւղական կենաց վերաբերեալ օրինակներ շատ կը գործածէ :

Նոսոմ

Նոսոմ կը կոչուի Ելկեսոցի, վասն զի, ինչպէս հաւանական է, Գալիլեայի Ելկէս գիւղէն էր : Նոսոմայ մարգարէութիւններն Ասորեստանի տէրութեան մայրաքաղաքին Նիուէի

գէժ են: Երբ այս մարգարէութիւնները կը արուէին, Նինուէ հզօր քաղաք էր (Գլ. Գ. 1-4) և հարստահարիչ Աստուծոյ ժողովրդեան, Հրէից: (Տես Գլ. Ա. 13, 15): Այս հարստահարութեանց յիշատակութենէն կը տեսնուի թէ Նաուժ մարգարէացաւ ժամանակ մը Եղեկիայի թագաւորութեան ատենը: Վերին Եգիպտոսի Նով կամ Նով Ամօն, նաև Թերէ կոչուած մայրաքաղաքին պէս հպարտ և անզգամ Նինուէ քաղաքը պիտի կործանէր իսպառ, և գարման պիտի չըլլար անոր բեկմանը (Գլ. Գ. 19): Այս հաշակաւոր քաղաքին հիմա անբնակ աւերակներու կոյտ մը ըլլալը կը ցուցնէ թէ ինչպէս ճշդիւ կատարուեցաւ Նաուժոյ մարգարէութիւնն այն քաղաքին վրայ:

Ա՛թակոս՛

Այս մարգարէութեան Ա. գլխոյն 6 համարէն կը տեսնուի որ Ամբակում մարգարէացաւ քիչ յառաջ Յուդայի վրայ Քաղդէացւոց արշաւանքէն, որոյ վախճանը եղաւ Երուսաղեմի աւերումը և Հրէից գերութիւնը Նարուգոդոնոսորայ ձեռքով, այսինքն Յովաքազու և Յովակիմայ թագաւորութեան ատենը (640-610 նախ քան զՔր.): Ամբակումայ մարգարէութեանց նիւթն է, թէ նախ Յուդա պիտի ջնջուէր Քաղդէացւոց ձեռքով, և ապա Քաղդէացիք, երկուքն ալ իրենց մեղացը համար: Ամբակումայ վերջին գլուխը երգ կամ ազօթք է, ուր մարգարէն կը խնդրէ Աստուծմէ միջամտել ի նպաստ իւր ժողովրդեան, ինչպէս բրած էր ի հնուսն. միանգամայն կը մարգարէանայ թէ Աստուած այս միջամտութիւնը պիտի ընէ: Ամբակումայ երգին վերջը դրուած սա խօսքը, «Գլխաւոր երաժշտին, իմ զարնելու նուագարաններու զլրայ» կը ցուցնէ թէ Ամբակում գլխաւոր երգիչ էր տաճարին մէջ, և թերևս Ղևտացի:

Սօ՛փանի՛տ

Սօփանիտ մարգարէացաւ Յուդայի թագաւորին Յովեիայի

ժամանակ (Գլ. Ա. 1), ինչպէս կ'երևի, այն բարեկարգութեան ատեն զոր ըրաւ յիշեալ բարեպաշտ թագաւորը, այսինքն Յովսէփի թագաւորութեան 12 և 18երորդ տարիներուն մէջտեղ (տես Բ Մնաց. 17. 3-13), քանզի Սոփոնիայի Ա. գլխոյն 4-6, և 8 և 9 համարներէն կը տեսնուի որ այն բարեկարգութիւնները դեռ աւարտած չէին: Սոփոնիայի ազգաբանութենէն, որ Ա. գլխոյն 1 համարին մէջ ցուցուած է՝ ոմանք կը հետեցնեն թէ Սոփոնիա Եզեկիա թագաւորին սերունդէն էր: Բայց թերևս այս Եզեկիան ուրիշ անձ էր և ոչ Եզեկիա թագաւորը, քանզի Եզեկիա անունն անո՞վոր անուն չէր Հրէից մէջ: Սոփոնիա իր մարգարէութեանց մէջ արագ արագ կ'անցնի սպառնալիքէ ի խոստումն. «սպառնալիք» ծանր պատուհաններու որ պիտի գային թէ՛ Յուդայի վրայ անոր թագաւորներուն անազատւնութեան և վիսուութեանը, քահանայից խարէութիւններուն և ժողովրդեան չարութեանը համար, և թէ՛ Փղշտացւոց, Նինուէացւոց, Եթովպացւոց, և Յուդայի ուրիշ թշնամեաց վրայ. խոստումն՝ մնայուն խաղազութեան և երջանկութեան Աստուծոյ ժողովրդեան ազքտա և վշտահար մնացորդին, որ պիտի սուրախանար յանուն Տեառն:

Անգէ

Անգէ այն երեք մարգարէներէն է որ Հրէից իրենց երկիրը դառնալէն ետքը մարգարէացան, ուստի և կը կոչուին «Գերութենէ դարձին մարգարէք»: Անգէի չորս մարգարէութիւնները տրուեցան երեք ամսուան մէջ, Պարսից Դարեհ թագաւորին ժամանակ (520 նախ քան զՔր.), և չորս մարգարէութիւններն ալ վերաբերութիւն ունին տաճարին շինութեանը: Այն ատեն տաճարին շինութիւնն ընդհատեալ էր քանի մը տարիէ հետէ Հրէից թշնամիներուն հակառակութեանը պատճառաւ (Եզր. Գ. 24): Այն միջոցին Հրէայք ալ կորուսած էին իրենց եռանդը գործն յառաջ տանելու, ուստի Անգէայ մարգարէութեան նպատակն էր արծարծել ժողովրդեան եռանդը (Եզր. Ե. 1, 2): Անգէ նախ կը յանդիմանէր զանոնք

իրենց եռանդեան պակասութեանը համար (Գլ. Ա. 4, 9-11), և յետոյ, երբ սկսան գործել, սկսաւ քաջալերութեան պատգամներ տալ, խոստանալով որ նոր տաճարին փառքը մեծ պիտի ըլլար քան հնոյնը (Գլ. Բ. 9,) ի պատճառս գալուտեան այնորիկ որուն կը ջանկային ըստը ազգերը: Անգեայ այս խոստումը կատարուեցաւ Քրիստոսի գալուտեամբ և փառք: Անգեայ մարգարէութիւնն ալ, ուրիշ շատերուն պէս, կը վերջանայ Աստուծոյ ժողովրդեան ապագայ յաջողութեան վրայ խոստումներով:

Զատարիա

Զաքարիա սկսաւ մարգարէանալ երկու ամիս ետքը քան զԱնգէ (բաղգատէ Զաք. Ա. 1 համարն Անգ. Ա. 1 համարին հետ) Զաքարիայի անունը կը գանուի Նէեմիայի գիրքին մէջ յիշուած քահանայից անուններուն կարգը (տես Նէեմ. ԺԲ. 16): Անոր հայրը կամ մանաւանդ հաւը (բաղգատէ Զաք. Ա. 1 համարը Եգր. Ե. 4 և Զ. 14 համարներուն հետ) Ագգոզ, էր մին ի քահանայից որ Զորաբարելի հետ Բարեկունէն Երուսաղէմ եկան: Զաքարիայի մարգարէութեան նպատակն էր, ինչպէս Անգէինը, յորդորել և քաջալերել զՀրեայս յառաջ տանել և կատարել տաճարին շինուածք. բայց Զաքարիայ մարգարէութիւնները վերաբերութիւն ունին նաև Աստուծոյ ապառնի տնօրէնութեանցն առ Հրեայս, և թագաւորութեանն Քրիստոսի որ պիտի ըլլար քահանայ, միանգամայն թագաւոր: Զաքարիայի գիրքը կրնայ բաժնուիլ երեք մաս: Առաջին մասը (Գլ. Ա.-Զ.) կը պարունակէ գիշեր մը մարգարէին մտքին առջև նկարուած ութ տեսիլները որոնց մէջ նկարագրուած են այլևայլ օրինակներով Աստուծոյ վարուիլն իր ժողովրդեան հետ, և Քրիստոսի գործն, իբրև շինչի իր եկեղեցւոյն: Երկրորդ մասը (Գլ. Ե. և Ը.) կը պարունակէ պատասխան մը ժողովուրդէն ոմանց հարցման ծովի վրայ, և յանգիմանութիւն մը Հրէից չարութեանը դեմ որ Աստուծոյ բարկութիւնը բերաւ անոնց վրայ: Այս յանգիմանութեանէն ետքը կու գան Յուգայի և Երուսաղէմի ա-

պագայ յաջողութեան վրայ մարգարէութիւններ: Երրորդ մասին մէջ (Գլ. Թ.-ԺԴ.) կը մարգարէանայ Զաքարիա Հրէից և անոնց թշնամիներուն մէջտեղ պատահելու կռիւները, և վերջին օրուան մեծ և զճառական կռիւները որ Աստուծոյ թագաւորութեան իսպառ յաղթանակէն յառաջ պիտի գան: Այս երրորդ մասին մարգարէութիւններէն մին (Գլ. ԺԱ. 13) յիշուած է Մատթէոսի մէջ (Գլ. ԻԷ. 9, 10) իբրև Երեմիայի խօսքը: Այս և ոճոյ քանի մը երևելի տարբերութիւններ որ կը տեսնուին Զաքարիայի գիրքին այս երրորդ մասին և միւս մասերուն մէջտեղ, կարծել տուին ոմանց թէ Երեմիա մարգարէ գրեց երրորդ մասին գլուխները, և Զաքարիա առնելով զանոնք խառնեց իր գիրքին մէջ: Այլք կը կարծեն թէ Մատթէոսի Աւետարանին բնագիրն օրինակողը վրիպակաւ գրած է Երեմիա փոխանակ Զաքարիայի:

Մաղաթիւ

Մաղաքիա կը նշանակէ Երրայեցերէն իմ գետպանս, և Գ. 1 համարին մէջ նոյն բառը թարգմանուած է «իմ գետպանս» Ասկէ ոմանք կը կարծեն թէ Մաղաքիա ոչ թէ այս գիրքին հեղինակին բուն անունը, այլ անոր պաշտօնին տիազոտն էր: Սակայն ընդհանուր կարծիքն այս է թէ Մաղաքիա հեղինակին բուն անունն էր: Մաղաքիայէն կշտամբուած մեղաց և Նէեմեայ ԺԳ. գլխոյն մէջ յիշուածներուն մէջտեղ անեսուած նմանութենէն ոմանք հետեցուցած են թէ Մաղաքիա մարգարէացաւ Երուսաղէմ Նէեմիայի կառավարութեան ատենը, և անոր յիշեալ քաղաքը բնակելուն գէպ ի վերջը (420 Նի. քն. զՔր.): Հին կասկարանին մարգարէից այս վերջինը կը սկսի իւր պատգամները տալ իր հայրենակցաց՝ յիշեցնելով անոնց Աստուծոյ բարութիւնը գէպ ի նստս, կը յանդիմանէ զանոնք իրենց ապերախտութեան և ուրիշ մեղքերուն համար, կ'իմացնէ թէ Տէրը որոյ ուշանալուն գէմ կը գանգատէր ազգը՝ յանկարծ պիտի գար գատաստանի. կը խրատէ զանոնք յիշել Մովսէսի օրէնքները, և կը գոցէ իր մարգարէութիւնը խոստանալով թէ Եղիա պիտի գար յառաջ քան

Տերոջը մեծ և ահաւոր օրուան գալուտը : Այս խոստումը , ինչպէս նաև Գ. գլխոյն 1 համարին խոստումը , ստեպ կը յիշուին Նոր կտակարանին մէջ , և կ'առնուին Քրիտոսոսի կարապետին Յովհաննու Մկրտչի վրայ : Այսպէս Մաղաքիա Հին և Նոր անտեսութիւնն իրարու հետ կցող իբր օղակ կրնայ համարուիլ :



ԳԼ. ԺԸ.

Հրէից ազգին պարսո-ւթիւնը Հին կտակարանին
 Բոցոսեւելն մինչև Նորոյն սկիզբը :

Նէեմիայի ժամանակէն ետքը (420 նի. քն. զԲԲ.) Հրեայք իբր 100 տարի մնացին հպատակ Պարսից Թագաւորներուն : Հրեաստան կը համարուէր իբրև մասն Ասորոց նահանգին (Սատրապութեան) , բայց Հրէից գործերուն վարչութիւնը յանձնուած էր քահանայապետաց՝ յիշեալ նահանգին կառավարչին տեսչութեան ներքեւ : Կրօնական և աշխարհական գործոց քահանայապետաց ձեռքին մէջ այսպէս միացած ըլլալը պատճառ եղաւ փառասէր , բռնի և անվայել կռիւններու Ահարոնի տան սյլևայլ անդամներուն մէջտեղ : Յամին 333 նի. քն. զԲԲ. Աղեքսանդր մեծ Մակեդոնացի կործանեց Պարսից իշխանութիւնն Ասորոց երկրին մէջ , և զՏիւրոս առաւ : Տիւրոսէն գնաց Հրեաստան պատժել զՀրեայս որ օգնական եղած էին Աղեքսանդրի թշնամիներուն : Բայց երբ մօտեցաւ Երուսաղէմ , Հրէից քահանայապետը Յագուուա և բազմութիւն մը քահանայից իրենց քահանայտեան հանդերձ ներով և մեծ ամբոխիւ ժողովրդեան դիմաւորեցին նոր աշխարհակալը : Այնպէս հաճոյ թուեցան Աղեքսանդրի ինչ որ հոն տեսաւ և լսեց՝ որ շնորհեց Հրէից համարձակ վարուիլ իրենց օրինօք և կրօնիւք , և յետոյ , երբ շինեց Աղեքսանդրիա քաղաքը Եգիպտոսի մէջ , Հրեաներէն գաղթականներ բնակեցուց հօն , և առաւ անոնց միեւնոյն առանձնաշնորհու .

Թիւնները զորս տուած էր Յոյն հպատակաց : Երբ Աղեքսանդրի մահուանէն ետքը անոր զօրավարները բաժնեցին իրենց մէջ Մակեդոնական պետութիւնը, Հրէաստան և Եգիպտոս ինկան բաժին Պտղոմեայ Ղազոսի : Այս թագաւորն ալ շատ Հրեաներ գաղթեցուց Աղեքսանդրիա, ոչ սակաւ մարգասիրութիւն ցուցուց անոնց, անոնցմէ ոմանց նաև պաշտօններ տուաւ : Այս եղաւ սկիզբ Հրեայ գաղթականութեանց կազմուելուն օտար երկիրներու մէջ : Յետոյ տարուէ տարի կազմուեցան ուրիշ գաղթականութիւնք Ափրիկէի, Ասիոյ և Յունաստանի այլևայլ կողմերը, այնպէս որ Քրիստոսի ժամանակ Հռոմայեցւոց տէրութեան գրիթէ ամէն մասին մէջ կը գտնուէին Հրեաներ, և այսպէս ճամբան զարմանալի կերպով պատրաստուած էր Աւետարանին քարոզութեան երկրիս այն ատեն ճանչցուած բոլոր մասանց մէջ : Այն բովանդակ ժամանակը որ Հրէաստան մնաց ընդ իշխանութեամբ Եգիպտոսի թագաւորաց՝ Հրեայք մեծ անդորրութիւն և յաջողութիւն վայելեցին : Անոնց գործերուն վարչութիւնն ընտիր քահանայապետի մը ձեռք էր, այսինքն Սիմոնի որ արդար կոչուեցաւ : Սիմոն նորոգեց տաճարին պատերը և զԵրուսաղէմ՝ ամրացուց : Հրեայք զՍիմոն կ'անուանեն «Մեծ ժողովողանոցին վերջինը» : «Մեծ ժողովողանոց» բառով կ'երևի թէ կ'իմանան անձնանուէր և հայրենասէր մարդոց յաջորդութիւն մը որոց թիւը կը հասնէր 120 ի, և սրոնցմէ էին Եզրաս, Նէեմիա, Անգէ, Զարարիա, Մաղաբիա և այլք, որ գերութեան ատենը և յետոյ, անձնանուէր կերպով աշխատեցան հաւաքել և կարգադրել Հրէից սրբազան դիրքերը, և ազգին քաղաքային և կրօնական հաստատութիւնները բարւոքել : Սիմոն մեռաւ 291 ին նի. քն. զՔր. : Հրեայք իբր 100 տարի Պաղոմեանց իշխանութեան տակ մնալէն ետքը, հպատակ եղան (198 նի. քն. զՔր.), մեծին Անտիոքոսի ժամանակ, Առորւոց Սելևկեան թագաւորներուն : Սելևկեանց ժամանակ Հրէից երկիրը հինգ գաւառներու բաժնուեցաւ, որ են Հրէաստան, Սամարիա, և Գալիլեա՝ Յորդանանու արևմտեան կողմը, և Տրաքսնիա և Պերէա՝ Յորդանանու արևելեան կողմը : Բայց Հրէից թող արուեցաւ ինքնօրէն կա-

աւովարուել իրենց քահանայապետներէն և ազգային ժողովէն : Այս ժամանակին մէջ Հրէաստան շատ նեղուեցաւ Եգիպտոսի և Ասորւոց թագաւորներուն մէջտեղ մղուած պատերազմներէն : Նաև Հրէից քահանայապետներուն և աւագանւոյն մէջ ապականութիւնը կը տիրէր, և ժողովրդեան մէջ երթալով կ'աւելնար չարութիւնն ու անզգամութիւնը : Յամին 170 նի. քն. զՔր. Ասորւոց թագաւորն Անտիոքոս Եգիպտոսի կողոպտեց Երուսաղէմ և տաճարը, դադարեցուց հանապազօրդ զոհերը, Արամազդայ պատկերն անգամ կանգնեց ողջակիզաց սեղանոյն վրայ, և մահու սպառնալիզը կը ստիպէր ժողովուրդը զոհել կռոց : Այս նեղութեան և հալածոնաց ժամանակ Հրեաներէն շատերն ուրացան, կը մնար սակայն փոքր մաս մը որ հաւատարիմ էր հայրենի օրինաց : Երբունի քահանայ մը Մատթթիա անուն, բարեպաշտ և քաջասիրտ, իրախուսեց ժողովուրդը կանգնել ախոյեան իրենց օրինաց, և բաւական թուով հաւատարիմ մարդիկ ժողովելով իր գլուխը ձեռնամուխ եղաւ ազատել զՀրեայո Ասորւոց թագաւորներուն բռնութենէն և հալածութենէն : Այս մարդը հինգ որդի ունէր : Ասոնց մին, Յուգա, իր ժերունի հօրը մահուանէն ետքը, զօրքին հրամանատարութիւնը ձեռք առաւ իր եղբայրներուն օգնութեամբ, մանաւանդ Արմոնի սր նշանաւոր էր իմաստութեամբ : Այս անուանի մարդիկը կոչուեցան Մակարայեցիք, և անոնց ու անոնց յաջորդներուն քաջագործութեանց պատմութիւնը գրուած է Մակարայեցիք կոչուած անկանոն գրոց մէջ : (Տես Ա. Հատ. էջ 118.) Յուգա քանի մը անգամ Անտիոքոսի զօրաց յաղթելէն ետքը առաւ զԵրուսաղէմ, տաճարը սրբեց և միւսանգամ նուիրեց զայն Եհովայի պաշտաման : Տաճարին այս վերտախն նախնական նաւակատիքը եղաւ յետոյ ութօրեայ առերկան տօնիւ սր կոչուեցաւ Նաւակատեաց տօն (տես Յովհ. Ժ. 22) : Մակարայեցի իշխանաց ժամանակ Հրէաստան եղաւ ազատ և յաջող տէրութիւն, որոյ սահմաններն ընդարձակուեցան, մինչև Իրեն մէջ ամփոփել Ասորւոց երկրին, փիւնիկէի, Եգոսի և Արբաբի մասերը : Երկիրը սկսաւ ստանալ իր նախնի պաղաւբերութիւնը, և ժողովուրդը կը վայելէր խաղաղութիւն և յա-

Զողութիւն: Բայց այս յաջողութեան գարը շատ երկար չէ տևեց: Երկպառակութիւններ և կռիւներ ծագեցան քահանայապետաց և ազգին մեծամեծներուն, մանաւանդ երկու իրարու ոտի աղանգոց, Սադուկեցւոց և Փարիսեցւոց, մէջտեղ, որ այն ժամանակները ելան: Վերջապէս յամին 63 Նի. քն. գրք. Հռոմայեցի զօրավարը Պամպէոս առաւ զԵրուսաղէմ և զՀրէաստան ըրաւ հարկատու նահանգ Հռոմայեցւոց, թէպէտ Մակարայեցի իշխանք պահուեցան պաշտօնի մէջ: Մինչդեռ Պամպէոս Երուսաղէմ էր, մտաւ տաճարը, նաև մինչև Արբուստանց Արբուստիւնը: Կ'ըսուի թէ շատ զարմացաւ Պամպէոս չտեսնելով հօն Աստուծոյ մը պատկեր: Տաճարին անօթներուն և գանձին ամենեկին չդպաւ, և երբ դուրս կ'ելէր տաճարէն, հրամայեց սրբել զայն և կատարել հանապազօրեայ պաշտօնը: Մակարեան ազգատոհմին վերջին իշխանը Հիւրկանոս սպանուեցաւ ութօնամեկի (30 Նի. քն. գրք.) հրամանաւ Հերովդէի որ յետոյ մեծ կոչուեցաւ: Հերովդէս Եդովմայեցի էր ազգաւ, բայց կրօնիւք Հրեայ, և խնամեցած էր Մակարեան տոհմին ամուսնութեամբ ընդ Մարիամնայ թուին վերոյիշեալ Հիւրկանոսի: Հռոմայեցիք կանխաւ (40 Նի. քն. գրք.) զՀերովդէս անուանած էին թագաւոր Հրէաստանի, և այն պաշտօնը պահեց Հերովդէս մինչև իւր մահը, այսինքն մինչև այն տարին յորում ֆրիտոս ծնաւ: Հերովդէս անգութ բռնաւոր էր իւր ժողովրդեան, իւր զաւկրներուն անգամ, որոց երեքն սպաննեց: Սպաննեց նաև իւր կինը Մարիամնէ: Երուսաղէմի մէջ և ուրիշ տեղեր շինեց մեծամեծ և հոյակապ պալատներ, նորոգեց և գեղեցկացուց տաճարը (16 Նի. քն. գրք.) մեծամեծ ծախիւք: Բայց անփոյթ էր ճշմարիտ Աստուածը պաշտելու, քանզի կը զոհէր Հռոմայեցւոց աստուածներուն, հեթանոսական խաղեր եմոյծ Երուսաղէմ, և ինչ որ կարող էր ընել ըրաւ մոլածանել օտարոտի սովորութիւններ և դարձունել զՀրեայս իրենց հայրենի կրօնքէն:

Պագեստինու մէկ մասին վրայ միայն յաջորդեց Հերովդէոսի որդին Արքեղայոս (Մատթ. Բ. 22), որ շատ անգթութիւն գործեց, և իւր թագաւորութեան տասներորդ տարին, Հրեա-

ներէն ամբաստանուելով Օգոստոս կայսեր հրամանաւ արտորուեցաւ Գաղիոյ Վիէնա քաղաքը, ուր և մեռաւ: Այնուհետեւ Հրէաստան եղաւ նահանգ Հռոմայեցւոց, և դրուեցաւ ընդ իշխանութեամբ: Հռոմայեցի կուսակալաց որ կը կոչուէին անդիհիւպատոս, այսինքն՝ փոխանակ բղէշի, և ունէին իշխանութիւն կենաց և մահու: Քրիստոսի քարոզութեան տարիները Հրէաստան և Սամարիա ունէին նոյնպիսի Հռոմայեցի կուսակալներ, մինչ Գալիլեայի վրայ կ'իշխէր Մեծին Հերովդէ որդին: Հերովդէս Անտիպաս, որ կոչուեցաւ՝ չորրորդպետ, և իւր իշխանութիւնն առած էր Հռոմայեցիներէն:

Հին կտակարանին գոցուելէն մինչև Նորոյն սկիզբը, չորքհարիւրամեայ ժամանակին մէջ, որոյ համառօտ պատմութիւնը տուինք, Հրէից բարքը և անոնց յարաբերութիւնը շրջակայ ազգաց հետ մեծ փոփոխութիւն կրեց: Այն խիստ պատուհասը զոր Հրեայք Բաբելոնական գերութեան ատենը կրեցին ազգովին իրենց անհաւատարմութեան համար Եհովայի ծառայութեան մէջ, և այն բաները զորս տեսան կուսպաշտից մէջ իրենց գերութեան երկիրները, շատ նուազեցուցին անոնց միտումն ի կուսպաշտութիւն: Հրեայք պնդով յարեցան այնուհետև իրենց հայրենի կրօնին, և սկսան աւելի փութով կարգալ իրենց սրբազան գիրքերը: Ազգը ցրուած էր, և տաճարը երթալ շատ դժուարին. ոյս պատճառաւ թէ՛ Պաղեստին և թէ՛ ուրիշ երկիրներ ժողովրդանոցներ հաստատուեցան շատ քաղաքներու մէջ ուր Հրեայ կար: Այս ժողովրդանոցաց նպատակն էր յառաջ տանել Սուրբ գրոց գիտութիւնը, և կրօնական պաշտամանց անխափան կատարուելուն նպատակ: Բոլոց այս ժամանակին դէպ ի վերջ ժողովրդանոցաց և տաճարին կրօնական պաշտամունքը եղաւ մեծաւ մասամբ ծիսական և արտաքին միայն: Ճշմարիտ բարեպաշտութեան հոգին պակաս էր: Հրեայք Աստուծոյ խօսքին հոգևոր իմաստը հասկնալու եռանդը կորուսած ըլլալով, միտ կը դնէին մանաւանդ ծէսերու և արարողութեանց և վերացեալ խնդիրներու: Այլևայլ աղանդներ կ'լան: Առաջինն էր Փարիսեցւոց աղանդը, որ այսպէս կոչուեցաւ Երբայեցի-

րէն Բերաւիւմ բառէն որ կը նշանակէ «բաժնուած» կամ «զատուած»: Փարիսեցիք սաստիկ նախանձախնդիր էին օրէնքին մասնը մանր պատուէրներուն պահպանութեան, բայց այն պատուէրները կը մեկնէին ժերոց աւանդութիւններով զորս անգիր օրէնք կը համարէին, և անոնցմէ շատ բաներ կը յաւելուին զբաւար օրինաց վրայ: Այսպէս ընելով շատ անգամ, ինչպէս կը յիշեցնէ անոնց Քրիստոս, կը խափանէին Աստուծոյ օրէնքն իրենց աւանդութիւններուն համար (Մարկ. Է. 13): Փարիսեցւոց հակառակն էր Սադուկեցւոց ազանդը: Սադուկեցիք օրէնքը կը մեկնէին ըստ այնմ որ իրենց գաղափարին համեմատ բանաւոր էր, և կ'ուրանային աւանդութեան հեղինակութիւնը. կ'ուրանային նաև օրինաց մէջ սուտըուած վարդապետութեանց անգամ մէկ մասը, զոր օրինակ հանդերձեալ կենաց վերաբերեալ վարդապետութիւնը: Ոմանք կը կարծեն թէ Սադուկեցի անունը կլած է Սադոգով կոչուած քահանայէն որ Դաւթի ժամանակ նշանաւոր անձ մըն էր (Գ. Թագ. Ա. 32-45), և որոյ ազգատոհմը միշտ մեծ ազդեցութիւն ունեցած կը թուի (Բ Մ. ԼԱ. 10: Եզեկ. Խ. 46, ԽԳ. 19, ԽԴ. 15, ԽԸ. 14): Անոնք որ այս կարծիքն ունին՝ կ'ըսեն թէ Սադոգկայ սերունդը կամ Սադոգկեանք ազնուապետական ցեղ էին, և թէ անոնցմէ կրնայ տարածուած ըլլալ Սադոգկեան կամ Սադուկեցի անունը նաև անոնց բարեկամաց կամ կուսակիցներուն: Երբորդ ազանդն էր Էսսէնեանց ազանդը որ օրինաց ճիշդ պահպանութեան կողմանէ նման էր Փարիսեցւոց ազանդոյն, միայն կը պնդէին Էսսէնեանք թէ օրէնքին պատուէրներուն նշանակութիւնը պէտք էր փնտռել աւանանութեան մէջ խորին խոկմամբ: Անոնցմէ ոմանք կանոն ըրած էին օրուան մէկ երբորդն ազոթքի նուիրել, մէկ երբորդը՝ ուսման, և մէկ երբորդն՝ աշխատութեան: Էսսէնեաններէն ոմանց կեանքը միայնակեցուած էր:

Մարկոսի Գլ. ԺԲ. 13, և Մատթէի Գլ. ԻԲ. 16. համարներուն մէջ յիշուած Հերոդեանց ազանդը քաղաքական էր մանաւանդ քան կրօնական: Ասոնք առած էին այս անունը Հերոդէա թագաւորէն և կը պաշտպանէին անոր ջանքը որ

էր Հրէից մէջ օտար սովորութիւններ մտնանել, հեթանոսաց կուսապաշտական սովորութիւններն անգամ: Այս էր թե՛րևս Հերովդէտի խմբը որմէ կը զգուշացնէր Քրիստոս, Մարկ. Ը. 15: Հրէից մէջ կար նաև ուրիշ աղանդ կամ կուսակցութիւն մը: Առոնք Գալիլեացի կը կոչուէին Գալիլեացի Յուդայէն որ աշխարհագրին ժամանակ առաջնորդ եղած էր ապստամբութեան մը, ինչպէս կը յիշուի Գամաղիէի խօսքին մէջ Հրէից ատեանին առջև (Գործ. Ե. 37): Այս կուսակցութիւնը շատ հակառակ էր օտարաց իշխանութեան, և միշտ կը ջանար ժողովուրդն ապստամբեցունել Հռոմայեցւոց դէմ: Որովհետև Քրիստոս Գալիլեայէն էր, անոր թշնամիները Երուսաղեմի մէջ կը ջանային կարծեցնել թէ Յիսուս այն Գալիլեացի կուսակցութեան գաղափարն ունէր: Նոր Աքտակարանին մէջ յաճախ յիշուած դպիւրք կրօնական աղանդ չէին, այլ դաս մը մարգիկ որ օրէնքը կը սորվեցնէին, անոր պատուէրները կը բացատրէին, և երբ կը խնդրուէր, կը գրէին նաև օրէնքէն ձեռագիր օրինակներ: Ուստի և շատ անգամ կը կոչուէին օրինականք կամ վարդապետք օրինաց: Նորահաւատ անունը (Մատթ. Իգ. 15, և Գործ. Բ. 11, Զ. 5, ԺԳ. 43) կը արուէր այն օտարականաց որ կ'ընդունէին Հրէական կրօնքը և անոր պատուէրներուն կը հնազանդէին: Հնուց ի վեր կային այսպիսի նորընծայք Հրէից դրացի հեթանոս ազգերէ, և անոնցմէ շատերն անտարակոյտ որտի մաօք ընդունած էին նոր կրօնքը: Բայց Քրիստոսի ժամանակ Հրէից կրօնքին հասարակ վարդապետներէն շատերը կեղծաւոր և չար մարգիկ էին, և անոնց միջոցաւ Հրէութեան գարձողներն հարկաւ լաւագոյն չէին քան իրենց վարդապետները: Քրիստոս կը վկայէ այս դատու վարդապետներուն ապականութեան, և անոր պատճառը կը ցուցնէ:

Արդէն յիշեցինք թէ ինչպէս Իսրայելի տասն ցեղից և Յուդայի ու Բենիամինի երկու ցեղերուն գերութեան ատենը տաւր ցեղերէն շատերը միացան վերջին երկու ցեղերուն հետ, և թէ ինչպէս այնուհետև Իսրայելի և Յուդայի թագաւորութեան մէջտեղ տիրող հին խորութիւնը վերցաւ: Բայց և այնպէս արդէն Սամարիոյ մէջ կազմուած էր Ասորեստանի

Թագաւորին կողմէն զրկուած գաղթականաց սէրունդէն ժողովուրդ մը Հրեաներէն տարբեր : Տես Թագաւորաց Գ. զրոյց ժե. գլուխը : Քաջտնայ մը զրկուեցաւ սորվեցնելու անոնց "Երկրին Աստուծոյն" այսինքն Իսրայելի Աստուծոյն Եհովայի "Օրէնքը" : Բայց այն ժողովրդեան կրօնքը եղաւ Տրեութեան և կապալաշուութեան խառնուրդ մը : Ասոնք Հրէից որբազան գիւղքերէն կ'ընդունէին Մովսէսի Տինգ գիւղքերը միայն, մնացեալները կը մերժէին : Գարիզին լեռը շինեցին նաև տաճար մը որ մնաց մինչև իր 200 նի. քն. գՔր. : Փոքր մնացորդ մը կայ ցարդ ասոնցմէ, որ և իրենց համար պահած են հնգամասանին սրինակները : Նոր կտակարանը ստեպ կը յիշէ քահանայապետներէ, գպիրներէ և ժողովրդեան ծերերէն բազկացեալ ազգային ժողով մը (Ղուկ. ԻԲ. 66, Գործ. Ե. 21, այլ. հնգրձ.) : Այս ժողովն ընդհանրապէս կը կոչուի Սինետրիոն Յունարէն բառով, որ կը նշանակէ ժողով : Ոչ միայն կրօնական, այլ և աշխարհական գործեր կը վերաբերէին այս ժողովին իրաւասութեան : Ժողովին անդամներն էին 70 կամ 72, և սկիզբը, ըստ կարծեաց ոմանց, այն եթեանասուն ծերերէն էր զորս Մովսէս Աստուծոյ հրամանաւն ընտրեց անպատին մեջ (Թու. ԺԱ. 16) : Բայց Հրէից Թագաւորաց ժամանակի պատմութեան մէջ այսպիսի ժողով մը յիշատակութիւնը չկայ : Ընդհանրապէս կը կարծուի թէ այս ժողովը հաստատուեցաւ Բարեշնի գերութեան դարձէն ետքը :

Արդէն յիշուեցաւ թէ ինչպէս, Հին կտակարանին գոցուելէն մինչև Նորոյն սկիզբը, Հրեայ գաղթականութիւններ հաստատուեցան այն ատենուան ծանօթ աշխարհին այլևայլ մասերուն մէջ : Այս գաղթման հետևանց մին սա եղաւ որ Հրէից և ուրիշ ազգաց մէջտեղ յարաբերութիւնն ընդարձակեցաւ : Եւս աւելի ընդարձակեցաւ այս յարաբերութիւնը, երբ օտար զօրք մտաւ Հրէաստան, և Հրեայք նուտճեցան նախ Եգիպտոսի, ապա Ասորոց երկրին Թագաւորներէն, և հուսկ ապա Հռոմայեցիներէն : Այս բաները պատճառ եղան որ Հրեայք, Պաղեստինու մէջ անգամ, սկսան շատ տեղ Յունարէն լեզուն գործածել փոխանակ Ասորերէնին զոր Բաբելոնի գերութենէն ետքը սովորեցան գործածել : (Տես Ա.

Մաս . էջ 7-10) : Այս միջոցին էր որ Հին Կտակարանը Թարգմանուեցաւ Յունարէնի , և շատերը որ Հրեայ չէին՝ կրցան տեղեկանալ Հրէից գիրքերուն , իմացան թէ ինչպէս Հրեայք կը սպասէին դալստեան Մեսիային , և սկսան նաև իրենք տաժեւ այն յոյսը : Հրէից այս ջրուու մը ուրիշ ազգաց մէջ , Յունարէն լեզուին ընդհանուր գործածութիւնը , և այն ընդհանուր ծանօթութիւնը Հրէից գաղափարներուն և տէնկալութեանց՝ շատ կարևոր պատրաստութիւն էին Աւետարանին տարածման , երբ ի լրման ժամանակաց Մեսիայն գար աշխարհը :



ԳԼ . ԺԹ .

Նոր Կտակարանին գիրքերը

Այս գործին առաջին հատորին մէջ արդէն ընդարձակօրէն խօսուեցաւ թէ Նոր Կտակարանին գիրքերն ինչ լեզուա գրուեցան (Տես Ա . Մաս , էջ 9 , 10) , ինչպէս հաւաքուեցան և պահուեցան այն գիրքերուն ձեռագիրները , թէ ինչ եղանակաւ վաւերական գրուածները զատուեցան անվաւերներէն , կամ ուրիշ բառերով ըսենք , ինչպէս կազմուեցաւ Նոր Կտակարանին կանոնը , նաև թէ ինչ փաստերով կ'ապացուցուին կանոնական գրոց հարազատութիւնը , արժանահաւատութիւնը և աստուածային հեղինակութիւնը (Տես Ա . Մաս . ԳԼ . Գ-Է .) : Առտտ ապացոյցներ կան թէ Նոր Կտակարանին բոլոր գիրքերը որ հիմա կանոնական կը համարուին՝ այնպէս համարուած էին նաև Քրիստոնէական եկեղեցւոյ նախկին ժամանակները , և թէ Հին Կտակարանին գիրքերուն հետ էին այն աստեղծական Քրիստոնէից համար Աստուծոյ մըտաց և կամօքը կատարեալ յայտնութիւնը : Որոգիներս որ Գ . դարուն մէջ ծաղկեցաւ՝ Նոր Կտակարանին գիրքերը կը նմանցնէ փողերու , նման այն փողոց զորս հնչեցուցին քահանայք , երբ Իսրայելացիք կը գառնային Երեքովի բոլորաբը : Որոգիներս հոն կը դնէ նաև այն գիրքերուն ցուցակը : "Նախ" ,

կ'ըսէ, «Մատթէոս իր Աւետարանին մէջ հնչեցուց իւր սրբազան փողը. նոյնպէս Մարկոս, Ղուկաս և Յովհաննէս հրնչեցուցին իրենց քահանայական փողերը: Նաև Պետրոս հրնչեցուց բարձրաձայն երկու՝ փող իր երկու թուղթերովը. նոյնպէս Յակոբ և Յուդա: Իսկ Յովհաննէս աւելցուց նաև իր թուղթերը և Յայտնութիւնը: Նոյնպէս Ղուկաս Գործոց առաջինը պատմութեամբ: Հուսկ քան զամենեւորին կու գայ այն մարդը որ ըսաւ. «Աստուած յետիններ ըրաւ մեզ առաքեալներս», և հնչեցունելով իւր շորեքտասան թղթոց փողերը, կործանեց ի հիմանց Երկրովի պարիսպները և կու պաշտութեան բոլոր մեքենաները և փիլիսոփայից ազանդները:»

Այս նշանաւոր վկայութեան մէջ ունինք Նոր կտակարանին գրոց ամբողջ ցանկը, կամ՝ գէթ յայտանի ակնարկութիւն անոնց ամենուն: Ասկէ յայտնի կը տեսնենք նաև թե ինչ յարգ կ'ընծայուէր այն գիրքերուն Որոգինէսի ժամանակ: Այս վկայութիւնը մտնուածն այնու պատուական է որ, Որոգինէս այն գիրքերն անուզողակի կերպով միայն կը յիշէ, այսինքն՝ մինչդեռ անոր բուն նպատակն ուրիշ բան էր ոչ թէ Նոր կտակարանին գրոց ցանկը տալ:

Հիմա կը սկսինք տալ քանի մը համառօտ անդեկութիւններ Նոր կտակարանին այլևայլ գիրքերուն վրայ, ինչպէս Հին կտակարանիններուն վրայ արդէն տուած ենք:

Մատթէի Աւետարանը

Այս Աւետարանին հեղինակն էր Մատթէոս առաքեալ որ կը կոչուի նաև Ղևի (Մատթ. Թ. 9, Մարկ. Բ. 14, Ղուկ. Ե. 27-32)՝ Ղևի թերևս անոր նախկին Եբրայերէն անունն էր, և Մատթէոս անունն առաւ երբ եղաւ առաքեալ, ինչպէս Սաւուղ առաք. Պօղոս անունը: Մատթէոս մաքրաւոր էր Հռոմայեցոց կառավարութեան կողմէն (Մատթ. Ժ. 3, Մարկ. Բ. 14, Գ. 18, Ղուկ. Ե. 27, 29, Զ. 15, Գործ. Ա. 13), երբ առաքեալ եղաւ: Կ'երևի թէ ունէր բաւական հարստութիւն (Ղուկ. Ե. 29), և հաւանականապէս գիտէր Յունարէն և Եբրայեցերէն:

կամ Արամերէն լեզուները, քանզի իր պաշտօնին մէջ պէտք ունէր այս երկու լեզուաց: Նախնի Քրիստոսնայ մատենաագիրը, Բ. դարէն մինչև Դ. դար, ինչպէս Պոպրիսա, Եւսերիոս և Հերոնիմոս, կ'ըսեն թէ Մատթէոս իր Աւետարանը գրեց Երրայերէն, այսինքն արեւմտեան Արամերէն լեզուաւ, զոր առհասարակ կը գործածէին Պաղեստինու Հրեայք, բայց վերոյիշեալ հեղինակներն ըսած չեն, և թերևս չէին գիտեր թէ ով թարգմանեց այն գիրքը Յունարէնի: Նոյնպէս նախնի մատենագիրներէն ոչ ոք տեսած կ'երևի Մատթէի Աւետարանին Երրայեցերէն բնագիրը, և ոմանք կը կարծեն թէ Մատթէի Երրայեցերէն Աւետարանը զոր նախնի մատենագիրք կը յիշեն՝ անկանոն Աւետարան էր զոր կը գործածէին Երեմեանք և Նազովրեցիք, և կը կոչուէր Հրէից Աւետարան: Սակայն ուրիշ շատերը կը կարծեն մանաւանդ թէ, Մատթէոս իր Աւետարանը գրեց Հրէից սովորական լեզուաւ անոնց պիտոյցը, համար, և նոյնը միանգամայն Յունարէն գրեց, և կամ անոր բնկերներէն մին Մատթէի Երրայեցերէն Աւետարանը շատ հին ժամանակ թարգմանեց Յունարէնի, և թէ այս Յունարէնն ընդհանուր գործածուելուն համար մնաց, իսկ Երրայեցերէնն այնպէս չգործածուելով վերջապէս անհետ եղաւ: Մատթէի Աւետարանին Յունարէն բնագիրը կարգաջոզք գիտած են որ, երբ ինք աւետարանիչը վկայութիւն մը կը բերէ Հին կտակարանէն, կը թարգմանէ զայն Երրայեցերէնէն, բայց այն վկայութիւնները զորս Քրիստոսի խօսքերուն մէջ նոյն իսկ Քրիստոստ գործածուած կը յիշէ՝ Եթմանասից Յունարէն թարգմանութենէն առնուած են: Այս բանը կրնայ ապացոյց համարուիլ թէ Մատթէի այժմու Յունարէն Աւետարանը գրած է նոյն ինքն Մատթէոս, որ Քրիստոստ բերուած վկայութիւնները ստիպուած էր յիշել այնպէս ինչպէս լրած էր, բայց իր վկայութիւնները կրցաւ առնել ուղղակի Երրայեցերէն բնագրէն: Սակայն Մատթէի Աւետարանը թէ Երրայեցերէն գրուած ըլլայ ի սկզբան և թէ Յունարէն, հաւանականապէս աւելի կանուխ գրուեցաւ քան միւս Աւետարանները: Յայտնի է նաև թէ գրուեցաւ յատկապէս Հրէից համար, և թէ աւետարանչին գլխաւոր նպատակն էր ցուցնել

Հրէից թէ Յիսուս Նազազդեցին Հրեայ ազգին ի վաղուց խոստացեալ Մեհիայն և թագաւորն էր: Այս նպատակին համար է թերևս որ, առաջին գլխոյն մէջ դրուած է Յիսուսի ազգաբանութիւնը մինչև Դաւիթ և Աբրահամ: Նոյնպէս այս նպատակաւ Մատթէոս յաճախ վկայութիւն կը բերէ մարգարէներէն Մեհիայի համար, և կը ցուցնէ այն մարգարէութեանց կատարուած ըլլալը Յիսուսի վրայ: (Տես Գլ. Ա. 22, Բ. 15, 23, Գ. 14, Ը. 17, ԺԲ. 17, ԺԳ. 35, ԻԱ. 4, ԻԷ. 35, այլովքն հանգերձ:) Դարձեալ այս նպատակաւ է որ «Երկնից թագաւորութիւն», «Առաստծոյ թագաւորութիւն» խօսքերն ստեղծ կը գործածուին Մատթէի Աւետարանին մէջ: Հրեայք սովոր էին այս բառերով նշանակել երկրի վրայ Մեհիայի ձեռքով հաստատուելու իշխանութիւնը: Նաև որովհետև յատկապէս Հրէից կը գրէր Մատթէոս, հարկ չհամարեցաւ միւս աւետարանչաց պէս Հրէից սովորութիւնները նկարագրել: Թերևս նոյն պատճառաւ երկոյն կը պատմէ Դպրաց և Փարիսեցւոց կեղծաւորութեան և զիրենք արդար համարելուն գէմ Բրիտանոսի մեղադրանքը, և անոր մարգարէութիւնը Երուսաղէմի կործանման վրայ: Մատթէի Աւետարանին մասնաւոր մէկ յատկութիւնն ալ այս է որ ստեղծ և ընդարձակ կը յիշէ Բրիտանոսի խօսքերը և քարոզները, զորօրինակ լերան քարոզը և Ի., ԻԲ. և ԻԵ. գլուխներուն առաջինները: Թերևս Մատթէոս ի բնէ մասնաւոր առաջանդ ունէր այսպիսի գործի, և Հոգին Սուրբ գործածեց զՄատթէոս պահել եկեղեցւոյ համար Բրիտանոսի խօսքերուն շատերը որ, առանց այորբ, կորսուած պիտի ըլլային:

Մարկոսի Աւետարանը

Այս Աւետարանին հեղինակն էր Յովհաննէս, մականուանեալ Մարկոս, որ կը յիշուի Գործ. ԺԲ. 12, 25, ԺԳ. 5, 13 և ԺԵ. 37, 39, դարձեալ կող. Գ. 10, Բ ՏՅմ. Գ. 11, և Յ. Պետ. Ե. 13: Մարկոսի մայրը, Մարիամ, կը բռնակէր Երուսաղէմ, և անոր տունը գնաց Պետրոս երբ ազատեցաւ բանտէն: Պետրոս Մարկոսի համար կըսէ թէ իւր որ-

գին էր (Ա Պետ. Ե. 13). ասկէ կրնայ թերևս հասկցուիլ թէ Մարկոս Քրիստոսի հաւատաց Պետրոսի քարոզութեամբ :

Մարկոս ժամանակ մը ընկեր և օգնական եղաւ Պողոսի (Գործ. ԺԲ. 25), և թէպէտ Պողոս ժամանակ մը տօգոս եղաւ Մարկոսի վարմունքէն, յետոյ բարձր համարում ունեցաւ անոր վրայ (Կող. Դ. 10, Բ Տիմ. Դ. 11 և Փիլիմ. 24) : Կ'երևի թէ Մարկոս Պետրոսի հետ էր երբ Պետրոս իւր առաջին թուղթը կը գրէր (Ա Պետ. Ե. 13) : Ետին Քրիստոսի մատենագիրը կը յիշեն զՄարկոս իր և ընկեր և թարգման Պետրոսի, և կ'ըսեն թէ Մարկոս իր Աւետարանին մէջ գրեց ինչ որ ատեն ատեն լրած էր Պետրոսէն Քրիստոսի վարուց և վարդապետութեան վրայ, և գրեց նոյն առաքելոյն առաջնորդութեամբ : Ոմանք կը կարծեն թէ Մարկոսի հետ իւր միաբան գործակցութիւնը կ'աւանդուէր Պետրոս Բ. թըղթոյն Ա. 15, 16 համարներուն մէջ : Յուստինոս Պետրոսի Աւետարան կը կոչէ Մարկոսի Աւետարանը : Ոմանք ալ կը կարծեն թէ Մարկոսի Աւետարանին ԺԴ. 51 և 52 համարներուն մէջ յիշուած երիտասարդը նոյն ինքն Մարկոս էր :

Մարկոսի Աւետարանը նշանաւոր է սա կողմանէ որ իր պատմութեան գէպքերուն մասնը պարագաները կու ապ, ուստի կ'երևի թէ հեղինակը կամ ակնաստեոս էր, և կամ ակնաստեոս անձէ մը, թերևս Պետրոսէն լսելով ճշգիւ գրած է : Տես օրինակի համար, Գաղաթացաց երկրին մէջ այստահարին հանդամանաց (Մարկ. Ե. 3, 4, 5), և Քրիստոսի բարոտին վրայ գթալուն (Մարկ. Ա. 40, 41), երիտասարդին մատնաւոր սէր ցուցնելուն (Մարկ. Ժ. 21), և կափառնայում մի ժողովրդանոցին մէջ իր բոլորտիքը նստողներուն վրայ բարկութեամբ նայելուն (Մարկ. Գ. 5) նկարագիրները :

Մինչ Մատթէոս, ինչպէտ արդէն ըսուեցաւ, Քրիստոսի խօսքերը երկարօրէն կը յիշէ, Մարկոս մանաւանդ Քրիստոսի կենաց գէպքերը կը պատմէ մասնը, և, մինչ Մատթէոս կը գրէր Հրէից համար, Մարկոս գրեց հեթանոսաց համար, ուստի և կը յիշէ շատ բաներ զորս յիշելու պէտք չունէր, և թէ Հրէից համար գրէր, զորօրինակ թէ Փարիսեցիք սովորութիւն ունէին ծով պահել, թէ Պատերի տօնին բազարը կը գոր-

ծածուէր, թէ Զիթենեաց լեռը տաճարին գիմացն էր, այլովքն հանդերձ:

Թէ երբ գրուեցաւ այս Աւետարանը՝ չի գիտցուիր: ԺԳ. գլխոյն մէջ Երուսաղեմի աւերման վերաբերեալ մարգարեաւ թիւնը կը յիշուի իբրև դեռ չկատարուած, և մանաւանդ 14 համարին մէջ ըսուած է, "Ով որ կարգայ" թող հասկընայ," որպէս թէ գրողը կը հրաւիրէ ընթերցողաց ուշադրութիւնն այն գիտաց գալուն նշաններուն, ուստի և կը կարծուի թէ այս Աւետարանը գրուեցաւ յառաջ քան Երուսաղեմի աւերը որ պատահեցաւ յամի Տն. 70: Ընդհանուր կարծիքն այս է թէ գրուեցաւ Քրիստոսի թուականին 62 և 70 տարիներուն մէջևեղ: Ոսկերերան կ'ըսէ թէ գրուեցաւ Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքը: Կղեմէո, Եւսեբիոս և Յերոնիմոս կ'ըսեն թէ Հռոմ գրուեցաւ: Կարծիքներն յայսմ մտարան են թէ գրուեցաւ այնպիսի տեղ մը ուր Պետրոս կրնար տեսնել և սրբազրել Մարկոսէ գրուածները, և թէ այս Աւետարանին գլխաւոր նպատակն էր իմացնել հետմանոց Գըրիստոսի վարքը, և բոլոր ազգաց համար պատրաստուած գրկութիւնը: Թէ հեղինակն ունէր այս նպատակը՝ կը մակարերուի նոյն իսկ Աւետարանին այլևայլ տեղերէն: (Տես Գլ. ԺԱ. 17, և ԺԲ. 9):

Ղուկասոս Աւետարանը

Երրորդ Աւետարանին հեղինակը Ղուկաս բժիշկ էր: (Տես Կող. Գ. 14): Ղուկասու անունէն և Պողոսի յիշելէն զնա այն անձանց կարգը որ թլփատու թենէ չէին (Տես Կող. Գ. 11, 14), կը մտկաբերուի թէ այս Աւետարանիչն ի ծնէ հետմանոց էր: Գրութեան գեղեցիկ սճը կը ցուցնէ թէ հեղինակը ուսեալ և դաստիարակեալ էր: Անոր բժշկական արուեստին տեղեկութիւնը կը տեսնուի մանր և որոշ կերպով նկարագրելէն հիւանդութիւնները և անոնց դարմանումը Քրիստոսի և առաքելոց ձեռքով: Պողոս առաքելոյն խօսքէն կ'երևի թէ Ղուկաս անոր հետ էր Հռոմ (Կող. Գ. 14, Փիլիմ. 24), և Գործոց առաքելոց մէջ "Մենք" բառին գործածուե-

լէն այն ճամբորդութիւններուն պատմութեան մէջ զոր ըրաւ Պօղոս Տրոփայէն Մակեդոնիա (Գործ. ԺԶ. 10) մինչև անոր Հռոմ հասնելն իբրև բանտարկեալ՝ կը մտակարերուի թէ Ղուկաս ուղեկից էր Պօղոսի բոլոր այն ճամբորդութեանց մէջ, և որովհետև Ղուկաս կը յիշուի Տիմոթէոսի Բ. Թըզթոյն մէջ (Գլ. Գ. 11) որ գրուեցաւ Պօղոսի վախճանին շատ մօտ, և, ինչպէս կը կարծուի, անոր երկրորդ բանտարկութեան միջոցին ի Հռոմ, կը թուի թէ Ղուկաս մնաց Պօղոսի հետ մինչև ի կատարած կենաց առաքելոյն: Շատերը կը կարծեն թէ Ղուկասու Աւետարանը գրուեցաւ ընդ անտրութեամբ Պօղոսի, ինչպէս Մարկոսինը գրուած էր ընդ անտրութեամբ Պետրոսի:

Արդարև Ղուկասու Աւետարանին (Գլ. ԻԲ. 19, 20) պատմութիւնը Տէրունական ընթրեաց հաստատուելուն վըայ մեծ նմանութիւն ունի նոյն ընթրեաց հաստատութեան պատմութեան հետ զոր կը կարդանք Պօղոսի առ Կորնթացիս առաջին թղթոյն մէջ (Ա Կորնթ. ԺԱ. 23-25): Հաւանականութեան դէմ չէ ենթագրել թէ Ղուկաս երկար ատեն ընկեր ըլլալով Պօղոսի, փոքր ի շատէ օգնութիւն գտաւ Պօղոսէն, բայց պատմութեան նիւթը չէր կրնար Պօղոսէն առնել, քանզի առաքեալը ականատես զկայ չէր Քրիստոսի կենացը, և Ղուկաս ինք կ'ըսէ թէ այն դիպաց վըայ իր ծանօթութիւններն առած էր ականատես զկաներէ (Տես Ղուկ. Ա. 2, 3), այսինքն յառաքելոց և ուրիշ աշակերտներէ որ Քրիստոսի հետ էին անոր պաշտօնին բոլոր ժամանակը: Աւետարանը, ինչպէս նաև Գործոց առաքելոց գիրքը զոր նոյն Ղուկաս գրած է, ընծայուած է թէօփիլոս անուն անձի մը: Այս անձը ծանօթ չէ, յայտնի է սակայն թէ նշանաւոր մէկն էր, քանզի Ղուկաս անոր "պատուական" արտօնը կու տայ: Գրելով անոր Քրիստոսի կենաց գէպքերուն և առաքելոց գործքերուն վըայ՝ Հրէաստանի, Փոքուն Ասիոյ և Յունաստանի տեղերը կը յիշէ այնպիսի մանր պարագաներով զոր տալ հարկ չէր այն երկիրներուն արդէն լաւ տեղեկութիւն ունեցող անձի մը. բայց երբ Սիկիլիոյ և Իտալիոյ վըայ կը խօսի, իբրև իր բարեկամին արդէն ծանօթ տեղեր համառօտիւ:

կ'անցնի առանց մանր պարագաներ յիշելու : Ասկէ սմանք կը կարծեն թէ Թէոփիլոս խաարացիէր, թերևս Հոսմ քաղքէն ուր ծանօցած էր զնա Ղուկաս : Ղուկասու Աւետարանին Ա. գլխոյն 4 բարդ համարէն կրնայ հասկցուիլ թէ Թէոփիլոս արդէն ինչ ինչ սորված էր Քրիստոսի վրայ, և թէ Ղուկասու նպատակն էր հաստատել զնա ի հաւատոս : Մտուգիւ չի գիտցուիր թէ երբ և ուր դրեց Ղուկաս իր Աւետարանը : Գործոց առաքելաց մեջ Ղուկաս կը վերջացնէ Պողոսի պատմութիւնը յիշելով անոր երկամեայ բանտարկութիւնն ի Հրոսմ, այլ թէ ինչ այնուհետև պատահեցաւ չըսեր : Այս կը ցուցնէ թերևս թէ Գործոց Առաքելաց գիրքը գրուեցաւ յիշեալ բանտարկութեան անմիջապէս վերջը, այն է յամի Տն. իրբ 63, քանզի եթէ աւելի ուշ գրուած ըլլար, յետնագոյն գիպաց վրայ փոքր ի շատե տեղեկութիւն մը կու տար : Արդ որովհետև Գործոց Ա. 4 համարէն յայտնի է թէ Աւետարանը քան Առաքելաց գործքերն յառաջ գրուեցաւ, ապա պարտի գրուած ըլլալ կամ այն բանտարկութեան ատեն նախ քան գործոս առաքելաց, և կամ յառաջագոյն քան զբանտարկութիւնն : Շատերը կը կարծեն թէ գրուեցաւ կեսսարիս այն երկու տարուան միջոցին (58-60) մինչ Պողոս և անոր բնկերը Ղուկաս հոն կը գտնուէին (Գործ. ԻԳ. 27) :

Ղուկասու Աւետարանին յատկապէս Թէոփիլոս անուն անձի մը նուիրուած ըլլալէն պէտք չէ կարծել թէ այն Աւետարանը յօգուտ յիշեալ անձին միայն էր : Նոյն իսկ Աւետարանին շատ տեղերէն կը ցուցուի թէ գրուեցաւ բոլոր մարդոց, մանաւանդ հեթանոսաց համար : Քրիստոսի ազգահամարը Ղուկասու Աւետարանին մէջ ոչ թէ, Մատթէոսի ազգարանութեան պէս, կ'երթայ մինչև Աբրահամ, Հրէից նախահայրը, այլ մինչև ցԱզամ աստուածատեղծ և նախածնող համբէն մարդկային ազգին :

Ղուկաս կը յիշատակէ յատկապէս թէ Քրիստոս լոյս էր հեթանոսները լուսաւորելու, և թէ անոր փրկութիւնը պատրաստուած էր բոլոր ժողովուրդներուն առջևը (Ղուկ. Բ. 31, 32) : Քանի մը առակներու մէջ որ Ղուկասու Աւետարանին մէջ միայն կը գտնուին, ինչպէս են բարի Սամարացւոյն, կու-

բուսեալ ոչխարին, կորուսեալ դահեկանին և անառաղ որդւոյն առակները, Աստուծոյ սէրը հեթանոսաց պէս Աստուծոմէ բաժնուելով հեռացողներուն վրայ ցուցուած է շատ քաղցր և ազգու կերպով: Ընդհանրապէս կը կարծուի թէ Ղուկասու Աւետարանը դէպքերը ժամանակագրական կարգու և աւելի ճշգիւ յառաջ կը բերէ քան միւս Աւետարանները, թէպէտ Ղուկաս կը թողու քանի մը դէպք զոր յիշած են Մատթէոս և Մարկոս, և երբեմն միացուցած կը թուի այլևայլ գործքեր և խօսքեր, վասն զի մօտ նմանութիւն ունէին իրարու, ոչ թէ վասն զի միեւնոյն ժամանակ պատահած էին: Այսպէս են Թ.-ԺԸ. գլուխներուն մէջ յիշուած գործքերը և խօսքերը: Արդէն ըսուեցաւ թէ Մատթէոս ընդարձակօրէն մէջ կը բերէ Քրիստոսի խօսքերը, իսկ Մարկոս անոր գործքերը կը պատմէ երկարօրէն: Ղուկասու Աւետարանին մասնաւոր յատկութիւնն է յիշել թէ Քրիստոս ինչ խօսակցութիւններ ըրաւ և ինչ առիթներէ շարժեալ, և թէ ներկայ գտնուողներն ինչ գիտողութիւններ ըրին, և ինչ արդիւնք յառաջ եկաւ: Ղուկասու Աւետարանին այս յատկութիւնը կը տեսնուի վերոյիշեալ Թ. էն մինչև ԺԸ. գլուխներուն մէջ, ուր Քրիստոսի այլևայլ խօսակցութիւնները կը յիշուին: Քրիստոսի ազգաբանութեան վրայ Ղուկասու և Մատթէոսի ազգահամարներուն տարբերութեանց նկատմամբ երկու մեկնութիւն կը տրուի: Մէկ մեկնութեան նայելով Մատթէոս տուած է Քրիստոսի կարծեցեալ հօրը Յովսեփայ ազգահամարը, իսկ Ղուկաս՝ Մարիամինը, բայց Յովսեփայ անունը կը մեծանէ փոխանակ Մարիամն անունան, վասն զի Յովսեփ կը կարծուէր այր Մարիամնու, ուստի և փեսայ Հեղեայ, թեւրևս նաև ժառանգ էր Հեղեայ, քանզի Մարիամ եղբայր չունէր: Երկրորդ մեկնութեան նայելով, երկու ազգահամարն ալ պէտք է համարել, ըստ նկարագրութեան, իբրև ազգաբանութիւն Յովսեփայ որ էր հայրագիր Բիսուօի, և որպէս անունը միայն իբրև հօր անուն կրնար ընդունուիլ ազգային արձանագրութեան մէջ: Այս վերջին մեկնութեան նայելով, երկու ազգահամարներուն մէջ անուանց տարբերութեան պատճառն այս է որ, Մատթէի ազգահամարը մէջ կը բերէ

Քրիստոսի նախնիքը Գաւթի յաջորդող թաղաւորական ճիւղէն, իսկ Ղուկասու ազգահամարը մէջ կը բերէ Յովսէփոյ նախնիքը Գաւթի ուրիշ մէկ ճիւղէն: Ղուկասու ազգահամարին մէջ յիշուած անձինք հասարակ մարդիկ էին ոչ թէ թաղաւորական աստիճանէ: Սակայն այս խնդրոյն վրայ լիուրէ տեղեկութիւն տալ կը վերաբերի Աւետարանի մեկնութեան ոչ թէ ընդհանուր գիպաց վրայ համառօտ տեսութեան մը ինչպէս է այս գիրքը:

Յովհաննու Աւետարանը

Չորրորդ Աւետարանին հեղինակն էր Յովհաննէս Զերեզեայ որդին, Բեթսայիդացի ձկնորս մը Գալիլեայի ծովուն արևմտեան եզերքէն: Բեթսայիդա շատ հեռու չէր կափառնայու մէն (Մատթ. Գ. 21, Մարկ. Ա. 19, 20, Ղուկ. Ե. 10, 41): Յովհաննու մօրն անունն էր Սողոմէ: (Բաղդասաէ Մատթ. ԻԷ. 56 ը Մարկ. ԺԵ. 40 ին հետ): Անոր հայրը Զերեզէոս ունէր վարձկաններ (Մարկ. Ա. 20), և մայրը Սողոմէ այն կանանցմէ էր որ Քրիստոսի ետեւէն կ'երթային Գալիլեայէն և անոր կը սպասաւորէին (Մարկ. ԺԵ. 40, 41): Ասկէ կրնայ մակարերուիլ թէ Յովհաննու ծնողքը հորուսա էին: Տարակոյս չկայ թէ Յովհաննէս զինք կ'ակնարկէ, երբ կ'ըսէ, "Աշակերտը որն որ Յիսուս կը սիրէր:" Յիսուս մասնաւոր կերպով իրեն մտերիմ ըրած էր զՅովհաննէս, ինչպէս նաև զՅակոբոս Յովհաննու եղբայրը և զՊետրոս: Այս երեք առաջեալք միայն ականատես եղան Յիսուսի այլակերպութեան և տաղնապին զոր կրեց Յիսուս պարտէզին մէջ (Մատթ. ԺԷ. 1, ԻԶ. 37): Քրիստոսի իր մայրը խաչին վրայ Յովհաննու յանձնելը կրնայ Տէրօջը կողմանէ իբր վստահութեան մասնաւոր նշան համարուիլ առ Յովհաննէս (Յովհ. ԺԹ. 25, 26): Թերևս Յովհաննու բարքը, ինչպէս նաև Քրիստոսի հետ իրրև մտերիմ սիրով և վստահութեամբ տեսնուիլը, պատճառ եղան որ Յովհաննէս սորվեցաւ և ապա յայտնեց աշխարհի իւր Աւետարանով Քրիստոսի հոգևոր և խորին տեսութիւններն և անոր յարաբերութիւնն առ հաւատացեալը: Գործ.

Ը. 14-25 և Գաղ. Բ. 1-9 համարներուն մէջ Յովհաննու յիշուելէն կը տեսնուի որ այս առարկայը գէթ մինչև Պողոսի և Բառնարայ պյցելութիւնը յԵրուսաղէմ (յամի Տն. 50) մնաց հոն, այսինքն յետ համբարձման Քրիստոսի իբր 17 տարի: Բայց որովհետև անկէ իբրև 8 տարի ետքը Պողոսի Երուսաղէմի մէջ հալածուելուն և բանաստեղծութեան պատմութեան մէջ (յամի Տն. 58) Յովհաննէս ամենևին չի յիշուիր, կրնայ կարծուիլ թէ այն ութ տարուան միջոցին Յովհաննէս մեկնած էր Երուսաղէմէն: Հին Քրիստոսեայ մատենագրաց մէջ շատ բան ըսուած է Յովհաննու աշխատութեանց վրայ Եփեսոս, ուր կը թուի թէ Յովհաննէս գնաց բաւական ժամանակ ետքը: Յիշեալ մատենագրաց նախելով Յովհաննէս մեռաւ Եփեսոս իբր հարիւրամեայ, մտ ի վախճան առաջին դարուն յետ Քրիստոսի: Ընդհանուր ընկալեալ կարծիք է թէ Յովհաննէս իր Աւետարանը, Թուղթերը, ինչպէս նաև Յայտնութեան գիրքը գրեց Եփեսոս իւր կենաց վերջին ժամանակները: Յայտնութեան գիրքին մէջ Ասիոյ եօթն եկեղեցիներուն (Եփեսոսի, Չմիւռնիոյ, ևն) ուղղուած պատգամները կը ցուցնեն թէ զանոնք գրողն այն եկեղեցեաց վիճակին մտառուտ անդեկութիւն ունէր, ինչպէս պիտի ունենար Յովհաննէս, եթէ երկայն ատեն ապրեցաւ և գործեց այն կողմերը, ինչպէս կը պատմուի: Իւր Աւետարանին մէջ Յովհաննէս աս տեսակ խօսքերը շատ կը գործածէ, «Հրէից զատկի ամբ», «Հրեաներուն տաղաւարահարաց ամբ» Ասոնք կը ցուցնեն թէ Յովհաննէս կը գրէր այնպիսի մտորոց որ լաւ տեղեակ չէին Հրէաստանի պլլեայլ անդերը բնակող Հրէից սովորութիւններուն: Երուսաղէմի ակերման վրայ Քրիստոսի մարգարէութիւնը չյիշելէն ալ կը հասկցուի թէ արդէն կործանած էր Երուսաղէմ երբ այս Աւետարանը կը գրուէր: Բոլոր այս պարագաները կարծել կու տան թէ Յովհաննէս գրեց հաւանականապէս Հրէաստանէն հեռու և գեպ ի կատարած առաջին գարուն: Գիտադոլութեան արժանի է նաև որ, մինչ միւս երեք Աւետարանիչք երկայն կը խօսին Քրիստոսի գործերուն վրայ որ Գալիլեայի մէջ կատարուեցան, և ոչ այնչափ երկայն այն բաներուն վրայ զորս ըրաւ Յիսուս

Երուսաղէմ, Յովհաննէս ընդհակառակն, ընդարձակ կը պատմէ ինչ որ Յիսուս ըրաւ և որովհետև Երուսաղէմ, մանաւանդ ինչ որ պատահեցաւ Յիսուսի և Հրէից իշխաններուն և սյուց մէջտեղ յիշեալ քաղաքը, և ինչ որ խօսեցաւ Յիսուս հոն իւր աշակերտներուն: Հաւատարմութեան բաւական արժանի աւանդութիւն մը կայ թէ Յովհաննու Աւետարանը գրուեցաւ ի ինդրոյ նոյն Յովհաննու Քրիստոսնեայ բարեկամաց որ էին Եփեսոս և աղաչած էին Յովհաննու աւելի կատարեալ տեղեկութիւն տալ անոնց Քրիստոսի կենաց և վարդապետութեան քանի մը մասերուն զոյս որ միւս Աւետարանաց մէջ այնչափ ընդարձակ գրուած չեն: Ոմանք կը կարծեն նաև թէ այս Աւետարանին վերջին գլխոյն երկու վերջին համարներն ուրիշէ մը աւելցուած են Եփեսոս, ցուցնելու համար թէ այն տեղեկութիւնները զորո Յովհաննէս կու տայ իւր Աւետարանին մէջ ճշմարիտ և բարոյովն արժանի են վստահութեան: Ի երորդ գլխոյն վերջին համարը կ'իմացնէ թէ՛ այս Աւետարանին մասնաւոր նպատակն էր ցուցնել թէ Քրիստոս Որդի Աստուծոյ է: Արդարև այս Աւետարանին մէջ պատմուած կը գտնենք այնպիսի դէպքեր ուր Քրիստոսի աստուածային զօրութիւնը և իշխանութիւնը յայտնի կը տեսնուին, և այնպիսի խօսքեր որ յստակ կերպով կը յայտնեն Քրիստոսի բնութիւնը, անոր յարաբերութիւնն առ Հայր, և աշխարհին մէջ կատարելու համար անոր տրուած գործը, մանաւանդ քառութիւնը զոր իւր մահուամբ պիտի ընէր աշխարհի մեղաց համար: Միտնգամայն այս Աւետարանը քան զմիւսներն աւելի մեծ քաղցրութեամբ և փափկութեամբ կը նկարագրէ Քրիստոսի ներքին զգացումները և անոր մեծ սէրն առ իւր աշակերտոս, և այս պատճառաւ երբեմն «Քրիստոսի սիրտը» կոչուած է:

Այլևայլ Աւետարաններու մէջ պատմուած դէպքերու, խօսքերու և խօսակցութիւններու բազդատութենէն տեսնուած է որ Յովհաննու Աւետարանին մէջ միայն յիշուած դիպաց և խօսակցութեանց թիւը բազդատուելով այն դիպաց և խօսակցութեանց թուոյն հետ որ անոր և միւսներուն մէջ ալ յիշուած են, կը համեմատի իբր 92 առ 8, այսինքն եթէ գնենք թէ Յովհաննու Աւետարաններուն մէջ յիշուած դէպքերը և խօ-

սակցութիւնները 100 են թուով, այս Աւետարանին մէջ միայն յիշուածները 92 են. իսկ թէ՛ Յովհաննուս եւ թէ՛ միւս Աւետարաններուն մէջ միանգամայն յիշուածներն՝ 8, այնպէս որ Յովհաննուս Աւետարանին մէջ տրուած նոր տեղեկութեանց չափը կ'ըլլայ անոր բոլոր տեղեկութեանց 11/12 երորդը: Նոյնպէս եթէ գնենք թէ Ղուկասու մէջ յիշուած բոլոր դէպք եւ խօսք 100 են, 59 ը Ղուկասու մէջ միայն յիշուած են, իսկ թէ՛ Ղուկասու եւ թէ՛ միւս Աւետարաններուն մէջ յիշուածներն են 41: Մատթէոսի մէջ յիշուած 100 էն 42 ը Մատթէոսի են միայն, թէ՛ Մատթէոսի եւ թէ՛ միւսներուն մէջ յիշուածներն՝ 58: Մարկոսի մէջ յիշուած 100 էն 7 ը Մարկոսի են միայն, թէ՛ Մարկոսի եւ թէ՛ միւսներուն մէջ յիշուածներն՝ 93: Այս բազմաթիւութեան մէջ կը տեսնուի որ Մարկոսէ միայն պատմուածներուն թիւն ամենէն նուազն է, իսկ Յովհաննէսէն միայն յիշուածներն ամենէն աւելի են: Իսկ Մատթէոսի եւ Ղուկասու Աւետարաններէն իւրաքանչիւրին մէջ թէ՛ առանձին եւ թէ՛ միւսներուն հետ մէկտեղ պատմուած բաներուն թիւը գրեթէ հաւասար է: Թէպէտ Մարկոսի մէջ քիչ բան կայ յիշուած որ միւսներուն մէջ չկայ, այն քիչերէն ոմանք շատ կարևոր եւ գիտնալու արժանի բաներ են, զորօրինակ, Գ. գլխոյն 26-29 համարներուն գեղեցիկ առակը, Է. գլխոյն 31-37 եւ Ը. գլխոյն 22-26 համարներուն մէջ պատմուած հրաշքները: Գարձեալ Մարկոսի մէջ ուր որ այնպիսի դէպք մը կը պատմուի որ միւս Աւետարաններուն մէջ ալ պատմուած է՝ աւելի պարագաներ եւ մանր տեղեկութիւններ կ'աւելցուին, որ, ինչպէս արդէն բոլորեցաւ, աւելի որոշ եւ ազդու կ'ընեն պատմութիւնը:

Շատ փորձեր եղան չորս Աւետարանաց Համաձայնութիւն կոչուած գիրք յօրինելու, այսինքն, չորս Աւետարանաց մէջ պատմուած բաները շարել այնպէս որ միանգամայն տեսնուի թէ իւրաքանչիւր դէպք Քրիստոսի կենաց ո՛ր մասին մէջ պատահեցաւ, եւ ի՞նչ է այն դէպքին կապակցութիւնը մնացեալ գիպաց հետ: Բայց տեսնուեցաւ որ շատ դժուարին ձեռնարկութիւն էր այս: Յայտնի է թէ Աւետարանիչք միշտ ժամանակին կարգաւ չեն գրեր, եւ երբեմն անհնար է որոշել այլևայլ գիպաց կարգը:

Թերևս ֆրիտտոսի կեանքը և վարդապետութիւնները սոր-
վելու լաւագոյն եղանակն է իւրաքանչիւր Աւետարան սւրբոյն
սորվել, բայց միանգամայն իւրաքանչիւրին մէջ պատմուած
բաները բազդատել միւսներուն մէջ պատմուած միւսոյն դի-
պաց հետ, անոնց միւսոյն դէպք ըլլալը ստուգելով սրչափ
հնար է: Պէտք է գիտնալ որ չորս Աւետարանիչներէն և ոչ
միոյն նպատակն էր իր պատմութեան մէջ բովանդակել
ֆրիտտոսի կենաց բոլոր դէպքերը կամ անոր ամբողջ վար-
դապետութիւնը: Իւրաքանչիւր Աւետարանիչ Հոգւոյն Արքայ
առաջնորդութեամբ (Յովհ. Ժ. Գ. 26) գրեց ֆրիտտոսի կենաց
պատմութենէն մեծ մաս մը, բայց այս մասերը միահամուռ
կը պարունակեն ֆրիտտոսի կենաց դէպքերէն և անոր վարդա-
պետութիւններէն այնչափ բան որ բաւական է լեցունել ըն-
թերցողաց պէտքը:

Ֆրիտտոսի կենաց դէպքերուն վրայ առաջին երեք Աւետա-
րանաց մէջ տրուած ընդարձակ տեղեկութիւնը կը պատրաս-
տէ ընթերցողները չորրորդին մէջ յիշուած խորին հոգևոր
վարդապետութեանց: Առաջին երեք Աւետարանաց մէջ
պատմուածները թերի պիտի մնային առանց այն բաներուն
զորս կը սորվեցնէ Յովհաննու Աւետարանը, և առանց միւս
Աւետարաններուն պատմութեան կատարեալ կերպով պիտի
չհասկցուէր ինչ որ կը սորվեցնէ Յովհաննու Աւետարանը:



ԳԼ. Ի.

Գործի Առաւելոց

Արդէն յիշեցինք պատճառները որ կարծել կու տան թէ
Գործոց առաքելոց գիրքը գրուեցաւ Պողոս առաքելոյն ա-
ռաջին անգամ ի Հռոմ՝ բանտարկութեան վերջը և կամ
այն ժամանակին մօտ: (Տես այս հասարին 137 էջը): Գոր-
ծոց առաքելոց գիրքին վերջին գլխոյն մէջ գիրքին հեղինակը
Ղուկաս պատմելով Պողոսի հասնիլն ի Հռոմ, կ'ըսէ, "Նը-
սովմ ելանք:" Ասկէ կը հասկցուի թէ երբ Պողոս հոն հա-

ուս, Ղուկաս անոր հետ էր: Այն պատմութեան մնացեալ մասին մէջ Պօղոսի զբայ միայն կը խօսուի: Ասկէ սմանք կը մակարերեն թէ Ղուկաս Պօղոսի հետ չմնաց Հռոմ անոր երկամեայ բանտարկութեան ատենը, այլ մեկնեցաւ, թերեւ Անտիոք, և այս քաղքին մէջ գրեց Գործոց Առաքելոց գիրքը:

Գիրքին նպատակն էր, ինչպէս յայտնի է, ցուցնել թէ ինչպէս զՀոգին Սուրբ առաքելոց զբայ ղրկելու խոստումը զօրբրած էր Քրիստոս՝ կատարուեցաւ (Յովհ. ԺԳ. 26, ԺԵ. 26, Ղուկ. ԻԳ. 49), թէ Հոգւոյն Սրբոյ գալուստն ինչ արդիւնք ունեցաւ, և թէ Աւետարանն ինչպէս քարոզուեցաւ Հրէից և Հեթանոսաց:

Գործոց Առաքելոց գիրքը կրնայ երկու մաս բաժնուիլ: Առաջին մասը (Ա.—ԺԲ. գլուխ) կը պարունակէ առաքելոց աշխատութեան պատմութիւնը Երուսաղեմի մէջ և անոր մօտ տեղերը: Այս մասին մէջ գլխաւոր խօսող և գործող է Պետրոս: Երկրորդ մասին մէջ (ԺԳ.—ԻԸ. գլուխ) պատմութեան գլխաւոր նիւթն է Պօղոս և անոր աշխատանքը, և այս պատմութիւնը կը վերաբերի մանաւանդ գիպաց որ պատահեցան Անտիոք, Փոքր Ասիա, Մակեդոնիա և Յունաստան, քան Երուսաղեմ: Գործոց առաքելոց գիրքն ամէն դարու Քրիստոնէից իրատա ըլլալու արժանի շատ բաներ կը յիշէ Առաքելոց և առաջին հաւատացելոց եռանդեան, համարձակութեան և փութոյն վրայ, անոնց յաջողութեան, ինչպէս նաև ստատիկ հալածմանց վրայ զօր ամէն տեղ կրեցին: Գործոց առաքելոց գիրքը կը պատմէ նաև թէ ինչպէս Պենտեկոստէի օրը Հոգւոյն սրբոյ զօրութեամբ դարձի եկողներէն կազմուեցաւ Քրիստոնէական եկեղեցի մը (Գլ. Բ.), և թէ սարկաւազունք կարգուեցան (Գլ. Զ.) և երիցունք ձեռնադրուեցան (Գլ. ԺԳ. 22, Ի. 47): Ուր որ Գործոց առաքելոց գիրքին մէջ նախկին եկեղեցւոյ գործերուն վարչութիւնը կը յիշուի, միշտ կը տեսնուի որ մեծ պարզութիւն կար այն վարչութեան մէջ: Որեւիցէ գործի համար բոլոր եղբայրները կը կանչուէին (Գլ. Զ. 2), ինչիրնեբուն վրայ կը խօսուէր ի ներկայութեան բոլոր եղբարց և անոնց մասնակցութեամբ, և որոշումները կը ծա-

նուցուէին յանուն բարբ ասաքելոց, երիցանց և եղբարց (Գլ. ԺԵ. 22):

Գործոց Առաքելոց մէջ կը յիշուի նաև ուրիշ կէտ մը որ միասնաւոր ուշադրութեան միանգամայն խրատ ըլլալու արժանի է, այսինքն թէ ինչպէս տակաւ վերցաւ "միջնորմը" կամ խորոցը Հրէից և Հեթանոսաց մէջտեղ, և ամէն ազգի մարդիկ բերուեցան ի մի Քրիստոնէական եղբայրութիւն: Ի սկզբան Աւետարանը կը քարոզուէր Հրէից միայն, յետոյ քարոզուեցաւ նաև Սամարացոց և ապա նաև բոլոր Հեթանոս ազգերու: Արևելի թէ ասաքելք, "բարբ ազգերը աշակերտելու" պատուէրը զոր ասուաւ Քրիստոս ի սկզբան իր բոլոր ընդարձակութեամբը չհասկցան, և, որովհետև Հրեայ էին և իրենց հայրենի սովորութիւններուն նախանձաւոր, բնական էր որ պահանջէին Քրիստոնէութեան դարձող Հեթանոսներէն պահել միեւնոյն սովորութիւնները, զորքինակ թլփատուութիւնը և Հրէական օրինաց ուրիշ պատուէրները: Բայց այս յայտնապէս հակառակ էր Քրիստոնէութեան ոգւոյն, ուստի և ինդրոյն լաւ քննուելէն ետքը (Գլ. ԺԵ.), Հեթանոսներէ եկող հաւատացեալք ազատ հրատարակուեցան Հրէական օրինաց լուծէն Երուսաղէմ՝ ժողովեալ ասաքելոց և երիցանց և եղբարց կողմանէ:

Աւետարաններուն և Գործոց Առաքելոց մէջ յիշուած դիպաց ժամանակին վրայ սա համառօտ տեղեկութիւնը տալ ի գէպ է: Այժմու Քրիստոնէական թուականին առաջին տարին, այսինքն Ա. Տ. 1., որ Հռոմ քաղքին շինութեան 754 բորդ տարւոյն կը պատասխանէ, որոշուեցաւ Զ. դարուն մէջ Դիոնիսիոս Էքզիկուոս, այսինքն կարճ, անուն Հռոմայեցի գիտուն արեղայի մը ձեռքով: Այս պատճառաւ յիշեալ թուականը կը կոչուի երբեմն նաև Դիոնիսեան թուական, և Ը. դարէն հետէ առ հասարակ կը գործածուի: Ընդհանուր ճանչցուած է սակայն թէ, հաշիւները որոնց վրայ հիմնուած է այն թուականը՝ սխալ են, և թէ Քրիստոսի ծնունդը պատահեցաւ Հռոմի շինութեան 750 բորդ ոչ թէ 754 բորդ տարին: Ստոյգ է թէ Քրիստոս ծնաւ նախ քան զմահն մեծին Հերովդի, բայց Հերովդի մահն, ըստ Յովսեփոս-

սի, պատահեցաւ Հռոմի շինութեան 750 երորդ տարին : Դարձեալ կ'ըսուի թէ Յովհաննէս Մկրտիչ սկսաւ քարոզել Տէրերի կայսեր 15 երորդ տարին (Ղուկ. Գ. 1), և թէ այն ատեն Յիսուս ալ սկսած էր ըլլալ իբրև երեսնամեայ (Ղուկ. Գ. 23) : Արդ Տէրեր կայսր սկսաւ թագաւորել յամին 765 շինութեան Հռոմայ, այս թուականին վըսյ աւելցնելով 15 տարի ևս, և ապա հանելով 30 ը, կ'ուեննանք 750, իբրև Քրիստոսի ծննդեան տարին, այսինքն 4 տարի յառաջ քան զԱ. Տ. 1 ըստ սովորական հաշուի : Քրիստոսի քարոզութիւնը տևեց, ինչպէս ընդհանրապէս կը կարծուի, երեք տարի, ապա Քրիստոս իւր կենաց 33 բորդ տարին մատնուեցաւ ի մահ : Հոգւոյն Արդոյ գալստեան հետ կապակցեալ դէպքերը և առաքելոց քարոզութիւնը Երուսաղէմ մինչև Ստեփանոսի մահը՝ կրնան երկու կամ երեք տարուան միջոց մը բանած ըլլալ : Ասկէ կը հետևի թէ Սոզոսի դարձը պատահեցաւ յամի Տն. 36 կամ 37, և որովհետև Պոզոս երեք տարի կամ աւելի ժամանակ անցուց Արարիա և Դամասկոս (Գաղ. Ա. 18), անոր առաջին այցելութիւնը Երուսաղէմ եղած ըլլալու է յամի Տն. 40 կամ 41 : Պոզոս Երուսաղէմէն գնաց Տարսոն (Գործ. Թ. 30), և ժամանակ մը, թերևս երկու կամ երեք տարի, ետքը դարձաւ Անտիոք ուր մնաց տարի մը (Գործ. ԺԱ. 26), և ապա եկաւ Երուսաղէմ (Գործ. ԺԱ. 30) իր երկրորդ այցելութիւնն ընել (յամի Տն. 44 կամ 45) : Պոզոսի երրորդ այցելութիւնն յԵրուսաղէմ, իր առաջին առաքելական ճամբորդութենէն ետքը և Գործոց Առաքելոց ԺԵ. գլխոյն մէջ նկարագրուած ժողովին ժամանակ, ընդհանրապէս կը կարծուի թէ եղաւ յամի Տն. 50 կամ 51, այսինքն Պոզոսի դարձէն 14 տարի ետքը (Գաղ. Բ. 1) : Յետ այնորիկ Պոզոս ըրաւ երկրորդ առաքելական ճամբորդութիւն մը մինչև Յունաստանի Կորնթոս քաղաքը : Հոն մնաց առաքելան աւելի քան տարի մը և կէս (Գործ. ԺԸ. 11, 18), և ապա եկաւ միևանգամ Երուսաղէմ (Գործ. ԺԸ. 22), ինպէս հաւանական է, յամի Տն. 53 կամ 54 : Յետոյ ըրաւ երրորդ անգամ առաքելական շրջան մը, իբր երեք տարի մնաց Եփեսոս (Գործ. ԺԹ. 10, Ի. 31), երեք ամիս Յունաստան (Գործ. Ի. 3) և

գարձեալ եկաւ Երուսաղէմ՝ (Գործ. ԻԱ. 15) հաւանականապէս 58 ին: Երկու տարի մնաց Կեսարիա (Գործ. ԻԳ. 27), և ահիկէ զրկուեցաւ Հռոմ ուր հասաւ, ինչպէս հաւանական կը թուի, 61 տարւոյն գարնան, և հոն մնաց երկու տարի (Գործ. ԻԸ. 30):

Ընդհանրապէս կը կարծուի թէ Պօղոս առաքեալ արձակուելով յետ երկամեայ արգելանաց, այսինքն 63 ին, գնաց Սպանիա, Կրետէ կղզին (ՏՒտ. Ա. 5), Եփեսոս (Բ ՏԻմ. Ա. 18), Տրոյա (Բ ՏԻմ. Գ. 13), Մակեդոնիոյ Նիկոպոլիս քաղաքը (ՏՒտ. Գ. 12) և հուսկ յետոյ երկրորդ անգամ՝ բռնուելով բերուեցաւ Հռոմ: Հռոմէն գրեց առ Տիմոթէոս և առ Տիտոս թուղթերը, որոնց մէջ Պօղոսի այցելութիւնները վերոյիշեալ տեղերն ակնարկուած են այնպէս, որ կը տեսնուի թէ այն այցելութիւններն ըրաւ Պօղոս իւր առաջին բանտարկութենէն ետքը: Այս երկրորդ բանտարկութիւնը վերջացաւ, ինչպէս առհասարակ կը կարծուի, Պօղոսի մարտիրոսութեամբ Ներոնի հրամանաւ յամի Տն. 67 կամ 68:



ԳԼ. ԻԱ.

Առաքելոց Լուսնիքը

Առաքելոց գլխաւոր գործն էր քարոզել Աւետարանը, այսինքն ամէն մարդու սորվեցնել վարդապետութիւններ և վարուց կանոններ զորո իրենք սորված էին Քրիստոսէ: Այս գործը կատարեցին առաքեալք մանաւանդ բերանացի ժողովարաններու (Գործ. Թ. 20, ԺԳ. 5) և հրապարակներու մէջ (Գործ. ԺԷ. 17), ինչպէս նաև տուներու մէջ (Գործ. Ժ. 24-48, Ի. 20) և ուր որ առիթ կը գտնէին խօսելու: Բայց եթէ առաքեալք Աւետարանը ծանօթացնելու այս միջոցը բաւական համարէին, և անոնց քարոզութեան վրայ ուրիշ բան չյիշուէր բաց ի Գործոց Առաքելոց մէջ գրուածներէն, մեր տեղեկութիւնն Աւետարանին վարդապետութեանց և սկզբանց

վրայ շատ թերի եղած պիտի ըլլար : Ուստի առաքեալք այլ-
եայլ առիթներէ մղեալ թուղթեր գրելով աւելի ընդարձակ
կերպով սորվեցուցին թէ ինչ են Աւետարանին վարդապե-
տութիւնները և պատուէրները, և թէ մարդիկ զանոնք ինչ-
պէս մերձեցնելու են իրենց կենաց և վարուցը :

Այս թուղթերուն թիւն է 21 : Ասոնց մէկուն, առ Եր-
բայեցիո թղթոյն, հեղինակը ստուգիւ ծանօթ չէ, թէպէտ
ընդհանրապէս կը կարծուի թէ Պողոս էր անոր հեղինակը :
Մնացեալ թուղթերէն 13 ը Պողոսի են, 3 ը՝ Յովհաննու ա-
ռաքելոյն, 2 ը՝ Պետրոսի և 1 ը՝ Յակոբոյ որ երկար ատեն կե-
ցաւ Երուսաղէմ (Գործ. ԺԲ. 17, ԺԵ. 13, ԻԱ. 18) և կը
կոչուի Եղբայր Տեառն (Մատթ. ԺԳ. 55, Մարկ. 2. 3, Գաղ.
Ա. 19) . թուղթ մ'ալ կայ գրուած Յակոբոյ եղբորէն Յու-
գայէ (Ղուկ. 2. 16, և Յուգ. 1) :

Այս թուղթերէն և ոչ մին, ինչպէս հաւանական կ'երևի,
գրուած է յառաջ քան 20 երորդ տարին յետ մահուան Փը-
րիստոսի : Ժամանակի կարգաւ առաջինն էր Պողոսի առ Թե-
սաղոնիկեցիո առաջին թուղթը որ, ինչպէս կը կարծուի,
գրուեցաւ յամին իբր 53 : Թեոսաղոնիկեցոց երկրորդ թուղ-
թը գրուեցաւ հաւանականապէս նոյն տարին, Գաղատացու-
ցը՝ 56 ին կամ 58 ին, Կորնթացոց երկու թուղթերը՝
57 ին, Հռոմայեցոց թուղթը՝ 58 ին, Եփեսացոցը՝ 62 ին,
Կողոսացոցը և առ Փիլիմոն գրուած թուղթը՝ նոյն տա-
րին, Փիլիպպեցոցը՝ 63 ին, Տիմոթէոսի առաջին թուղթը
և Տիտոսինը՝ 65 ին, և երկրորդ թուղթն առ Տիմոթէոս՝
66 ին : Երբայեցոց թուղթին թուականը ստուգիւ գիացուած
չէ : Ոմանք Յակոբոյ թղթոյն թուականը կը դնեն կանուի,
իբր 44 ին, այլք՝ անագան, իբր 62 ին : Պետրոսի առաջին
թուղթը գրուած կը կարծուի իբր յամին 68, իոկ երկրորդ
թուղթը՝ կարճ ժամանակ յառաջ քան զմահ առաքելոյն :
Յովհաննու թուղթերը գրուած կը կարծուին աւելի անագան,
ինչպէս արդէն յիշուած է (Տես էջ 140) : Յուգայի թուղթին
համար կը կարծուի թէ գրուեցաւ միեւնոյն տարին յորում
գրուեցաւ Պետրոսի երկրորդ թուղթը որուն շատ կը նմանի :
Առաքելոց թուղթերուն վերոյիշեալ թուականները հաստա-

առջ ապացոյցները մէջ պիտի բերուին իւրաքանչիւր թղթոյ վրայ տրուած առանձին տեղեկութեան մէջ:

Թուղթ առ Հոռոմայեցիս

Այս թղթոյն ժԶ. գլխոյն 23 համարէն յայտնի է թէ երբ Պօղոս այս թուղթը կը գրէր, չիւր էր Գալիտոս անուն մարգառ մը: Արդ Գալիտոս կը բնակէր Կորնթոս քաղաքը (Ա Կորնթ. Ա. 14): Դարձեալ նոյն ժԶ. գլխոյն 1. և 2. համարներուն մէջ Փիբէ, Կորնթոսի նաւահանգիստ եղող Կենքրայի եկեղեցոյն սպասաւորը, կը յիշուի այնպիսի կերպով, որ կը տեսնուի թէ, երբ այս թուղթը կը գրուէր, Փիբէ պիտի մեկնէր անկէ Հռոմ երթալու, և թերևս նոյն Փիբէ տարաւ թուղթը, և կամ ընկեր էր անոնց որ տարին զայն: Դարձեալ ժԵ. գլխոյն 25 և 26 համարներէն յայտնի է թէ, երբ այս թուղթը կը գրուէր, Պօղոս կը պատրաստուէր երթալ Երուսաղէմ Մակեդոնիոյ և Աքայիոյ եղբայրներուն մարդասիրական նպատակները տանելու Երուսաղէմի ազքատ Բրիտանեաններուն: Արդ, Ա Կորնթ. ժԶ. 1-8, Բ Կորնթ. Ը. 1-4, Թ. 1-4, և Գործ. ԻԴ. 17 համարներէն յայտնի է թէ յիշեալ նպատակները հաւաքուեցան Պօղոսի Մակեդոնիոյ և Յունաստանի մէջ այն ճամբորդութեան ատենը որ Գործ. Ի. 1-3 համարներուն մէջ նկարագրուած է, և յետ որոյ առաքեալը դարձաւ Երուսաղէմ Եփեսոսի ճամբով, եղբայրներուն նպատար մէկտեղ տանելով: Պօղոսի այս պցեկրութիւնը յԵրուսաղէմ եղաւ, ինչպէս արդէն տեսանք, յամի ՏՆ. 58: Բարբր այս պարագաներէն շատ յայտնի է թէ Հոռոմայեցաց թուղթը գրուած ըլլալու է Կորնթոսէն, և ճիշդ Պօղոսի այն ճամբորդութենէն առաջ զոր բաւ յամին 58: Թուղթին մէջ գրուածներէն յայտնի է որ, այն թուղթը գրելով առաքեալը կը դիտէր Հռոմ գտնուող Բրիտանեայի միտքն ուղղել Աւետարանին ճիմնական վարդապետութիւններէն ոմանց: Պօղոս ի վաղուց կը փափաքէր պցեկրութիւն ընել Հրուսոմի Բրիտանեայի, և Աւետարանը քարոզել անոնց անձամբ, բայց որովհետև մինչև այն ատեն կարող եղած չէր կատար-

բեւ իւր այս փափաքը, ուզեց նոյն բանը նամակով մը ընել:

Գլխաւար կէտերը զորս Պօղոս կը յիշէ այս նամակին մէջ ասոնք են. Աւետարանին մէջ յայտնուած փրկութիւնը բոլոր մարդոց համար է, այնպէս Հեթանոսաց ինչպէս Հրէից (Գլ. Ա. 16). ամէն մարդ կարօտ է այն փրկութեան, քանզի ամէն մարդ մեղք գործած է (Գլ. Բ. 9-12, Գ. 9-20). ամէն մարդ այս փրկութիւնը, այսինք մեղաց թողութիւնն և ընդունելութիւնն առաջի Աստուծոյ, կը ստանայ միեւնոյն կերպով, այն է Քրիստոսի հաւատարմով, ոչ թէ ճշդիւ կատարելով օրինաց պատուէրները (Գլ. Գ. 25-30). փրկութեան այս կերպն, ըստ սկզբան, միեւնոյն է Աբրահամու և Գաւթի ծանուցուած կերպին հետ հին անտեսութեան ժամանակ. փրկութեան այս կերպն չի խափաներ օրէնքին հնազանդելու հարկաւորութիւնը (Գլ. Գ. 31), ընդհակառակն, անոնք որ ունին ճշմարիտ հաւատք ի Քրիստոս՝ ունին հոգևոր կեանք, որ սուրբ և Աստուծոյ բոլոր պատուիրաններուն հնազանդ վարքով կը յայտնուի (Գլ. Զ. 1-14, Ը. 1-4): Այս ամէնը կը վերաբերին թէ՛ Հրէից և թէ՛ Հեթանոսաց (Գլ. Ժ. 12): Ոչ թէ Աստուած մերժեց Հրեաները (ԺԱ. 1). անոնք որ կ'ընդունին և կը կատարեն փրկութեան պայմանները՝ պիտի փրկուին (ԺԱ. 23), և ի վախճանի հեթանոսք և Հրեայք միանգամայն պիտի հնազանդին Աւետարանին (ԺԱ. 25-32): Թուղթին առաջին 11 գլուխներուն մէջ Աւետարանին մեծամեծ վարդապետութիւնները մէջ բերելէն ետքը, առաքեալը թուղթին մնացեալ մասին մէջ կու տայ այլեայլ պատուէրներ իր Հռոմայեցի բարեկամներուն՝ ցուցընելու համար թէ ինչպէս պարտէին վարուիլ իրարու հետ և կառավարութեան պաշտօնէից հետ: Եր խօսի մանաւանդ կարծեաց տարբերութիւններու վրայ որ դիւրաւ կրնային ծագել Հրեաներէ և Հեթանոսներէ բաղկացեալ ժողովրդեան մը մէջ ինչպէս էր Հռոմի Քրիստոսնայ ժողովուրդը: Բոլոր թուղթը շատ աղէկ կը ցուցնէ մեզի թէ՛ ինչ եղանակաւ կը քորոզէր Պօղոս Աւետարանը, այսինքն՝ փաստարանութեամբ: Այս կերպով կը խօսէր առաքեալն իր ատենարանութիւններուն մէջ (Գործ. ԺԷ. 2, 3. 22-31, ԺԸ. 4, 19.) և այս նամա-

կին մէջ ալ կը տեսնենք թէ ի՞նչ յարմար և ազդու փաստերով, միանգամայն ի՞նչ ջերմեռանդ սրտով կը ջանար Պօղոս սորվեցնել բարբ մարդոց Աւետարանին վարդապետութիւններն ու պատուէրները :

Երկո՞րն լուսնի տա Կորնթացիս

Կորնթացւոց առաջին թղթոյն ԺԶ. գլխոյն 1-8 համարներէն յայտնի է թէ, այս թուղթը գրուեցաւ Եփեսոս, յառաջ քան զճանապարհորդութիւնն զոր ըրաւ Պօղոս Մակեդոնիա և Յունաստան և անկէ Երուսաղէմ, և որ յիշուած է Գործոց Առաքելոց Ի. և ԻԱ. գլուխներուն մէջ, այսինքն՝ յամի ՏՆ. 57, կամ Հռոմայեցւոց թուղթը գրելէն առաջ: Երկրորդ թուղթն աւ Կորնթացիս, ինչպէս նոյն իսկ թուղթին խօսքերէն յայտնի է, գրուած է ոչ երկար ատեն ետքը քան առաջինը. Մակեդոնիոյ քաղաքներէն մէկուն մէջ ուր եկած էր Պօղոս երբ Կորնթոս կ'երթար վերոյիշեալ ճամբորդութեան ատենը (Տես Բ Կորնթ. Թ. 1-4 և Ը. 1-4):

Կորնթացւոց թուղթերը շատ տարբեր են Հռոմայեցւոց թուղթէն: Հռոմայեցւոց թուղթին մէջ առաքեալը գլխաւորապէս կը ջանայ սորվեցնել ի Քրիստոս հաւատով արդարանալու վարդապետութիւնը: Կորնթացւոց թուղթերուն մէջ Քրիստոսնէտիան վարուց վերաբերեալ խնդրոց, նաև այլ և այլ մասնաւոր խնդիրներու վրայ կը խօսի: Առաջին թղթոյն մէջ կը մեղադրէ Կորնթոսի եկեղեցւոյն անգամներն երկպառակութեանց և կռուոց համար որոց վրայ լրած էր առաքեալը թէ ունէին իրարու հետ (Գլ. Ա. 10-16. Գ. 1-7), ինչպէս նաև այն նշանաւոր անբարոյականութեան համար որուն թոյլ տուած էին Կորնթացիք (Գլ. Ե): Կորնթոս երեւելի էր բարոյական ապականութեան կողմանէ որ կը տիրէր հոն, և Կորնթոսի եկեղեցւոյն անգամք հաւանականապէս այն ապականութեան ազդեցութեան ներքե էին փոքր ի շատէ (Գլ. Զ. 9-20, Է. 1-40): Պօղոս կը յանդիմանէ զանոնք նաև վասն զի իրենց մէջ ծագած վէճերուն համար սովոր էին հեթանոս ատեաններու դիմել (Գլ. Զ. 1-8), և վասն զի ա-

նոնց կրօնական պաշտօններուն, մանաւանդ Տէրօջը ընթերեաց մատակարարութեան մէջ այլևայլ անկտրգութիւններ սպրդած էին (Գլ. ԺԱ.) : Թուղթին մէջ առաքեալը կը պատասխանէ նաև ամուսնութեան (Գլ. Է.) և զոհի համար կոսոց նուիրեալ միս ուտելու (Գլ. Ը. և Ժ.) վերաբերեալ այլևայլ գործնական հարցումներու զորս կորնթացիք բրած էին : Պօղոս այս առթիւ կը խօսի նաև իր առաքելական իշխանութեան վրայ, և իր քարոզութեան եղանակը կը պաշտպանէ (Գլ. Ա. 10, Գ. 16 և Գլ. Թ.) : Թուղթին վերջին մասին մէջ (Գլ. ԺԵ) կը խօսի մեռելոց յարութեան վարդապետութեան վրայ զոր կ'երևի թէ կորնթացի Քրիստոսնեաներէն ու մանր կ'ուրանային (Գլ. ԺԵ. 12), և Երուսաղէմի աղքատաց համար սղորմութիւն հաւաքելու քանի մը կանոններ առաջարկելով և բարեւեր գրելով կը վերջացնէ նամակը :

Կորնթացաց երկրորդ թուղթը գրուեցաւ ինչպէս տեսանք, առաջինէն ոչ շատ ժամանակ ետքը : Այս միջոցին առաքեալն իր առաջին թղթոյն աղէկ ազգեցութիւն բրած ըլլալուն վրայ քանի մը բան լրած էր (Բ կորնթ. Է. 7-16), ուստի ասոր վրայ իր ուրախութիւնը կը յայտնէ : Բայց ինչպէս կը տեսնուի Գլ. Ժ. 10, 11 համարներէն, կորնթացի Քրիստոսնեաներէն ոմանք արհամարհանօք կը խօսէին առաքելոյն և անոր պաշտօնին վրայ, այնպէս որ այս երկրորդ թղթոյն մէջ կը ստիպուի առաքեալն ընդարձակ գրել ի պաշտպանութիւն իւր առաքելական պաշտօնին, կը ցուցնէ իւր գիտաւորութեան մաքրութիւնը և կը յիշէ իւր աշխատութիւնները և տառապանքը Քրիստոսի ծառայութեան մէջ : (Տես Գլ. Բ. 14-Է. 16, և Գլ. Ժ.-ԺԳ) : Երկայն կը խօսի նաև Երուսաղէմի աղքատ Քրիստոսնեաց տրուելու ստակին վրայ (Գլ. Ը. և Թ.) զոր ինք կը հաւաքէր Մակեդոնիա, երբ կը գրէր այս երկրորդ թուղթը, և կը բաղձար որ կորնթացիք ալ հաւաքէին :

Թոսղն առ Գաղաթացիս

Գաղատիա հին անունն էր Փոքուն Ասիոյ կեդրոնական մաս.

տին որ կը պատասխանէ այժմու Անկիւրիոյ գաւառին : Այն երկիրը Գաղատիա անուան առաւ Գաղատացի ցեղէ մը որ Գ. գարուն մէջ նախ քան զԳր. եկաւ հոն Եւրոպայի այն կողմէն որ հին ատենը Գաղատիա կը կոչուէր, և հիմա Գաղիա կամ Տրամոս կ'ըսուի : Ուստի Գաղատացիք այժմու Գաղիացւոց ցեղէն էին, և կ'երևի թէ քիչ մը անոնց յատկութենէն սուշէին : Շուտով կ'ազդուէին և սիրող էին փոփոխութեան : Գաղատացիք ընդունեցան զ՝օղոս "Ատուծոյ հրեշտակի մը պէս" : "Եթէ կարելի էր, իրենց աչքերը պիտի հանէին և տալին անոր," ըսցց սուտ քարոզիչներու ազդեցութեամբ "շուտով ուրիշ աւետարանի կը փոխուէին," և այնպէս գրգռուած էին իրարու դէմ, որ կը կարծուէր թէ "իրար պիտի խածնէին և ուտէին" (Գաղ. Գ. 14, 15. Ե. 15) : Պօղոս առաքեալ առաջին անգամ Աւետարանը քարոզեց այս գաւառին մէջ իր երկրորդ առաքելական ճամբորդութեան ատենը (Գործ. ԺԶ. 6) իբր 51 ին : Դարձեալ զնաց հոն երեք տարի ետքը (Գործ. ԺԼ. 23) : Այս թուղթին Գ. գլխոյն 13 երրորդ համարին մէջ կը խօսի Պօղոս մարմեոյ տկարութեան վրայ զոր կը կրէր այն ատեն երբ առաջին անգամ Աւետարանը քարոզեց անոնց : Առկէ կը տեսնուի թէ երկրորդ անգամ ալ զնաց հոն այս թուղթը գրելէն առաջ : Ուստի ընդհանրապէս կը կարծուի թէ Գաղատացւոց թուղթը գրուեցաւ կամ Եփեսոս ուր երկար ատեն մնաց Պօղոս իր երկրորդ այցելութենէն ետքը առ Գաղատացիս (Տես Գործ. ԺԼ. 23 և ԺԹ. 1, 10, 22), և կամ Յունաստան, ուր կեցաւ երեք ամիս Եփեսոսէ մեկնելէն ետքը (Գործ. Ի. 3), ուր և (այն է Կորնթոս) գրեց Հռոմայեցւոց թուղթը (տես էջ 149) : Շատերը հաւանականաբար կը համարին վերջին կարծիքը, այսինքն թէ Գաղատացւոց թուղթը գրուեցաւ Կորնթոսէ, և Հռոմայեցւոց թղթոյն հետ գրեթէ միեւնոյն ժամանակ, սա պատճառաւ որ այս երկու թղթոց մէջ մտածման և բացատրութեան կողմանէ շատ մօտ նմանութիւն կը տեսնուի : (Բաղդատէ Հռոմ. Ը. 15 համարը՝ Գաղ. Գ. 6 համարին, Հռոմ. Է. 14, 15 համարները՝ Գաղ. Ե. 17 համարին, Հռոմ. Ա. 17 համարը՝ Գաղ. Գ. 11 համարին հետ, և Հռոմ. Գ. գլխին ամբողջ՝

Գաղ. Գ. գլխոյն հետ 1) Այս նմանութիւնները կը ցուցնեն թէ միեւնոյն խորհուրդները և օրինակները կային առաքելոյն մտքին մէջ երբ կը գրէր այս երկու թուղթերը, և մեծ հաւանականութիւն կու տան ոմանց կարծեաց թէ այն երկու թուղթերը գրուեցան գրեթէ միեւնոյն ժամանակ, այսինքն 57 ին կամ 58 ին:

Այս թուղթին գլխաւոր նպատակն էր զգուշացնել Գաղատիոյ ֆրիստոնեաները սուտ վարդապետաց ոմանց դէմ որ կը պնդէին թէ մինչև որ մարդ մը չթլփատուի ըստ Մովսիսական օրինաց, չի կրնար փրկուիլ: Ասոնք մարդիկ իրենց կողմը շահելու համար կը ջանային ջնջել Գաղատացւոց վատահոլութիւնն առաքելոյն վրայ որմէ առած էին սղբա իրենց առաջին ծանօթութիւնն Աւետարանին վրայ: Ուստի Պօղոս իր թուղթին առաջին մասին մէջ կը ցուցնէ թէ ինք առաքեալ էր, կոչուած ոչ ի մարդկանէ, այլ ի Քրիստոսէ և յԱստուծոյ (Գլ. Ա. 1), թէ վարդապետութիւնը զոր կը սորվեցնէր՝ ընդունած էր Քրիստոսէ յայտնութեամբ (Գլ. Ա. 11, 12), և թէ սչինչ իւր ստորին էր քան զայլ առաքեալս (Գլ. Ա. 15-Բ. 10): Յետոյ երկար կը խօսի հաւատով արդարանալու վարդապետութեան վրայ, ցուցնելով այս վարդապետութեան ճշմարտութիւնը, և այն վարդապետութեան սաստիկութիւնը թէ մարդիկ կ'արդարանան օրէնքին հնազանդելով, և կ'իմացնէ Գաղատացի Քրիստոնէից թէ, եթէ այն սխալ վարդապետութիւնն ընդունին, «Քրիստոս անոնց օգուտ մը չընէր» (Գլ. Ե. 3, 4): Թուղթը կը վերջանայ յորդորանօք թէ ինչպէս պէտք է վարուիլ յանցաւոր եղբայրներու հետ, իրարու բեռաւնալով, այլովքն հանդերձ:

Գաղատացւոց թուղթը երբ վարդապետութեանց վրայ կը ճառէ, նման է Հռոմայեցւոց թղթոյն, իսկ երբ գործնական պարտուց վրայ կը խօսի, կը նմանի Կորնթացւոց թուղթերուն:

Թոսղթ առ Եփեսացիս

Այս թղթոյն Գ. գլխոյն 1. համարէն, Գ. գլխոյն 1. և 2.

գլխոյն 20 համարէն յայտնի է թէ Պօղոս գրեց թուղթը մինչդեռ բանտարկեալ էր կեսարիա (Գործ. ԻԴ. 23, 27) կամ Հռոմ (Գործ. ԻԸ. 30) : Թուղթը, ինչպէս կ'երևի, զրկուեցաւ ձեռամբ Տեւքիկոսի (Գլ. Զ. 21, 22) որ Պօղոսի ընկերներէն էր անոր առաքելական ճամբորդութիւններուն մէջ (Գործ. Ի. 4) : Կողոնացոց թղթոյն մէջ, Գլ. Դ. 10, Պօղոս ողջոյն կը գրէ իւր գերեկցէն Արիտաբբոսէ . ուստի յայտնի է թէ այն թուղթը կը գրէր բանտին մէջ, և նոյն գլխոյն 7, 8 և 9 համարներուն մէջ կ'ըսէ թէ կը զրկէր զնոյն ինքն Տեւքիկոս ուրիշ հաւատարիմ և հաւատացեալ եղբոր մը, այն է Ռեոսիմայ հեա : Տես նաև Փիլիմ. 1, 9, 10 : Այս ամենէն կրնայ մակարերուիլ թէ թուղթքն առ Եփեսացիս, Կողոնացիս և առ Փիլիմոն գրուեցան այն բանտարկութեան ժամանակ, և միևնոյն պատեհութեամբ զրկուեցան : Այս կարծիքը կը հաստատուի նաև սա պարագայէն որ, առ Կողոնացիս և առ Փիլիմոն նամակներուն վերջը ողջոյններուն մէջ կը գտնենք միևնոյն անունները, զարօրինակ, Արիտաբբոս, Մարկոս, Եղափրատ, Ղուկաս և Դեմաս : Գալով այն խնդրոյն թէ արդեօք բանտարկութեան տեղն ուստի գրուեցան երեք թուղթերը՝ կեսարիա՞ էր թէ Հռոմ, ընդհանուր կարծիքն այս է թէ Հռոմէն գրուեցան, այն քաղքին մէջ Պօղոսի բանտարկութեան սկիզբը, այսինքն յամի Տն. 62 : Թէ՛ Եփեսացոց և թէ Կողոնացոց թուղթերուն մէջ առաքեալը կը խնդրէ եղբայրներուն աղօթքը, որպէս զի Աստուած գուռ բանայ խօսելու զխորհուրդն Քրիստոսի որոյ համար, կ'ըսէ, կապուած եմ : (Տես Եփես. Զ. 18-20 և Կող. Դ. 3) : Խօզքերը որով այս փափաքը կը յայտնէ Պօղոս՝ կը թուին յարմար գալ մանաւանդ բանտարկութեանն ի Հռոմ քան ի կեսարիա, քանզի չերևիր թէ Պօղոս պատեհութիւն ունէր Աւետարանը քարոզելու կեսարիա ինչպէս ունէր Հռոմ :

Եփեսացոց թղթոյն գլխաւոր նիւթն է Քրիստոսով մեղքէն և մեղքին պատիժներէն ազատուելուն մեծութիւնը և փառքը (Գլ. Ա. 6) և հաւատացելոց միութիւնն իբրև մէկ ընտանիք (Գլ. Բ. 19) : Առաքեալն հաւատացելոց այս միու-

Թիւոր կը բաղդատէ անոնց մէկտեղ շինուելուն իբր մէկ սուրբ տաճար, որոյ հիմն են առաքեալք և մարգարէք, և անկեանք քարը՝ Յիսուս (Գլ. Բ. 20-22)։ Այս բաղդատութիւնն ընել թելադրեց թերևս Արտեմեայ (Անահատայ) հոյակապ մեհեանն զոր Եփեսոացի Քրիստոնեայք ամէն օր կը տեսնէին իրենց աչքին առջև։ Թուղթին վերջին կէտը կը պարունակէ այլևայլ գործնական պատուէրներ միութեան, վարուց սրբութեան և բուլբուլ այն պարապեմանութեանց կատարման որ կը վերաբերին այլևայլ ընկերական յարաբերութեանց, ինչպէս առն և կրնոջ, ծնողաց և որդւոց, տերանց և ծառայից։ Ե. գլխոյն 22-32 բողոք համարներուն մէջ առաքեալը գիտողութեան և խրատ առնելու արժանի բաղդատութիւն մը կ'ընէ ի մէջ սիրոյն Քրիստոսի առ իւր եկեղեցին, և ի մէջ սիրոյ առն առ իւր կիներն։

Թուղթի առ Փիլիպպեցիս

Փիլիպպէ քաղաքն առած է իւր անունը Մակեդոնացաց Փիլիպպոս թագաւորէն որ Մեծին Աղէքսանդրի հայրն էր։ Քաղաքը շինուած է գետեզրի մը վրայ Մակեդոնիոյ արեւելեան կողմը, ծովէն իբրև 9 մղոն հեռու։ Առաջին անգամ Պօղոս առաքեալ քարոզեց հոն Աւետարանը իւր երկրորդ առաքելական ճամբորդութեան ստենը, այսինքն յամի ՏՆ. 53։ (Տես Գործ. ԺԶ. 12-40)։ Պօղոս երկրորդ անգամ այցելուութիւն ըրաւ հոն իր երրորդ առաքելական ճամբորդութեան ստենը, և անկէ, այսինքն Փիլիպպէի նաւահանգստէն Նէապօլսէ (Գործ. ԺԶ. 11), նաւարկեց, երբ կը դառնար Յունաստանէ և Մակեդոնիայէ (Գործ. Ի. 1-6)։

Թուղթին առաջին գլխոյն 12-16 համարներուն մէջ առաքեալը կը խօսի իւր կապանաց և կայսերական պալատան վերայ, և Գ. գլխոյն 23 բողոք համարին մէջ ողջոյն կը գրէ սուրբերէն որ կայսեր տունէն էին։ Այս բաները կը ցուցնեն թէ Պօղոս Հռոմ էր և բանտարկեալ երբ թուղթը կը գրէր, Բ. գլխոյն 23 և 24 համարներուն մէջ կ'ըսէ թէ կը յուսար շուտով շրջել զՏիմոթէոս առ Փիլիպպեցիս, բայց կը սպասէր

սեանել թէ ինչ վախճան պիտի ունենար իր գարծը . կ'ըսե նաև թէ վտաս էր ի Տէր որ նաև ինք քիչ աստենէն պիտի երթար անոնց : Այս խօսքերը , և Ա. գլխոյն 19-25 համարներուն մէջ ըսուածները կը ցուցնեն թէ , երբ Պօղոս այս թուղթը կը գրէր , յոյս ունէր շուտով բանտէն արձակուելու , թէպէտ բոլորովն վտաս էր թէ այսպէս պիտի ըլլար (Գլ. Ա. 20) : Ուստի կը կարծուի թէ այս թուղթը գրուեցաւ երկամեայ բանտարկութեան վախճանին մօտ : Այս կարծեաց հաստատութիւն կաւ սայ Բ. գլխոյն 24-30 համարներուն մէջ Եպափրոզիտոսի վրայ ըսուածը : Գիտենք որ այն ժամանակ քիչ դիւրութիւն կար հեռաւոր տեղեաց հետ հաղորդակցութիւն ընելու : Թուղթեր կը ղրկուէին կամ ճանապարհորդաց ձեռքով և կամ մասնաւոր սուրհանգակներով : Առդ վերոյիշեալ համարներէն յայտնի է թէ , երբ Պօղոս կը գրէր այս թուղթը , այնպէս երկար բանտարկուած էր Հռոմ , որ ֆիլիպպեցիք անոր բանտարկութեան լուրն առած և զԵպափրոզիտոս ղրկած էին Հռոմ առաքելոյն պիտոյիցը համար իրենց հանգանակութիւնը ասնելու , և Եպափրոզիտոս հասած էր Հռոմ ուր հիւանդացած էր , անոր հիւանդութեան լուրը գացած էր ֆիլիպպէ , և այս գեպքին վրայ ֆիլիպպեցոց կարեկցութեան լուրն ալ հասած էր Հռոմ : Այսպէս գէթ չորս անգամ երթևեկութիւն եղած էր ի մէջ Հռոմայ և ֆիլիպպէի Պօղոսի Հռոմ գալէն մինչև թուղթին գրուիլը : Ուստի շատ յայտնի է թէ այս թուղթը գրուեցաւ առաքելոյն բանտարկութեան երկրորդ տարւոյն վախճանին մօտ , այսինքն յամի ՏՆ. 63 :

Ֆիլիպպեցոց թուղթը մանաւանդ ֆրիստոնէական բարեկամութեան նամակ է : Անոր մէջ առաքեալը մեծ վտասութիւն և սէր կը ցուցնէ առ ֆիլիպպեցիս (Գլ. Ա. 1-11) : Բոլոր թուղթին մէջ յանդիմանական խօսք շատ քիչ կայ , շատը գովեստ է : Որովհետև ֆիլիպպեցիք կ'ուզէին դիմնալ թէ ինչ վիճակի մէջ էր Պօղոս ի Հռոմ , այս բանին վրայ առաքեալը երկայն կը խօսի (Գլ. Ա. 12-26 , Բ. 17-30) , զֆրիստոս իրբև օրինակ խոնարհութեան և անձնուրաց սիրոյ կը դնէ անոնց առջև (Գլ. Բ. 5-11) , և կը յորդորէ զանոնք ի-

բննց ապաւինութիւնը գնել, ինչպէս ինք ըրած էր, ոչ որեւիցե արտաքին ծէսերու կամ յարաբերութեանց վրայ, այլ Քրիստոսի և անոր արդարութեան վրայ :

Թոսղն առ Կոզոսացիս

Արդէն ցուցուցինք պատճառները որ կարծել կու աան թե այս թուղթը գրուեցաւ Հռոմէն առ Եփեսացիս և առ Փիլիմոն գրուած թղթոյն հետ գրեթէ միեկոյն ժամանակ : Կոզոսա քաղաք էր Փոքրուն Ասիոյ, իրր 100 մղոն դէպ արեւելք այժմու Այսոն քաղաքէն : Շատ մօտ էր Լաւադիկէի և Յերասուղոյ (Կաղ. Գ. 13) : Պողոտի խօսքէն այս թուղթին Բ. 1 համարին մէջ, կրնայ կարծուիլ թէ առաքեալն այս թուղթը Կոզոսացուց գրելէն առաջ այցելութիւն ըրած չէր անոնց, և չի գիտցուիր թէ նախ որու ձեռքով Աւետարանը քարոզուեցաւ հմն : Պողոս այս թուղթը գրելու առիթ աւած կ'երեւի առ լուրէն, զոր թերեւս Եզրափրաս տուաւ առաքելոյն, թէ Կոզոսացիք վտանգի մէջ էին Աւետարանին վարդապետութիւններէն հեռանալ՝ հրեշտակաց պէս պաշտելու և այլևայլ օրեր խորելու վերաբերեալ փիլիսոփայական կարծիքներու անսալով (Գլ. Ա. 23, Բ. 8, 16-23) : Առաջին երկու գլուխներուն դիտաւոր նիւթն է Քրիստոսի մեծութիւնը և փառքը, և փրկութեան լրումը որ Քրիստոսով կը տրուի հաւատացելոց : Վերջին երկու գլուխները կը պարունակեն գործնական պատուելներ, այսինքն թէ Կոզոսացիք պարտէին մշակել բոլոր Քրիստոսնէական առաքինութիւնները, երկնային բաներու վերայ դնելով իրենց սէրը, զերար սիրելով և իւրաքանչիւր իր պարտքը կատարելով դէպ առ ամենեւին որոց հետ յարաբերութիւն ունէին : Այս թուղթը շատ տեղ գաղափարներու և բացատրութեան կողմանէ մեծ նմանութիւն ունի Եփեսացուց թղթոյն : Այսպիսի նմանութիւն մը յիշեալ երկու թղթոց մէջ շատ բնական էր, եթէ, ինչպէս արդէն տեսանք, երկուքը գրեթէ միեկոյն ժամանակ գրուեցան : Բազմապէս Եփես. Ա. 7. համարը Կոզոսացուց Ա. 14 համարին, Եփես. Բ. 12, 13 համարները՝ Կաղ. Ա. 21, 22 համարներ.

բուն, Եփես. Գ. 1-9 համարները՝ Կող. Ա. 24-29 համարներուն, Եփես. Գ. 2-4 համարները՝ Կող. Գ. 12-15 համարներուն, Եփես. Գ. 13, 16 համարները՝ Կող. Բ. 19 համարին, Եփես. Գ. 22-25 համարները՝ Կող. Գ. 8-10 համարներուն, Եփես. Գ. 32 համարը՝ Կող. Գ. 13 համարին հետ :

Գ. գլխոյն 16 համարին մէջ առաքեալը կ'ըսէ Կողոսացւոց . "Ու երբոր աս թուղթը ձեր մէջը կարգացուի, Լաւոգփկեցւոց եկեղեցւոյն մէջն ալ կարգալ տուէք . և դուք ալ Լաւոգփկեայէն եկած թուղթը կարգացէք" : Խնդիր է թէ Լաւոգփկեայէն եկած թուղթն ինչ էր : Ոմանք կը կարծեն թէ առաքեալը թուղթ մը գրեց Լաւոգփկեի եկեղեցւոյն, և թէ այն թուղթը կորուսած է : Ուրիշներ կը կարծեն թէ Եփեսացւոց թղթոյն համար ըսուած է այն խօսքը : Զարմանալի է արդարև որ Պօղոս թուղթ գրելով Եփեսացւոց որոնց մէջ երկար ատեն աշխատեցաւ և այնչափ բարեկամ ունէր՝ ոչ ումեք մտնուար ողջոյն կը գրէ : Գիտելի է նաև որ Եփեսացւոց թղթոյն հնագոյն ձեռագիր օրինակներէն երկուքին մէջ Ա. գլխոյն 1. համարին "Եփեսոսի մէջ" խօսքը չկայ, և Մարկոսն, երկրորդ գարուն զնոստիկեան հեղինակ մը, Լաւոգփկեցւոց թուղթ կ'անուանէ հիմա Եփեսացւոց կոչուած թուղթը : Այս բաներուն նայելով ոմանք, ինչպէս վերը յիշուեցաւ, կը կարծեն թէ առաքեալը գրելով այն թուղթը որ հիմա Եփեսացւոց կը կոչուի՝ ուզեց զայն կարգալ տալ այլևայլ եկեղեցիներու մէջ, և թէ անկէ օրինակ մը ղրկեց Եփեսացւոց և ուրիշ օրինակ մը՝ Լաւոգփկեցւոց, և թերևս ուրիշ օրինակներ ալ ղրկեց ուրիշ մօտաւոր եկեղեցիներու : Տեսանք որ Կողոսա և Լաւոգփկե մօտ էին իրարու, այնպէս որ մէկ քաղքին ղրկուած թուղթի մը օրինակը կրնար դուրս ղրկուիլ միւսոյն : Եթէ Եփեսացւոց թուղթն իրրև շրջաբերական նամակ գրուեցաւ, գիւրին է հասկնալ թէ ինչու համար մտնուար ողջոյններ չմուծան, և թէ ինչու համար թուղթին օրինակներէն ոմանց մէջ "Եփեսոսի մէջ" խօսքը զանց առնուած է : Գիտենք մանաւանդ որ Պօղոս ոչ միայն անհատ եկեղեցիներու, այլ և երբեմն ընդարձակ գաւառի մը եկեղեցիներուն կը գրէր նամակներ : Զորօրինակ, առ Գաղա-

տացիս թուղթը զրկուած է “Գաղատիոյ եկեղեցիներուն” (Գաղ. Ա. 2) : Առ Կորնթացիս Բ. թուղթը զրկուած է “Կորնթոսի մէջ եղած Աստուծոյ եկեղեցիին, և բարբ Աքայիայի մէջ եղող ամէն սուբբերուն” Բ Կոր. Ա. 1 :

Թոսղթ առ Թեասղոնիկէցիս

Թեոսղոնիկէ որ հիմա Սալոնիկ կը կոչուի՝ առաքելոյն ժամանակը մեծ և հարուստ քաղաք էր : Ինչպէս հիմա, նաև անատեն, շատ Հրեայք կը գտնուէին հոն : Պօղոս առաքեալ գնաց հոն իւր երկրորդ առաքելական ճամբորդութեան ատենը : Կարճ ժամանակ մնաց հոն, բայց Հրեաներէն ոչ սահաւանձիք, նաև հեթանոսներէն շատեր, ընդունեցան Քրիստոնէութիւնը (Գործ. ԺԷ. 1-4, Ա թես. Ա. 9) : Պօղոս Թեասղոնիկէէն գնաց Բերթա, և անկէ Աթէնք և Կորնթոս : Այս ճանապարհորդութեան մէջ Պօղոսի ընկերները Շիզա և Տիմոթէոս անոր հետ չգացին Աթէնք և Կորնթոս (Գործ. ԺԷ. 14, 15), այլ յետոյ հասան : Ոմանք կը կարծեն թէ Շիզա և Տիմոթէոս եկան Աթէնք մինչ Պօղոս հոն էր, և թէ Տիմոթէոս այն քաղքէն զրկուեցաւ Թեոսղոնիկէ մասնաւոր պաշտօնով առ Քրիստոսնայս տեղւոյն, և թէ այս պաշտօնը կատարելէն ետքը նորէն դարձաւ առ Պօղոս որ այն միջոցին Կորնթոս հասած էր : Ա թես. Գ. 1, 2 համարին մէջ Պօղոսի խօսքին բնական մեկնութիւնը կը թուի թէ այս է : Ուրիշները կը կարծեն թէ այն խօսքերուն ճշանակութիւնը սա է որ, երբ Պօղոս Բերթայէն մեկնեցաւ, յարմար կը գտտէր երթալ Աթէնք, և հոն առանց ընկերի մնալ ժամանակ մը, որ պատհոսութիւն ըլլայ Տիմոթէոսի այցելութիւն ընել Թեոսղոնիկէցւոց, և միթիմարել այն տեղւոյն Քրիստոսնեաները նեղութեանց մէջ զօրս կը կրէին, և ապա գառնալ առ Պօղոս, Բայց Տիմոթէոս Բերթայէն թէ՛ նախ Թեոսղոնիկէ գացած և ապա Կորնթոս եկած ըլլայ, և թէ նախ Աթէնք և ապա Թեոսղոնիկէ գացած ըլլայ, Ա թես. Գ. 6 համարէն յայտնի է թէ, երբ Տիմոթէոս վերջապէս եկաւ գտաւ զՊօղոս Կորնթոս, Թեոսղոնիկէի եկեղեցւոյն վրայ այնպիսի լուրեր բերաւ :

որ առիթ առաւ առաքելոյն գրել իւր առաջին թուղթն առ Թեսաղոնիկեցիս : Ուստի այս է Պօղոսի թուղթերուն առաջինը որ հասած է մեր ժամանակը, և որ գրուած ըլլալու է յամի Տն. 52 կամ 53 : Առաքեալն առաջին գլխոյն մէջ գահանալով Աստուծմէ կը գովէ Թեսաղոնիկէի Քրիստոսնէից հաւատքը, սերը և համբերութիւնը : Բ. և Գ. գլուխներուն մէջ կը խօսի իւր և իւր ընկերաց աշխատութիւններուն վրայ Թեսաղոնիկէի մէջ, իւր սաստիկ բաղձանաց վրայ նորէն այցելութիւն ընելու անոնց, և ուրախութեան վրայ բարի լուրերուն համար զոր բերած էր Տիմոթէոս : Մնացեալ երկու գլուխները կը պարունակեն պատուէրներ որ յարմար էին մեծաւ մասամբ հեթանոսութենէ դարձող Քրիստոսնեաներէ նորոգ կազմուած եկեղեցւոյ մը զինակին :

Այս պատեհութեամբ առաքեալը կ'ուզէր նաև այն սխալը սրուն մէջ, ինչպէս կ'երևի, Թեսաղոնիկեցի Քրիստոսնեաներէն սմանք ինկած էին Քրիստոսի երկրորդ գալուտեան վրայ, կարծելով թէ կենդանի մնացողները միայն մասնակից պիտի ըլլային այն գալուտեան փառաց և երանութեան : Պօղոս կ'իմացնէ անոնց թէ, բոլոր հաւատացեալք, թէ մեռեալք և թէ անոնք որ կենդանի պիտի գտնուին այն գալուտեան օրը, հազորդ պիտի ըլլան Փրկչին փառաց և երանութեան :

Թեսաղոնիկեցւոց երկրորդ թուղթը գրուած է առաջինէն քիչ ետքը . քանզի Ա. գլխոյն 1 համարէն յայտնի է թէ Արղուանոս և Տիմոթէոս (բաղգատէ Ա թեո. Ա. 1) դեռ Պօղոսի հետ էին երբ այս թուղթը կը գրուէր, և Բ թղթոյն գլխաւոր նպատակն է աւելի տեղեկութիւն տալ Քրիստոսի երկրորդ գալուտեան վրայ որոյ վրայ համառօտիւ խօսած էր առաջին թուղթին մէջ : Այս Բ թուղթին Բ. գլխոյն մէջ կը զգուշացնէ Պօղոս Թեսաղոնիկէի Քրիստոսնեայ եղբայրները սխալ մեկնութիւն չտալ իր առաջին թղթոյն, և չմոլորիլ ուրիշներուն իբր թէ Աստուծմէ յայտնուած վարդապետութիւններէն, կարծելով թէ Քրիստոսի երկրորդ գալուտար մօտ առ գուրս էր : Ընդհակառակն, ինչպէս կ'ըսէ, այն երկրորդ գալուտար պիտի չըլլայ, մինչև չգայ այն մեծ ապոստամբութիւնը զոր կը նկարագրէ 3-11 համարներուն մէջ : Այս նշանա-

և որ համարներուն վրայ շատ մեկնիչներուն կարծիքն այս է թէ, «մեզաց մարդ» ըսելով առաքեալը կ'իմացնէ Պապութիւնը, այն ապահանեալ և հալածիչ զօրութիւնը որոյ յառկութիւնը զարմանալի կերպով յարմար կու գայ առաքելոյն նկարագրութեանը, և թէ՛ «ան որ հիմա կ'արդիլէ» խօսքով կ'իմացնէ Պօղոս Հռոմէական կառավարութեան քաղաքային իշխանութիւնը որ, ջորչափ սուեց, սանձեց Պապութեան պահանջունները բոլոր եկեղեցեաց վրայ վերին իշխանութիւն մը վարելու: Ոմանք կը կարծեն թէ առաքեալը կ'ականարկէ նախ Հրէութեան ապահանջութիւնը և հալածիչ զօրութիւնը և այն զօրութեան զսպուիլը Հռոմէական կառավարութեան ձեռքով, բայց կ'ականարկէ նաև Պապութիւնը առ որ յարմար կու գայ մանաւանդ առաքելոյն նկարագրից: Արդէն տեսնո՞ք թէ Հին Ատակարանին մէջ մարգարէից խօսքերը կը վերաբերէին շատ անգամ ժամանակակից կամ գրեթէ ժամանակակից դիպաց, բայց նաև ապագայ գարեբուն մէջ Մեսիայի թագաւորութեան հետ յարաբերութիւն ունեցող կարևոր դէպքեր կ'ականարկեն: Այսպէս կրնայ բուռն թէ Պօղոս կ'ականարկէ ոչ միայն իր ժամանակին, այլև հեռաւոր ապագայի մը վերաբերեալ դէպքեր:

Եթէ Թեսաղոնիկեցւոց երկու թուղթը բազմաթիւ անոնց գրացիներուն Փիլիպպեցւոց թղթոյն հետ, (քանզի Փիլիպպէ Մակեդոնիոյ քաղաք էր Թեսաղոնիկէի մօտ,) մեծ նմանութիւն միանգամայն տարբերութիւն կը գտնենք: Բոլոր այս թուղթերուն մէջ միեւնոյն Քրիստոսնեական ջերմ սէրը կը նշմարուի գրողին որտի՞ն մէջ: Ամենուէն մէջ առաքեալը կը խօսի միեւնոյն եղբայրական համարձակութեամբ իւր անձին և առաքելական աշխատութեանց վրայ: Բայց Թեսաղոնիկեցւոց թղթոյն մէջ խոսիւ կը խօսի անդարձ Հրէից բիրտ ընդգիմութեան վրայ (Ա Թես. Բ. 14-16), մինչ Փիլիպպեցւոց թղթոյն մէջ այնպիսի յայտնի թշնամութեան վերաբերեալ բան մը չըսեր, այլ կը գրուշացնէ միայն Քրիստոսնեաները Հրէից նուրբ փաստաբանութենէն որ կրնար զանոնք հրապուրել թշնամութեան և ուրիշ արտաքին արարողութեանց ապահանջելու մանաւանդ քան պարզապէս և բուրբոյն Քրիս-

տոսի արժանաւորութեան : Նաև իր անձին և գործերուն վրայ ըսուած խօսքերուն կողմանէ երևելի տարբերութիւն կը տեսնուի Թեոսողոնիկեցւոց և Փիլիպպեցւոց թուղթերուն մէջ : Թեոսողոնիկեցւոց թուղթերուն մէջ կը յիշէ Պօղոս իւր գործերն իբրև նոր կատարուած , բայց Փիլիպպեցւոց թղթոյն մէջ կը խօսի իբրև ի վաղուց աշխատող , որ շատ հակառակութիւն կրած էր , և կը զգար թէ մտա էր իր պաշտօնին վախճանը : Յիշեալ թուղթերուն մէջ այս տարբերութեանց հանդիպել շատ բնական էր , քանզի , ինչպէս արդէն յիշուեցաւ , Թեոսողոնիկեցւոց թուղթերուն գրութեան և Փիլիպպեցւոց թուղթին գրութեան ժամանակներուն մէջտեղ 10 տարուան միջոց կայ , և այս տասնամեայ ժամանակին մէջ մեծ փոփոխութիւններ գիպեցան : Քրիստոնեայ եկեղեցեաց սպառնացող վտանգն այլ ևս անգարձ Հրէից արսալքին հակառակութենէն չէր , այլ Աւետարանին վարդապետութիւններուն հետ փարիսեցական անձնարգարութեան վարդապետութիւնը խառնելու միամտնէն . և ինքն Պօղոս իբրև Քրիստոնեայ և իբրև առաքեալ Քրիստոսի անցած էր շատ փորձութիւններէ :



ԳԼ. ԻԲ.

Հոգևական նամակի և լեռայն առ Փիլիթոն

Առ Տիմոթէոս գրուած երկու նամակները և առ Տիտոս գրուածը շատ անգամ Հոգևական նամակներ կը կոչուին , ուս պատճառաւ որ ասոնք եկեղեցւոյ պաշտօնէից , այսինքն հովուաց , երիցանց , եպիսկոպոսաց և տարկաւագաց վերաբերեալ կանոններ և խրատներ կը պարունակեն :

Ընդհանուր բնկալեալ կարծիքն է թէ այս նամակները գրուեցան յետ արձակման Պօղոսի առաջին բանտարկութենէն ի Հռոմ : Առ Տիմոթէոս առաջին թղթոյն Ա. գլխոյն 3 համարին մէջ առաքեալը կը խօսի զՏիմոթէոս Եփեսոս թողած

ըլլալուն զրայ, մինչ ինք Մակեդոնիա կ'երթար: Գործոց Առաքելոց մէջ (Գլ. ԺԹ. 21, 22) կը յիշուի Պօղոսի Եփեսոսէ մեկնիլը Մակեդոնիա երթալու համար. բայց այս պատմութենէն կը տեսնուի մտնալանդ թէ, Պօղոս ոչ թէ յետո թողուց զՏիմոթէոս, այլ առաջուց զրկեց զնա Մակեդոնիա Երաստոսի հետ, և յետոյ, երբ Պօղոս գարձաւ Մակեդոնիայէն և Յունաստանէն յԱսիա, Տիմոթէոս անոր հետ էր: Ապա վերոյիշեալ 3 բարդ համարին մէջ Պօղոսի խօսքը կ'ազնարկէ ուրիշ ճամբարդութիւն մը զոր բրաւ Պօղոս Եփեսոսէ: Գործոց Առաքելոց Ի. գլխոյն մէջ կը կարգանք թէ Պօղոս Եփեսոսի նաւահանգստին Մելիտոսի մէջ տեսնուեցաւ Եփեսոսի եկեղեցւոյն երէցներուն հետ: Այս տեսութեան ատեն Պօղոս կը զգուշացնէ երէցները մոլար վարդապետներէ որ ետքը պիտի գային անոնց, և կամ անոնց մէջէն պիտի յառնէին: Արդ վերոյիշեալ թղթոյն մէջ (Ա Տիմ. Ա. 3, 4, 19, 20) առաքեալը կ'ըսէ թէ այնպիսի վարդապետներ արգէն կային Եփեսոսի Քրիստոսէից մէջ: Այս և ուրիշ պարագաներ կը ցուցնեն թէ առ Տիմոթէոս Ա թուղթը գրուեցաւ Պօղոսի այն տեսութենէն ետքը զոր բրաւ Եփեսոսի երէցանց հետ: Բայց որովհետեւ Գործոց Առաքելոց մէջ յիշուած չէ թէ Պօղոս այն տեսութենէն ետքը նորէն այցելութիւն բրաւ Եփեսոս, կը հետեւի թէ առ Տիմոթէոս Ա թղթոյն մէջ յիշուած այցելութիւնը յԵփեսոս, եղած ըլլալու է Գործոց Առաքելոց պատմութիւնը գրուելէն ետքը, այսինքն յետ առաջին բանտարկութեանն Պօղոսի ի Հռոմ, և քիչ մը ժամանակ յառաջ քան նորին երկրորդ բանտարկութիւնը: Առ Տիմոթէոս Բ թղթոյն Ա. 8, 16 և 17 համարներէն, և Գ. գլխոյն 16 համարէն յայտնի է թէ այս Բ թուղթը գրուեցաւ, երբ առաքեալը գարձեալ բանտի մէջ էր, և ինչպէս Գ. գլխոյն 6 և 7 համարներէն կը տեսնուի, արգէն կը գուշակէր թէ ընդհուպ պիտի մատնուէր ի մահ:

Այս երկու թուղթերը և առ Տիմոս գրուած թուղթը, որոնց մէջ առաքեալը սուս վարդապետաց յատկութիւնները ցուցնելով կը զգուշացնէ անոնց վարքէն և մոլար վարդապետութենէն, այնպէս նման են իրարու, որ յայտնի կը տեսնուի թէ

երեք թուղթերն ալ գրուած են իրարու մօտ ժամանակ, և յետոյ են քան զայլ թուղթս Պօղոսի: Այն են թաղարութեան դէմ, թէ Պօղոսի Ա Տիմ. Ա. 3 յիշուած այցելութիւնը յԵփեսոս յետոյ էր քան զտեսութիւնն զոր բրաւ Պօղոս Եփեսոսի երկցանց հետ ըստ Ի. գլխոյն Գործոց Առաքելոց, ս. մանք սա առարկութիւնը կ'ընեն. "Այն տեսութեան ժամանակ" կ'ըսեն, "Պօղոս կ'իմացներ երեցներուն թէ այլ ևս իր երեսը պիտի չտեսնէին": Այս առարկութեան կրնայ պատասխանուիլ թէ, այն խօսքը սա միայն կը նշանակէ թէ Պօղոս այն ատեն յոյս չունէր դառնալ անոնց: Ի. գլխոյն 22 բորգ համարին մէջ կ'ըսէ թէ կ'երթար Երուսաղէմ՝ չգիտնալով հոն իրեն պատահելու բաները: Այս անտուգութեան և երկիւղին համար թէ իւր եանքը երկայն պիտի չտուէր, կարծեց առաքելալը թէ այն տեսութիւնն իր Եփեսացի բարեկամներուն հետ վերջինն էր. այնպէս պատահեցաւ սակայն որ անոր շնորհուեցաւ ողջ մնալ և աշխատիլ աւելի երկար ատեն քան զոր ինք անատեն կը յուսար:

Հէթանոսաց մեծ առաքելալը, որ արդէն ծերացած էր և փորձառու և իր պաշտօնը կնքելու մօտ, հարկ համարեցաւ այս երեք հոգնական նամակներով գորովալի խրատներ տալ երկու երիտասարդ պաշտօնեաներու, զորս Աստուած ընտրած էր կարևոր դիրք մը բռնելու իր եկեղեցւոյն մէջ:

Ա Թոսղթի առ Տիմոթէոս

Այս առաջին թուղթն առ Տիմոթէոս գրուեցաւ, ինչպէս արդէն ըսինք, Պօղոսի ի Հռոմ՝ բանտարկութենէն ետքը, հաւանականապէս յամին 65 կամ 66: Տեղն սւր գրուեցաւ յայտնի չէ: Տիմոթէոս այն ատեն Եփեսոս էր, և թուղթին նպատակն էր իմացնել Տիմոթէոսի թէ ինչպէս կատարելու էր հոն իր պարտականութիւններն իբրև Քրիստոսի պաշտօնեայ, և խրատ տալ եկեղեցւոյ գործերուն հետ կապակցութիւն ունեցող քանի մը բաներու վրայ, զորօրինակ թէ պէտք էր ազօթք մատուցանել ամէն վիճակի և աստիճանի մարդոց համար, թէ ինչպէս վարուելու էին կանայք հրապարակական

ժողովներու մէջ, թէ ինչպիսի մարդիկ ըլլալու էին ընտրուելու եպիսկոպոսոսնք և սարկաւազունք, թէ ինչպէս վարուելու էր Տիմոթէոս երեցանց հետ, թէ ինչպիսի վարք ունենալու էին կանայք, մանաւանդ պառաւեալ սյրիք, այլովքն հանդերձ :

Բ ԹՈՒՂԷ ԱՌ ՏԷՄՈՒԷՆՈՍ

Այս Թուղթն, ինչպէս արգէն ըսուեցաւ, Պօղոսի երկրորդ բանտարկութեան ատենը Հռոմ գրուած էր այն քաղքէն : Այս Թուղթին մէջ Տիմոթէոսի տրուած խրատներն աւելի ընդհանուր են քան Ա. Թուղթին մէջ տրուածները, միանգամայն աւելի մտերմական և անձնական են : Առաքեալն համառօտիւ կը յիշէ իւր վարքը և աշխատութիւնները սր արդ վերջանալու վըայ էին, և կը յորդարէ զՏիմոթէոս փութով և հաւատարմութեամբ իւր պարտականութիւնները կատարել, և ի վախճանի թղթոյն կը ստիպէ զնա շուտով գալ իրեն ի Հռոմ : Պարագանքը սր առիթ տուին այս Թուղթը գրելու՝ յարմար էին տպաւորելու իւրաքանչիւր Քրիստոնէի, մանաւանդ իւրաքանչիւր Քրիստոնեայ պաշտօնէի սրտին մէջ ծերունի առաքելոյն արդու և վեճ խօսքերը :

ԹՈՒՂԷ ԱՌ ՏԷՄՈՍ

Այս Թուղթը գրուեցաւ, ինչպէս կ'երևի, յառաջ քան զԲ Թուղթն առ Տիմոթէոս, քանզի այն Բ Թուղթին գրուած ատենը Պօղոս բանտի մէջ էր Հռոմ, մինչ, երբ այս (առ Տիտոս) Թուղթը կը գրէր, առաքեալն արձակ էր, և կը բաղձար առաջիկայ ձմեռն անցունել Նիկոպոլիս (Գլ. Գ. 12) : Շատ քաղաքներ հին ատենը կոչուած են այս անուամբ : Հոս յիշուած Նիկոպոլիսն էր յԵգիպտոս, Ազրիական ծոզուն արևելեան եզերքը : Կը կարծուի թէ Պօղոս իւր դիտաւորութեան համեմատ գնաց այս քաղաքը, և հոն բռնուելով զրկուեցաւ Հռոմ : Իւր Թուղթին մէջ առ Տիտոս, առաքեալը խրատ կու տայ Տիտոսի գալ Նիկոպոլիս : Հաւանա-

կան է թէ Տիտոս գնաց հոն , և կամ զըզուեցաւ անկէ Նիկուպոլայ հիւսիսային կողմի գաւառը Դաղմատիա , և կամ թերևս առաքելոյն հետ գնաց Հռոմ , և անկէ եկաւ Դաղմատիա (Բ. Տիմ. Գ. 10) : Տիտոս Գործոց Առաքելոց մէջ չի յիշուիր : Գաղատացաց թուղթէն (Գլ. Բ. 3) կը սորվինք որ Տիտոս ազգաւ Յոյն էր , և Պօղոսի հետ գնաց Երուսաղէմ , հոն գումարուած ժողովին առեմբ , և կորնթացաց Բ թըղթոյն պլլեպլլ տեղերէն յայտնի է թէ Տիտոս ընկեր և օգնական էր Պօղոսի անոր աշխատութեանց մէջ ի Մակեդոնիա և Յունաստան : Երբ այս թուղթը կը գրուէր առ Տիտոս , Տիտոս կրետէ էր ուր թողած էր զնա Պօղոս կարգադրել քանի մը կարևոր գործեր , և երէցներ ձեռնադրել կղզւոյն եկեղեցիներուն համար : Թէ Աւետարանը նախ երբ քարոզուեցաւ կրետէ և որու ձեռամբ՝ չի գիտցուիր : Պօղոս հանդիպեցաւ հոն երբ Հռոմ կ'երթար , բայց պատահութիւն չունեցաւ անատեն Աւետարանը քարոզել հոն : Թերևս Պենտեկոստէի օրը Երուսաղէմ գտնուելով Պետրոսի քարոզութիւնը լսող անձինք ի սկզբան քարոզեցին Աւետարանը կրետէ կղզին (Գործ. Բ. 11) : Տիտոսի թուղթին մէջ յիշուած այցելութիւնն ի կրետէ՝ ըրաւ Պօղոս հաւանականապէս ի Հռոմ առաջին բանտարկութենէն արձակուելէն ետքը : Բայց կ'երևի թէ շատ կարճատե եղաւ առաքելոյն այցելութիւնն ի կրետէ , և թէ խնամ տարուելու շատ բաներ կային հոն , այնպէս որ Պօղոս թողուց զՏիտոս այն կղզին , մինչ ինք իւր քարոզութեան դաշտին քանի մը ուրիշ տեղերու այցելութեան կ'երթար : Այս թուղթին մէջ առաքելոյն խրատներն առ Տիտոս մեծ նմանութիւն ունին առ Տիմոթէոս առաջին թղթոյն մէջ ըսուածներուն : Բաց այն խօսքերէն որ այրեաց համար , և կանանց հրապարակաւ չվարդապետելուն վերջոյ ըսուած են առ Տիմոթէոս թուղթին մէջ , Տիտոսի թուղթը գրեթէ միևնոյն պատուէրները կը պարունակէ , միայն կը յաւելու խրատներ երիտասարդաց , և մասնաւոր կերպով կը յորդորէ զկրետացի Քրիստոնէայոս հնազանդել իշխանութեանց , և ըլլալ զգաստ և քաղցրաբարդ : Այս խրատներուն հետ խառն են , ինչպէս առ Տիմոթէոս Ա թուղթին

մէջ, Տիտոսի անձին ուղղեալ յորդորներ, և խրախուսական անկարկուծութիւններ Աստուծոյ շնորհաց զբայ Աւետարանով, և ի զերայ երկրորդ գալտեանն Քրիստոսի: Ինչպէս առ Տիմոթէոս թուղթէն և Պողոսի ուրիշ թուղթերէն, նոյնպէս այս թուղթէն յայտնի է թէ եկեղեցիներուն զարչութիւնն անասնն շատ պարզ էր: Երէց և եպիսկոպոս անսունները յայտնապէս միեւնոյն պաշտօնը կ'ականարկեն (Գլ. Ա. 5, 7) ուրիշ պաշտօնեաներ յիշուած չեն բաց ի սարկաւազաց (Ա Տիմ. Գ. 8), և հեպքն անգամ չկայ կղերին բաժանմանն այլեայլ կարգերու որ յետ ժամանակաց առին սկիզբ: Այս բաները բաւական են ցուցնելու թէ այն նամակները գրուած են առաքելոց ժամանակ, և չեն գործ, ինչպէս սմանք կը կտրծեն, այնպիսի մարդաց որ յետոյ են քան զՊողոս: Եթէ այն նամակները յետին ժամանակի մարդոց գործ ըլլային, ապաքէն անոնց մէջ նշմարանքը պիտի տեսնուէր այն եկեղեցական գրութեանց որ յետոյ ուրեմն հաստատուեցան:

Թոաղն առ Փիլիմոն

Այս կարճ թուղթը, թեպէս Տիտոսի թուղթէն ետքը կու գայ, գրուած է ինչպէս արդէն յիշուեցաւ, Եփեսացւոց, Կոզոսացւոց և Փիլիպպեցւոց թուղթերուն հետ միեւնոյն ժամանակ: Երկրորդ համարին մէջ առաքեալը ողջոյններ կը զրկէ Արքիպպոսի որ յիշուած է նաև Կոզոսացւոց թղթոյն մէջ իբրև Քրիստոսնեայ պաշտօնեայ ի Կոզոսայ: Ասկէ կը մակարեբուի թէ նաև Փիլիմոն Կոզոսացի էր: Պողոսի խօսքերն այս նամակին մէջ (համար 5-7) կը ցուցնեն թէ Փիլիմոն հարուստ էր, միանգամայն շատ բարերար և նախանձախնդիր Քրիստոսնեայ: Ոնեոսիմոս ժամանակ մը Փիլիմոնի բուպասաւորն էր (համար 16), բայց փախած էր անոր քովէն Հռոմ, թերևս գողութեան կամ ուրիշ յոնցանաց համար (համար 18): Ոնեոսիմոս Հռոմ ծանօթացած էր առաքելոյն, և անոր միջոցաւ գարձած էր ի Քրիստոսնեութիւն: Պողոս այս նամակով ետ կը զրկէ զՈնեոսիմոս իւր նախկին տիրոջը, կը գովէ զնա, և կը խնդրէ Փիլիմոնէն սիրով ընդունել զՈ-

նեսիմոս : Այս Թուղթն ամէն դարու Քրիստոնեաներէն յարգի համարուած է իբրև երևելի օրինակ Քրիստոնեական քաղցրութեան և գրովոյ :



ԳԼ. ԻԳ.

Թուղթ առ Եբրայեցիս

Եբրայեցւոց Թուղթին հեղինակին զլայ այլևայլ կարծիքներ եղած են : Պօղոսի միւս երեքասասան Թուղթերուն իւրաքանչիւրը կը կրէ իւր ճակատը Պօղոս առաքելոյն անունը , երբեմն նաև անոր ընկերներուն անունները : Եբրայեցւոց Թուղթին մէջ միայն յիշուած չէ ոչ Պօղոսի և ոչ ուրիշի մը անունը : Թուղթը նաև կը սկսի ճառի մը մանաւանդ քան նաև մակի մը ածով , և դէպ ի վերջը միայն ուր բարեկներ և ուրիշ անձնական պարագաներ մէջ կը բերուին , նամակի ձև կ'առնէ գրուածը : Սակայն նախնի Քրիստոնէից մէջ , մանաւանդ արեւելք , ուր նախ սկսաւ տարածուիլ նամակը , ընդհանուր կարծիք էր թէ Պօղոս էր այս Թուղթին հեղինակը , թէպէտ մատենագիրներէն ոմանք կարծեցին թէ Պօղոս անձամբ չգրեց այս Թուղթը , այլ անոր իմաստը միայն յայտնելով Ղուկասու , իմբագրութիւնը Թողուց անոր : Քննիչք այս Թուղթին Ղուկասէ գրուած ըլլալուն ապացոյց կը համարին ռճոյ նմանութիւնը որ կայ այս Թուղթին և բուն Ղուկասու գրուածներուն , այն է երրորդ Աւետարանին ու Գործոց Առաքելոց մէջտեղ : Ոմանք կը կարծեն թէ Գործոց Առաքելոց մէջ (Գլ. ԺԸ. 24 և Ա կորնթ. Ա. 12, ևն) յիշուած Ապօղոս գրեց Եբրայեցւոց Թուղթը : Այլք Բառնարասոյ կ'ընծայեն զայն : Հաւանական է թէ Պօղոսի ընկերներէն ոմանք ներշնչեալ մարդիկ էին , ուստի և անոնց գրուածները կրնային ընդունուիլ իբրև Աստուածաշունչ : Բայց ընդհանուր ընկալեալ կարծիքը վերը յիշուածն է , այսինքն թէ Պօղոս գրեց Եբրայեցւոց Թուղթը : Թուղթին վերջին գլխոյն 24

Համարին մէջ հեղինակը ողջոյններ կը գրէ Իտալացի Քրիստոնէայ եղբայրներէ : Ասկէ , և նոյն գլխոյն 2 և 3 համարներէն կը մտկաբերուի թէ Պօղոս գրած էր այս թուղթը իւր ի Հռոմ բանտարկութեան վերջը : Տես նաև Ժ. 34 , ԺԳ. 18, 19 , 23 : Բալթր թուղթին մէջ Հրէից տաճարին պաշտամանց և այլևայլ Հրէական ծիսոց և արարողութեանց վրայ այնպիսի կերպով կը խօսուի , որ կը հասկցուի թէ այն բաները գեռ կը շարունակուէին : Զարօրինակ Ժ. գլխոյն 11 համարին մէջ կ'ըսէ . "Ամէն քահանայ օր ըստ օրէ իր պաշտօնին մէջ կը կենայ : " "Նը կենայ" կ'ըսէ , ոչ թէ կը կենար : Ասկէ կը մտկաբերուի թէ թուղթը գրուեցաւ յառաջ քան տաճարին կործանումը որ եղաւ յամի Տն. 70 երբ Հռոմայեցիք առին զԵրուսաղէմ : Տիտոսը և բալթր նիւթը կը ցուցնեն թէ նամակը գլխաւորապէս Քրիստոնէութեան դարձող Հրէից համար գրուեցաւ : Ոմանք կը կարծեն թէ Եբրայեցաց թուղթը զբնուեցաւ նախ Երուսաղէմի եկեղեցւոյն , ուր Հրէութենէ դարձող շատ Քրիստոնէաներ կային : Թուղթին մեծագոյն նպատակն է ցուցնել Քրիստոնէական անտեսութեան գերազանց ըլլալը քան զՄովսիսականն : Հեղինակը կը ցուցնէ թէ Քրիստոս , Աստուծոյ որդին , ամենայնիւ կատարեալ փրկիչ է , քան զհրէշտակո մտազոյն առ Հայր , աւելի մեծ փառաց արժանի քան զՄովսէս , և իբրև միջնորդ՝ աւելի կարեկից և աւելի ընդունելի Աստուծոյ քան որեւիցէ քահանայապետ : Անոր հանգիստը կը մնայ հաւատացելոյն յերկինս : Աստուծոյ և Հրէից մէջտեղ ուխտին նպատակն էր ծառայել իբրև պատրաստութիւն նոր ուխտին որոյ պաշտօնեայն է Քրիստոս : Քրիստոսի քաւութիւնը բուն յաւիտենական քաւութիւն է , որոյ անցաւոր ստուերը միայն էին Հրէական սեղաններուն զոհերը : Քրիստոսով յայտնուած է անձեռագործ երկնաւոր քաղաք մը . ուստի և անոնք որ կ'ընդունին զՔրիստոս՝ հաւատալու են անոր բոլոր սրտիւ , անտես հանգերձելոյն վրայ ունենալու են այնպիսի զօրաւոր հաւատք որպիսի էր նախնի սրբոց հաւատքը , ըլլալու են համբերող աշխարհի փորձանաց մէջ , առ ամենայն ինչ որ կրնայ պատահիլ պատրաստ , և լի զօրութեամբ և յուսով և սրբութեամբ և սիրով :

Գ.Լ. ԻԴ.

Կախարչիկէ Նոսոյն

Յակորայ Թուղթը, երկոքին Թուղթը Պետրոսի, առաջին Թուղթ Յովհաննու, և Թուղթն Յուդայի երբեմն կը կոչուին կախարչիկէ, այսինքն ընդհանրական Թուղթը, վասն զի ուղղեալ են սչ Թէ, Պօղոսի մինչև ցարդ յիշուած Թուղթերէն շատերուն պէս, մասնաւոր եկեղեցիներու, այլ առհասարակն հաւատացեալս, կամ առ դասս դասս հաւատացելոց: Զորօրինակ, Յակորայ Թուղթն ուղղուած է երկոտասան ցեղից որ ի սփիւռս հեթանոսաց, և Պետրոսի Թուղթն՝ առ պանդուխտս որ ի Պոնտոս, Գաղատիա, այլովքն հանգերձ: Միայն Յովհաննու Բ. և Գ. Թուղթերը կը թուին գրուած առ մասնաւոր անձինս:

Յակոբայ Նոսոյնը

Այս Թուղթին հեղինակն իրեն համար կ'ըսէ լոկ "Յակորոս՝ Աստուծոյ ու Տէր Յիսուս Քրիստոսի ծառան," և չի մացներ Թէ Նոր կտակարանին մէջ յիշուած Յակորոսներուն որն էր: Զբերեալս որդին (Մատթ. Գ. 24, Մարկ. Գ. 17) և Յովհաննու եղբայրը (Մատթ. Ժ. 1 և Մարկ. Ե. 37) Յակորոս սպանուեցաւ (Գործ. ԺԲ. 2) այնպէս կանուխ (յամի Տն. 44) որ պատճառ չկայ կարծելու Թէ սոյն Յակորոս գրեց այս Թուղթը, քանզի անոր մարտիրոսութեան ատենը Քրիստոսնէութիւնը Պաղեստինէ դուրս գտնուող Հրէից մէջ դեռ այնչափ տարածուած չէր որչափ կ'երևի Թէ էր նամակին գրուած ժամանակը, ինչպէս յայտնի է առաջին համարէն: Ընդհանուր կարծիքն է Թէ նամակին հեղինակն էր Գործ. ԺԵ. 13, ԻԱ. 18, և Գաղ. Ա. 19 և Բ. 9 յիշուած Յակորոս որ կը կոչուէր եղբայր Տեառն (Գաղ. Ա. 19), և երկար ատեն երևելի պաշտօն մը վարեց Երուսաղեմի եկեղեցւոյն մէջ: Ի վազուց այն քաղքին մէջ բնակած, և Հրէ-

ից զգացումներուն և խորհուրդներուն քաջ տեղեակ ըլլալով, կրցաւ այսպիսի ազդու նամակ մը գրել անոնց: Ընդհանուր ընկալեալ կարծիքն է թէ այս Յակորոս Մատթէի ժ. Գ. գլխոյն 55, և Մարկոսի Զ. գլխոյն 3 համարներուն մէջ յիշուած Յակորոսն էր, որոյ եղբարքն էին Յովսէս, Սիմոն և Յուդա, որոց ամենուն համար քուսած է թէ եղբարք էին Յիսուսի: Ոմանք կը կարծեն թէ սոյն այս Յակորոսն է այն անձը որ Մատթէի ժ. գլխոյն 3, Մարկոսի Գ. գլխոյն 18, և Գործոց Առաքելոց Ա. գլխոյն 13 համարներուն մէջ կը յիշուի իբրև Ալփեայ որդի և իբրև երկոտասան առաքելոց մին: Այս վերջին կարծիքը պաշտպանողները կը կարծեն թէ յիշեալ չորս եղբարք էին սրդիք Ալփեայ, և թէ, այս Ալփեայ կամ եղբայր էր Յիսուսի կարծեցեալ հօրը Յովսէփայ, և կամ անոր կինը Մարիամ, Յիսուսի մօրաքոյրն էր, այնպէս որ յիշեալ չորս եղբարք և Յիսուս երկու եղբարք կամ երկու քերց որդիներ էին, ոչ թէ հարազատ եղբարք, թէպէտ Քրիստոսի հետ այսչափ մերձաւոր ազգականութեան համար կոչուեցան եղբարք: Գիտենք արդարև որ եղբայր բառը յաճախ կը տրուէր մերձաւոր ազգականաց, ինչպէս կը տրուէր միեւնոյն ծնողաց զաւկներուն: Այլք կը կարծեն թէ Ալփեոս և Յովսէփ թերևս մեռած էին ի կենդանութեան Յիսուսի, և թէ այն երկու ընտանիքն յետոյ մէկտեղ ընկեցան իբրև մէկ ընտանիք, և թէ նաև այս պատճառաւ Յակորոս և անոր եղբայրները Եղբարք Տեսան կոչուեցան: ԺԲ. առաքելոց ցանկին մէջ ըստ Մատթէոսի (ժ. 2-4) և Մարկոսի (Գ. 16-19), երկու անձինք ունին Յակորոս անունը, մին՝ Զեմբեդեայ որդին զոր սպան չէրովդէս, ինչպէս առաջ յիշուեցաւ, և միւսն՝ Ալփեայ որդին: Արդ եթէ Յակորոս որ երկար ատեն նստաւ Երուսաղէմ, և, ինչպէս առհասարակ կը կարծուի, գրեց նամակը որոյ վրայ է մեր խօսքը, Ալփեան Յակորոսը չէր, ապա երկոտասան առաքելաբէրէն չէր: Բայց նոյն Յակորոսը Գործոց ժԲ. 17, և մանաւանդ ժԵ. 13 համարներուն մէջ կը գտնենք այնպիսի կերպով յիշուած որ կը տեսնուի թէ էր ի թուոյ երկոտասանից. իսկ Գաղատացւոց Ա. 19 համարին մէջ աւելի բացա-

յայտ ակնարկութիւն կայ թէ նոյն Յակոբոս երկոտոտաննէրէն էր, միայնգամայն Տէրոջը եղբայրը :

Դարձեալ, ըստ Ղուկասու (Ձ. 14-16), առաքելոց ցանկին մէջ կը գտնենք Յուդա մը, եղբայր Յակոբայ, այսինքն, ինչպէս խօսքին կարգէն յայտնի է, քիչ մը առաջ յիշուած Աւփեան Յակոբայ : Եւ որովհետեւ Մատթէի ժ.Գ. 55 և Մարկոսի Ձ. 3 համարներուն մէջ կը կարդանք որ երկու եղբայրք, Յակոբոս և Յուդա, Տէրոջը եղբայրներէն էին, ապա կը հետեւի թէ Տէրոջը եղբայրներէն երկուքը առաքեալ էին :

Ասոր դէմ կ'առարկուի թէ Յովհաննու Է. 5 համարին մէջ ըստուած է թէ Տէրոջը եղբայրները չէին հաւատար անոր, նոյն բանը կ'ակնարկեն նաև Մատթէոս (ժԲ. 46-50) և Մարկոս (Գ. 31-35) : Այս առարկութեան ու պատասխանը կը տրուի . Այն խօսքը թէ Յիսուսի եղբայրները չէին հաւատար անոր, չի նշանակեր ի հարկէ թէ բոլորն ալ չէին հաւատար : Չորս եղբայրք մէջ կրնար բաժանուած մը եղած ըլլալ . Թերևս Յակոբոս և Յուդայ կը հաւատային Յիսուսի, իսկ Ամոն և Յովդէս չէին հաւատար, և թերևս այս վերջին երկուքն էին որ Յովհ. Է. 3-5 յիշուած խօսքերն ըսին : Անոնք որ կը կարծեն թէ այս թուղթը գրող Յակոբոս Ափեոսի որդին չէր, ոչ ալ երկոտոտան առաքեալներէն մին, կ'ըսեն թէ, թէպէտ Յակոբոս Տէրոջը եղբայրն էր, Քրիստոսի Մեսիա ըլլալուն չհաւատաց մինչև խաչելութեան ատենը, բայց անատեն կամ յարութենէն ետքը հաւատաց, և միւս եղբայրներովն հանդերձ յարեցաւ առաքելոց խումբին : Տէրոջը եղբայրներն անոր աշակերտաց հետ կը յիշուին Գործոց Առաքելոց Ա. գլխոյն 14 համարին մէջ :

Բայց թէ այս թուղթին հեղինակը Յակոբոս երկոտոտան առաքեալներէն էր թէ ոչ, թողունք այս խնդիրը, Գործոց Առաքելոց պատմութենէն և նոյն իսկ Յակոբոսի թուղթէն յայտնի է թէ Յակոբոս առաքելոց պէս աստուածային ազդմամբ և հեղինակութեամբ գրեց : Առհասարակ կը կարծուի թէ այս Յակոբոս իր բոլոր կենացը մէջ մնաց Երուսաղէմ, և թէ այն քաղքին կործանմանէն քիչ առաջ սպանուեցաւ հոն Հրեաներէն : Հին Քրիստոսնայ մատենագիրք կ'ըսեն թէ

Յակորոս շատ բարի անձ էր, և այս պատճառաւ կոչուեցաւ «Արդար Յակորոս» :

Յակորայ թուղթին ուղղեալ է առ Քրիստոսնայ Հրեայս ցրուեալս, այսինքն անոնց որ առևտրոյ համար կամ ուրիշ պատճառաւ կը բնակէին Պաղեստինէ դուրս քաղաքներ և գիւղեր : Այս թուղթին մէջ խտիւ կը խօսի առաքեալն այն մեղքերուն դէմ որ սովորական էին այս Հրէից մէջ, և շատ մարդոց վրայ յաճախ կը տեսնուէին, ինչպէս՝ հպարտութիւն, սիրել զաշխարհ անկարգ կերպով, աչառել մեծատանց, անարգել զազբատս, տկարք հարտատահարել ջանալ, նաև փառասիրութիւն, նախանձ, գողութիւն, յափշտակութիւն և բաւական համարիլ ունայն հաւատք մը որ մարդուս բարոյականին բնաւ ազդեցութիւն չունի : Ոմանք կը կարծեն թէ հաւատոյ վրայ Յակորայ վարդապետութիւնն այս թուղթին մէջ հակառակ է Պողոսի թուղթերուն վարդապետութեանը : Յակորոս կ'ըսէ . «Մարդս գործքերով կ'արդարանայ, ու ոչ թէ մինակ հաւատքով» (Յակ. Գլ. Բ. 24), իսկ Պողոս կ'ըսէ, «Մարդք հաւատքով կ'արդարանայ առանց օրէնքին գործքերուն» (Հռոմ. Գ. 28) : Բայց այս երկու խօսքերուն մէջտեղ իրօք հակառակութիւն չկայ : Յակորոս ըսել կ'ուզէ թէ բարի գործքերը հաւատոյ հետ անբաժանելի կերպով կից են, հաւատոյ պտուղներն են, վերջապէս հաւատքը գործքէն կը ծանչցուի : Հաւատք մը որ բարի գործ յառաջ չի բերեր՝ մեռեալ է և օգուտ չունի մարդուս : Իսկ Պողոսի միտքն այս է թէ օրէնքին հրամաններուն արտաքուստ միայն հնազանդիլը, այսինքն հնազանդութիւն մը որ չի բերի ի հաւատոյ և ի սիրոյ որ առ Աստուած, սչինչ է յաչս Աստուծոյ : Անտարակոյս Պողոս ըսել չուզեր թէ մարդիկ Աստուծոյ օրէնքին թէ՛ հնազանդին և թէ՛ չհնազանդին հոգ չէ, այլ ընդհակառակն կ'ըսէ թէ, եթէ մարդիկ հաւատք ունին, հարկաւ կը հնազանդին Աստուծոյ օրէնքին : Երբ մարդ կը հաւատայ և ի սրտէ կ'ընդունի ինչ որ Աստուած կ'ըսէ, և կ'ապաւինի անոր, կը ստիպուի բոլոր զօրութեամբ հնազանդել Աստուծոյ պահանջումներուն (Հռոմ. Զ. 1-6. Ը. 1-5) : Երկու առաքեալք ալ իրօք կը սորվեցնեն միևնոյն կարեւոր

ճշմարտութիւնը, այսինքն թէ կենդանի հաւատք հարկաւոր է: Յակոբոս կը ցուցնէ այս հարկաւորութիւնը հաստատելով բարի գործոց կարեւորութիւնը, բարի գործոց որ կենդանի հաւատքէ յառաջ կու գան ոչ թէ մեռեալ հաւատքէ:

Պօղոս կը ցուցնէ այս կենդանի հաւատոյ հարկաւորութիւնը՝ ցուցնելով թէ Աստուած կը պահանջէ այսպիսի հաւատք, և թէ այսպիսի կենդանի հաւատքէ կը բխէ Աստուծոյ օրէնքին պատուէրներուն ճշմարիտ հնազանդութիւնը:

Թուղթ Գեորգի

Պետրոսի առաջին թուղթն ուղղեալ է Պոնոսի, Գաղատիոյ, Կապադովկիոյ, Ասիոյ և Բիւթանիոյ մէջ ցրուած օտարականաց: "Օտարականներուդ որ ցրուած էք" խօսքը հաւանականապէս կը ցուցնէ այնպիսի մարդիկ առ որս ուղղած է Յակոբոս իւր թուղթը, այսինքն տասուերկու ցեղերու որ ամէն կողմ ցրուած էին կամ յիշեալ գաւառներուն մէջ իբրև պանդուխտ բնակող Հրէից որ բնդուած էին Քրիստոնէութիւնը: Այն երկիրներուն մէջ Քրիստոնէայ եկեղեցիք թերևս մեծաւ մասամբ դարձած Հրեաներէն կը բազկանային, ուստի և առաքեալը գլխաւորապէս անոնց կ'ուղղէ իր խօսքը: Չի մոռնար սակայն հեթանոսութենէ գարձողներն որ այն եկեղեցեաց մէջ կը գտնուէին: Այս յայտնի է Դ. Գլ. 3 համարին խօսքերէն:

Ըստ Ե. գլխոյն 13 համարին այս թուղթը գրուեցաւ Բաբելոնէ: Ոմանք կը կարծեն թէ այս անուամբ կը հասկցուի Հռոմ քաղաքը: Բայց պարզ և բնական իմաստին նայելով կրնայ հասկցուիլ բուն իսկ Բաբելոն, Քաղդէացոց անուանի մայրաքաղաքը: Երբ առաքեալը Փոքուն Ասիոյ այլևայլ գաւառաց անունները կու տայ որոնց մէջ կը գտնուէին ցրուեալներն առ որս կը գրէ, այն գաւառները կը յիշէ այն կարգաւ որով պիտի հանդիպէր անոնց եթէ Բաբելոնէն գար այն գաւառներուն այցելութիւն ընելու: Կը յիշէ նախ Պոնոս որ մօտադոյնն է Բաբելոնի, և հուսկ վերջը՝ Բիւթանիա որ հեռաւորագոյնն է յիշեալ քաղաքէն: Ընդհանրապէս կը կար-

ծուի թէ այս թուղթը գրուեցաւ ի մէջ 63 և 68 ամաց յետ Քրիստոսի : Բ Պետր. Ա. 14, 15 համարներէն կը մակարերուի թէ Պետրոսի Բ. թուղթը գրուեցաւ քիչ ժամանակ յառաջ քան զմահ առաքելոյն : Կը մակարերուի նաև Բ. Թըղթոյն Գ. գլխոյն առաջին համարէն թէ երկու թղթոց գրուելուէն մէջտեղ երկար ժամանակ չանցաւ : Ուստի երկու թուղթերն ալ հաւանականապէս գրուեցան ոչ բազում ժամանակ յառաջ քան զմահ առաքելոյն : Թէ երբ դիպեցաւ անոր մահը՝ չի գիտցուիր . ընդհանուր կարծիքն այս է թէ դիպեցաւ Ներոն կայսեր հալածանաց ատենը որ վերջացաւ յամի Տն. 68 :

Թուղթին նպատակն է քաջալերել և զօրացնել զՔրիստոսնեայս այն «նեղութեան բորւոքին» ատենը «որ զանոնք փորձելու համար կ'ըլլար» (Ա Պետր. Ա. 6, 7 և Գ. 12) : Այս նպատակաւ առաքեալն անոնց առջև կը դնէ երկնաւոր ժառանգութեան մեծութիւնը և փառքը, որ պահուած է անոնց որ Քրիստոսի պատուական արեամբը գնուած են : Հանդերձ այսու կը յորդորէ նաև զանոնք զգուշանալ ապականութեան գործքերէն որոնց տեղի տուած էին մինչ չեւ Քրիստոսնէութիւնը ընդունած (Բ. 1, Գ. 1, 2, 3), կատարել հաւատարմութեամբ իրենց Քրիստոնէական պարտիքը, և այսպէս բերել ուրիշները Քրիստոսի ծառայութեան : Արջին գլխոյն մէջ կու տայ մասնաւոր խրատներ նախ երիցանց իրենց պաշտօնին վրայ, և ապա համօրէն հաւատացելոց :

Բ. թուղթը գրուած է, ինչպէս տեսանք, հաւանականապէս առաջինէն քիչ ետքը, բայց թէ ուստի՝ յայտնի չէ : Յայտնի է սակայն թէ գրուած է անոնց՝ առ որս գրուեցաւ առաջինը, թէպէտ թուղթին պատճենին խօսքերն աւելի ընդհանուր են հոս քան առաջինոյն մէջ :

Պետրոսի երկրորդ թղթոյն վաւերականութեան վրայ տարակոյս կար նախնի Քրիստոնէից մէջ՝ այս երկրորդին ու առաջինոյն մէջտեղ տեսնուած ոճոյ տարբերութեան համար . և թերևս հեռու գաւառներ ընակող Քրիստոնէից ուղղեալ ըլլալուն համար ի սկզբան լաւ ճանչցուած չէր ընդհանուր Քրիստոնէականերէն : Բայց այս տարակոյսը յետոյ ուրիմն վեր-

ցաւ, և թուղթը համարուեցաւ ներշնչեալ գրուածներէն մին : Այս երկրորդ թղթոյն բուն նպատակն է զգուշացնել զՔրիստոնեայս այն մոլորութիւններէն որ սկսած էին սարգիլ վարդապետութեան և բարոյականի մէջ գրեթէ այն ժամանակները որ այս թուղթը կը գրուէր : Սուտ և խաբեայ վարդապետաց նկարագիրը որ կայ այս Բ. թղթոյն մէջ՝ շատ յտտակ է, և մեծ նմանութիւն ունի նոյն տեսակ մարդոց նկարագրին զոր Յուդայի թուղթին մէջ կը կարգանը : Այս նմանութեան մերձաւորութիւնը կարծեցուց ոմանց թէ Պետրոս տեսած էր Յուդայի թուղթը երբ կը գրէր իրենը, և թէ Յուդայի նկարագրէն ինչ ինչ առնելով կ'ուզէր ցուցնել իր ընթերցողներուն թէ Յուդայի թուղթն արժանի էր մտադիւր ընթերցման :

Գ. գլխոյն և 16 համարներուն մէջ Պօղոսի թուղթերուն վերաբերեալ խօսքը կը ցուցնէ թէ որչափ ընդհանուր տարածուած էին այն թուղթերը նոյն իսկ ի կենդանութեան Պետրոսի :

Թոուղթ + Յովհաննոս

Սիրոյ ոգին զոր կը շնչեն Յովհաննոս երեք թուղթերը, ինչպէս նաև անոնց գրութեան ոճը, կը հաստատեն այն միշտ տիրող կարծիքը թէ Յովհաննոս թուղթերը գրուած են ի նմին իսկ Յովհաննէ որ գրեց չորրորդ Աւետարանը : Աստարակ կը կարծուի թէ առաջին թուղթը գրուեցաւ Յովհաննոս վախճանին մօտ, և յետոյ քան զԱւետարանն : Ուստի հաւանական է թէ գրուեցաւ Եփեսոս սւր այս Առաքեալն անցուց իւր վերջին տարիները, և գրուեցաւ յօգուտ այն կողմերը բնակող Քրիստոնէից որ Յովհաննոս մասնաւոր սէրն ու խնամքը կը վայելէին : Թուղթին գլխաւոր նիւթն է Աստուածորդոյն մարդեղութիւնն յանձին Քրիստոսի աշխարհի փրկութեան համար : Այսպէս ընդունելով զՔրիստոս Որդի Աստուծոյ, մարդ կը միտնայ ընդ Աստուծոյ և կը ժառանգէ յաւիտեանական կեանքը : Այս միութեան և յաւիտեանական կենաց ժառանգութեան ապացոյց են սէր առ Աստուած, սէր առ համօրէն Քրիստոնեայս և ուրախալի վստահութիւն հանդերձելոյն համար :

Յովհաննու վերջին երկու թղթոց թուակածին վրայ ստոյգ բան մը գիտցուած չէ : Միոյն մէջ առաքեալը կը յորդորէ տիկինն առ որ կը գրէ՝ ճշմարտութիւնը որոշել ստութենէ , և միջրութեան վարդապետներուն չցուցնել մտերմութիւն սրուն արժանի չեն : Միւս թուղթին մէջ առաքեալը կը գովէ Գայիոսի մարդասիրութիւնն առ սմանս ի քարոզչաց Աւետարանին , և խստիւ կը դատապարտէ այն մարդոց սգին և զնացքը որ փոխանակ նմանելու Գայիոսի օրինակին , իրենց անձին փառքը միայն կը փնտռէին :



ԳԼ. ԻԵ.

Յոգայէ Լուսիւը և Յայտնութեան Յովհաննու

Այս թուղթին հեղինակը կը կոչէ զինք ծառայ Յիսուսի Գրիստոսի և եղբայր Յակոբայ : Այս Յակոբն անտարակոյս այն Յակոբն էր որ երկար ատեն նստաւ Երուսաղէմ՝ և զբնաց Յակոբայ անուամբ կոչուած թուղթը : Արդէն յիշեցինք այլևայլ կարծիքները սա խնդրոյն վրայ թէ միթէ այս Յակոբոս է՞ր որդի Ալփեայ և երկոտասան առաքելոց մին : Յուդա կամ Յուդաս անունը կը գտնուի Ղուկասու Զ. 16 համարին առաքելոց ցանկին մէջ , բայց խնդիրը թէ այն Յուդան նոյն Յուդան էր որ այս թուղթը գրեց՝ կը դառնայ միևնոյն կէտերուն վրայ որ յիշուեցան անոր եղբորը Յակոբայ նկատմամբ : Բայց թէ՛ երկոտասան առաքեալներէն ըլլայ , և թէ՛ Մարկոսի և Ղուկասու պէս , ընկեր և գործակից առաքելոց , պատճառ չկայ անոր թուղթին ներշնչութեան և աստուածային հեղինակութեան վրայ երկրպելու : Յուդայի նպատակն էր , ինչպէս անոր խօսքերէն յայտնի է , զգուշացնել զհաւատացեալը ընդդէմ սուտանուն վարդապետաց որոց ինչպէս վարքը նոյնպէս վարդապետութիւնն սպականեալ էր : Այս միջարամիտ վարդապետաց հպարտութիւնը , լկտութիւնը և ագահութիւնը հաւաստեալ կը նկարագրուին այս թուղթին մէջ և կը սպառնացուի անոնց դէմ Աստուծոյ մօ-

տալուս պտտուհասար: Այս թուղթին և Պետրոսի Բ. թղթոյն մէջտեղ զգալի նմանութիւնն արդէն յիշուեցաւ: Թուղթին 14 և 15 համարներուն մէջ հեղինակը մէջ կը բերէ քանի մը խօսք իբրև Ենովքայ որ եօթներորդ էր յԱդամայ: Հին կըտակարանին մէջ Ենովքայ անուամբ մարգարեութիւն յիշուած չկայ, ուստի խնդիր է թէ ուստի առաւ Յուդա իր տեղեկութիւնն այսպիսի մարգարեութեան մը վրայ: Ընդհանուր ընկալեալ կարծիքն այս է թէ Ենովքայ մարգարեութեան մը վրայ աւանդութիւն մը կար Հրէից մէջ Յուդայի ժամանակ, և թէ Յուդա աստուածային ազդեցութեամբ այն մարգարեութեան մէջէն իբրև ճշմարիտ ընտրեց այն մասը զոր կը յիշէ, և այսպէս վկայեց անոր վաւերականութեանը: Եւրշնչեալ հեղինակի մը Հին կտակարանին մէջ չյիշուած աւանդական պատմութենէ վկայութիւն բերելը չի կրնար այն հեղինակին ներշնչեալ ըլլալը երկրպոլութեան տակ ձգել:

Կրնանք հաւատալ թէ Հոգւոյ Սրբոյ ազդեցութիւնն ինչպէս ուրիշ բաներու նոյնպէս յայսմ մասին, առաջնորդեց Յուդայի: Պօղոս առաքեալ Բ Տիմոթէոսի Գ. 8, 9 համարներուն մէջ, և Յուդա իւր թղթոյն ուրիշ մէկ համարին (9 երորդին) մէջ կ'ակնարկեն Հին կտակարանին մէջ չյիշուած դէպքեր: 1773 ին Պրուս անուն Սկովտիացի մը Ենովքայ ընծայուած գիրքին Եթովպացերէն մէկ թարգմանութիւնը բերաւ Հապէշէն: Հին ֆրիստոնեայ մասենազիրք, ինչպէս Երանոս, Կղեմէս Աղեքսանդրացի, Որոգինէս և այլք, Ենովքայ գիրքը շատ անգամ յիշած են, բայց մինչև Մր. Պրուսի գիւտը ճշդիւ շատ քիչ բան գիտցուած էր անոր վերայ: Այս գիրքը երբէք կանոնական համարուած չէ, և անձանօթ անձէ մը գրուած կը կարծուի նախ Երբայցերէն երկրորդ դարուն մէջ: Գիրքին նպատակն է Ենովքայ և Նոյի տրուած այլևայլ յայտնութիւնները պատմել: Գիրքին մէկ մասին մէջ հատուած մը կոյ որ շատ կը նմանի Յուդայի 14 և 15 համարներուն: Կը կարծուի թէ այս նմանութեան պատճառն այս է որ, կամ Ենովքայ գիրքին հեղինակն օրինակած է այն խօսքերը Յուդայի թուղթէն, և կամ

երկուքն ալ Ենովքայ մարգարէութեանց վրայ եղած աւանդութեանէ առած են :

Յայտնութիւն Յովհաննոս

Յայտնութիւն անունը գիրքին առաջին բառէն առնուած է և կը ցուցնէ թէ ինչ է գիրքին նիւթը : Հեղինակը կը կոչէ զինք Յիսուս Քրիստոսի ծառայ «որ Աստուծոյ խօսքին վկայութիւնը ըրաւ, և Յիսուս Քրիստոսի վկայութիւնը՝ ինչ որ տեսաւ» (Յայտ. Ա. 2), և կը յաւելու թէ էր «Պատմոս ըսուած կղզին՝ Աստուծոյ խօսքին համար ու Յիսուս Քրիստոսի վկայութեանը համար» (Ա. 9), սյսինքն թէ արտորուած էր այն կղզին քարոզելուն համար զՔրիստոս իրրև Որդի Աստուծոյ և Փրկիչ աշխարհի : Տարակոյս չկայ թէ այս Յովհաննէս էր այն ծանօթ և պատուական առաքեալն Յովհաննէս որ չորրորդ Աւետարանը գրեց և իւր անունը կրող երեք թուղթերը : Յովհաննոս այս գիրքին և անոր Աւետարանին ու թուղթերուն մէջտեղ ոճոյ տարբերութիւն կայ, բայց ոչ աւելի մեծ քան զոր կրնար սպասուիլ տարբերութեանէ նիւթոյն որոյ վրայ գրուած է գիրքը :

Բայց մինչ մէկ կողմանէ տարբերութիւն կայ Յայտնութեան և Յովհաննոս միւս գիրքերուն մէջտեղ, միւս կողմանէ նաև երեւելի նմանութիւն կայ : Յովհաննոս բոլոր գրուածներուն մէջ Քրիստոս կը կոչուի «Բան» (Յովհ. Ա. 1, 14, Ա Յովհ. Ա. 1, Յայտ. ԺԹ. 13) : Յայտնութեան գիրքին և Աւետարանին մէջ Քրիստոս կը կոչուի Գառն Աստուծոյ (Յայտ. Ե. 6, 12, 13, ԺԳ. 8, ԺԵ. 3, Յովհ. Ա. 29, 36) :

Այս երկու գրոց մէջ ալ Աւետարանին օրհնութիւնները կը գտնենք նմանցուած կենաց ջրոյ որ ամէն ծարաւելոյ կը տրուուի (Յովհ. Է. 37-39, Յայտ. ԻԱ. 6, ԻԲ. 1, 17) :

Հնագոյնք նախի եկեղեցական մատենագրաց զՅովհաննէս սիրելի աշակերտն և զառաքեալ, կը յիշեն իրրև հեղինակ Յայտնութեան գիրքին : Յովհաննոս առաքելոյ ընկերին Պողիկարպոսի աշակերտը Երանոս իր գրուածներէն մէկուն մէջ Յայտնութեան գիրքէն վկայութիւններ կը բերէ և կ'ըսէ թէ

Յովհաննու խօսքերն են : Յուստինոս վկայ որ Քրիստոնէական թուականին 140 էն մինչև 164 ծաղկեցաւ , Քրիստոսի առաքեալներէն Յովհաննէս անուն մէկէմը գրուած Յայտնութիւնը կը յիշէ : Որոգինէս , որ ծնաւ 185 ին , կ'ըսէ . «Գլուխը Քրիստոսի կուրծքին վրայ դնող Յովհաննէս թողուց մեզի Աւետարան մը , գրեց նաև Յայտնութիւնը :» Որոգինէս սյս Յովհաննու համար կ'ըսէ թէ որդի էր Զերեգեայ , և թէ պքորեցաւ Պատմոս կղզին ճշմարտութեան խօսքին վկայութիւն տուած ըլլալուն համար : Ոմանք կը կարծեն թէ Յայտնութեան գիրքը գրուեցաւ Ներոնի հալածանաց ատենը (64-68.) , բայց տիրող կարծիքն է թէ գրուեցաւ Յովհաննու վախճանին մօտ , սյսինքն 95 ին և 97 ին մէջտեղ , 81 էն մինչև 96 թագաւորող Գոմետրիանոս կայսեր հալածանաց ատենը : Երանոս իր վերոյիշեալ գիրքին մէջ Յովհաննու Յայտնութեան վրայ խօսելով կ'ըսէ թէ տեսնուեցաւ «ոչ շատ երկար ժամանակ , այլ գրեթէ մէկ սերունդ առաջ , մօտ ի վախճան կայսրութեան Գոմետրիանոսի :» Պատմոս կղզին ուր տրուեցաւ Յայտնութիւնը՝ Սպորադեան կոչուած խումբ մը կղզեաց մէկն էր , փոքուն Ասիոյ հարաւային արևմտեան ծայրին մօտ :

Յայտնութեան գիրքը կրնայ եօթը բաժնուիլ : Ա. բաժինը (Գլ. Ա.-Գ.) կը պատմէ առ Յովհաննէս երևնալը Որդւոյ մարդոյ փառաւորեալ անձին , սյսինքն Քրիստոսի , որ կը պատէր ի մէջ եօթն սկեղէն ճրագարանաց որ օրինակ էին եօթն եկեղեցեաց Ասիոյ , սյն է՝ եօթն եկեղեցեաց մօտ յԵփեսոս ուր Յովհաննէս երկար ատեն կեցաւ և աշխատեցաւ : Այս եօթն եկեղեցիներէն իւրաքանչիւրին մասնաւոր թուղթ մը ուղղուած է իբրև ի Քրիստոսէ : Այս թղթոց իւրաքանչիւրը կը պարունակէ երեք մաս : Առաջին մասն է յառաջարան ուր մէջ կը բերուի տեսլեան սկիզբը յիշուած եկեղեցիներուն խօսող աստուածային անձին յատկութիւններէն մին : Զորօրինակ , Եփեսացոց թղթոյն մէջ կը կոչուի այն աստուածաշին անձը որ «Իր աջ ձեռքին մէջ եօթը աստղեր ունի» , սյլովքն հանդերձ : Բաղդաստէ Գլ. Բ. 1 համարը Գլ. Ա. 13, 16 համարներուն հետ : Ի թղթին որ առ Զմիւռնիոյ եկեղեցին՝ կը կոչուի , «Առաջինը ու վերջինը , որ մեռաւ ու կեն-

դանացաւ :” Բազդատէ ԳԼ. Բ. 8 համարը ԳԼ. Ա. 8, 17, 18 համարներուն հետ . բազդատէ նաև ԳԼ. Բ. 12 համարը ԳԼ. Ա. 16 համարին , և ԳԼ. Բ. 18 համարը ԳԼ. Ա. 14, 15 համարներուն հետ : Այս այլևայլ յատկութիւնք իւրաքանչիւր նամակի մէջ ունին յարմարութիւն զինակի եկեղեցւոյն առ որ կ’ուզողուի նամակը : Պերգամոնի եկեղեցւոյն ուզեալ նամակին մէջ, բազդատէ Բ. գլխոյն 12 համարը 16 ին հետ : Յիշեալ նամակներուն երկրորդ մասը կը նկարագրէ , եկեղեցւոյն , առ որ ուզեալ է նամակը , հոգևոր զինակը , և կը պարունակէ քաջայերիչ ազգարարութիւններ կամ յանգիմանութիւն : Երրորդ մասին մէջ կը գտնուին խոսամունք վարձուց առ այնսոիկ որ կը յաղթեն իրենց Գրիստոնէական ընթացքին մէջ պտտահասած արդեւքներուն : Յայտնութեան

Բ. բաժնին մէջ (ԳԼ. Գ.—Ը. 1) կը յիշուի եօթն կնիքներուն բացուիլը : Այս տեսլեան հանդիսատեղին երկինքն է : Յովհաննէս կը տեսնէ զԱստուած նստեալ իր աթոռին վրայ : Եօթն կնիքով գիրք մը կամ սոմար մը մէջ կը բերուի : Այս գիրքը կը արուի փրկիչ Գառին , որ երբ կը բանայ կնիքները մի ըստ մի-ոջէ , կը տեսնուին հետզհետէ այլևայլ գունով ձիեր և խորհրդաւոր նշանակութիւններ ունեցող սւրիչ երեւոյթներ :

Գ. Բաժնին մէջ (ԳԼ. Ը. 2—ԺԱ. 19) կայ տեսիլն եօթն հրեշտակաց որ կարգաւ կը հնչեցնեն եօթն փողեր որոնց ետևէն ամէն անգամ նորանշան գէոյքեր կու գան :

Դ. Բաժնին մէջ (ԳԼ. ԺԲ.—ԺԴ.) երեք ահագին թշնամիք , շառագոյն մեծ զիշտայ մը , տասն եզջերեսոյ գազան մը և ուրիշ գազան մը երկեզջիւր , երևելով կը կուռին եկեղեցւոյ հետ , և անոնց ետևէն յայտ կու գայ գառնը 144,000 հաւատարիմ հետևողներով որ կ’երգեն երգ մը ի գովեոս յաղթանակի Աւետարանին և յաղթութեան արգեանց քաղուելուն :

Ե. Բաժնին մէջ (ԳԼ. ԺԵ.—ԺԶ.) կայ երկրի , ծովու և այլոց վրայ բարկութեան հարուածներու եօթն սկաւառակներուն հեղման տեսիլը :

Զ. Բաժնին մէջ (ԳԼ. ԺԷ.—Ի.) Աստուծոյ ժողովրդեան թըշնամիները կը յաղթուին , և մեռեալք , մեծամեծք և փոքունք , կը կենան Աստուծոյ առջև դատաստանի համար :

Է. բաժինը նկարագիր է նորոյ երկնի և նորոյ երկրի, և մասնաւանդ նոր Երուսաղեմին, անոր բնակչաց և անոնց կենաց որպիսութեանը :

Այս գիրքին մէջ պատմուած տեսիլներուն այլևայլ և իրարմէ շատ տարբեր մեկնութիւններ տրուած են : Մեկնիչներէն ոմանք այն իրարու յաջորդող տեսիլները կը համարին իբր մարգարէական պատմութիւն մը եկեղեցւոյ դէմ յարուցեալ կռուաց առաջին դարէն սկսեալ մինչև ի կատարած աշխարհի : Այս մեկնիչք կը ջանան ցուցնել անցեալ դարուց կարևոր դէպքերը զորս գուշակուած կը համարին այս գիրքին տեսիլներէն ոմանց մէջ : Կը ջանան ցուցնել նաև ապառնի դէպքերը որ, ըստ նոցա կարծեաց, դեռ պիտի պատահին, որպէս զի անոնց վերաբերեալ մարգարէութիւնները կատարուին : Բայց և այնպէս մեծ անհամաձայնութիւն կայ յիշեալ մեկնչաց մէջ թէ իւրաքանչիւր տեսլեամբ ինչ դէպք կ'ակնարկուի :

Ուրիշ մեկնիչներ այն տեսիլները կը նկատեն իբր մարգարէական ընդհանուր մտքք միայն : Զորօրինակ, առաջին կնքոյն բացուելուն պէս սպիտակ ձիուն երևնալը (Գլ. Զ. 2) ոչ թէ մասնաւոր դէպքի մը վերաբերեալ կը նկատեն, այլ լոկ ցուցնելու համար Քրիստոսի յաղթութիւնն իր Աւետարանին միջոցաւ : Երկրորդ կնքոյն կարմիր ձին (Գլ. Զ. 4) կը մեկնեն իբրև նշանակիչ պատերազմի և կոտորածոյ որ շատ անգամ ճշմարտութեան յաղթանակին հետ կը պատահին հակառակորդաց բռնութենէն :

Ուրիշ մեկնիչք տեսիլները մարգարէական կը համարին, բայց անոնց կատարումը կը ջանան գտնել առաքելոյն ժամանակին ժոտ պատահած դիպաց մէջ : Կը կարծեն թէ առ Յովհաննէս եղած յայտնութեան գլխաւոր նպատակն էր միութարեւ և զօրացնել այն ատենուան Քրիստոնէից սիրտերը հալածանաց դէմ զորս պիտի կրէին : Այս մեկնիչներն իրենց մեկնութեան հիմ կը բռնեն այն համարները որ կը թուին ցուցնել թէ տեսիլներն արագ արագ պիտի կատարուէին : Այսպէս առաջին գլխոյն առաջին համարին մէջ իսկ ըսուած է թէ յայտնութեան նպատակն էր ցուցնել ծառայից Աստուծոյ ինչ որ պիտի պատահէին ի մտոյ : Բազդատէ Գլ.

Ա. 3 : ԻԲ. 10 : Ոմանք Ժ. գլխոյն 6 համարին վերջին խօղբերթէ «ալ ժամանակ պիտի չըլլայ» կը մեկնեն որպէս թէ կը նշանակեն, այլ ևս պիտի չստնայ, այսինքն տեսլեան կատարումը պիտի չյամենայ : Այս մեկնիչներն Յայտնութեան վերջին գլուխը միայն կը համարին իբրև ատկաւին գալու գիպաց մարգարէութիւն, բայց կ'ըսեն նաև թէ բոլոր գիրքին տեսիլներն օգտակար և իրատական են ամէն դարու Քրիստոնէից, վասն զի կը ցուցնեն դժուարութիւնները որոց պիտի պատահի եկեղեցին, և թէ այն դժուարութիւնները պիտի յազութունն օգնականութեամբն Աստուծոյ :

Ըստ կարծեաց բազմաց, պէտք չէ կարծել թէ Յայտնութեան մէջ իրարու յաջորդ տեսիլներով նշանակուած գէպքերն ի հարկէ այն տեսիլներուն կարգաւր պիտի պատահէին . այլ այլևայլ տեսիլք կրնային վերաբերել միևնոյն գէպքի, գէպքին այլևայլ յարաբերութեանը համեմատ, և թէ վերջին տեսիլներէն սմանք թերևս կը ցուցնեն այնպիսի գէպքեր որ յառաջ էին քան նախնիքաց տեսիլներով ցուցուած գէպքերը : Զորօրինակ, կրնայ ըսուիլ թէ արեգակը հագնող կնոջ տեսիլը որ ԺԲ. գլխոյն մէջ կը պատմուի կը ցուցնէ այնպիսի գէպքեր որ յառաջ են քան նախնիքաց գլուխներուն մէջ նկարագրուած տեսիլներով ցուցուածները :

Պէտք է նաև գիտնալ որ Յայտնութեան գիրքին այս տեսիլներն, ինչպէս նաև Սուրբ գրոց սւրիշ մասերուն մէջ գրուած մարգարէութիւնք, կրնան ոչ մի՛ այլ քանի մը կատարում ունենալ, և թէ այս կատարմանց իւրաքանչիւրը կրնան իբրև օրինակ համարուիլ ուրիշ աւելի բարձր և աւելի լեցուն հոգևոր կատարման մը : Ուստի կրնայ ըսուիլ թէ Աստուծոյ դործին հակառակորդաց և անոր ծառաներուն մէջտեղ կռուոյն տեսիլները կատարուեցան, երբ Հեթանոս Հռոմայեցի կայսերը ճգնեցան ջնջել Քրիստոնէական եկեղեցին և չյաջողեցան, և թէ նոյն տեսիլները կատարուեցան նաև, երբ Հռոմի պտպերն ի զուր աշխատեցան դէմ դնել Աւետարանին ճշմարիտ վարդապետութեանը, և թէ այս ամենէն սա մեծ դասը կը սորվինք որ Աստուծոյ ժողովուրդը

սատանային հետ պատերազմներուն մէջ ի վախճանի կը ստանայ կատարեալ յաղթութիւն :

Այս ներածութեան գիրքին նպատակէն գուրո է մտնըքննել Յայտնութեան գրոց տեսիլներուն տրուած սյլեայլ մեկնութիւնները : Այն տեսիլներուն մէջ տեսնուած սյլարանական նշաններէն ոմանց վրայ ընդհանուր կերպով միայն քանի մը բան ըսենք :

Այլարանական նշանները երկու տեսակ են, նիւթական և աննիւթ : Այլարանական խորանը, սեղանները և Հրէական պաշտաման սյլեայլ կերպերը կամ արարողութիւնք նիւթական նշաններ էին, որոց նպատակն էր պաշտօն մատուցանողներուն կամ ան պաշտօնը տեսնողներուն մտաց վրայ հոգևոր ազդեցութիւն ընել : Տէրունական ընթերցաց հացն ու գինին նոյնպէս նիւթական նշաններ են հոգևոր ճշմարտութեանց : Յայտնութեան գիրքին սյլարանական նշաններն աննիւթ նշաններ են, բայց նաև անոնց նպատակն է հոգևոր հրահանգ մատուցանել : Պէտք չէ կարծել թէ Յայտնութեան առաջին գլխոյն տեսլեան մէջ Յովհաննէս արդարև եօթը նիւթական աշտանակներ տեսաւ : Անոր տեսլեան մէջ կար աշտանակներու երեւոյթ մը, այսինքն տեսիլ միայն կամ աննիւթ նշան որ կը ցուցնէր Աստի կօթն եկեղեցիներն ընդ հսկողութեամբ և խնամով Քրիստոսի : Նոյնպէս պէտք չէ կարծել թէ չորրորդ գլխոյն տեսլեան մէջ Յովհաննէս տեսաւ նիւթական աթոռ մը, այլ տեսիլ միայն էր երկինքը գրուած աթոռի մը որոյ վրայ կը նստէր մէկը, և որ կը նշանակէր Աստուծոյ փառաւորեալ գերագոյն իշխանութիւնը : Այսպէս բոլոր գիրքին մէջ Յովհաննէս տեսաւ երկինքը և հոն կատարուած գործերը, հրեշտակները և անոնց պաշտօնները ցուցնող սյլարանեալ նշաններ, ոչ թէ բուն իսկ երկինքը և հոն կատարուած բուն գործերը տեսաւ : Նշաններն աննիւթ էին, բայց ունին հոգևոր և կարևոր նշանակութիւններ : Յովհաննէս տեսաւ գուռ մը բացուած երկինքը (Յայտ. Գ. 1) որով, ինչպէս բուռեցաւ անոր, պիտի հասկնար թէ Աստուծոյ գիտաւորութեան և նպատակներուն յայտնութիւնը պիտի ըլլար անոր : Քսան և չորս երիցունք կրնան համարուիլ իբրև սյլարանա-

կան նշան ցուցնելու համար բոլոր Աստուծոյ ժողովուրդը որ կը պաշտեն զԱստուած և կ'երգեն փառափանութեան երգեր Քրիստոսի որ դառին օրինակաւ ցուցուած է: Դ. գլխոյն 5-9 և Ե. գլխոյն 8-14 համարներուն մէջ յիշուած չորս կենդանիք կրնան համարուիլ, Եզեկիէլի Ա. գլխոյն Քերովբէից պէս, իբրև այլաբանական նշան այն զօրութեանց և ազգեցութեանց որովք Աստուած յառաջ կը տանի իւր նախախնամական կտուածութիւնը, և այն կենդանեաց չորս թիւը յիշեալ զօրութեանց տիեզերական ըլլալը կը ցուցնէ: Այն կենդանիք ունէին աչքեր ներսէն և դուրսէն, ցուցնելու համար թէ կատարեալ իմացականութիւն ունէին որով կը գործէին, և իւրաքանչիւրն ունէր զեց թէ՛ ցուցնելու համար թէ անդադար կը գործէին:

Ուրիշ այլաբանական նշաններ կը տեսնուին Յայտնութեան յաջորդ մասերուն մէջ: Եօթը կիփք բացուեցան, եօթը փողք հնչուեցան, եօթը սկաւառակներ պարպուեցան: Ասոնց թուոյն եօթն ըլլալը նշան կը համարուի ամբողջութեան: Եօթը կրնքով կիքուած գիրքը կը ցուցնէ այն կատարեալ մթութիւնը որ կը ծածկէ ապագան, մինչև որ Քրիստոս դառնն Աստուծոյ բանայ քիփքները և լոյս սփռէ մթութեան զլայ: Նոյնպէս փողոց և սկաւառակաց եօթն ըլլալը կը ցուցնէ թէ փոզերով և սկաւառակներով ցուցուած աստուածային գործազութիւնները լի և ամբողջ պիտի ըլլան: Ինչպէս որ Դ. գլխոյն մէջ իբրև Աստուծոյ աթոռին մէջտեղ և անոր բոլորտիքը կեցող կենդանիք կրնան համարուիլ այլաբանական նշան Աստուծոյ զօրութեանց որովք յառաջ կը տանի իր նըպատակները, նոյնպէս ԺԳ. գլխոյն մէջ իբրև ծովէն և երկ-

գուրս ելլող յիշուած գազանք կրնան համարուիլ իբրև նշան այն զօրութեանց որ հակառակ կ'ելլեն Աստուծոյ, ինչպէս նաև եօթն գլուխք և տասն եղջիւրք այլաբանական նշան են և կը ցուցնեն թէ Աստուծոյ դիտաւորութեան և նըպատակին դէմ դնողներուն ջանքը լի բովանդակ և կերպ կերպ պիտի ըլլայ: Նշաններուն ընդհանուր իմաստը կրնայ այս ըլլալ, բայց չի կրնար որոշ ըսուիլ թէ տեսիլն Աստուծոյ նըպատակին դէմ ինչ ձև կամ տեսակ հակառակութիւն կ'առգէ հասկցնել: Կիներ որ արեգակը հագած էր և լուսին սւնէր

իր ստրին տակ, իսկ գլխուն վրայ աստեղեայ պսակ մը, կըրնայ համարուիլ իբրև այլաբանական նշան Աստուծոյ թագաւորութեան որ կը յայտնուի աշխարհի վրայ, և ընդդիմութիւն կը կրէ մեծ կարմիր վիշապէն (Աստանայէ), բայց Աստուծոյ զօրութիւնով կը պաշտպանուի: Արդէն ըսուեցաւ թէ եօթն թիւը նշանակ է ամբողջութեան, և չորսը նշանակ ընդհանրութեան: Երկոտասան թիւն ալ կը թուի մասնաւոր կապակցութիւն ունենալ Աստուծոյ ժողովրդեան հետ: Այսպէս ունինք 12 ցեղ իսրայելի, 12 առաքեալներ, գըլուխը 12 աստղերով պսակ ունեցող կինը (Գլ. ԺԲ. 1), 12 գրուհք և 12 հիմունք նոր Երուսաղեմի որ է բնակութիւն ժողովրդեան Աստուծոյ. նոյնպէս, կենաց ծառն ունէր 12 տեսակ պտուղ ի սնունդ և ի միթարութիւն նոցա:

Ասոնք ընդհանուր ակնարկութիւններ են Յայանութեան գիրքին այլաբանական նշաններուն իմաստին, ոչ թէ այն գիրքին մէջ յիշուած տեսիլները մեկնելու վարձեր:

ՎԵՐՋԱՔԱՆՈՒՄԻՆԷՆ:

Հին կատկարանին առաջին գիրքը կըցուցնէ մեզի աշխարհիս արարչութեան սկիզբը, Նոր կատկարանին վերջին գիրքը կը ցուցնէ նորոյ երկնի և նորոյ երկրի տեսիլը: Ծննդոց գիրքին մէջ յիշուած է կորուսեալ գրախտը և մարդն արտաբնուած Աստուծոյ երեսէն, իսկ Յայանութեան մէջ կայ նոր գրախտին տեսիլը, և մարդն Աստուծոյ հետ աւելի սերտ մտերմութեան մէջ: Հին կատկարանին վերջին գիրքը կը վերջանայ զգուշացնելով զմարդիկ Աստուծոյ անէծքէն: Յայանութեան գիրքը կը վերջանայ հրաւիրելով զմարդիկ գալ մասնակից ըլլալ Աստուծոյ մեծ պարգևին, այն է յաւիտենական կենաց, և մեր Տէրոջ Յիսուսի Քրիստոսի շնորհաց օրհնութիւններուն: Նոր կատկարանին առաջին գլուխները կը ցուցնեն զՔրիստոս իր տկարութեան մէջ, իբրև թագաւորազն մանուկ, բայց ազքաս և հալածեալ. Նոր կատկարանին վերջին գիրքը կը ցուցնէ զանի տակաւին իւր չարչարանաց յիշատակներովը, քանզի է տակաւին գառն, բայց յաղթող և թագաւորող յաւիտեանս յաւիտենից:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ



Նիս. քն. զԻր.

Ստեղծումն Աղամայ կը կարծուի ընդհանրապէս	4004
Նշյնն, ըստ եօթանասնից (Տես Ա. Մասն 242 էջ)	5508
Ջրհեղեղն, ըստ ընդհանուր հաշուոյ,	2348
Նշյնն, ըստ եօթանասնից (Տես Ա. Մասն 243 էջ)	3246
Աբրահամու կոչումը	4921
Յակոբայ երթն ընտանեզք յԵգիպտոս	4706
Իսրայելացւոց ելն յԵգիպտոսէ Մովսէսի առաջ- նորդութեամբ	4494
Նշյնն, ըստ եօթանասնից (Տես Ա. Մասն 244 էջ)	4614
Իսրայելացւոց մուտն ի Գանան	4451
Սամուէլ կը սկսի դատել զԻսրայել	4112
Սաւուղ կ'օծուի թագաւոր Իսրայելի	4096
Սաւուղի մահը և Դաւթի թագաւորութիւնը Յուդայի վրայ	4056
Դաւիթ թագաւոր բարբ Իսրայելի	4049
Սողոմոն կը թագաւորէ Իսրայելի	4016
Տաճարին նաւակատիքը	4005
Ռորովամ կը թագաւորէ	975
Տասն ցեղք կ'ապստամբին և կ'ընտրեն զՅերոբո- վամ իրենց թագաւոր	975
Աբիա կը թագաւորէ Յուդայի վրայ	958
Ասա կը թագաւորէ Յուդայի վրայ	955
Նաբաբ կը թագաւորէ Իսրայելի վրայ	955
Բաասա կը թագաւորէ Իսրայելի վրայ	953
Էլյա կը թագաւորէ Իսրայելի վրայ	930
Ջամբրի կը թագաւորէ Իսրայելի վրայ	929
Ամրի կը թագաւորէ Իսրայելի վրայ	929
Աբասաբ կը թագաւորէ Իսրայելի վրայ	918
Եղիա կը կատարէ մարգարէական պաշտօն Ա.քա- արու ժամանակ	

Յովսէփոս կը թագաւորէ Յուդայի վրայ	914
Ոքոզիա կը թագաւորէ Իսրայելի վրայ	897
Եղիշէ կը կատարէ մարգարէական պաշտօն Ոքոզիայի, Յովրամայ, Յէռուայ և Յովաքազու ժամանակ	
Յովրամ կը թագաւորէ Իսրայելի վրայ	892
Յովրամ որդի Յովսէփոսու կը թագաւորէ Յուդայի վրայ	889
Ոքոզիա կը թագաւորէ Յուդայի վրայ	885
Յէռու կը թագաւորէ Իսրայելի վրայ	884
Գոթոզիա կը յափշտակէ Յուդայի թագաւորու թիւեր	884
Յովաա կը թագաւորէ Յուդայի վրայ	878
Յովաքազ կը թագաւորէ Իսրայելի վրայ	856
Ամասիա կը թագաւորէ Յուդայի վրայ	839
Յովաա կը թագաւորէ Իսրայելի վրայ	838
Յերոբոզամ Բ. Յովսսու որդին կը թագաւորէ Իսրայելի վրայ	823
Յերոբոզամու թագաւորութեան ասեներ Յովան կը զբօսուի Նինուէ	
Ոզիա կը թագաւորէ Յուդայի վրայ	810
Յովէլ, Ամոն և Ովսէէ կը կատարեն մարգարէական պաշտօն Ոզիայի և Յերոբոզամու ժամանակ	
Զաքարիա կը թագաւորէ Իսրայելի վրայ	772
Սեզզուժ կը թագաւորէ Իսրայելի վրայ	770
Մանայեմ կը թագաւորէ Իսրայելի վրայ	770
Փակէիա կը թագաւորէ Իսրայելի վրայ	764
Փակէէ կը թագաւորէ Իսրայելի վրայ	759
Յովաթամ կը թագաւորէ Յուդայի վրայ	758
Եսայի և Միքիա կը կատարեն մարգարէական պաշտօն Ոզիայի, Յովաթամայ, Աքազու և Եզեկիայի ժամանակ	
Աքազ կը թագաւորէ Յուդայի վրայ	742
Ովսէէ կը թագաւորէ Իսրայելի վրայ	730

Եզեկիա կը թագաւորէ՝ Յուդայի վրայ	726
Նաոււմ կը կատարէ մարգարէական պաշտօն Ե- զեկիայի ատենը	
Տասն ցեղք կը տարուին ի գերութիւն	724
Մանասէ կը թագաւորէ Յուդայի վրայ	698
Ամնն կը թագաւորէ Յուդայի վրայ	643
Յովսիա կը թագաւորէ Յուդայի վրայ	641
Սոփոնիա կը կատարէ մարգարէական պաշտօն Յովսիայի ատենը	
Յովաբազ կը թագաւորէ Յուդայի վրայ	610
Յովակիմ կը թագաւորէ Յուդայի վրայ	610
Երեմիա և Ամբակում կը կատարեն մարգարէա- կան պաշտօն Յովակիմայ ատենը	
Աւաղին գերութիւն ի Նաբուգոդոնոսորայ	606
Եզեկիէլ, Դանիէլ և Աբդիու կը կատարեն մար- գարէական պաշտօն գերութեան ատենը	
Յովաբին կը թագաւորէ Յուդայի վրայ	599
Սեգեկիա կը թագաւորէ Յուդայի վրայ	599
Երուսաղէմ՝ կ'աւերի և Տաճարը կ'այրի	587
Կիւրոս Տրաման կու տայ շինել Երուսաղէմի տա- ճարը	536
Անգէ և Զաբարիա կը կատարեն մարգարէական պաշտօն Հրէից իրենց երկիրը դառնալէն ետքը	
Նաւակատիք երկրորդ տաճարին	516
Եզրաս այցելութիւն կ'ընէ Երուսաղէմի	457
Նէեմիա այցելութիւն կ'ընէ Երուսաղէմի	445
Մազաբիա կը կատարէ մարգարէական պաշտօն Նէեմիայի ժամանակ, և Հին Կտակարա- նին կանոնը կը գոցուի	397
Ազէքոսանգր մեծ նուաճելով Ասորոց երկիրը, այ- ցելութիւն կ'ընէ Երուսաղէմ՝	332
Ազէքոսանգրի թագաւորութիւնը կը բաժնուի ա- նոր զօրապետներուն	326
Պազումէոս Սովետը կ'առնու Հրէաստան	320

Միմնն որ արդար կռոււեցաւ քահանայապետ՝ Հը- րէից յԵրուսաղէմ	300
Անտիոքոս մեծ կը տիրէ Հրէաստանի	198
Անտիոքոս Եպիփան կը մոլծանէ հեթանոսական պաշտօն Երուսաղէմի տաճարը	170
Յուդա Մակարէ կ'ազատէ Երուսաղէմ և կը մտք- րէ տաճարը	165
Յովհաննէս Հիւրկանոս կ'ըլլայ քահանայապետ	135
Պամպէոս կը տիրէ Հրէաստանի և կը հաստատէ Հռոմէական իշխանութիւնը	63
Հերովդէս մեծ կը թագաւորէ Հրէաստանի	37
Քրիստոս կը ծնանի ի Բեթղեհէմ 4 տարի յա- ռաջ քան զԹուականն որ ընդհանրապէս կը համարուի ամ Տեառն 1 : (Տես Բ Մա- սըն 145 էջ)	յամի 82.
Քրիստոս կը խաչուի	33
Ստեփանոսի մարտիրոսութիւնը	36
Պօղոսի դարձը	36-37
Կռնեիլոսի դարձը	40
Պօղոսի այցելութիւնը Երուսաղէմ յետ դարձին	40-41
Յակոբոսի մարտիրոսութիւնը	44
Պօղոսի երկրորդ այցելութիւնը Երուսաղէմ	44-45
Պօղոսի երրորդ այցելութիւնը Երուսաղէմ	50-51
Պօղոս կը գրէ Թեսաղոնիկեցւոց Թուղթը	53
Պօղոսի չորրորդ այցելութիւնը Երուսաղէմ	53-54
Պօղոս կը գրէ Կորնթացւոց Թուղթերը	57
Պօղոս կը գրէ Հռոմայեցւոց և Գաղատացւոց Թուղթերը	58
Պօղոսի հինգերորդ և վերջին այցելութիւնը Ե- րուսաղէմ	58
Պօղոս կը տարուի իրրև կապեալ ի Հռոմ	61
Պօղոս կը գրէ Եփեսացւոց, Կոլոսացւոց և առ- Փիլիմոն Թուղթերը	62
Պօղոս կը գրէ Փիլիպպեցւոց Թուղթը	63
Պօղոս կ'արձակուի բանտէն	63

Պօղոս կը գրէ առ Տիմոթէոս առաջին և առ Տի- տոս Թուղթերը	65
Պօղոս կը գրէ առ Տիմոթէոս երկրորդ Թուղթը	66
Պօղոս կը բանաբարկուի երկրորդ անգամ ի Հը- ռոմ, և կը սպաննուի հոն	67
Երուսաղեմի կործանումը	70
Յովհաննէս առաքեալ կ'արորուի ի Պատմես, կը գրէ Յայտնութիւնը և կը գոցէ Նոր Ար- տակարանին կանոնը	95-97



ՅԱՆԿ ՆԻԻԹՈՑ



ԱԲԴԻՈՒ . 115 : Աբդիուլի մարդարէութեան ժամանակը և նիւթը . 115 :

Աբրահամ . 43 : Աբրահամն ծննդեան քաղաքը , Ուր . 44 : Աբրահամն Կոչումը . 44 : Աբրահամն սերունդին պանդխտութեան ժամանակը . 45 : Աբրահամն Եգիպտոս երթալը . 46 :

Ադամայ և Եւայի զաւկները . 30 :

Ազգարանութիւն Յիսուսի . 138 :

Ամբակում . 118 : Ամբակումայ մարդարէութեան ժամանակը . 118 : Նիւթը . 118 :

Ամսօր . 114 : Ամսօրայ մարդարէութեան ժամանակը . 114 : Նիւթը . 114 : Ոճը . 115 :

Անգէ . 119 : Անգէի մարդարէութեան ժամանակը և նիւթը . 119 :

Աշտարակաշինութիւն . 41 : Ապաստանի քաղաք . 58 :

Առակաց գիրքը . 96 : Առակաց գիրքին բաժանումը . 96 : Առակաց գիրքին նպատակը . 97 :

Առաքելոց Թուղթերը . 147 : Առաքելոց Թուղթերուն թիւը , Թուականը և Հեղինակները . 148 :

Ասուերոս կամ Կամբիւս . 82 :

Ասուերոս կամ Քսերքսէս . 85 :

“Աստուած եօթներորդ օրը հանգստացաւ” և “Օրհնեց և սրբեց եօթներորդ օրը” խօսքերուն նշանակութիւնը . 22 : “Աստուծոյ որդիք և մարդոց որդիք” խօսքին նշանակութիւնը . 30 :

Արարչագործութեան պատմութիւնն համեմայն է երկրաբանութեան . 26 : Արարչագործութեան վրայ ըստ ոմանց լաւագոյն համարուած տեսութիւն մը . 25 :

Արտաշէս երկայնաբազուկ . 82 :

Արտաշէս կամ Շմերդ . 82 :

Աւետարանաց համեմայնութիւն . 142 : Աւետարանաց մէջտեղ բաղդատութիւն . 141 , 142 : Աւետարանաց վրայ տեսութիւն մը . 143 :

ԲԱՂԱՄ . 66 :

ԳԱԼԻԼԵԱՑԻՈՅ ազանդը . 128 :

Գաղատիա . 152 : Թէ երբ և ուր գրուեցաւ Գաղատացւոց
Թուղթը . 153 : Այս Թուղթին նիւթը , նպատակը և նմանու-
թիւնը Հռոմայեցւոց և Կորնթացւոց Թուղթերուն հետ . 154 :

Գործոց Առաքելոց գիրքը երբ և ուր գրուեցաւ . 143 : Գոր-
ծոց Առաքելոց գիրքին բաժանումը , նիւթը և նպատակը . 144 :
ԳԱԲԻՐ . 5 :

Դանիել . 109 : Դանիելի մարգարէութեան ժամանակը .
110 : Դանիելի գիրքին բաժանումները . 110 : Նիւթը . 111 :

Դատաւորաց գիրքը . 71 :

Դարեհ վշտասպեայ . 82 : Դպիրք . 128 :

Դրախտը . 26 : Դրախտին տեղը . 27 , 28 :

ԵՐԲԱՅԵՑԵՐԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՆՆԸ . 86-90 :

Երբայեցւոց Թուղթը . 169 : Թէ երբ գրուեցաւ այս Թուղ-
թը . 170 : Երբայեցւոց Թուղթին հեղինակը . 169 : Նիւթը և
նպատակը . 170 :

Եգիպտոսի հարուածները . 52 , 53 :

Եզեկիել . 106 : Եզեկիելի բնակութիւնը . 107 : Եզեկիելի
գիրքին բաժանումը և նիւթը . 107 : Նպատակը . 108 :

Եզեկիելի մարգարէութեան ժամանակը . 106 , 107 :

Եզեկիելի տեղիները . 108 :

Եզրաս . 81 : Եզրասայ գիրքը և անոր հեղինակը . 81 : Եզ-
րասայ գիրքին նիւթը . 81 :

Ելից գիրքին անունները . 47 : Բաժանումը . 47 :

Եկեղեցւոյ պաշտօնեաները . 168 :

Ենովբայ մարգարէութիւն . 179 :

Եսայի . 101 , 102 : Եսայեայ գիրքին բաժանումը և նիւթը .
102 , 103 : Եսայեայ մարգարէութեան ժամանակը . 101 , 102 :
Մեսիայի վրայ մարգարէութիւնը . 103 :

Եսթերայ գիրքը . 84 : Այս գիրքին հեղինակը . 84 :

Երգոց երգչին անունը . հեղինակը և գիտաւորութիւնը . 98 :
Այս գիրքին բաժանումը . 98 , 99 : Իմաստը . 99 , 100 :

Երեմիա , և անոր մարգարէութեան ժամանակը . 104 : Ե-
րեմիայի գիրքին բաժանումը , նիւթը և ոճը . 105 : Երեմիայի
մարգարէութեան գլխակարգութիւնը . 105 : Երեմիայի ողբը .

- 406: Այս գիրքին անունները, նիւթը և նպատակը. 406:
 Երկիրը և երկիր բառերով ինչ կ'իմացուի. 42:
 Երկրիս կազմութիւնը. 42: Երկրիս փճական անոր ստեղծ-
 ուելէն ետքը. 42:
 Երկրորդ օրինաց գիրքին անունները և բաժանումը. 66, 67:
 Մարգարէութիւնները. 67, 68:
 Եփեսացւոց թուղթը. 455: Թէ երբ և ուր գրուեցաւ և
 նիւթը. 455:
 ԶԱՔԱՐԻԱ. 420: Զաքարիայի գիրքին բաժանումը, նիւթը
 և նպատակը. 420: Զաքարիայի մարգարէութեան ժամանա-
 կը. 420: Զաքարիայի մարգարէութեան վերջին մասը. 424:
 ԷԼՈՂԻՄ բառին նշանակութիւնը; և թէ ինչու համար
 յոգնակի է այս բառը. 42:
 Էստէնեանք. 427:
 ԹԱԳԱԻՈՐԱՅ գիրք. 72: Թագաւորաց գիրքերուն հին բա-
 ժանուսները և անունը. 73: Այժմու բաժանուսները. 73:
 Թագաւորաց գիրքերուն հեղինակները և թէ երբ գրուեցան
 այս գիրքերը. 73, 74:
 Թեսաղոնիկէ. 160: Թէ ինչ առթիւ գրուեցան թեսաղո-
 նիկեցւոց թուղթերը. 160: Երբ գրուեցաւ թեսաղոնիկեցւոց
 Ա. թուղթը. 161: Ա. թես. Գ. 1, 2 համարներուն միտքը. 160:
 Թեսաղոնիկեցւոց Ա. թուղթին նիւթը. 161: Թէ երբ
 գրուեցաւ թեսաղոնիկեցւոց Բ. թուղթը. 161: Այս թուղ-
 թին նիւթը և նպատակը. 161: Թեսաղոնիկեցւոց թուղթե-
 րուն Փիլիպպեցւոց թղթոյն հետ բազդատուութիւնը, 162, 163:
 Թէոփիլոս. 136:
 Թունց գիրքին անունը, բաժանումը և նիւթը. 64, 65:
 ԺՈՂՈՎՈՂԻ գիրքին անունները, հեղինակը և նիւթը.
 97, 98: Ժողովրդանոցք. 426:
 ԻՍՐԱՅԵԼԱՑԻՔ որչափ ժամանակ բնակեցան Եգիպտոս.
 48, 49: Իսրայելացւոց հարստահարութիւնը յԵգիպտոս. 51:
 Իսրայելացիք որչափ էին երբ ելան Եգիպտոսէ. 48:
 ԼԱԻՈՒԻԿԵՑԻՈՑ թուղթը. 159:
 Լեզուաց խառնակութիւնը և հիմա երկրի վրայ խօսուած
 լեզուներուն թիւը և բաժանումը. 41, 42:

“**Ղոյս քլայ**” **խօսքին նշանակութիւնը** . 13 :

“**Ղուտուարներ քլան**” **խօսքին նշանակութիւնը** . 15 :

ԽԱԲԱՆ . 44 , 45 :

ՄՆՆԴՈՑ **գիրքին բաժանումը** . 10 , 11 : **Մննդոց գիրքին** **մէջ Առտուծոյ տրուած անուանք** . 6 , 7 : **Մննդոց Զ . 3 հասմարին իմաստը** . 31 : **Մննդոց գիրքին պատմութիւնը կը հաստատուի Եգիպտական արձանագրութիւններէ** . 45 , 46 :

ԿԱԹՈՂԻԿԷ Թուղթք . 171 : **Կին արձակել** . 58 , 59 :

ԿԻՐՈՍ . 81 :

Կողոս . 158 : **Թէ ինչ աւթիւ գրուեցաւ Կողոսացոյ Թուղթը** . 158 : **Այս Թուղթին նիւթը . նմանութիւնը Եգիպտացոյ Թուղթին հետ** . 158 : **Կողոսացոյ Դ . 16 համարին միտքը** . 159 , 160 :

Կորնթացոյ Թուղթերն երբ և ուր գրուեցան . 151 : **Այս Թուղթերուն տարբերութիւնը Հռոմոյեցոց Թուղթէն** . 151 : **Կորնթացոյ Ա . Թղթոյն նիւթը** . 151 : **Երբ և ուր գրուեցաւ Կորնթացոյ Բ . Թուղթը** . 151 : **Կորնթացոյ Բ . Թուղթին նիւթը** . 152 :

ՀԵՐՈՎԴԻՍԵԱՆՅ . 127 :

Հերովդէսի Թագաւորութիւնը և գործերը . 125 :

Հին Կտակարանին բանաստեղծական գիրքերը . 85 : **Հին Կտակարանին մէջ յիշուած բայց հիմա կորուած գիրքերը** . 68 , 69 : **Հին Կտակարանին մարգարեական գիրքերը** . 100 : **Հին Կտակարանին պատմական գիրքերը** . 68 : **Հին Կտակարանին կանոնը երբ կազմուեցաւ** . 84 : **Հին Կտակարանը կը Թարգմանուի Յունարէն** . 130 :

Հնգամատեանն ինչ մասեր կը պարունակէ . անոր մասերուն անուններն առ Հրեայս , և իւրաքանչիւր մասին նիւթը . 2-5 : **Հնգամատեանն հաստատող աւանդութիւնք հին ազգաց** . 7 : **Հնգամատեանին հեղինակը** . 3 : **Հնգամատեանին հնութիւնը** . 5 : **Հնգամատեանին մէջ յաւելուածներ** . 4 , 5 : **Հնգամատեանին յիշատակութիւնը Սուրբ գրոց ուրիշ մասերուն մէջ** . 3 , 4 : **Հնգամատեանին վաւերականութիւնը** . 7-10 :

Հովիւ կոչուած Թագաւորը . 50 :

Հովուական նամակներ . 163 :

Հռոմայեցւոց թուղթը, թէ երբ և ուր գրուեցաւ և նպատակը. 149: Հռոմայեցւոց թուղթին նիւթը. 150:

Հասւթայ գիրքը և թէ երբ գրուեցաւ. 72:

Հրեայ գաղթականութիւնը. 123, 129: Հրէից ազգային ժողովը կամ՝ սինեդրիոն. 129: Հրէից ազգին պատմութիւնը Հին կաակարանին գոցուելէն մինչև Նորոյն սկիզբը. 122-130: Հրէից Աւետարան. 132: Հրէից երկրին բաժանումը Սելևկեանց ժամանակ. 123:

Հրէից և հեթանոսաց մէջտեղի միջնորմը ինչպէս վերցաւ. 145:

Ղեկավարութիւն գիրքին անունները և նիւթը. 63:

Ղուկաս. 135: Ղուկասու Աւետարանը, թէ երբ և ուր գրուեցաւ և նպատակը. 136, 137: Ղուկասու Աւետարանին մասնաւոր յատկութիւնները. 138:

ՄԱԿԱՐԱՅԵՑԻՔ. 124, 125:

Մաղաքիա. 121: Մաղաքիայի մարգարէութեան ժամանակը և նիւթը. 121:

Մանանայն. 53-55:

Մատթէոս և անոր Աւետարանը. 131: Ի՞նչ լեզուաւ գրուեցաւ Մատթէի Աւետարանը. 132: Մատթէի Աւետարանին նպատակը և մասնաւոր յատկութիւնը. 133:

Մարգարէական գիրքերը. 100: Մարգարէք և անոնց պաշտօնը. 100: Մեծ և փոքր մարգարէք 100:

Մարգուէն ստեղծումը. 19: Մարգուէն իշխանութիւնը երկրիս փրկելու. 20, 21: Մարգուէն արուած արտօնութիւնները. 21, 22: Մարգուէն փորձութիւնը և անկումը. 29: "Մեր պատկերին ու նմանութեան պէս մարդ ընենք," և, "Առուած իր պատկերովը ստեղծեց մարդը" խօսքերուն նշանակութիւնը. 19, 20:

Մարկոս. 133: Մարկոսի Աւետարանը. 134: Թէ երբ և ուր գրուեցաւ Մարկոսի Աւետարանը. 135: Մարկոսի Աւետարանին մասնաւոր յատկութիւնը. 134:

"Մեղաց մարդը" խօսքին նշանակութիւնը. 162:

"Մեծ ժողովրդանոց" խօսքին նշանակութիւնը. 4, 123:

Միքիա. 117: Միքիայի մարգարէութեան բաժանումը, ժամանակը, նիւթը և ոճը. 117:

Մնացորդաց գիրքերը . 78 : Մնացորդաց գիրքերուն անունները , նպատակը և նիւթը . 79 : Մնացորդաց գիրքերուն հեղինակը . 80 :

Մովսէսու արձանը . 75-78 :

Մովսէսէ առաջ մատեան . 6 :

Մովսիսի ժամանակին Փարաւոնը . 51 : Մովսիսի օրէնքը . 55, 56 : Մովսիսի օրինաց նպատակը . 57, 58 : Մովսիսի երեք ատենարանութիւնները . 66, 67 :

Մովսիսական արարողութիւնք և անոնց տպաւորութիւնք . 61 :

ՅԱԲԵԹԻ ոերնդեան բնակութեան երկիրները . 38 :

Յակոբոս . 171-173 : Յակոբայ թուղթին հեղինակը . 173 : Աւ . ուղղեալ է Յակոբայ թուղթը . 174 : Յակոբայ թուղթին նիւթը . 174 : Յակոբայ թուղթը հովառակ չէ Պօղոսի թուղթերուն . 174, 175 :

Յայտնութեան գիրքին հեղինակը և նիւթը . 180 : Յայտնութեան գիրքին բաժանումը . 181-183 : Յայտնութեան վերայ այլեայլ մեկնութիւններ . 183 : Յայտնութեան գրոց տեսիլները և անոնց կատարումները . 184 : Յայտնութեան տեսիլներուն այլաբանական նշանները . 185, 186 : Յայտնութեան գիրքին Յովհաննու ուրիշ գիրքերէն տարբերութիւնք և անոնց հետ նմանութիւնք . 180 : Հարց վկայութիւնը Յայտնութեան համար . 180, 181 :

Յեսուայ գիրքին հեղինակը և բաժանումը . 70 :

Յոր . 91 : Յորայ գիրքին հեղինակը , նպատակը և թէ երբ գրուեցաւ . 91 :

Յովէլ . 113 : Յովելի ժամանակը . 113 : Յովելի մարգարէութեան նիւթը , նպատակը և սճը . 113, 114 :

Յովհաննէս առաքեալ . 139, 140 : Յովհաննու Աւետարանը երբ և ուր գրուեցաւ , նպատակը և մասնաւոր յատկութիւնք . 140, 141 : Յովհաննու թուղթերուն հեղինակը . 177 : Յովհաննու Ա . թուղթին նիւթը . 177 : Թէ երբ գրուեցաւ այս թուղթը . 177 : Թէ երբ գրուեցան Յովհաննու վերջին երկու թուղթերը . 178 : Այս թուղթերուն նիւթը . 178 :

Յովնանու հայրենիքը . 116 : Յովնանու մարգարէութեան ժամանակը և նիւթը . 116 :

- Յուդա ո՛վ էր . 178 : Յուդայի թուղթին նպատակը . 178 :
 ՆԱԽԿԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ Վարչութիւնը . 144 :
 Նաւակատեաց տօնը . 124 :
 Նառմ . 117 : Նառմայ մարգարէութեան ժամանակը . և
 նիւթը . 118 :
 Նէեմիա . 83 : Նէեմիայի գիրքին նիւթը . 83 :
 Նոյի սերունդը . 37 : Նոյի տապանը . 32 : Ո՛ւր նստաւ Նո-
 յի տապանը . 34 :
 Նորահաւատ անունը . 128 :
 Նոր կտակարանին գիրքերն . ինչ լեզուաւ գրուած են .
 130 : Նոր կտակարանին գէպքերուն թուականները . 145-
 147 : Նոր կտակարանին գրոց ցուցակը . 131 :
 ՈՎՍԵ՛՛՛ . 112 : Ովսէէի մարգարէութեան ժամանակը և
 նիւթը . 112 : Ուր . 44 :
 ՊԵՏՐՈՍԻ Թուղթերն առ ո՛ւ ուղղեալ են . 175 , 176 : Թէ
 ուր գրուեցաւ Պետրոսի Ա . թուղթը . 175 : Ե՛րբ գրուեցաւ .
 176 : Պետրոսի Ա . թղթոյն նպատակը . 176 : Պետրոսի Բ .
 թղթոյն վաւերականութիւնը . 176 : Այս թղթոյն նպատակը .
 177 : Յուդայի թուղթին հետ նմանութիւնը . 177 :
 ՋՐՀԵՂԵՂ . 32 : Ջրհեղեղէն առաջ ապրող մարդոց եր-
 կայնակեցութիւնը . 31 : Ջրհեղեղին վրայ ուրիշ տղգաց ա-
 լանդութիւնը . 35 : Ջրհեղեղին ընդհանուր ըլլալուն գէժ ա-
 ռարկութիւն . 34 , 35 :
 ՍԱԴՈՒԿԵՑԻՔ . 127 :
 Սաղմոսաց անունները . 92 : Սաղմոսաց գիրքին բաժանու-
 մը . 92 : Սաղմոսաց հեղինակները . 93 : Սաղմոսաց ժամանակը .
 95 , 96 : Սաղմոսաց յատկութիւնը և խորագիրները . 94 , 95 :
 Սամարացիք . 129 :
 Սամուելի անուամբ գիրք մը . 73 :
 Սեմայ սերնդեան բնականութեան երկիրները . 40 :
 Սոփոնիա . 119 : Սոփոնիայի մարգարէութեան ժամանակը
 և նիւթը . 119 :
 Ստեղծել բառին նշանակութիւնը . 12 :
 ՎԿԱՅՈՒԹԵԱՆ խորանը . 57 : Վկայութեան խորանին նը-
 կարագիրը . 59-61 :

- Վեցօրեայ արարչութեան վրայ գիտողութիւն . 12-19 :
 ՏԱՊԱՆԸ . 32 :
 Տասնական պատուէրներէ բաղկացեալ օրէնքներ . 63 :
 Տէրոջը պատերազմներուն գիրքը . 65 :
 Տիմոթէոսի գրուած Ա. թղթոյն նիւթը և նպատակը . 165 :
 Թէ երբ և ուր գրուեցաւ այս թուղթը . 163 , 164 : Տիմոթէոսի գրուած Բ. թղթոյն նիւթը . 166 : Թէ երբ և ուր գրուեցաւ այս թուղթը . 164 , 165 : Տիմոթէոսի գրուած թուղթերուն Տիտոսի գրուած թղթոյն հետ նմանութիւնը . 164 , 165 :
 Տիտոս . 166 , 167 : Տիտոսի գրուած թղթոյն նիւթը . 167 :
 Թէ երբ և ուր գրուեցաւ Տիտոսի թուղթը . 166 :
 ՓԱՐԻՍԵՑԻՔ . 125 , 127 :
 Փիլիմոն . 168 : Փիլիմոնի գրուած թղթոյն նիւթը . և թէ երբ գրուեցաւ . 168 :
 Փիլիպպէ . 156 : Փիլիպպեցւոց թղթոյն նիւթը . 157 : Թէ երբ գրուեցաւ Փիլիպպեցւոց թուղթը . 156 , 157 :
 ՔԱՄԱՅ սերնդեան բնակութեան երկիրները . 39 :
 ՕՁԸ . 29 :
 Օր բառին նշանակութիւնը . 24 : Արարչագործութեան օրերը . 23 , 24 : Եօթներորդ օրը . 22 , 23 :
 Օրէնք : Տես Մովսէս :



Վ Ր Ի Պ Ա Կ ,

Էջ,	Տող,			
71	10	Դարասորտ	կարգայ	Դարասորտի գիրք
165	13	եանքը	"	կեանքը



UNIVERSITY OF MICHIGAN



3 9015 04147 3284

